



841

L. III. 6







ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1896

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1896 № 1

ՈՒԹԵՐՈՐԳ ՏԱՐԻ

երևս

1	ԳԵՕՐԷ.	5	Էդմոնտ (ղրամա):
2	ՇԱՆԹ.	27	Դուրսեցնելը (վէպ. շարուն.):
3	ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷԲՍԱՆԴՐ.	60	Իմ օրագրից (բանաստ.):
4	ՇՁԵԳՐԻՆ.	62	Լիբերալը (սատիրա):
5	ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ.	70	Սիրոյ կաջը (բանաստ.):
6	ՆՈՅՆԸ.	71	Հալոց աղջկան (բանաստ.):
7	ԶԱԲԱՐԵԱՆՅ, ՄԿՐՏԻՉ.	72	Կողքոյ աղահանքում:
8	ՎԱՆՅԵԱՆ, ԳՐԻԳՈՐ.	88	Հալ համայնքի ուսումնասիրութիւն:
9	ՍՈՒՍԵՐ.	107	Քահանայական խնդիրը:
10	Ա. Ա.	116	Կատիկոսի «Արդարի աւանդութիւնը Խորհնացու հալոց պատմութ. մէջ»:
11	Լ. Մ.	123	Լեբոկի «Հարկւր ամենալաւ դրքեր:— Արարատեանցի «Երկու թումր»: Ծերթելու «Մարդ-Աւիւթ»:
12	ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	126	ժամանակակից Տեսութիւն:—Ռուս- տաճկ. բարեկամութիւնը: Անդլիան և հալկան: խնդիրը:—Զեկուցում Սա- տունի կոտորածի մասին: Զէկութիւն:
13	ԻԱԶ.ՊԱՊԵԱՆ.	134	Լուրեր Կ. Պոլսից:
14	ՄԱՆՈՒԷԼԵԱՆ, ԼԵԻՈՆ.	136	Հալկական թատրոն IV:
15	ՍԵԼԵԱՆ, Հ.	142	Թատրոնի շարքը V:
16	Հ.	146	Քաղ. տեսութ. —Անդլիան արտաքին դժւարութիւնների մէջ:—Բուլղարիա
17	ԽՄԲ.	153	Զանազան լուրեր:

ՏԵԼԵԿԱՏՈՒ ՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՆԻ

Типография М. Д. Ротшидана, Пол. пр., л. № 41.

1896

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1896

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1896 № 1

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1896

Дозволено цензурою. Тифлясь, 24 Января, 1895 г.

VIII ՏԱՐԻ

ՄՈՒՐՃ

ՏԱՐԻ VIII

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ:

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1896 թվականին կը հրատարակուի նոյն ծրագրով և նոյն զիրքով, որպէս և նախկին եօթ տարիներում: «ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալումն էր, նոյնպէս և ապագայում կը բովանդակի՝

- I. Յօդաւանդներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմաճշգրտութիւններ՝ ինքնուրոյն և թարգմանական:
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ, պօէմաներ՝ ինքնուրոյն և թարգմանական:
- IV. Նկարադրական-ճամբորդական:
- V. Պատմական:
- VI. Գիտական հանրամատչելի յօդաւանդներ:
- VII. Յօդաւանդներ անտեսական և սոցիալական խնդիրների մասին:
- VIII. Գրական քննադատութիւն:
- IX. Գրախօսութիւն նոր լոյս տեսած զրքերի մասին:
- X. Ժամանակակից Տեսութիւն: Յօդաւանդներ հայկական կեանքի ընթացիկ խնդիրների մասին:
- XI. Գաւառական նամակներ:
- XII. Թատրոնական քննութիւններ և քրոնիկ:

XIII. Թղթակցութիւններ Ռուսաստանից և Արտասահմանից:

XIV. Կարեւորագոյն լուրեր ամուսն եղելուն թիւներից:

XV. Տեղեկատուներ և յայտարարութիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ կը շարունակի «Մուրճ»-ում նաև 1896 թւա-
կանին առանձին ուշադրութեան առնուել:

ՄՈՒՐՃ-Ի ՎԵՊԱԿԱՆ բաժինը ներկայումս աւելի քան երբ և իցէ
ապահոված է յատուկ աշխատակիցներով:

«ՄՈՒՐՃ»-Ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ կը ֆնայ նոյնը ինչ միշտ եղել է՝ յառաջդի-
մական-քննադատական:

«ՄՈՒՐՃ»-Ը ունի աշխատակիցներ ի մի սաւար խումբ, որը
կազմած է ամսագրի եօթնամեայ կեանքով և որով ապա-
հովում են ամսագրի կարեւորագոյն բաժինները: Աշխա-
տակիցների կազմը լրացւում է նորերով, որոնց նպաստ-
ները երբէք չեն պակասել «Մուրճ»-ին:

«ՄՈՒՐՃ»-Ի 7 տարւոյ նիւթերի լիակատար ցանկը տպա-
դրուել է առանձին բրոշուրով:

ԸԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: «Մուրճ»-ի տարեկան բաժա-
նորդագիրն է 10 ռուբլի: Ուսուցիչները և ուսանողները վճա-
րում են զիջումով՝ 8 ռուբլի, արհեստաւորները և բանւոր-
ները՝ 7 ռուբլի:

ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 3 ռուբլի սկզբում,
3 ռ. ևս մինչ մարտի 1-ը, ֆնացածը մինչև յունիսի վերջը:

ԲՈՒՈՐ 7 տարիների «Մուրճ»-ը 14 հատորով կազմած վաճառւում
է 50 ռուբլով, իսկ առանձին-առանձին՝ որոշ գներով՝ համա-
ձայն առանձին յայտարարութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունւում են ամբողջ տարով՝ տողը 1 ռ.,
կէս տարով՝ տողը 75 կոպէկ:

Դիմել Խմբագրատունը—Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“
Արտասահմանից—Tiflis. Rédaction „MOURTCH“:

Է Գ Մ Ո Ն Տ

ՈՂԲԵՐԴՈՒԹԻՒՆ ՀԻՆԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Վ. Ֆ. ԳԵՕԹԷՒ

Գերմաներէնից թարգմ. ՀՄԱՅՆԱԿ ՄԱՃԻՆԵԱՆ

«Ողջ ժողովրդի աչքերը նորան են ուղղած,
«Նա նոցա սրտերը նորա հետ կապւած:
(Էդմոնտ, ա. դարձ. II տես.)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԱՐԳԱՐԻՏ ՊԱՐՄԱՅԻ. — Կարլոս V-ի աղջիկը, Նիդերլանդիացի
կառավարչուհին:

ԿՈՄՍ ԷԳՄՈՆՏ. — Գառլրի պրինցը:

ՎԻԼՀԷԼՄ ՕՐԱՆԱՅԻ:

ԴՈՒՔՍ ԱԼԲԱ:

ՖԵՐԴԻՆԱՆԴ. — Նորա բնական որդին:

ՄԱՔԻԱԻԷԼԼ. — Իշխանուհու ծառայութեան մէջ:

ԲԻԽԱՐԴ. — Էդմոնտի անձնական զրազիրը:

ՍԻԼԻԱ } Դուքս Ալբայի ծառայութեան մէջ:
ԳՈՄԷՅ }

ԿԼԱՐԱ. — Էդմոնտի սիրուհին:

Նորա մայրը:

ԶՕԷՍՏ. — Մանրավաճառ }

ՅԵՏՏԷՐ. — Դերձակ }

ՀԻԻՍՆ }

ՍԱՊՈՆԱԳՈՐԾ }

Բրիւսէլցիներ:

ԲՐԱԿԵՆԲՈՒՐԳ. — Քաղաքացու աղայ:

ԲՈՒԻԿ. — Էզմոնտի ղինւորը:

ՈՒՒԻԶՈՒՄ. — Խուլ անկեալ:

ՖԱՆԶԷՆ. — Դրագիր:

Ժողովուրդ, պալատականներ, պահնորդներ և այլն:

Տեսարանն է Բրիտանիոյ:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Բալիստրադեղնաձգութիւն

Ձինւորներ եւ քաղաքացիներ բալիստրադեղնորով. Յետտէրն առաջ է գալիս եւ լարում իւր բալիստրադեղը:

Ջօէստ: Դէ ձգիր ու պրծիր: Բայց և այնպէս զբաւը չես տանիլ: Երեք սե շրջանակ. կեանքումդ չես նետած լինիլ այդպէս: Ուրեմն այս տարի ես եմ վարպետ:

Յետտէր: Վարպետ և թաղաւոր միաժամ: Ո՛վ է այդ խլում քեզնից: Բայց դորա փոխարէն պէտք է և խնջոյքի համար կրկնակի վճարես: Դու պէտք է վճարես քո ճարտիկութեան համար, ինչպէս պահանջում է արդարութիւնը:

Բուիկ: Յէտտէր, ես հարւածը գնում եմ քեզանից. վաստակը կը բաժանեմ, պարոններին կը հիւրասիրեմ, ես այնքան վաղուց եմ այստեղ և պարտական եմ շատ քաղաքավարութիւնների համար: Եթէ ես վրիպեմ, ընդունենք, թէ դուք էք նետել:

Ջօէստ: Ն'ս պէտք է խօսեմ այդ մասին, որովհետեւ այդպիսով տարւողը խկապէս ես եմ: Բայց և այնպէս, Բուիկ, թող այդպէս լինի:

Բուիկ: (Նետում է): Դէ, խեղկատակ, զընէս տէք: Մէկ, երկու, երեք, չորս:

Ջօէստ: Չորս շրջանակ. ոչինչ:

Բոլորըքան: Կեցցէ տէր թաղաւորը, կեցցէ և կրկին կեցցէ:

Բուիկ: Շնորհակալ եմ, պարոններ, վարպետի համար այդ շատ շատ է: Շնորհակալ եմ ինձ տւած պատւի համար:

Յետտէր: Դորա համար պէտք է ինքներդ ձեզնից շնորհա-
Վալ լինիք:

Ռուիզում: Ա՛յ բան:

Ջօէստ: Ինչպէս է, ծերունի:

Ռուիզում: Ե՞ս ասեմ: Նա նետում է, ինչպէս իւր տէրը, նա
նետում է Էդմոնտի նման:

Բուիկ: Նորա մօտ ես մի թշառ արարած եմ: Իսկ հրազէնով
նա այնպէս է դիպցնում, ինչպէս աշխարհումս ոչ մի մարդ: Ձկար-
ծէք թէ նա այնպէս, երբ բախտը բերում է, կամ լաւ է տրա-
մադրւած: Ա՛յ, հէնց երբ նշան դնի՝ միշտ դիպցնում է: Ես նորանից
եմ սովորել: Եւ ի՞նչ մարդ պէտք է լինէր մէկը, որը նորան ծա-
ռայէր և ոչինչ չսովորէր: Ձմռանանք, պարոններ, թաղաւորը կե-
րակրում է իւր ստորադրեալներին: Դէ ուրեմն թաղաւորի հաշին
դինի տէք:

Յետտէր: Մեզանում սովորութիւն է, որ իւրաքանչիւրը...

Բուիկ: Ես օտարական եմ և թաղաւոր, և չեմ ճանաչում
ոչ ձեր սովորութիւնները, ոչ ձեր օրէնքները:

Յետտէր: Դու ուրեմն իսպանացուց էլ վատ ես: Նա զոնէ
մինչև օրս պարտք է համարել չխախտել մեր օրէնքներն ու սովո-
րութիւնները:

Ռուիզում: Ի՛նչ:

Ջօէստ: (Բարձրաձայն): Նա կամենում է մեզ հիւրասիրել:
Նա չի ուզում, որ մենք համափսոն լինինք, և թաղաւորը միայն
կրկնակին է վճարում:

Ռուիզում: Թողէք. սակայն առանց կանխադատութեան: Այդ
էլ նորա տիրոջ սովորութիւնն է—առատաձեռն լինել և ամէնին
աղատութիւն տալ, որքան հնար է:

Ամենքը: (Գինի են բերում). Նորին Մեծութեան կենացը,
կեցցէ:

Յետտէր: (Բուիկին). Ի հարկէ Ձերդ Մեծութեան:

Բուիկ: Սրտանց շնորհակալ եմ, եթէ արդարև այդպէս է:

Ջօէստ: Հարկաւ: Որովհետև մի նիդէրլանդցի հեշտ չէ կա-
րող մեր իսպանական Մեծութեան կենացը այնպէս սրտանց խմել:

Ռուիզում: Ո՞ւմ կենացը:

Զօհստ: (Բարձր): Փիլիսոս Երկրորդի, Սպանիայի թագաւորի: Ռուիզում: Մեր ամենաողորմած թագաւորի ու տիրոջ: Ասու-
ւած նորան երկար կեանք պարգևէ:

Զօհստ: Նորա հայր Կարլոս Հինգերորդին աւելի չեմք սիրում
Ռուիզում: Ասուած նորա հոգին լուսաւորէ: Ա՛յ, նա էր թա-
գաւորը: Նորա ձեռքը ողջ աշխարհի վերայ էր, և նա ամենի հա-
մար ամեն ինչ էր: Եթէ նա պատահէր ձեզ, կը բարեկէր այնպէս,
ինչպէս մէկ հարեան միսին. եթէ դուք մի փոքր վախենայիք, թէ
գիտէր այնպէս գեղեցիկ ձևերով... այո՛, ինձ հասկանում էք. նա
ոտով էր դուրս գնում, թէ ձիով, — և միշտ սակաւաթիւ մարդկանցով:
Մենք հօ բոլորեքեանս լաց եղանք, երբ նա հրաժարեց կառավա-
րութիւնից յօգուտ իւր որդու: Ասում եմ ձեզ, հասկանում էք:
Սա արդէն ուրիշ տեսակ է. սա աւելի վսեմաշուք է:

Յնտտէր: Նա այստեղ եղած ժամանակ միշտ շքեղ և թագա-
ւորական արդուզարդով էր լինում: Ասում են թէ նա քիչ է խօսում:

Զօհստ: Նա մեր—Նիդերլանդցիներին—սրտի թագաւորը չէ:
Մեր իշխանները պէտք է ուրախ և ազատ լինին, ինչպէս մենք:
Ապրեն և ապրեցնեն: Մենք չենք կամենում արհամարհել և ճնշ-
ւել, որքան էլ բարի խեղդուիկներ լինինք:

Յնտտէր: Կարծում եմ, որ թագաւորը շատ հեշտ կարող էր
մի մարդասէր տէր լինիլ, եթէ միայն աւելի լաւ խորհրդատուներ
ունենար:

Զօհստ: Ո՛չ, ո՛չ. նա սէր չէ տահում դէպի մեզ—Նիդերլանդ-
ցիներս. նորա սիրտը չի հակաւած դէպի ժողովուրդը. նա մեզ չի
սիրում. մե՞նք ինչպէս կարողանանք նորան սիրել: Ինչո՞ւ ողջ եր-
կիրը կոմս Էդմոնտին այնպէս քաղցր աչքով է նայում. ինչո՞նք է,
որ մենք բոլորեքեան պատրաստ ենք նորան ձեռներնին վրայ ման-
ածելու.—որովհետեւ նորա պէմքից պարզ երևում է, որ նա մեր
լաւն է ուզում. որովհետեւ նորա աչքերում կարդացւում է ուրա-
խութիւնը, ազատ կեանքը, բարի դիտաւորութիւնը. որովհետեւ նա
ոչինչ չունի, որից աղքատին բաժին չհանէր, մինչև անգամ և՛
կարիք չունեցողին—Կեցցէ՛ կոմս Էդմոնտը: Բուիկ, ձեզ է պատկա-
նում առաջին կենացն ասել: Առաջարկեցէք ձեր տիրոջ կենացը:

Բուիկ: Ամբողջ հոգով: Կեցցէ՛ կոմս Էդմոնտը.

Ռուիզում: Սան-Քլեմտինի յաղթողը:

Ռուիկ: Գրաւելինդէնի հերոսը:

Ռոլորքեման: Հուռռա...

Ռուիզում: Սան-Քլեմտինն իմ վերջին պատերազմն էր: Ես հաղիւ էի կարողանում շարժել, հաղիւ հազ ծանր հրազէնս քարշ տալ: Բայց և այնպէս Ֆրանսիացիներն մուշտակներն էլի մէկ անգամ խանձոտեցի և այնտեղ հրաժեշտի ժամանակ աջ ոտումս մի սկրթածք էլ տացայ:

Ռուիկ: Գրաւելինդէն, բարեկամներ, այնտեղ էր բանը: Յաղթութիւնը միայն մեզ էր պատկանում: Ողջ Ֆրանդրիան չէին աւերում և այրում այդ օտար շները: Բայց, կարծում եմ, մենք կարգին էինք դիպցնում նոցա: Նոցա ծեր, ամբաբուն աղէքը երկար դիմադրում էին, բայց մենք այնպէս էինք նեղում, սպանում, հարածում, որ նոքա իրանց ռէինները խաթարած՝ պատառեցին իրանց կարգերը: Եզմոնտի տակ ձին սպանեց: Բայց մենք ղեռ երկար կաւում էինք, այստեղ, այնտեղ. հետեւակը հետեւակի դէմ, ձիաւորը—ձիաւորի, զուռը—զնզի՝ ծովափի ընդարձակ աւաղի վրայ: Յանկարծ, կարծես երկնքից, գետաբերանից լաւեց ճ՛ըռ, գը՛ռ, թնդանօթներ էին, որ աւաղաբ արձակում էին Ֆրանսիացիների դէմ: Դոքա անգլիացիներ էին, որոնք ծովապետ Մալինի առաջնորդութեամբ Դիւնկիրսէնից պատահմամբ մեր մօտովն անցնում էին: Թէև նոքա մեզ շատ էլ չօգնեցին, որովհետև միայն ամենափոքրիկ նաւերով էին կարողանում մօտենալ, և այն էլ ոչ բաւականին մօտ. թէև մեր դէմ էլ էին նետում, բայց էլի լաւ էր: Այդ բանը լքացրեց թշնամիների սրտերը և մեզ քաջալերեց: Սկսեց՝ շըը՛խի, թրախի, տուր հա կը տաս: Ամեն ինչ սպանեցինք, ամեն ինչ ջուրը նետեցինք: Եւ աղէքը ջրի համն առնելն ու խեղդելը մէկ էին անում: Մենք, ինչքան որ հօլանդացիներ կայինք, բոլորս նոցա յետեւից: Մեզ—երկկենցաղներիս համար ջրումն աւելի լաւ էր, ինչպէս զորտերի համար, և անդադար թշնամուն ջրում ջարդոտում ու սպանոտում էինք, ինչպէս բաղերի: Ով որ մեզնից զուրս էր պրծնում, փախչելիս ղեղջիկահիների բրիչներից ու ջնսփայտներից էր սպանւում: Վերջն ստիպւած էր օտար Մեծութիւնը խեղճ թաթիկը մեկնել և խաղաղութիւն անել: Եւ այդ խաղա-

ղութիւնը դուք մեզ էք պարտական, մեծ Եղմանտին էք պարտական:
Ամենքը: Հուռւած. կեցցէ մեծ Եղմանտը. կրկին կեցցէ և նորից կեցցէ:

Յնտտէր: Երանի թէ Մարգարիտ Պարմաչու տեղ նորան նշանակած լինէին մեզ վրայ իշխան:

Զօէստ: Ո՛հ, ո՛չ. ճշմարիտը մնում է ճշմարիտ: Ես թոյլ չեմ տալ Մարգարիտին հայհոյելու: Հիմա կենացի հերթն իմն է. կեցցէ մեր ողորմած տիկինը:

Բոլորեքեան: Կեցցէ:

Զօէստ: Արդարեւ. այդ տան մէջ շատ պատական կանայք կան: Կեցցէ ռեզենտուհին:

Յնտտէր: Խելօք է նա և իւր ամեն գործերում չափաւոր: Միայն թէ այնպէս պինդ և սերտ կերպով չյարէր հողեորականներին: Նա էլ է հօ այս բանում մեղսակից, որ մենք մեր երկրում տասնուչորս նոր եպիսկոպոսական վեղարաւոր ունինք: Արդեօք ինչացո՞ւ են դոքա: Միմիայն նորա համար չէ այդ, որ կարելի լինի գէր պաշտօնները օտարներին տալ, այն ինչ սովորաբար վարդապետներն ընտրւում էին վանական ժողովներից: Եւ մեզ հաւատացնում են, այդ բանն ի սէր կրօնի է: Այո, հանաք բան չէ: Երեք եպիսկոպոսով բաւականանում էինք. և ամեն ինչ կարգ ու կանոնի տակ էր: Հիմա հօ նոցանից իւրաքանչիւրը պէտք է ցոյց տայ, իբրեւ թէ ինքը հարկաւոր է, և իւրաքանչիւր բոլի անհամուծիւն և վէճ է պատճառում: Եւ որքան աւելի էք խառնում ու թափահարում խնդիրը՝ այնքան աւելի է պղտորւում:

(Խմում են):

Զօէստ: Դէ այդ թաղաւորի կամքն էր. նա այդ բանում խառն չէ. նորա ձեռից ոչինչ չէ դալիս:

Յնտտէր: Նոր սաղմոսները չպէտք է երգենք. նոքա արդարեւ շատ զեղեցիկ ջանդերով են և ունին իսկ կազդուրիչ եղանակներ: Այդ սաղմոսները չպէտք է երգենք, բայց ստահակների երգեր—որքան կուղենք: Բայց ինչո՞ւ: Մէջը հերետիկոսութիւններ կան, ասում են, և էլի, Աստուծո՞ւ գիտէ, թէ ինչ բաներ: Այդ նոր երգերից հօ ես ինքս էլ եմ երգել, բայց ես մէջն այդպիսի բան ամենեւին չեմ գտած:

Բողիկ: Ես զեռ պէտք է նոցա հարցնեմ! Մենք մեր երկրում եր-
դում ենք, ինչ որ ուզում ենք: Որովհետեւ կոմս Էդմոնսոն է մեր կուսա-
կալը, նա այդպիսի բաների յետևից չի ընկնում:—Գինտոմ, Իւ-
պէռնում, ողջ Ֆլանդրիայում երգում է այդ սաղմոսներն ամեն
ցանկացող: (Բարձրաձայն) Հոգևոր երգերից էլ հօ անմեղ բան չկայ:
Ճշմարիտ չէ, ապեր:

Ռոուրդում: Ի հարկ է: Այդ հօ մի ժամերգութիւն է, ոգու
շինութիւն:

Յետտէր: Բայց նոքա ասում են, որ այդ սաղմոսները պատ-
շաճ ձևով չեն, նոքա իրանց ձևով չեն և որովհետեւ դա միշտ վտան-
գաւոր է ուստի աւելի լաւ է, որ մարդ բոլորովին ձեռք վերցնէ նոցա-
նից: Հաւատաքննութեան ծառաները դադարով շրջում են ամեն
կողմ և լրտեսում: Հէնց խղճի բռնաբարութիւնն էր պակաս: Եթէ
ինձ իրաւունք չէք տալիս գործելու, ինչ որ ցանկանում եմ, հօ
կը թողնէք ինձ մտածել և երգել, ինչ որ կամենում եմ:

Զօէստ: Հաւատաքննութիւնը գլուխ չի գալ: Մենք սպանի-
ացիների նման չենք թողնիլ մեր խիղճը բռնաբարելու: Եւ ազնաւ-
կանութիւնն էլ պէտք է աշխատէ ժամանակին նորա թեւերը խու-
զել:

Յետտէր: Շատ ձախորդ բան է: Եթէ օրից մի օր այդ մար-
դաց մոքոմբն անցնի տունս թափւելու, իսկ ես նստած աշխատան-
քիս՝ հեռն էլ մրմնջում եմ մի ֆրանսիական սաղմոս, սակայն հե-
տը ոչինչ չեմ մտածում:—Ո՛չ վատ, ո՛չ լաւ, բայց մրմնջում եմ,
որովհետեւ բան է՝ միտս ընկել.—ես արդէն հերիտիկոս եմ և
բանտարկւում եմ: Կամ թէ դաշտով անցնելիս կանդ եմ առնում
ժողովրդի մի խմբի մօտ, որը լսում է մի նոր քարոզչի, Գերմանի-
այից եկածներից մէկին, —եւ տեղնուտեղը համարւում եմ ապրս-
տամբ և գլխատւելու վտանդի մէջ եմ: Լսել էք նոցանից մէկնու-
մէկին քարոզելիս:

Զօէստ: Ա՛յ արիասիրտ մարդիկ: Նորերս լսեցի մէկին դաշ-
տում հաղարաւոր մարդոց. առաջ խօսելիս: Այն մի ուրիշ տեսակ
կերակուր էր և ո՛չ թէ ինչպէս մերոնք են բեմից աջ ու ձախ
թմբկահարում և մարդոց անմարսելի լատիներէնով խեղդում: Նա
խօսում էր ազատ ու համարձակ. ասում էր, թէ ինչպէս նոքա

մինչև օրս մեր զլիսին խաղք են խաղացել, տգիտութեան մէջ պահել և թէ ինչպէս մենք կարող էինք աւելի լուսաւորութիւն ստանալ: Եւ այն ապացուցանում էր նա բոլորն Աստածաշնչով: Եւ տալէր: Եւ պէտք է որ դորանում մի բան լինի: Ես ինքս էլ եի միշտ խօսում և մտածում այդ բանի վերայ: Այդ վաղուց է մտքովս անցել:

Բուիկ: Ամբողջ ժողովուրդն էլ նոցա յետևից վազում է:

Ջօէստ: Եւ հասկանալի է, երբ մարդ կարող է մի լաւ բան և նոր բան լսել:

Եւ տալէր: Հա ինչ կայ որ, թող ամեն մարդ իւր ձեռով քարողէ:

Բուիկ: Դէ շնու, պարոններ, դատարկախօսութեամբ մոռանում էք զինչն և Օրանացուն:

Եւ տալէր: Չմոռանանք նորան, նա կատարեալ պատնէշ է: Բաւական է նորան յիշել, և հաւատում ես, որ կարող ես նորա յետևին այնպէս թաքնուել, որ սատանան չի կարողանալ քեզ դուրս քաշել: Կեցցէ Վիլհելմ Օրանացին, հռուս:

Բոլորն քնան: Կեցցէ:

Ջօէստ (Ռուսիոյումին) Դէ, ծերուկ, դու էլ կենաց առաջարկիր: Ռուսիոյում: Ծեր զինւորների, բոլոր զինւորների կենացը, կեցցէ պատերազմը:

Բուիկ: Կեցցես, ծերուկ, բոլոր զինւորների կենացը, կեցցէ պատերազմը:

Եւ տալէր: Պատերազմ, պատերազմ, զիտէք արդեօք, ինչ էք աղաղակում: Որ այդ ձեր բերնից հեշտ դուրս է թռչում, շատ բնական է. բայց թէ միևնոյն ժամանակ մեզնից իւրաքանչիւրն ինչպիսի սրտնեղութիւն է զգում—չեմ կարող ասել: Ամբողջ տարին թըմբկի դոփիւն լսել: Հէնց միայն այն լսել, թէ ինչպէս այտոեղ մի դունդ է դալիս, այնտեղ—մի ուրիշը. ինչպէս նոքա մի բլուր բարձրացան և մի աղօրիքի մօտ կանդ առան, որքան են մնացել այստեղ, որքան այնտեղ. ինչպէս են իրար հրում, և մէկը տանում է, միւսը տարւում. իսկի մարդ չի էլ հասկանում, թէ տանողն ով է, տարւողն ով: Ինչպէս մի քաղաք զրաււում է, ինչպէս են քաղաքացիներին մորթոտում. և ինչ է լինում խեղճ կնիկարմատների

ու երեխաների վիճակը, — աջնպիսի անձկութիւնն և սարսափ է տիրում, որ իւրաքանչիւր վայրկեան մարդ մտածում է. «Հօրէս եկան, մենք էլ ենք նոցա օրումն...»

Զօէստ: Հէնց այդ պատճառով էլ պէտք է ամեն մի քաղաքացի միշտ վարժելի զէնքում:

Յետտէր: Այ՛ո, վարժոււմ է, ով կին ու որդիներ ունի: Բայց և այնպէս ինձ համար աւելի լաւ է զինւորների մասին լսել, քան թէ նոցա տեսնել:

Բուիկ: Դորանով հօ ինձ վիրաւորում էք:

Յետտէր: Այդ ձեզ չէ վերաբերում, երկրացիս: Հէնց որ մենք սոսնիսկան պահապան զօրքից ազատուեցանք, կարծես նորից շունչ առանք:

Զօէստ: Իրաւ է. նոքա քեզ վերայ շատ շատ էին ծանրանում:

Յետտէր: Ծաղր ես անում:

Զօէստ: Նոքա քեզ հետ շատ խիստ են վարւել:

Յետտէր: Ռէխդ հաւաք պահիր!

Զօէստ: Նոքա սորան փախցրել էին խոհանոցից, նկուղից, սենեակից — անկողնից: (ծիծաղում են):

Յետտէր: Ապուշի մէկն ես դու:

Բուիկ: Խաղաղութիւն, պարոններ: Միթէ զինւորը պէտք է խաղաղութիւն կանչէ: Արդ՝ որովհետեւ դուք մեր մասին ոչինչ չէք ուզում լսել, ուրեմն առաջարկեցէք նաև ձեր կենացը, մի քաղաքացիական կենաց:

Յետտէր: Դորա համար պատրաստ ենք: Ապահովութիւն և խաղաղութիւն!

Զօէստ: Կարգ ու կանոն և ազատութիւն!

Բուիկ: Շատ գեղեցիկ. դորանով մենք էլ ենք զոհ:

(Գտնամենքը խփում են եւ ամէն մէկը մի մի խօսք կրկնում: Ծերն ագանջ է դնում նոցա եւ վերջն ինքն էլ միանում:)

Ամենքը: Ապահովութիւն և խաղաղութիւն, կարգ ու կանոն և ազատութիւն:

ԵՐԿՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ.

Երազարիտ զոհուհու պալատը.

Մարգարիտ Պարմացին որսորդական հագուստով, պալատականներ, մանկավարժներ, ծառաներ.

Մարգարիտ: Յետաձգեցէք որսը. այսօր դուրս չեմ գնում: Սասցէք Մաքիաւէլին, որ ինձ մօտ գայ: (Ամենքը հեռանում են): Այս զարհուրելի իրողութիւնների մասին մտածմունքն ինձ հանգստութիւն չի տալիս: Ել ոչ մի բան չի կարողանում ինձ ոչ զւարճացնել, ոչ զբաղեցնել: Միշտ աչքիս առաջն են այդ մոտապառկերներն ու հոգսերը: Հիմա թագաւորը կ'ապէ, թէ այդ իմ բարութեան, իմ ներողամտութեան հետեւնեքներն են: Սակայն իւրաքանչիւր վայրկեան խիղճս վկայում է, որ ես արել եմ ամենախոհալանն ու ամենալաւը: Հապա պէտք է կատարութեանս փութորկով այս բոցերն աւելի վաղ բորբոքէի ու տարածէի: Ես յոյս ունէի նոցա սահմանափակել, բոցերն իրանց խել մէջը թաղել: Ես լաւ դիտեմ, որ ինքս իմ առաջ արդար եմ, բայց ինչպէս կ'ընդունէ այդ եղբայրս: Որովհետեւ միթէ ուրանալու է այս, որ օտար ուսուցիչների յաւակնութիւնն օրէց օր աճել է, նոքա մեր սրբութիւնը հաչոցել են, ժողովրդի բութ չբերը շարժել, խարդաւմտութիւնը նոցա մէջ մտցրել: Անմաքուր հոգիները խռնուել են ասպատակների հետ և այնպիսի սարսափելի բաներ են տեղի ունեցել, որոնց մասին մտածելն անդամ զարհուրելի է, և որոնց մասին ես պէտք է հիմա մի առ մի տեղեկութիւն տամ պալատը, շուտ և մի առ մի, որպէս զի ընդհանուր կարծիքն ինձ չկանխէ. որպէս զի թագաւորը չկարծէ, թէ ուղում են աւելի ևս ծածկել: Եւ այդ շարիքը խափանելու համար ես ոչ մի միջոց չեմ տեսնում, — ոչ մեղմ, ոչ խիստ: Ո՛հ, ի՜նչ ենք մենք մեծերս մարդկութեան ալիքների վերայ: Մենք կարծում ենք՝ թէ նորան իշխում ենք, բայց նա մեզ վեր ու վար, դէս ու դէն է մղում: (Մաքիաւէլը մտնում է): Թագաւորի հասցէին նամակները պատրաստ են:

Մաքիաւէլ: Մի ժամից կարող կը լինիք ստորագրել:

Մարգարիտ: Արդեօք տեղեկութիւնը բաւականին ընդարձակ էք գրել:

Մաքիաւէլլ: Ընդարձակ և հանգամանօրէն, ինչպէս որ սիրում է թագաւորը: Ես պատմում եմ, թէ ինչպէս ամենից առաջ Սբ. Օմէրում պատկերամարտութեան մոլեղնութիւնը յայտնւում է: Ինչպէս մի կատաղի ամբոխ բրերով, կացիններով, մուրճերով, սանդուխներով, թոկերով՝ սակաւաթիւ զինւածներն ուղեկցութեամբ, յարձակւում է նախ մատուռների, եկեղեցիների, վանքերի վերայ, աղօթաւորներին ցիրուցան անում, կողպած դռները կոտրատում, ամեն ինչ չեղաշրջում, թեմերը խորտակում, սրբերի անդրինները ջարդոտում, բոլոր պատկերները փճացնում, ինչոր սուրբ և նւիրական բան են գտնում—բոլորը փշրոտում, պատռոտում, ոտնատակ տալիս: Ինչպէս գնալով՝ ամբոխը շատանում է, Իւպէրնի բնակիչները նորա առաջ բաց են անում դռները: Ինչպէս այդ ամբոխը մայր տաճարը անհաւատալի արագութեամբ աւերում է, եպիսկոպոսի գրադարանն այրում: Ինչպէս մի մեծ հրոսա՛յ՝ նոյնպիսի անմոռութեամբ վարակած, տարածւում է Մենինում, Կոմինէսում, Ֆէրւիսում, Աիլլում, ոչ մի տեղ ընդդիմադրութիւն չի գտնում, և ինչպէս է, համարեն, ողջ Ֆլանդրիայում զաւադութիւնը յղանում և գլուխ դալիս:

Մարգարիտ: Ախ, ինչպէս նորոգւում է վիշտս քո կրկնելով: Եւ դորան էլ միանում է այն երկիւղը, որ չարիքը, գնալով, աւելի ու աւելի կը մեծանայ: Ասացէք ինձ ձեր կարծիքը, Մաքիաւէլլ:

Մաքիաւէլլ: Ներեցէք, Ձերդ Բարձրութիւն. իմ կարծիքները նման են ցնորքների: Եւ դուք թէև իմ ծառայութիւնովը զոհ էք եղած, բայց և այնպէս սակաւ է պատահել որ հաճած լինիք իմ խորհրդին հետեւել: Դուք միշտ կատակով ասում էիք. «Ի՞նչ շատ հեռուն ես տեսնում, Մաքիաւէլլ, դու պէտք է պատմագիր լինէիր. ո՞վ գործում է, նա պէտք է ամենամօտիկի վերայ մտածէ»: Միթէ այս պատմութիւնը կանխօրէն չեմ պատմած: Միթէ բոլորը չնախագուշակեցի:

Մարգարիտ: Ես էլ եմ շատ բան նախատեսնում, բայց փոփոխել չեմ կարողանում:

Մաքիաւէլլ: Կարճ:—Դուք չէք արդելում այս նոր վարդապետութիւնը: Պաշտօնապէս ընդունեցէք նորա դոյութիւնը, անջատեցէք նոցա ուղղափառներից, տեցէք նոցա եկեղեցիներ,

դրէք քաղաքացիական կարգ ու կանոնի տակ և սահմաններն մէջ դրէք նոցա. և այդպիսով դուք ապստամբներին միանգամից կը հանդըստացնէք: Ուրիշ ամեն միջոց իզուր է. և դուք միայն երկիրը կ'աւերէք:

Մարգարիտ: Դու մոռացել ես, թէ ինչպիսի զգանքով մերժեց եղբայրս նոյն իսկ հարցը, թէ արդեօք կարելի է ընդունել նոր վարդապետութեան գոյութիւնը: Ձեռ իմանում, ինչպէս նա ինձ ուղղած իւրաքանչիւր նամակում ամենաեռանդուն կերպով պատելիւում է ուղիղ հաւատի պահպանութիւնը, որ նա լսել անդամ չի ուզում խաղաղութիւնն ու միութիւնը կրօնի հաշուով վերականգնել: Նա ինքը չէ, որ գաւառներում մեղինից ծածուկ լրտեսներ է պահում, տեղեկանալու համար, թէ ով է հակառէպիսիոս վարդապետութիւնը: Նա, ի դարմանս մեր, չէ անսանձ սորան կամ նորան, որոնց նա մեղադրում էր թէ մեր շրջանում ծածուկ հերետիկոս են դարձած: Նա չի հրամայում խստութիւն և կոշտութիւն: Սակայն պէտք է մեզմէ լինիմ, պէտք է առաջարկութիւններ անեմ, որ նա ներողամիտ լինի: Ձեմ կորցնիլ նորա դէպի ինձ ունեցած վստահութիւնն ու հաւատը:

Մարիաւէլլ: Նս լաւ գիտեմ, թագաւորը հրամայում է, նա ձեզ յայտնում է իւր դիտաւորութիւնները: Նա պատելիւում է, որ Դուք հանդստութիւնն ու խաղաղութիւնը նորից վերականգնէք մի այնպիսի միջոցով, որը նոցա սրտերն աւելի ևս կը դառնացնէ, որը պատերազմն անխուսափելի կերպով երկրում կ'արժարձէ: Կշտադատեցէք, թէ ինչ էք անում: Բոլորեքեան վարակած են. թէ աչքի ընկնող վաճառականները, թէ աղնականութիւնը, թէ ժողովուրդը, թէ զինուորները: Ի՞նչ օգուտ իւր կարծիքի վերայ յամուելուց, երբ մեր շուրջն ամեն ինչ փոփոխուում է: Նրանի մի բարի հոգի Փիլիպպոսին ներշնչէր, որ մի թագաւորի աւելի վայել է երկու այլակրօն ժողովրդի կառավարել, քան թէ նոցա մէկու մէկով ձեռքով ջնջել:

Մարգարիտ: Այդպիսի խօսքեր էլ բերանից չհանես: Նս լաւ գիտեմ, որ քաղաքականութիւնը սակաւ է կարող հաւատարմութիւն ու հաւատ պահպանել. որ նա արտաքսում է մեր սրտից անկեղծութիւնը, բարեարտութիւնը, զիջողութիւնը: Աշխար-

հական գործերում աչդ, աւանդ, աւելի քան ճշմարիտ է: Բայց միթէ Աստուծոյ հետ էլ պէտք է խաղանք, ինչպէս մէկմէկու հետ: Կէտք է անտաքնր լինինք դէպի մեր ուղիղ վարդապետութիւնը, որի համար շատ շատերը իրանց կեանքը զոհել են: Մենք պէտք է աչդ զոհ բերենք անձանթ, տարակուսական, ինքն իրան հակասող նորաձևութիւններին:

Մաքիաւէլլ: Միայն թէ դորա պատճառով իմ մասին վատ կարծիք մի՛ք կազմիլ:

Մարգարիտ: Ես ճանաչում եմ թէ քեզ, թէ քո հաւատարմութիւնը, և այն էլ զիտեմ, որ մէկը կարող է ազնիւ և խոհական մտքով լինել, թէև նա իւր հոգու փրկութեան ամենակարճ, ամենալաւ ճանապարհից շեղւած լինի: Կան, Մաքիաւէլլ, մի քանի մարդիկ, որոնց ես պէտք է գնահատեմ, բայց և կշտամբեմ:

Մաքիաւէլլ: Ո՛ւմն էք ակնարկում:

Մարգարիտ: Ես պէտք է խոստովանեմ, որ Եզմնտն աչսօր ինձ մի խիստ և խորին տհաճութիւն պատճառեց:

Մաքիաւէլլ: Իւր ճիշդ վարմունքովը:

Մարգարիտ: Սովորականովը, այսինքն իւր արտաբերութիւնով և թեթևամտութիւնով: Ես ստացայ այն զարհուրելի լուրը ուղիղ այն ժամանակ, երբ ես նորա և շատերի ուղեկցութեամբ եկեղեցուց գալիս էի: Ես չկարողացայ վիշտս զապել և բարձրաձայն վայ տւի և նորան դառնալով գոչեցի. «Տեսէք, ինչ է կատարուում ձեր նահանգներում: Այդ թոյլ էք տալիս դուք, կոմս, ումնից որ թագաւորը մեծամեծ յոյսեր ունէր:

Մաքիաւէլլ: Եւ ինչ պտտասխանեց նա:

Մարգարիտ: Իբրև թէ աչդ ոչինչ, իբրև թէ դա կողմնակի մի բան լինէր, պտտասխանեց. «Միայն թէ զեռ նիդէրլանդցիները հանդստացնէին իրանց սահմանադրութեան վերաբերմամբ, — մնացածը հեշտ է»:

Մաքիաւէլլ: Գուցէ նա խօսել է աւելի ճշմարիտ, քան խելօք և համեստ: Ինչպէս պէտք է վստահութիւն չդնայ և յարատէ, երբ նիդէրլանդցին տեսնում է, որ հարցը աւելի նորա ստացւածքի մասին է, քան թէ նորա երջանկութեան և հոգու փրկութեան: Նոր եպիսկոպոսներն աւելի հոգիներ են փրկել, թէ զէր

ռոճիկներով խնջոյքներ տւել. և մեծ մասն օտարականներ չմնե-
րեալ ևս բոլոր կուսակալութիւնները նիդէրլանդցիների ձեռ-
քին են. սպանիացիք շատ պարզ նկատել չեն տալիս, թէ իրանց
ամենամեծ, ամենաանդիմադրելի տենչանքն է—այդ տնջերն ստա-
նալ: Չէ որ մի ժողովուրդ աւելի սիրով կ'ուզէ իւր ձեռով և իւրա-
ջիներով կառավարել, քան օտարականներով, որոնք ձգտում են
բոլորի հաշուով նորից կալածներ ձեռք բերել, որոնք հետները մի
ուրիշ չափ են բերում, որոնք իշխում են անսիրալիի կերպով և
առանց կարեկցութեան:

Մարգարիտ: Դու հակառակորդների կոչմն ես բռնում:

Մաքիաւէլլ: Սրտով—անկասկած, ոչ: Իսկ խելքով կ'ուզէի,
եթէ կարողանայի, բոլորովին մերերի կոչմը լինել:

Մարգարիտ: Քո ասելով ուրեմն կարիքը կ'ստիպէր, որ ես
իմ պաշտոնը նոցա զիջանէի, որովհետեւ Էզմոնտն ու Օրանացին մեծ
յոյս ունին այստեղն ստանալու: Առաջ նոքա հակառակորդներ էին.
հիմա միացել են իմ դէմ և բարեկամներ, անբաժանելի բարեկամներ
են դարձել:

Մաքիաւէլլ: Վտանգաւոր զոյգ:

Մարգարիտ: Ուղիղն ասած՝ ես վախենում եմ Օրանացուց,
և վախենում Էզմոնտի մասին: Օրանացին լաւ բան չէ մտածում.
նորա մտքերը հեռուն են հասնում. նա ծածկամիտ է. ցոյց է տա-
լիս, թէ բոլորի հետ համաձայն է, երբէք չի հակառակում. այն-
ինչ խորին պատկառանքով և ամենամեծ զգուշութեամբ իւր ու-
ղածն է անում:

Մաքիաւէլլ: Բոլորովին ընդհակառակն՝ Էզմոնտը գնում է
ազատ քայլերով, կարծես աշխարհս նորան պատկանելիս լինի:

Մարգարիտ: Նա գլուխը այնպէս բարձր է պահում, կար-
ծես նորին Մեծութեան ձեռը նորա վերայ տարածւելիս չլինի:

Մաքիաւէլլ: Ողջ ժողովրդի աչքերը նորան են ուղղած և
սրտերը կապած են նորա հետ:

Մարգարիտ: Նա իրան միշտ այնպէս է ցոյց տալիս, որ
կարծես թէ ոչ ոք նորանից պահանջելիք հաշիւ չունենար: Դեռ
կրում է Էզմոնտ անունը, ուրախանում է, որ իրան անւանում են
կոմս Էզմոնտ, կարծես չկամենալիս լինէր մոռանալ, որ իւր նախ-

նիքը Գէլդերնի տէրերն էին: Ինչո՞ւ չէ իրան անւանում Գաուրի իշխան, ինչպէս իրան վայել է: Ինչո՞ւ է այդպէս անում: Կամենում է մեւած իրաւունքները նորից վերականգնել:

Մաքիաւէլլ: Ես նորան համարում եմ թագաւորի հաւատարիմ ծառայ:

Մարգարիտ: Եթէ կամենար, ինչ հեշտ կարող էր կառավարութիւնն իրան երախտապարտ դարձնել. այն ինչ նա, առանց ինքն էլ մի որևէ շահ ունենալու, մեզ արգէն անասելի տհաճութիւններ է պատճառել: Նորա հանդէսները, խնջոյքները, կերութեամբները աղնականութիւնն աւելի են սերտ կապով միացրել, քան թէ գաղանի ամենախտանդաւոր ժողովները: Նորա կենացների հետ հիւրերն ստացել են մի տեղախոս հարրածութիւն, մի մըշտատե անզգայութիւն: Քանի՞ քանի՞ անգամ է նա իւր կատակ ճառերով ժողովրդի սրտերը շարժել, և ինչպէս էր ամբոխը նորա ծառաների նոր համազգեստի, անմիտ շքանշանների վերայ հիացած:

Մաքիաւէլլ: Ես համոզւած եմ, որ այդ ղեկամար չէ եղած:

Մարգարիտ: Տես՞ զնա՞ն էլ հէրիք է: Ինչպէս ասում եմ, նա մեզ զնասում է, և ինքն էլ չի օգտուում. նա լուրջը կատակի տեղ է ընդունում, և մենք, պարապ ու անհոգ չերեւալու համար, պէտք է կատակը լըջի տեղ ընդունենք: Այդպէս մէկը միւսին գրգռում է, և մարդ հակառակի պէս հէնց այն է անում, ինչից խուսափել է աշխատում: Նա աւելի վտանգաւոր է, քան մի դաւադրութեան երդւեալ պարագլուխ: Եւ ես չարաչար սխալւած կը լինէի, եթէ կարծէի, որ դորա պատճառով պալատում նորա դէմ ոխ չեմ պահում: Եւ ես չեմ կարող ուրանալ՝ սակաւ է պատահում, որ նա ինձ չգայրացնէր, չարաչար չզայրացնէր:

Մաքիաւէլլ: Ինձ այնպէս է թւում, որ նա ամեն բանում իւր խղճի համաձայն է գործում:

Մարգարիտ: Նորա խիղճը մի քմահաճ հայելի ունի. նորա վարմունքը յաճախ վիրաւորական է: Յաճախ այնպէս է վարւում, որ կարծես թէ կատարելապէս համոզւած լինի, թէ նա ինքն է տէրը և այդ իւր կողմից միմիայն մի հաճոյակամութիւն է, որ չի կամենում մեզ այդ զղալ տալ, որ չի կամենում հէնց ուղղակի դուրս վռնել, թէ այդ առանց այն էլ կը լինի:

Մարիամէլլ: Խնդրում եմ շատ էլ վտանգաւոր մտքով չմեկնել նորա անկեղծութիւնը, նորա ամեն ծանր զործ թեթեւ գաղտոյ բախտաւոր խառնածքը: Դուք կը մնասէք միայն նորան և Ձեզ:

Մարգարիտ: Նս ոչինչ, չեմ մեկնում: Նս խօսում եմ միայն անխուսափելի հեռանքների մասին. և ես ճանաչում եմ նորան: Նորա նիւէրլանդական աղնական ծագումն և կրճքից կախած Ոսկեզեղմն ամրապնդում են նորա վտահոլութիւնն ու անվեհերութիւնը: Երկուսն էլ կարող են նորան պաշտպանել թաղաւորի յանկարծական և կամայական դժկամակու թիւնից: Ճիշտ հետապօտիր. Խլանդրիային հասած ամբողջ դժբախտութիւնը հօ միմիայն նորա մեղն է: Նա առաջինը անդեկութիւն առաւ օտար ուսուցիչների մասին, բայց առանձին ուշադրութիւն չդարձրեց, զուցէ և ծածուկ ուրախացաւ էլ, որ մենք նոր հոգսեր պիտի ունենանք: Մի թող ինձ. ինչոր սրտումս հաւաքւած է, պիտի այս առիթով դուրս թափուի: Նս չեմ ուղում սլաքները ի զուր նետել. ես գիտեմ նորա ինչ թոյլ կողմին զիւլեմ: Նա էլ է զգայուն:

Մարիամէլլ: Հրամայե՛լ էք խորհրդի կանչելու: Օրանացին էլ է զարու:

Մարգարիտ: Անուէրպէն մարդ եմ ուղարկել նորա յետեից: Նս ուզում եմ պատասխանատուութեան ծանրութիւնը նոցա վերայ ձգել: Նոքա կամ սէտք է ինձ հետ միասին լրջութեամբ չարիքին դիմադրեն, կամ իրանց էլ ապստամբ հրատարակեն: Շտապիր, որ նամակները պատրաստ լինին, և բեր, որ ստորագրեմ. ապա շուտով Մադրիդ ուղարկիր փորձառու ֆասկային: Նա անխոնջ է և հաւատարիմ, թող եղբայրս նախ նորա միջոցով լուրը լսէ: Համբաւը թող նորան չկանխէ: Նս կամենում եմ անձամբ նորա հետ էլի խօսել, նախ քան նորա հեռանալը:

Մարիամէլլ: Ձեր հրամանները կը կատարեն իսկոյն և ճշտութեամբ:

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ:

Քաղաքացու տուն:

Կլարա, նորա մայրը, Բրակենբուրգ:

Կլարա: Ձէք կամենում դերձանս բռնել, Բրակենբուրգ:

Բրակենբուրգ: Խնդրում եմ, խնայեցէք ինձ, Կլարա:

Կլարա: Ելի ի՞նչ է պատահել Ձեզ: Ինչո՞ւ էք մերժում ինձ սիրոյ այս չնչին ծառայութիւնը:

Բրակ: Դուք ինձ դերձանով առաջներդ այնպէս ամուր կախարդում էք, որ չեմ կարող Ձեր աչքերից ծածկւել:

Կլարա: Ինչ ցնորքներ. եկէք բռնեցէք:

Մայրը: (Առողի վերայ՝ դորձելով): Մէկ երգէք դէ՛հ. Բրակենբուրգն այնպէս գեղեցիկ դաշնակցում է: Առաջներն ուրախ էիք լինում և ինձ միշտ ծիծաղեցնում էիք:

Բրակենբուրգ. Հա՛, առաջները:

Կլարա: Մենք ուզում ենք երգել:

Բրակենբուրգ: Ինչ որ կամենաք:

Կլարա: Միայն գեղեցիկ, աշխուժով և զւարթ: Իմ սիրածը մի զինւորի երգ է: (Նա դերձան է կծկում եւ երգում Բրակենբուրգի հետ):

Թմբուկը դոփում է,

Սրինգը հնչում,

Սիրելիս զինավառ.

Գնդին հրամայում,

Ձեռին տէգ՝ մարդոցը

Նա առաջնորդում:

Ա՛խ, սիրտս թնդում է,

Արիւնս եռում.

Երանի լինէի

Չինւորի շորում:

Դարպասից կ'ենէի

Քայլով անվահեր

Նրա հետ դաւառներ,

Շատ ու շատ տեղեր:

Թշնամին նահանջեց,

Սկսում ենք ջարդել,

Ի՛նչ անմահն բախտ

Տղամարդ լինել:

(Բրակենբուրգը երգելիս յաճախ նայում է Կլարային, վերջը նորա ձայնը բռնւում է. արտասուք է գալիս աչքերը. թելը ձեռքից վայր է ձգում եւ ինքը մօտենում պատուհանին. Կլարան երգը միայնակ վերջացնում է. մայրն ակնարկում է նորան կէս նեղացած. նա կանգնում է. մի քանի քայլ գնում է դէպի Բրակենբուրգը. յետ է դառնում կէս-անվճիռ եւ նստում):

Մայրը: Այդ ի՞նչ է փողոցում, Բրակենբուրգ, զօրաչուի ձայն եմ լսում:

Բրակենբուրգ: Իշխանուհու թիկնապահներն են:

Կլարա: Այս ժամի՞ն, այս ի՞նչ է նշանակում. (Նա կանգնում է եւ գնում դէպի պատուհանը՝ Բրակենբուրգի մօտ) սոքա ամենօրեայ պահնորդները չեն. շատ շատ են սոքա: Համարեմ նոցա ամբողջ գունդը. ա՛խ, Բրակենբուրգ, գնացէք մի լսեցէք, թէ ինչ է

պատահել: Արտասովոր բան պէտք է լինի: Գնացէք, բարի Բրակներուդ, արէք ինձ համար այդ լաւութիւնը:

Բրակներուդ: Գնում եմ, իսկոյն այտուղ եմ նորից (Նա հեռանալիս Կարային է մեկնում իւր ձեռք. Կարան տալիս է նորան իւրը):

Մայրը: Դու նորան արդէն նորից ես դուրս ուղարկում:

Կլարա: Հետաքրքիր եմ: Միւս կողմից՝ չպարսաւէք ինձ, մայր, նորա ներկայութիւնն ինձ ցաւ է պատճառում: Մինչև օրս չգիտեմ, թէ ինչ դիրք իւնիմ նորա վերաբերմամբ: Ես նորա առաջ մեղաւոր եմ, և ինձ ցաւեցնում է այն բանը, որ նա այդ այնպէս սրտին մօտ է ընդունում: Ի՞նչ անեմ, որ այլապէս լինել չեմ կարող:

Մայրը: Շատ ուղղամիտ երիտասարդ է:

Կլարա: Այդ ես էլ եմ ընդունում: Ես պէտք է նորան սիրալիր դիմաւորեմ: Յաճախ ակամայ ձեռք սեղմում է, երբ նորանն այնպէս սիրալիր ինձ դիպում է: Ես ինձ յանդիմանում եմ, որ նորան խաբելով՝ տեղիք եմ տալիս իզուր յոյսեր տաճելու: Անել դրութեան մէջ եմ: Ասածուն յայտնի է, որ ես նորան չեմ խաբում: Ես չեմ ուզում, որ նա յուսայ. բայց չեմ էլ կարող նորան յուսահատեցնել:

Մայրը: Այդ լաւ չէ:

Կլարա: Ես նորան սիրում էի և դեռ հիմա էլ հոգով նորան բարիք եմ ցանկանում: Ես կարող կը լինէի նորան մարդու դնալ. բայց կարծում եմ ես երբէք չէի սիրահարւած նորա վրայ:

Մայրը: Դու միշտ բախտաւոր կը լինէիր նորա հետ:

Կլարա: Ապահովւած կը լինէի և կ'ունենայի հանգիստ կեանք:

Մայրը: Եւ այս բոլորը թեթեւամտութեամբ ձեռից թողնելում դժուար ես մեղաւոր:

Կլարա: Զարմանալի դրութեան մէջ եմ ես: Երբ ես անցած գնացածի վրայ մտածում եմ, մէկ թւում է, թէ հասկանում եմ, մէկ—ոչ: Բայց բաւական է Եղմանտին նորից մէկ մտիկ տամ, և ամեն ինչ ինձ լաւ հասկանալի կը լինի, այդ շատ աւելի հասկանալի կը լինէր: Ախ, ինչ մնորդ է: Բոլոր նահանգները նորան պաշտում են, և ես նորա զրկում՝ աշխարհիս ամենաբախտաւոր արարածը չպէտք է լինէի:

Մայրը: Բայց ապագայում ինչպէս կը լինի:

Կլարա: Ա՛խ, ես միայն հարցնում եմ, թէ արդեօք նա ինձ սիրում է. և թէ արդեօք նա սիրում է ինձ՝ միթէ՞ այդ հարց է:

Մայրը: Զաւակները ծնողների համար տանջանք են միայն: Ի՞նչ կը լինի արդեօք սորա վերջը: Միշտ հոգս ու տրտմութիւն: Սա լաւ վե՛րջ չէ ունենալու: Դու դժբախտացրիր թէ՛ քեզ, թէ՛ ինձ:

Կլարա: (Անխռով): Բայց դուք սկզբում թոյլ էիք տալիս:

Մայրը: Ահա՛ս, անչափ բարի էի. միշտ անչափ բարի եմ:

Կլարա: Երբ էզմոնտը մօտենալու արշաւում էր, իսկ ես վազում էի դէպի պատուհանը, ինձ յանդիմանում էիք, չէիք մօտենում պատուհանին և ինքներդ: Երբ նա վեր էր նայում, ժպտում էր, գլխով էր անում, ինձ բարեւ էր տալիս, դժգոհ էիք լինում դորանից: Դուք ինքներդ ձեր աղջկանով ձեզ պատուած չէիք համարում:

Մայրը: Հիմա ինձ դեռ յանդիմանում էլ ես:

Կլարա: (Զգոճաւած): Երբ նա այնպէս յաճախ այս փողոցն է գալիս, և մենք լաւ զգում էինք, որ իմ պատճառով է նա այդ քայլն անում, ինքներդ այդ ներքին ուրախութեամբ չէիք նկատում: Յետ էիք կանչում ինձ, երբ ես՝ պատուհանի յետեւը թաղընւած, նորան սպասում էի:

Մայրը: Ինչ կը կարծէի թէ բանն այստեղ կը հասնի:

Կլարա: (Բեկող մոյնով եւ արտասուքը զսպելով): Եւ երբ նա՝ վերադառնալով փաթաթւած, մի երեկոյ յանկարծակի հասաւ մեզ կանթեղի մօտ, ո՞վ էր զբաղւած նորան ընդունելու, մինչ ես, զարմացած, աթոռի վերայ գամւածի պէս նստած էի:

Մայրը: Միթէ՛ կարող էի երկիւղ կրել, որ այս դժբախտ սէրը խեղճ Կլարայիս այդպէս շուտով կը յափշտակէր: Ես պէտք է հիմա տանեմ, որ աղջիկս—

Կլարա: (Արտասուելով): Մայրիկ, դուք էլ այդ էք ուզում: Զեզ ուրախութիւն է պատճառում իմ տանջանքը:

Մայրը: (Ատրով): Ի՞նչ ես լաց լինում հիմա և ինձ աւելի թշուառացնում քո տրտմութեամբ: Բաւական չէ իմ վիշտը, որ միակ աղջիկս վատանուն արարած է:

Կլարա: (Կանգնելով եւ սառն) Վատանո՞ւն. էզմոնտի սիրածը վատանո՞ւն: Ո՞ր իշխանուհին չէր նախանձիլ խեղճ Կլարային՝ էզմոնտի սրտում բռնած տեղի համար: Ո՛հ, մայր իմ, մայր իմ, մին-

չև օրս այդպէս չէիք խօսում: Մայրիկ, եղէք բարի: Ժողովուրդը, ինչպէս որ նա մտածում է, հարևանուհիք՝ ինչ նոքա մրմնջում են — այս սենեակը այս, փոքրիկ տնակը մի երկինք է, երբևանից Եղմոնտի սէրն է մէջը բնակւում:

Մայրը: Պէտք է դէպի նա սիրով եղած, այդ ճշմարիտ է: Նա միշտ այնպէս քաղցր, ուղղամիտ, անկեղծ է:

Կլարա: Նենգութեան հոտն անգամ չկայ նորանում: Տեսէք, մայր իմ, նա հօ մեծ Եղմոնտն է: Բայց երբ ինձ մօտ է գալիս, ինչպէս նա սիրալի է, որքան բարի: Ինչպէս սիրով կ'ուզենար ծածկել ինձնից իւր զառակարգը, իւր քաջութիւնը: Ինչպէս է նա իմ մասին հոգ տանում. ինչպէս սոսկ մարդ, սոսկ բարեկամ, սոսկ սիրեկան:

Մայրը: Արդեօք կըգնայ նա այսօր:

Կլարա: Ձէք նկատել, քանի անգամ եմ գնացել պատուհանի մօտ: Ձէք նկատել, ինչպէս եմ ականջ դնում, երբ դուռը ճռռում է: Քէպէտու գիտեմ, որ միայն մթնով է գալու, բայց և այնպէս նորան սպասում եմ իւրաքանչիւր վայրկեան, առաւօտանից սկըսած երբ զարթնում եմ: Երանի տղայ լինէի և կարողանայի միշտ նորա հետ դնալ — պալատը և ամեն տեղ: Երանի կարողանայի նորա յետևից կրել զրոշակը պատերազմում:

Մայրը: Դու միշտ այդ թեթևասրտին ես եղած. դու փոքր երեխայ ժամանակդ էլ՝ երբեմն գիժ, երբեմն մոտիտ: Մի փոքր աւելի լաւ չ'ես հաքնում:

Կլարա: Գուցէ, մայր իմ, երբ ձանձրանամ: Երէկ, երեւակայեցէք, նորա մարդկանցից առաջովս անցնում էին և երգում էին: Նորա վրայ զովերդ: Գոնէ նորա անունը կար երգերում, մնացածը չկարողացայ հասկանալ: Սիրտս տակն ու վրայ եղաւ: Ես նոցա սիրով յետ կը կանչէի, եթէ ամաչած չլինէի:

Մայրը: Զգուշացիր: Քո կրակոտ բնաւորութիւնը փճացնում է ամեն ինչ: Դու մարդոց առաջ ակնյայտնի մատնում ես քեզ. ինչպէս նորերս հօրեղբորդ մօտ, երբ դու փայտէքանդակն ու նկարազրութիւնը դտար, և աղաղակելով կանչեցիր. «կոմս Եղմոնտ».— ես շիկնեցայ ամօթու:

Կլարա: Միթէ չալտի աղաղակէի: Այն Գրաւելինգէնի պատե-

րազմն էր: Եւ ես գտնում եմ վերևում պատկերի մէջ Կ. տառը և որոնում եմ ներքևում նկարագրութեան մէջ Կ.: Այնտեղ գրեած է «Կոմս Էգմոնտ, որի տակ ձին սպանւում է»: Ես ամբողջովին սարսուեցի և չետոյ ստիպւած էի ծիծաղել փայտաքանդակ Էգմոնտի վրայ, որն իւր մօտի Գրաւելլինգէնի աշտարակի չափ մեծ էր, և նորա կողքին անդլիական նաւերը: Երբ ես երբեմն մտաբերում եմ թէ ինչպէս էի երևակայում պատերազմը, թէ ես, իբր աղջիկ, ինչպէս էի պատկերացնում կոմս Էգմոնտին՝ երբ նորա մասին պատմում էին, և առհասարակ կոմսերին ու իշխաններին, և ինչպէս հիմա է: (Բրաւ կենքուրդը դալիս է): Ե՛հ, ի՞նչ կայ:

Բրաւ: Այ՛ դք հաստատ բան չգիտէ: Ասում են, Ֆլանդրիայում նորերս շիտթութիւն է ծագել. իբրև թէ սեգենտու, հին վախճանում է, որ նոյնն էլ այստեղ չտարածւի: Բերդը խիստ բռնւած է: Գարբաններում քաղաքացիները բազմաթիւ են, ժողովուրդը վիստում է փողոցներում: Ես պէտք է շուտ ծերունի հօրս մօտ երթամ: (Իբրև թէ ուզում է գնալ):

Կլարա: Կերևա՞ք էգուց: Ես պէտք է մի փոքր զուգւեմ: Հօրս եղբորորդին դալու է. իսկ ես արդէն չափազանց զազրալի եմ երևում: Օգնեցէք ինձ մի վայրկեան, մայր իմ.—այս գիրքը հեաներդ առէք, Բրակենբուրգ, և ինձ համար էլի մի այդպիսի պատմութիւն բերէք:

Մայրը: Գնա՛ք բարով:

Բրակենբուրգ: (Ձեռը մեկնելով): Ձեր ձեռը:

Կլարա: (Իւր ձեռքը մերժելով): Երբ դուք նորից դաք... (մայր ու աղջիկ հեռանում են):

Բրակենբուրգ: (Միայնակ): Ես վճռել էի ուղղակի հեռանալ նորից. երբ նա այդպէս է ընդունում և ինձ բաց է թողնում, կատաղելս է գալիս: Թշուառական: Միթէ հայրենիքիդ վիճակը չէ շարժում սիրտդ, ո՛չ էլ աճող ապստամբութիւնը: Եւ քեզ համար միևնոյնն է՝ երկրացին կամ սպանիացին, կամ թէ ով է կառավարում և ով ունի իրաւունք: Ես հօ աշակերտ ժամանակս մի ուրիշ տղայ էի: Երբ տրւում էր շարադրութիւն.—«Բրուտոսի ճառ յաղագս ազատութեան, ի վարժութիւն ճարտասանութեան»—միշտ հօ Ֆրիցն էր առաջինը լինում, և տեսուչն ապում էր. «Երանի միայն կար-

գին լինէր և ոչ ամեն ինչ խառն ի խուռն: Այն ժամանակ եւում ու գեւում էր մէջս. հիմա քարշ եմ գալիս այս աղջկայ աչք ու ունքին: Ես հօ նորան չեմ կարող թողնել. նա հօ ինձ չի կարող սիրել: Ա՛խ—հէ—նա—նա չի կարող ինձ բոլորովին դէն ձգած լինել, հէ-բոլորովին, բացց կիսով չափ, և ոչ ինչ: Ել երկար տանել չեմ կարող: Ուրեմն ճշմարիտ է, ինչ որ բարեկամներիցս մինը նորերս ականջումս առաց, որ նա գիշերները մէկ մարդու ծածուկ իւր մօտ է ընդունում, այն ինչ միշտ երեկոներն ինձ զգաստութեամբ տանեց քշում է: Ո՛չ, ճշմարիտ է: Այդ սուտ է, մի ամօթալի, մի զրպարտիչ սուտ: Կլարան նոյնքան անմեղ է, որքան ևս անբախտ: Նա ինձ մերժել է և իւր սրտից դուրս գցել.— Եւ ես պէտք է շարունակեմ այսպէս ապրել: Զեմ տանիլ, չէ.— Արդէն հայրենիքս ներքին երկպառակութիւնից աւելի է ալեկոծւում, և ես կը մեռնեմ շունդի հետ: Ես այս տանել չեմ կարող: Երբ փողը հնչում է, մի դնդակ ընկնում,— սարսուռը ոսկորս և ուղեղս է հասնում: Ա՛խ, այդ ինձ չի գրաւում, ինձ չի հրաւիրում նոյնպէս միասին ձեռնամուխ լինել, միասին ազատել, խիզախել: Թշուառ, խաչատուակ դրութիւն. լաւ է որ միանգամից վերջացնեմ: Նորերս ջուրն ընկայ, ընկղմեցայ. բացց վախեցած բնութիւնը աւելի զօրեղ էր. ես զգացի որ կարող էի լողալ և ազատեցի ինձ՝ հակառակ կամքիս: Սրանի կարողանայի մոռանալ այն ժամանակները, երբ նա ինձ սիրում էր, ըստ երեութիւն սիրում էր: Ինչո՞ւ բախտը մինչև ոսկորներս և ուղեղս էր թափանցել: Ինչու այս յայտերը լափեցին կեանքիս բոլոր վայելքը, մինչ ինձ հեռւից մի դրախտ էին ցոյց տալիս: Իսկ այն առաջին համբոյրը, այն միակը.— Այտեղ (ծեռը սեղանին դնելով) այստեղ էինք մենք միացնակ. նա դէս ինձ միշտ քաղցր էր եղած և ահա կարծես ուղում էր զիջանել... Նա ինձ նայեց, խելքս ու միտքս տակն ու վրայ եղան. և ես զգացի նորա շրթունքը իմոնց վրայ և— և անցմ—մեռիք, թշուառական, ինչ ես դանդաղում: (Հանում է գրասնից մի սրակ): Ես չեմ ուղում, որ քեզ եղբօրս բժշկական արիղից իզուր զոգացած լինիմ, դու՛ փրկարար թոյն: Դու պէտք է այս իմ երկիւղը, թալուկը, մահաւան քրտինքը միանգամից կլանես և լուծես:

(Վերջ Ա. գործողութեան):

ԴՈՒՐՍԵՅԻՆԵՐԸ

Շ Ա Ն Թ Ի

(Շարունակութիւն ¹)

ԺԴ.

Սարգսի տունը Գատը-գիւղի նաւամատոցէն շատ հեռու չէր։
Հազիւ սպասաւոր մանչը դուռը բացաւ, որ Գէորգ Թորքերու
քոլոր ուժովը՝

— Սերգօ, պոռաց։

Ու վերէն լսեցաւ Սարգսի առողջ ձայնը.

— Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք և բռնաւորք, և ես
հանգուցից զձեզ. զի զինին իմ քաղցր է և խոհարարս մեծհոգի։

— Կեցցէ մեր տիրացուն. պատասխանեց վարէն Վասակ։

— Ո՛ր ծակն ես մտեր. կ'ըսէր Բագրատ սանդուղներէն վեր
ելնելով։

Եւ հինգը մէկէն մտան սենեակ մը, որ մանչը խնդալով մատ-
նանիշ ըրաւ։

Անկիւնը, պատուհանին քով, խոշոր գրադարանի մը առջև,
դեռ զիշերազգեստով՝ Սարգիս նստած կը գրէր։

Երբ տղայքը միասին ներս խուժեցին, գլուխը քիչ մը ետ
դարձած ու ժպտելով՝ ըսաւ.

— Հա, վանդալներ. քիչ մը խէլօք նստեցէք. հիմա կը վեր-
ջացընեմ, հիմա։

¹) Տես «Մուրճ» № 11 և 12 1895 թ.

Ու սկսաւ արտագրել զըւածքի մը վերջին տողերը:

Բազրատ ծռեցաւ ու անոր ուսերուն վրայէն կարդալու սկսաւ:

Տղայքը բազկաթռռներու մէջ ինկած կ'ըստասէին:

«Իսկ Վասակ ձեռքերը ետին կապած՝ կեցած էր Սարգսի գրա-
դարանին առջև. ու գրքերուն կողերը կը կարդար.

— Կիկերոնի. «Ճառ յաղաչս բարեկամութեան». անթիքան:
Մխիթար Այ... աչրիի... վանցի. հը՛մ, հայրենակիյ է երևի.
վանցի «Հացի խնդիր» լաւ: Ռընան, ի՛նչ, գործը մեծցաւ: «Տըն-
տես-ա-գիտութիւն». այս մոլորած ոչխարը հոս ի՛նչ գործ ունի:
Սպէնսէր: Լաստի... լաստիվօր... լաստիվերտ... իտալացի լինելու
է: «Ողիսական», Դուչեան, Շահաղիզ, Զոլա. վանց, վանց, վանց, բա-
նաստեղծներու կծիկը քակեցաւ: «Փիլիսոփայութեան պատմու-
թիւնը մինչև...». հը՛մ «Կրօնքներու ազդեցութիւնը ընկերական»,
հը՛մ: Մանկավարժական... անան...

Բացաւ բերանը ու սկսաւ խոշորածայն յորանջել:

Ամենքը միաբերան խնդալ սկսան:

Սարգիս արագ վերջակէտ մը զրաւ, զրիչը նետեց ու ցառ-
կեց ոտքի.

— Տղայք, կարդամ յօդածս՝ լսեցէք:

— Յօդածդ մեր փորը չի կշտացըներ. անօթի ենք մենք,
բարեկամ. նկատեց Գէորգ:

— Ինչի՞ մասին է. հարցուց Վասակ: Նորէն կամ վարդապետ,
կամ վարժապետ. պարզ բան:

— Ո՛չ. քաղաքակրթութեան զարգացման վրայ ակնարկ մըն է.
պատասխանեց Սարգիս:

— Հը՞. ի՛նչ խոշոր վերնադիր. վախճամ քաղաքդ իր դռներէն.
դուրս ելնէ: Կարգա նայինք:

— Ձէ, չէ, վերջը՝. փորերնիս անօթի է. կրկնեց Գէորգ:

— Կեցէք. միայն սա վերջին կտորը կարդամ. ամբողջի մա-
սին զաղափար մը կը կաղմէք: Կեցէք, ուրկէ՞ էր. հա՛.

«Այսպէսով քաղաքակրթութիւնը ծլաւ Ասիայի հողին վրայ.
հոն ուժ առաւ, հոն ոտքի ելաւ, հոն ըրաւ իր առաջին քայլերը:
Ասորեստանցիք, բաբելացիք, պարսիկները, հնդիկները, հրէան ու
փիւնիկցիք, այլ և քաղղէացիներու ծնունդ եղիպտացիք՝ ահա՛

այն ազգերը, որոնք հիմք դրին մեր արդի ընկերական ու քաղաքական ամեն վիճակներուն: Երբ թաղաւոր, ղինւորական հաստատուն կառավարական ձևեր, դիր ու զրականութիւն, արհեստներ և արեստներ, առևտուր, երբ այս բոլորը արդէն լւնէր Ասիան, անդին Եւրոպան ճահիճներով ու անտառներով ծածկւած վայրի բնութիւն մըն էր դեռ, ուր վայրենի ցեղեր կը թափառէին:

Բայց եկաւ ժամանակը՝ Ասիան կատարած էր իր առաջին գործը, ալ հողը յողնած էր, ու հանգստի պէտք ունէր իր ուժերը վերստին ժողելու համար: Եւ քաղաքակրթութիւն՝ անցաւ Եւրոպայի սիմէն ներս, ու ծլաւ Եւրոպան իր անտառներէն. մեծցաւ, զօրացաւ ու հասաւ արդի տիրող բարձրութեան. և հիմա ալ ան իր կարգին յողնած է. ու հանդիստ կը պահանջէ: Քաղաքակրթութիւնը նոր, թմրմ ուժերու պէտք ունի, երկար դարեր հանգըստացած, կամ բոլորովին չգործածւած հողի:

Եւ ահա քաղաքակրթութիւնը Եւրոպայէն ալ սկսաւ չլուել. մէկ կողմէն դէպի Նոր-Սշխարհ, միւս կողմէն դէպի իր հին Ասիան: Սիրի, Հնդկաստան, կեդրոնական Ասիա երկաթուղիներ կը վազեն արդէն. Զինաստանի դարեւոր պարիսպները սկսած են կործանուիլ. Ճապոն մը աշխարհ եկաւ. Պարսկաստան շուտով պիտի ցնցուի, և քաղաքակրթութիւնը նորէն Ասիայինն է:

Եւ ասիական դեռ շատ մը ազգեր նոր պիտի սկսին իրենց գործունէութիւնը մարդկային զարգացման սանդուղին վրայ: Ամբողջ միլիոններ կան—մենակ Զինաստան 400 միլիոն ունի,—որոնք քաղաքակրթութեան համար քրտինք պիտի թափեն:

Եւ միւսներուն հետ՝ այսքան դարեր համբերութեամբ սպասող ու յամառութեամբ ոչնչացման դիմադրող մեր փոքրիկ ժողովուրդէն ալ իր կոյս ու շղթայւած ուժերուն գործածութիւնը պիտի ստանայ:

Ան ալ վերջապէս պիտի թափէ իր քրտինքը քաղաքակրթութեան համար:

—Բռնւո, պոռաց Գէորգ:

—Շիք է. նկատեցին երկու երիտասարդները:

—Ի՛նչ լրագրի յօդած. ժպտեցաւ Վասակ:

—Բայց ես կ'ուզէի, որ այդ քաղաքակրթութիւնը գէթ մէկ-երկու բառով նկարագրէիր. ըսաւ Բագրատ մտածկոտ:

—Այսինքն, հարցուց Սարգիս:

Բազրատ քիչ մը ձակատը շփեց. ու սկսաւ խօսել.

—Ա՛յ, կ'երեւակայեմ նս աչդ քաղաքակրթութիւնը: Ասիայի մէջ ամեն բան խոշոր է. վեհ, լայն, ընդարձակ. հոս ալ չեն լինիր եւրոպական քաղաքակրթութեան պզտիկ խնդիրները. կռիւ ու աւերում նախապատմական բաներ կը դառնան. բոլոր ազգերը կապաւած իրարու բնական սերտ կապերով՝ միայն ընդհանուր բարեկեցութեան համար կ'աշխատին՝ իւրաքանչիւրը իր տեղական-ազգային ունակութիւններուն համեմատ: Արդի սնտեսական կեանքի անհաւասարութիւնը, հարստութեան անհաւասար բաշխումը, աշխատանքի ու վարձի անգուդակչութիւնը, գործաւորական պայքարները և այլն ասպազայ պատմութեան ուսուցչապետէն ժամեր պիտի խլեն իր ունկնդիրներուն քիչ-շատ հասկանալի լինելու համար: Մեր կրօնքը, մեր բարոյական դաղափարները, մեր ընտանեկան կեանքը նահապետական պիտի անւանին. մեր դրականութիւնը՝ մանկական. մեր գիտութիւնները ու արհեստները՝ առաջին խարխափումներ: Ելեքտրականութիւնն ու մագնիսականութիւնը, օրինակ, կրակէն հասարակ, առօրեայ գործածութեան տարրական բան մը պիտի դառնան. և նոր հնարած հաղորդակցութեան միջոցները «հեռու» բառին դաղափարը տնըմրոնելի պիտի դարձնեն. Օղն ալ պիտի հնազանդի մարդու կամքին. ստորջրեայ անտառները, ընդծովեայ բնութեան հիւնալի տեսարանները այն ժամանակեայ տուրիստներու սիրեկան ու շատ յաճախած վայրերը պիտի լինին: Ապագայ գիտնականները նողկանքով պիտի կարգան մեր արդի դատարաններուն, պատիժներուն, բանդերուն ու զխստութիւններուն նկարագիրը. ճիշտ այնպէս, ինչպէս հիմա մենք հաւատաքննութեան էջերը կը կարդանք: Եւ ապագայ կինը իր կոչման ու զարգացման բարձունքէն բէբէք պիտի անւանէ մեր արդի սալոններուն տիկինները: Եւ այս բոլորը այս հոլին վրայ, ուր մենք հիմա մեր ողորմելի պայմաններուն մէջ քարշ կուգանք:

Լռեց: Լռած էին պահ մը միւսներն ալ:

Սարգիս, նիւթով զրաււած, Բազրատին բան մը ըսել կ'ուզէր, վասակ մէջ նետւեցաւ.

—Է՛, մենք հոս քարոզ մտիկ ընելու եկանք:

—Անօթի ենք. պողացին Գէորգ ու միւս երկու երիտասարդները միաբերան՝ Գէորգի տըւած նշանին վրայ:

—Հիմա, հիմա, սովեակներ. յայտնի է, որ վարժապետ էք է. պատասխանեց Սարգիս. և

—Դաւօ. ձայն տըւաւ սպասաւորին. ու վանեցւոյ բաւքառով քանի մը հրամաններ աւելցուց:

ԺԵ.

Պղտիկ սենեակ մըն էր ճաշարանը:

Պղտիկ ալ սեղան մը, մաքուր սփռոցով ու սպասներով, որուն շուրջը շարեցան երիտասարդները:

Գիւղական սովորութեամբ ընտրընցաւ սեղանի իշխան: Ձայներու սուտար մեծամասնութիւնը ինկաւ Վասակի վրայ, որ բաժակներու բաղխմամբ իր պաշտօնին գլուխը անցաւ:

Սկիզբները խօսակցութիւնը աւելի լուրջ էր. և բոլորն ալ աւելի ուտելով էին զբաղած: Բայց իշխանի հրամանով իրար յաջորդող կենացները գլուխներու մթնոլորդը փոխեց: Ու իրար ետեւ հոսող ճառերն ու ոգևորումները հետզհետէ բովանդակութեամբ պղտիկնալ, ծաւալով մեծնալ սկսան:

Երգերը խռպոտեցան. ծափերը ուժովցան: Գէորգ գիւղական քանի մը ձևեր պարեց:

Սարգիս երգեց դաւառական լէլէ մը. Գէորգ յուզումէն կուլար. Վասակ իր լայն աթոռին մէջ փուլած անմիտ ժպիտով մը կը խնդար. Բագրատ ախուր էր:

Երբ սրախօսութիւններուն տոպրակը սպաւեցաւ, երբ ձայները բոլորովին մարեցան, և երբ փոքր սենեակին օդը ալ նեղ դալ սկսաւ՝ Սարգիս առաջարկեց երթալ Մօտա ծովեզրը:

Ծովի շունչը ամենքը կազդուրեց. աղօտած հացեացքները պաշտառացան. ու սովորաբար այդ տեսակ խենթ վայրկեաններուն յաջորդող ծիծաղելի լրջութիւն մը թառեցաւ վրանին:

Գէորգ կեանքի մասին կը փիլիսոփայէր.

—Ի՞նչ է մեր կեանքը. կ'ըսէր: Ի՞նչ անմիտ բան է մարդու կեանքը. այսօր կ'ուտես, կը խմես, կը խնդաս. ու վաղը այլ ևս չի կաս. ի՞նչ անխորհուրդ բան. հէ, աղայք, ի՞նչ է այս կեանքը:

—Այս կեանքը. պատասխանեց Վասակ քմծիծաղ: Այս կեանքը զեռններու շարք մըն է, որոնց մէկէն կ'ենենք միւսին մէջը մոնելու համար:

—Շատ փիլիսոփայական. նկատեց Բազրատ:

—Շատ ցինիկ, աւելցուց երիտասարդ ուսուցիչներէն մէկը:

Իսկ Սարգիս իր յօդածէն դրդեւած կը տրամաբանէր մարդկային յառաջդիմութեան խոչընդոտ եղող պատճառներուն վրայ:

Բազրատ ինքզինքը հետզհետէ աւելի ու աւելի անհանդիստ կ'ըզգար, թէ և ձայն չէր հաներ:

Մինչ այս՝ կամուրջ մեկնող վերջին շոգենաւի ժամանակը մօտեցած էր:

Սկսան նաւամատոյց չառապել:

Սարգիս Բազրատի թեւը մտաւ. ու երկուքով միւսներէն քանի մը քայլ ետ մնացին:

—Ինծի նայէ՛, քանի միոքս է չմոռնամ. սկսաւ Սարգիս: Երէկ ձեր թաղականներէն հաստափորը տեսայ. դանգատիլ սկսաւ նորէն: «Քու մարդդ մեզի սուղի կը նստի» կ'ըսէ: «Ի՞նչ կայ» ըսի: «Հինգ վեց ամսըւան մէջ մէկ-երկու տարւան ծախք ընել տըւաւ. այս ճանապարհով դործի տակէն չենըւիր» կ'ըսէ: Նս ալ սկսայ փաստաբանել, թէ տղայ կրթելը դիւրին բան չէ. թէ առանց այդ ծախքերու շնորհքով դպրոց չի պահւիր. և այլն. ինչ և է, զլուսը ի զեցի ու գնաց:

—Էէ. այդ պատմութիւնը կարծեմ՝ նոր չէ. ըսելիքդ ի՞նչ է:

—Սիրելիս, այդպէս անհոգ լինել անկարելի է. քիչ մըն ալ կարեորութիւն տուր այս խնդիրներուն. շատ վերանալն ալ բան չէ:

—Ի՞նչ կ'ըսես, մարդ Աստու. ի՞նչ վերանալ, ի՞նչ վարանալ. դործիք պէտք էր՝ դործիք առի, դիրք պէտք էր՝ զիրք բերել ուլի. չընէի. թաղականներու քէթին չէ եկեր. ի՞նչ ընեմ. ես այդ առաջւնէն դիտէի. բաց ամեն կերպ աշխատեցայ ու յաջողացի. և ասկէ վերջն ալ ընելիքս այդ է. այդ մարդոց ուժով դործ տեսնել տալու է, ուրիշ ճար չի կայ:

—Բայց ինծի լսէ. այդպէս խենթ-խենթ դործ գլուխ չեններ. վերջը բոլորովին կը խրանին. կս մաց-կամաց գնան, որ տեղ հասնիս:

—Է՛, նորէն միջնադարեան դատողութիւններ. կամանց-կամանց: Հերիք որքան կամանց-կամանց, այնքան ենք կամանց դացեր մինչև հիմա, որ վերջապէս առանց նկատելու բոլորովին կանգ ենք առեր: Քիչ մը շարժելու է, շտապելու է: Հերիք կամանց-կամանց. քիչ մըն ալ արնդ-արնդ:

—Շատ արագ վազողը շուտ շնչասպառ կը լինի:

—Թող լինի ինչ որ լինելու է: Թող վազենք ինչքան որ կրնանք. երբ շնչասպառ լինինք մեր յաջորդները կը վազեն: Զբաւոր սուրհանդակը, որքան յաճախ ձին փոխէ, այնքան արագ իր նպատակակէտին կը հասնի:

—Է՛, քեզի հետ խօսելը սլարապ բան է: Բայց այդ փիլիսոփայութիւններէն անդին քիչ մըն ալ գործը մտածէ: Քիչ մըն ալ որ լարես, քեզի կը հրաժարեցնեն, ու լմնցաւ:

—Խեղճնին անիծեմ. ինծի սշխատելու տեղ կը պակսի:

—Բայց այսչափ որ աշխատեցանք:

—Ի՞նչ... Ո՞վ է, տեսնեմ, ինծի ճամբու դնողը. չե՛ն համարձակիր:

—Հիմա քեզի ճամբու դնող չի կայ, բայց ամէն գործի դէշ կողմն ալ մտածելու է:

—Զգէ, եղբայր, յոռետեսութիւններդ: Հիմա աշխատինք, քանի որ բան չիկայ. երբ դայ՝ կը մտածենք: Ամալ չեղած տեղը կարկուտէն վախճալը յիմարութիւն է:

—Բայց այդ աստիճանի լաւատես լինելն ալ բան չէ:

—Ես իմ աստղիս կը հաւատամ:

—Հաւատն ինծի, քու այդ բաց, անհոգ, ինքնավստահ բնաւորութիւնդ քեզի շատ չարչարանք պիտի պատճառէ:

—Առանց չարչարանքի կեանքը համ չունի:

—Սակայն իզուր, աւելորդ չարչարանք:

—Քու այդ ըմբռմամբ կեանքի բոլոր յուզումները, մաքառումները աւելորդ են լինելու. սակայն, ըսէ, այդ աւելորդ անւանած յուզումներէդ զատ կեանքը ուրիշ ի՞նչ հաճոյք ունի:

—Օդէ խօսքեր. ալ ըսելիք չունիմ: Քալէ. շողենաւդ մէկնելու վրայ է:

Բայց հազիւ նաւամատոցի տախտակամածի վրայ ոտք դրին, որ շոգենաւը բացւեցաւ:

Միւսներն ալ, որ կ'ըշտապէին, ետ նայեցան. ու իրարու հարցական հայեացք մը նետեցին:

—Է՛, աւելի լաւ. գիշերը ինծի կը մնաք. բացականչեց Սարգիս ուրախացած: Գէորգը ծոցս կ'առնեմ. ուրիշ անկողին մըն ալ ունիմ, ձեզմէ երկուքին կուտամ, մնացած երկուքն ալ բան մը կ'ընենք: Դէ՛հ, քալեցէք երթանք. այս լաւ եղաւ:

Տղայքը նորէն իրարու նայեցան ու Բագրատին:

Բագրատ լուռ մեկնող շոգենաւին կը նայէր:

—Քալէ՛. ըսաւ Սարգիս թեէն քաշելով:

—Ո՛չ. ես տուն երթամ պիտի. գիշերը պատրաստելու գործ ունիմ. վաղ առտու ալ շատ կանուխ դպրոցը պիտի զանրւիմ: Հողաբարձու-թեան նախագահը տեսնելու եմ. քանի մը մանր գործեր կան կարգադրելու. որ մնայ՝ ալ խերը տես:

—Վաղ անցիր. կը կրկնէին միւսները: Այս օր ալ թո՛ղ այսպէս անցնի:

—Ո՛չ. կարելի չէ. ես մակոյկ մը կը բռնեմ ու կ'երթամ:

—Խե՛նթ ես. արդէն մթնելու վրայ է. ծովն ալ անհանդարտ. նկատեց երիտասարդ ուսուցիչներէն մէկը:

—Մու-թը ինծի ինչ. ծովն ալ ինծի՛ չի բռներ. չէ, երթամ պիտի: Նաւավոր, պոռաց ծովեզրը դառնալով:

—Է՛, ան որ զլուխը բան մը դնէ՝ այլ եւս համոզել կարելի չէ. բայց այդ յիմար բնաւորութիւն է. ըսաւ Գէորգ զայրացած:

Նորէն քանի մը փորձեր ըրին համոզելու. Բագրատ չհամաձայնեցաւ. թոթւեց անոնց ձեռքերը ու մտաւ մակոյկը:

Ընկերները բաւական երկար նաւամատոյցի վրայ կեցած թաշկինակ կը շարժէին:

Բագրատ կը պատասխանէր:

—Կամ քոյք տղու գլուխը դդումի կուտով է լեցած, եւ կամ... կամ, ինքս ալ չգիտեմ ինչ ըսեմ. մոմաւց Վասակ:

—Երթանք. կրկնեց Սարգիս:

Ու խումբը իր կռնակը դարձուց ծովին, ուր դեռ սեւին կուտար Բագրատը տանող մակոյկին փոքրիկ առագաստը:

ԺԳ.

Մակոցկը արդէն ծովուն բացերն էր: Հոն, ուր Ասփորի հոսանքը Մարմարացի ալիքներուն հետ կը գրկուէ:

Նաւավարը թողած էր թիւերը ու առադաստը կը կառավարէր, իր պաշտօնը յանձնած Աւ-ծովէն փչող պաղ հովերուն:

Մակոցկը կը սուրար՝ ջրի ծծերուն վրայէն, որոնց պտուկներէն կաթ-փրփուրը կը ծորէր:

Մակոցկը կը սուրար՝ թեքւած դէտի ձախ: Երկու մատ միացնելով կը զատէր ջուրը նաւակին եզերքէն:

Բագրատ բնաղպաբար աջ կողմը յենած կը դողար հովէն. զոր կծկիլ կը ջանար իր վերարկուի ու զլխարկին եզերքներուն տակ:

Աչքերը շեշտ նաւակի եզերքէն վազող ջրին յառած՝ կը մըտածէր:

«Ահա մատ մը միացն մահէն հետեւ, մատ մը միացն: Հովի քմահաճոյքէն աւելի ուժղին շունչ մը, աւելի կամայական ու մեծ-կակ ալիք մը, նաւավարի կողմէն սխալ մը—և վերջացաւ. վերջացաւ այս կեանքը իր բոլոր անուրջներով, անհերքով, նպատակներով, դործունէութեամբ, զգացումներով: Չգնալ ու զործել. ահա կեանքը, կենդանութիւնը, մեր նիւթի կենդանական յատկութիւնը: Երկու-երեք ամի ջուր թոքերուն մէջ—ու նիւթը կորսնցուց արդէն իր այդ յատկութիւնը. չնչին անկանոնութիւն մը ելեքորական մարտկոցներու շղթային մէջ ու ան ալ դադրած է ելեքորականութիւնը արտադրելէ. ճիշտ այդպէս մարտկոցներու շղթայ մը չէ և մեր մարմինը, ուրիշ կենդանական ուժը կը հոսի՝ ելեքորականութեան այդ հարազատ քոյրը, որ հողի կ'անւանենք. է, լինչ խեղճ բան. և մե'նք, որ այնքան հպարտ ենք մեր հոգիովը, մեր հոգեկան կարողութիւններովը. իրան, որ ծիծաղելի է ստամոքսի, սրտի, թոքերու, ջիղերու ու միաններու հանգոյցէն կազմւած ելեքորական մեքենայ մը, որ կը հպարտանայ»:

Վայկեան մը ջիղերը դադրեցան դործելէ. աչքերը անշարժ սեւեռած մնացին ջրի ուռեցքներուն վրայ, մինչև նորէն շողած մտածումը իր գանգին տակ՝

«Մահ. լինչ յիմար բան, լինչ զուհիի, լինչ հասարակ. և մենք

կը վախնանք, կը սոսկանք անկէ. ինչո՞ւ. որովհետեւ վախցուցեր են մեզի, ճշմարտութիւնը ծածկեր են մեզմէ, նախապաշարեր են մեզի: Մահ. ինչ է այդ. քիմիական սարգ բաղադրում մը. հին մոլէքիւլներու իր ատոմներուն վերլուծելը, այդ լուծւած ատոմներէն նոր կազմութեան մոլէքիւլներ վերաբաղադրելու համար. նոյն տարրերու քիչ մը տարբեր կապակցումը, ուրիշ ոչինչ: Իսկ այդ դործողութիւնը միթէ ամեն վայրկեան մեր մէջը արդէն չի կատարւիր. արտաշնչւած օդի իւրաքանչիւր ումպը, քրտինքի ամեն մէկ կաթիլը միթէ մեռած հիւլէի մը յուղարկաւորութիւնը չէ. միթէ մեր իւրաքանչիւր մտածումը, իւրաքանչիւր շարժումը միլիօնաւոր մասնիկներու մահաւան արդիւնքը չէ, և մենք կը վախնանք այդ մահէն, կեանքի այդ անբաժան ընկերէն. քիմիական այդ փոփոխութենէն, որ փոխանակ փորձի սրւակի մը մէջ կատարւելու, մեր մարմնին մէջը կը կատարւի:

«Մահ. մեր օրգանիզմի այդ ամբողջական փոփոխումը հետաքրքիր է. իրաւ. բաց ահաբեկիչ, երբէք: Օրինակ, ինչ հետաքրքիր բան, ենթադրենք, որ այս շուրջս կաքաւող ալիքներէն մէկը յանկարծ կը քրտնեցաւ ու մեր մահոցկը գրկել ուղեց. ինչ կը լինիմ ես. երևի, քիչ մը կը տապալաւիմ, ինքըզինքս ազատել կը փորձեմ. հետզհետէ աղի ջուրը կը մտնէ թոքերս այցելութիւն մը տալու ու հոն կը անդաւորւի. մինչդեռ այդ դաւաճած զաւառէն օդը սիրուն սղպակներով դէպի վեր կը վազէ բնաստեղծօրէն, ևս կը բռնեմ յատակի ճամբան. ճշմարիտ որ հետաքրքիր է լինելու. կը սեն վերջին վայրկեանին մարդ իր ապրած կեանքի դրաւիչ դրազները կը չիշէ, օրինակ իր առաջին սէրը. և այդ վերջուշներն ալ կը դնէն կեանքիդ վերջակէտը. ու լմընցաւ. այլ ևս չի կայ իմ «եսը». այդ խոշոր բարդ «ես»-էն ուրիշ աւելի տարրական միլլիարդներով «ես» եր կը բաժանւըլին, մէկ մեծ մասն ալ ուրիշ «ես»-երու մէջ գործելու. կ'երթաց սնունդի ձեւերուն տակ: Եւ կամ, ո՞վ զիտէ, յարմար կաւային տղմի մը մէջ կը խրիմ. և հոն կը մնայ անաչար երբեմն ի՞նչ «ես»-ը կազմող մարմինը. կը մնայ հոս միլիոնաւոր դարեր. և յանկարծ օր մը մեր մարդկային սեռէն առաջացած աւելի գերադոյն կենդանական հասարակութեան մը մէկ անհատը կը դառնէ ինծի, դուրս կը հանէ ինծի տիղմէն գիտական

բոլոր զգուշութիւններով ու կը տանի իրենց մուգէտմը ցոյց տալու իրեններուն այն նախապատմական «մարդ» կոչւած կենդանիին մէկ նմուշը: Մեղք որ այն ատեն զգալ չեմ կրնար. թէ չէ, ո՞վ գիտէ, որքան հետաքրքիր բաներ տեսնել կրնայի. մե՛ղք:

«Բայց, է, հերիք մահւան մասին մտածեմ. քանի որ կ'ապրիմ թող կեանքը ինծի հետաքրքրէ: Ա՛, ինչպէս տաք է. կարծես զլուստ կ'այրի. ո՞վ գիտէ, ինչպէս զով է հիմա ծովուն մէջ, ծովուն տակը. հոն ալ կեանք կայ, չէ. հետաքրքիր էր անգամ մը այդ կեանքովը ապրիլ ջրի կեանքով, ջրի տակի ձորերուն ու լեռներուն մէջ. ա՛, ինչ սիրուն կը լինէր ձուկ ծնած լինէի. իմ հայրենիքս երկու ընդծովեաց քարաժայռերու իրարու յենած կէտը լինէր, ուր սեղերու արցակ մը զով ջրին մէջ կ'երերայ. ա՛, ինչ հիանալի բան կը լինէր. միայն սիրուն ձուկ մը լինէի, մանաւանդ ուժեղ ձուկ մը, որովհետեւ հոն ալ բնութեան օրէնքը նոյնն է. գեղեցիկն ու ուժեղն է աէրը: Կը զարնէի ճկուն պոչս ջրի ծալերուն, կը վազվըռտէի աւազին, խիճերուն ու քորալներուն մէջ. վերէն ինկնող լոյսի ճառագայթ մը վրայիս թեփերը կը փայլեցընէր. և ես քծնանքով կը սլանայի էգերու քովէն, կը քսէի անոնց ու հազար շարժումներով անոնց սիրտը կը գրաւէի. տես, հոն արուներ ալ կան, որոնք էգերուն մօտենալ կը ջանդգնին. ինչ. երբէք, ու կ'ըսկսի մարտը, մրցումը. այն պարզ ու սովորական էղի համար մղւած կռիւը, որ մարդիկ վերի աշխարհին մէջ իբրեւ զեղարեւոյթի հրաշալիք ամեն գիշեր կը լսողան թատրոնի բեմին վրայ, իսկ ամեն վայրկեան կեանքի բեմին վրայ: Եւ վերջապէս ինչո՞ւ համար է կեանքը իր ուտելու, յոգնելու, խաբելու, ստեղու, բարկանալու, սիրելու, պաշտելու, զոհւելու, հնարելու, մտածելու և ուրիշ հազարաւոր դործողութիւններու նրբութիւններովը. միայն մէկ բանի մը համար. որպէս զի աճիմք. աճիմ նախ ինքս իմ մէջս. և երկրորդ աճիմ ինձմէ դուրս՝ էգի մը արգանդին մէջը զարգացող էակին մէջ: Մնանիլ ու սիրել. ահա բոլորը. բաց ինչո՞ւ. հա՛, հա՛, հա՛. այդ ինչո՞ւն. ինչ յիմար ու հետաքրքիր արարածներ են այդ մարդ ըսւած կենդանիները. և ինչ բաղդաւոր եմ ես ձուկ ծնած լինելու: Ի՛նչ պարզ ու բնական կեանք. երբ անօթի եմ՝ կ'երթամ կըռւելու. եթէ չաղթեմ՝ կ'ուտեմ. թէ չաղթելիմ՝ կ'ուտիմ. և

կու գէպքին ալ բնութիւնն է որ կը շահի. երբ ուտելով կը զարգանամ՝ մէկ գաղափար մը միայն ինծի տիրել կ'ըսկսի. սիրել. և ո՛վ է այդ վայրկեանին որ ինծի հետ մըցել ուզէ. կսմ ես եմ աւելորդ, կամ ան. բայց միշտ աւելի առողջ ու աւելի ուժեղ տարրն է, որ սերունդը կը շարունակէ. է, ինչ բնական բան ձուկ լինելը...»:

—Պարոն, քիչ մը մէջտեղը նստեցէք. լսեցաւ նաւավարի ձայնը:

Բազրատ երազէ արթնցածի պէս նայեցաւ շուրջը. ու մեքենաբար հրամանը կատարեց:

Հիմա այլ ևս չէր դողար. ընդհակառակը արտասովոր տաքութիւն մը կ'ըզգար մարմնին վրայ:

Մտած էին Ոսկեղջիւրի բերանը: Խոշոր շոգենաւ մը յաղթ գնացքով քովերնուն անցաւ՝ ետեւէն լայն շերտ մը ալիք, փրփուր ու ջրի ակոսներ թողնելով:

Այդ ջրերի մէջ մտաւ և Բազրատի նաւակը:

Բայց ինչ ջուրի շերտ. ձերմակ կանացի կուրծք մը, որ անուշ կիրք մը կը յուզէ. կնւրծք մը, որ ժանեակներու ծակոտիկներէն երեսիդ կը ժպտի:

Ու Բազրատ սկսաւ այդ փարթամ կուրծքը դիտել, ու անըրջել: Ա՛, ինչպէս երջանիկ կը լինէր եթէ հիմա այդ տեսակ կուրծք մը իր թևերուն մէջ, իր լանջին տակը զգար. և զոյգ մը աղջկային շրթունքներ, վարդի զոյգ թերթերու պէս, իր շրթունքներուն փակէին, ու ինքը ծծէր, ծծէր, մեղւի մը պէս, ամբողջ կենսունակութիւնը այդ վարդիթերթ շրթունքներուն, այդ շուշանէ լանջին. բոլոր քնքշանքը այդ աղջկային հութեան, բովանդակ բոցը այդ իզալին ես-ին:

Նաւակը-մօտեցաւ եզերքին:

Բազրատ դուրս ցատկեց: Ոտքի վրայ կենալ չէր կրնար: Կրթընեցաւ. նաւակը կապելու ցիցին: Թեթեւ մը դուլիսը կը դառնար:

«Չլինի հիւանդ եմ. մտածեց: Հիւմնդ. բայց ո՞վ է առողջը. մենք մեր կեանքին մէջ երբ ենք առողջ. «էսկուլապին աքաղաղ մը մօրթեղէք». հա՛, հա՛, հա՛. խեղճ Սոկրատ. երևի, ան ալ հիւանդ էր, որ կեանքը հիւանդութիւն անւանեց: Բայց պէտք է տուն երթալ:

Կեանքի բովանդակ ձգտումով մը ամփոփւեցաւ, ու սկսաւ քաշել: Առաջին քայլերը կ'ընէին. յաջորդները աւելի ամրացան: Իր շարժումը հիմա ահագին ջղային աշխատանք մը դարձած էր. իր ամբողջ մտածումը սկսեալէն էր իր քայլերու գործողութեանը վրայ:

Շուրջը բաւական բազմութիւն կար: Քանի մը խանութներէ լամպերու լոյսը լայն շերտերով սանդղաւոր փողոցին վրայ կը փռէր: Բազրատ դիւցաղնական, գերմարդկային գործ մը կատարողի վճռականութեամբ ու գիտակցութեամբ կ'ենէր ամեն մէկ ոտքէն վեր: Իր փողոցի անկիւնն էր հասած: Ժպտեցաւ ու շունչ առաւ: Եւ կարծես թուլցաւ մէկէնիմէկ. գլուխը նորէն պտոյտ գալ սկսաւ:

«Ո՛հ, պէտք է ես տուն հասնիմ», վճռեց ու նորէն սկսաւ քաշել. առաջ առանց ոչինչ տեսնելու, վերջը լարեց աչքին ջիղերը. իրենց տան ճակտի լապտերը ճանչցաւ... սկսաւ վազել. զոնէ աչնպէս կը կարծէր թէ կը վազէ. մասաւ բաց դռնէն ներս. սեմի վրայ նստած դռնապանի բարեւը չլսեց. մագլցեցաւ սանդուղներէն վեր. ինքն ա՛յ չգիտէր ինչպէս ճիշտ իրենց տան դիմացը կանգ առաւ մեքենաբար, քաշեց զանգակը, «Հասանջ» մրմնջեց, ուժերը սպառեցան, ձեռքը երկնցուց դռան օղակը բռնելու, և...

ԺԷ.

...Եւ ճակտին վրայ պաղ-թաց բանի մը շոշափումը զգաց. ու կամաց մը թարթիչները իրարմէ բաժնեց:

Խիստ ազօտ լուսաւորութեան մը մէջ առաջին տեսածը կէսմերկ թւ մըն էր. իր դէմքին, իր լանջին բոլորովին մօտիկ. զարմացաւ. բացաւ աչքերը, թարթեց ու դիտեց:

Ճերմակ հագուստի մը թեթեւ ծալքերուն մէջ, մագլերը ուսերէն լանջը թափւած իր վրայ էր ծռւած՝ աղջիկ մը.

«Հրեշտակ», մտածեց Բազրատ:

Աղջիկը ժպտեցաւ. ու տեսակ մը յուզւած.

—Ի՞նչպէս էք. ինծի կը ճանչնանք. հարցուց:

Ջայնը ծանօթ էր. ու դէմքը աւելի ևս:

Բազրատ սքանչացած սկսաւ դիտել:

Աղջիկը լուռ, ծպտուն, գլխոյ արտայայտութեամբ հակած

տղու վրայ՝ զոյգ ձեռքերը անոր ճակտին, ուր Բագրատ պաղու-
թիւն մը կ'ըզգար և ուրկէ պզտիկ հոսանք մը աչքին քովէն առու-
եղեր այտին վրայ կը վազէր:

Բագրատ հասկըցաւ ամեն բան:

— Ինծի չէք ճանչնար. կրկնեց աղջիկը տխրութեամբ:

— Լուիզ. մըմնջեցին տղու շրթունքները:

— Ա', անցաւ, անցաւ. բացականչեց աղջիկը ուրախութեամբ
ու երկու ձեռքերը ճակտի պեղոտ լաթէն հեռացընելով՝ քնքշու-
թեամբ մը բռնեց տղու տաք այտերը՝ աչքերը միշտ անոր աչքե-
րուն զամած:

Իր տաք այտերը այդ թաց ու փափուկ շօշափումէն տարօրի-
նակ հաճոյք մը զգացին. և Բագրատ աչքերը գոցեց այդ հաճոյքը
երկար վայելելու համար:

Վայրկեան մը միայն:

Բացաւ աչքերը. ու այն խառնակած մազերն էին իր վրայ,
նոյն սիրուն դէմքը. նոյն քնքոյշ հայեացքը:

— Մէկ տեղերնիդ կը ցաւի, թոյլ էք. ա, եթէ զիտնաք որ-
չափ մեզի վախցուցիք: Բայց ալ անցաւ. անցաւ. կ'ըսէր աղջիկը:

Այդ հոգածու շեշտը, այդ աղօտ մթութիւնը, ինքն իր ան-
կողնին մէջ բոլորովին ուժասպառ, ու այդ սիրուն աղջիկը իր բո-
ւանդակ խնամքովը իր վրայ հակած, առանձին, անհուն գուրգու-
րանքով. այս բոլորը տղու կատարելսպէս թուլցած ջիղերը աւելի
թուլցուցին:

Շրթունքները շարժեց. կ'ուզէր շնորհակալութեան, երախտիքի
բառ մը ըսէ. բայց շրթունքները միայն—

— Լուիզ, Լուիզ կրցան մըմնջել ու նորէն սեղմընեցան:

Լուիզ այս անգամ ցընցընեցաւ, աւելի մօտեցուց դէմքը ու
ինքն ալ եզակի—

— Ի՞նչ կ'ուզես. ի՞նչ ունիս. հարցուց՝ ամբողջովին յուզած:

Բագրատ ոչինչ չի պատասխանեց. ժպտեցաւ. ու միևնոյն ժա-
մանակ արցունքի քանի մը շիթ դուրս սահեցան աչքին անկիւնէն
ու զեղին հեռ խառնըւելով դէպի վիզը հոսեցին:

Աղջիկը ուշադրութեամբ ձեռքի թաշկինակովը սրբեց այդ հո-
սանքը՝ ըսելով.

—Ալ անցած է, ամեն բան անցած է. բժիշկը ըսաւ, եթէ մինչեւ առաւօտ տաքութիւնը իջնէ՝ ոչինչ վտանգ չի կայ: Իսկ հիմա 39-ն է միայն. աւելցուց աղջիկը՝ տղու թեկին տակէն ջերմաչափը կէս մը գուրս քաշելով:

Տղան ժպտեցաւ. նորէն աչքերը գոցեց ու ալ չբացաւ.

Շնչառութիւնը ծանրացաւ ու կանոնաւորւեցաւ:

—Բագրանո, ըսաւ աղջիկը կամաց մը: Ու իսկոյն

—Քնացան. աւելցուց:

Ամբողջ գողգոջուն պահ մըն ալ անշարժ դիտեց տղու վառւոյ, զրաւիչ դէմքը. յանկարծ դողաց, կարմրեցաւ, քիչ մըն ալ ծռեցաւ ու շրթունքներովը դիպաւ տղու այրըւոյ շրթունքներուն:

Տղու նուրբ ընչացքները քսւեցան աղջկան վերին շրթունքին. աղջիկը անուշ խոխոտանք մը ըզզաց. ամըչցաւ. ու մէկէն ետ քաշւեցաւ:

Քնաց պատուհանին մօտ, ճակատը դրաւ ապակիին ու անշարժ մնաց:

Կը մտածէր. չէր մտածէր՝ կ'երազէր, ոչ, կը խաղար:

Պղտիկ, բանաստեղծական փունջ մըն էր այդ, որ ան իր երեւակայութեան մէջ կը փընջէր ու կ'աւրէր ու նորէն կը փընջէր:

Սիրուն, փոքրիկ փունջ մը: Երկու կաթիլ արցունք, փափուկ ժպիտ մը, խորունկ նայւածք մը, քնքշութեամբ արտասանած երկու վանկ ձայն, որ իր անունը կը կազմէին և... և զոգըրւած համբուրիկ մը: Փոքրիկ, բանաստեղծական փնջիկ մը. անհուն, երջանկութեան աշխարհ մը:

Աղջիկը սարսուաց, ու ձեռքը մեքենաբար վերին շրթունքին տարաւ. կարծես հոն բան մըն էր մնացեր:

Ու դեռ ձեռքը շրթունքին կամաց մըն ետ դարձուց զլուսը ու նայեցաւ անկողնի բարձերուն, ուր տղու ճակատն էր. թաց լաթը դեռ վրան:

Իսկոյն մոռցաւ ամեն բան. յիշեց հիւանդը. արագ մօտեցաւ տղուն, վերցուց լաթը ու քովը դանւոյ պնակի մէջէն նոր մը առաւ ու երիտասարդի ճակատին դրաւ:

Տեսակ էր ամօթով նայեցաւ տղու դէմքին. ու անմիջապէս մօտեցաւ սեղանին, ուր լամպն էր դրւած՝ լուսամիտիով ծածկւած.

առաւ իր ձեռագործը սեղանի վրայէն ու կ'ուզէր բանի. բայց հազիւ մէկ-երկու շարժում րբաւ, որ ձեռքերը ձեռագործին հետ դէպի ծունկերը սահեցան. գլուխը կրթնցուց բազկաթոռի մէջքին ու սկսաւ ուսումնասիրել լուսամտի վրայի ծաղիկները. ծաղիկները իրար ձուլեցան, խառնեցան ու... ու փունջ մը կազմեցին. փոքրիկ, բանաստեղծական փունջ մը, բայց ոչ ծաղիկներու:

Կը մտածէր. չէր մտածեր՝ կ'երագէր. ոչ, կը խաղար:

Իր պզտիկ փունջն էր նորէն, որ ան կը փնջէր ու կ'աւերէր ու նորէն կը փնջէր:

Այն գիշեր բաւական ուշ վերադարձած էր տուն Լուիզ իր մէկ դրացի բարեկամուհիի քովէն. ու տուն մտնելուն պէս ամէն բան տակն ու վրայ էր գտած. Բագրատ պառկած էր 40 աստիճանը անց տաքութեան մէջ, ուշքը կորացուցած, ու բժիշկը գլխուն մօտիկ: Իրեն պատմեր էին, որ տղան դռան մէջ էին գտեր, գիտակցութենէ զուրկ ու չափազանց վախցեր էին: Լուիզ, երբ այդ բոլորը լսեց, ինքն ալ յանկարծ գունատեցաւ, գնաց գաղտուկ ումպ մը ջուր խմեց, բայց ոչ ոքի բան մը չըսաւ:

Բժիշկը պատուիրէր էր դեղերը ու մեկներ՝ հրամայելով, որ իրեն իմաց տան, եթէ տաքութիւնը աւելնայ:

Լուիզ ու Ելէնի միասին հսկեր էին հիւանդը մինչև կէս գիշեր. տաքութիւնը ընդհակառակը սկսած էր նւազիլ. ու տղան միշտ կը քնանար: Լուիզ ուղարկած էր Ելէնին պառկելու, պալման դնելով, որ մէկ-երկու ժամ վերջը արթնցընէ Ելէնին ու ինքը պառկի: Շատոնց անցած էր պալմանին ժամանակը. բայց Լուիզ հիւանդի անկողնէն հեռանալ չէր ուզած:

Իսկ հիմա ինքն ալ չգիտեր այդ հիւանդի սենեակը լինչ դուրսը մը ստացեր էր:

Հիւանդը թեթեւ մը հաւաչեց: Աղջիկը իր անըջանքը վրայէն թոթւեց, մօտեցաւ անկողնին. քրտինքի մանր կաթիլներ պատեր էին դէմքը:

«Աղէկ է». մրմնջեց. մեղմով սրբեց դէմքը. թաց լաթը ճակտէն անդին նետեց. ու ալ նորը չի հրաւ:

Դուրսը լոյսը սկսած էր բացւիլ: Արդէն շատոնց իվեր լսած էր իրենց դրացի տան բակէն աքլորներուն կանչը:

Լամպը մարեց. ու վարագոյրներէն մէկը բացաւ, ուրկէ լոյսի գլարթ շերտ մը ինկաւ անկողինին վրայ:

ԺԸ.

—Գեռ չարթընցաւ. հարցուց Ելէնին ներս մտնելով:

—Անգամ մը աչքը բացաւ ու ինծի ճանչցաւ. հիմա քրտընած է ու տաքութիւնը քիչ մըն ալ իջած:

—Ինծի ինչո՞ւ չարթնցուցիր:

—Անուշ քնացեր էիր՝ սիրտ չըրի. իմ ալ քունս արդէն փախեր էր:

Քիչ մը վերջը ամենքը արդէն ռաբի վրայ էին տան մէջ. ու սկսած էր կեանքը. և արդէն արեւն ալ բաւական բարձրացած էր, որ դուռը զարկին:

Վասակն ու Գէորգն էին, որ առաջին շոգենաւով իջած էին կամուրջ և հոնկէ ալ տուն հանդիպած մէկ-երկու գիրք, ցուցակ ու քանի մը պէտքի բաներ առնելու: Անոնց հաշուով Բագրատ արդէն դպրոցը լինելու էր:

Դուռը բացաւ Ելէնին. ու անոնց աղմկոտ բարեւին դէմ ցուցամատը դրաւ շրթունքին, ու—

—Վամնց. Բագրատը հիւանդ է. հօծեց:

—Իրաւ. հարցուց Վասակ տարակուսանքով:

—Ստուկի թնդ. աջնքան ըսինք, որ գիշերը ետ չդառնայ. բացականչեց Գէորգ խոշոր քայլերով դէպի սենեակը ուղղւելով:

Բայց հաղիւ ոտքը սեմէն ներս դրաւ, տեսաւ դեղերով շրջապատուած անկողինը, ու անկողինին մէջ հիւանդի թեթեւ մը տըժգունած դէմքը, որ խենթի պէս—

—Բագրատ, պոռաց ու նետուեց դէպի անկողինը:

—Վամնց. ի՞նչ կը պոռաք. արթնցընէք պիտի. ձեռքը դէմ տաւ Լուիզ խստութեամբ:

Գէորգ կանգ առաւ. ու անգամ մըն ալ հիւանդը դիտեց:

—Ի՞նչ տեսակ ընկեր էք դուք. ըսաւ Լուիզ դառնութեամբ: Եթէ գիշերը մեռնէր՝ տեղեկութիւն անգամ պիտի չունենայիք:

Գէորգ փոխանակ պատասխանելու՝ գլուխը կրթնցուց մահճակալի երկաթին ու սխաւ լալ:

— Մ'ա քեզի տալու՞ մըն ալ. մէջ նետուեցաւ Վասակ:

Եւ դառնալով աղջկան սկսաւ ամէն բան հարցնել թիշկի մը մանրամասնութեամբ. և երբ ամեն բան լսեց.

— Է՛, բան չիկայ. արդէն քրտներ է. մէկ-երկու օրէն ինծմէ ալ առողջ կը լինի. եզրակացուց:

Լուիզ վերջին անգամ մը հայեացքը հիւանդի դէմքէն սահեցնելով՝ սենեակէն ելաւ: Գործին երթալու էր:

Երբ Բագրատ քիչ մը վերջը աչքերը բացաւ՝ իր ընկերներն էին դիմացը, որ կը կատակէին:

— Բաղնիքդ անուշ. ըսաւ Վասակ:

— Անպիտակ աշխարհքէն ի՞նչ նորութիւն. ըսաւ Գէորգ և մէկէն «վանա Բագրատ» պոռագ, փաթթուեցաւ վիզը ու սկսաւ համբուրել:

— Անպիտակ կորսուէ, խելան. կ'ըսէր Վասակ: Քու գըզաւորներդ անոր քրտինքը չեն չորցնէր. փոխնորդ բնր:

Բագրատ ժպտեցաւ. քանի մը բան հարցուց. Գէորգին անմիջապէս դպրոց երթալ ստիպեց, քանի մը կարգադրութիւններ ըրաւ. ու այդչափ խօսելէն յոգնած՝

— Մ՛հ, գլուխս կը ցաւի. աւելցուց:

— Քիչ մըն ալ խօսէ՛ կ'անցնի. նկատեց Վասակ: Իր վիճակին չնայելով՝ դպրոցը կը մտնուէր. ահա այդ տեսակ են ձեր բոլոր գործերը:

— Գէորգ, այս մարդ ալ հետոյ տանք, թէ չէ վրաս նորէն քրտինք կուգայ. ըսաւ Բագրատ թոյլ ձայնով մը ու ժպտելով:

Վասակ բարձրաձայն սկսաւ խնդալ.

— Կ'երթամ, կ'երթամ. միայն պաշտօնով մը, որ քնանաս. իրիկեան դէմ նորէն կու գամ:

Ըսաւ ու Գէորգի հետ զուրս ելաւ սենեակէն:

Միջանցքին մէջ Գէորգ, Էլէնի թեւէն բռնելով—

— Նկերս աղէկ նայէ, թէ չէ... ըսաւ՝ սպառնալից մատը վրան թաթելով:

— Դուք գացէք ձեր քէֆին պտըտեցէք, վերջն ալ եկէք հրամաններ տուէք. «աղէկ նայէ». քեզի՞ պէտ:

— Սա աղջիկներու լեզուն նայէ՛, դարձաւ Գէորգը Վասակին:

— Ձեռքերն ինձնէ է ինկեր. թեւերնուն տակը ալ ձմերուկ կը սղմի. եղաւ պտտասխանը:

Բագրատ երբ նորէն արթնցաւ կէս օրի մօտ էր:

Ինքը աւելի հանգիստ էր ու գլխու ցաւը անցած, միայն ամենաթեթեւ շարժումէն գլխու պտոյտ կ'ըզգար:

Ելէնին ու տիկինը շրջապատեցին անկողինը. քիչ մը խօսեցաւ, չեղ ու սնունդ առաւ. ու նորէն աչքերը գոցեց:

Բայց ալ չէր քնանար:

Առաջին անգամ շնորհքով յիշեց նախորդ օրը, նաւակը, վերադարձը, շատ ուզեց իր անեղի ատենէն բան մը յիշէ՝ չաջողեցաւ. յիշեց և իր զարթնումը. ու սրտի կծկում մը ունեցաւ. այն սիրուն աչքերը, այն ժպտուն դէմքը, այն հոգածու փափուկ թևը. երազ մը կարծես. աղւոր, աղւոր երազ մը:

«Ես ինչո՞ւ քոյր մը չունիմ, մտածեց յանկարծ: Ա՛, ինչպէս պիտի սիրէի, ինչպէս պիտի փայտացէի, ինչպէս պիտի երջանկացնէի. ա՛, քոյր մը: Ա՛վ զիտէ ինչ երջանիկ են եղբայրները. սիրուն, քնքուշ, խելացի աղջիկ մը, որ շուրջս թավաւար, որու քրնքը շանքն ու փափկութիւնը սիրտս փափկէր, որուն համար ամեն բան զոհէի, որուն հպարտութիւնը ես լինէի. ես՝ իր եղբայրը. հղբայր...»

«Ա՛, ինչպէս կ'ուզէի, որ օրինակ Լուիզը լինէր այդ քոյրը. ա՛, ինչպէս կ'ուզէի իր վիզը փաթթելիմ, գգւեմ, համբուրեմ, ըսեմ, որ... ինչ, ինչ ըսեմ... ըսեմ, որ իմ քոյրս է, որ ես չափազանց... չափազանց կը սիրեմ, որ...»:

Դռան սունիին ճոխնչը Բագրատին աչքերը յանկարծ բանալ տըւաւ:

Բագրատի սիրտը մէկէն սեղմւեցաւ ու զգաց որ ամբողջ արիւնը դէմքը ելաւ:

Դռան մէջ Լուիզն էր, որ դեռ գլխարկը գլխին, ձեռնոցներով, հովանոցը ձեռքը, թևին տակը մէկ-երկու նոտայի տետրերն սեմէն ներս էր ծռած ու տղան կը նայէր:

—Ա՛, արթնն էք. բացականչեց աղջիկը ու մօտ եկաւ: Է՛, ինչպէս, հանգիստ էք հիմա. բայց հոս ինչպէս մռայլ է. վարագոյրները ինչո՞ւ չեն բացեր. ֆոն, անշնորհք ելէնի:

Ձեռքի եղածները աթոռին վրայ նետեց, վազեց, վարագոյրները բացաւ, բացաւ և օդանոցներէն մէկը: Սենեակը, պայծառաւ:

ցաւ: Արագ եկաւ նորէն Բագրատի քով, ու սկսաւ արագ-արագ ու աշխուժով խօսիլ.

— Դեղերնիդ արդէն առի՞ք. թէ՛ ըսաւ բժիշկը. բան կերամք. դէմքերնիդ ամենեւին հիւանդի դէմքի չի նմանիր. քնացած էիք մինչեւ հիմա. ա՛յ, Ասուած իմ, այս ֆլէշտկեր ձեր բարձը. այդպէս ծնունդ:

Բագրատ ոչինչ չէր պատասխաներ. սքանչացած կը նայէր աղջկան ու անոր ձայնը իրեն անուշ երգի մը պէս կուգար:

Տղու մը պէս թողուց, որ իր բարձերը շտկէ, կանոնաւորէ, իր մազերը կարգի բերէ, ուսերը զգուշութեամբ ծածկէ: Եւ երբ ամեն բան վերջացուցած այդ սեւ ձեւնոցով թաթիկը ետ քաշուել կ'ուզէր՝

— Ա՛յ, օրիորդ, որքան բարի էք. հծծեց տղան. ու դեռ քանի մը բան ըսել կ'ուզէր, որ սեւ ձեւնոցով եկաւ թառեցաւ իր շըրթուքներուն վրայ ու ձայնը արգելեց: Վերջը այդ նոյն թաթիկի ցուցամատը բարձրացաւ՝ աղջկան շրթունքին:

— Սոսա. խօսիլը հիմա ձեզի արգելւած է. մանաւանդ այդ տեսակ պարապ խօսքերը: Գիտեմ, սարսափելի արգելք. այնպէս չէ. չի խօսիլ, չվիճել, չշարժուիլ. ճիշդ ձեր վրայ չափած-ձեւած բաներ: Դէ, դուք հանգիստ կեցէք. ես երթամ արագ պատառ մը բան ուտեմ ու գամ:

Ըսաւ, ժպտեցաւ ու դուրս նետուեցաւ սենեակէն ուրախ, զըլարթ. և միւս սենեակներէն դեռ իր ձայնը կը լսէր, ուր մօրը հետ կը խօսէր:

Բագրատ աչքերը գոց՝ անշարժ պառկած էր. իսկ իր աչքերուն դէմ կեցած էր աղջիկը շիկնած, աշխոյժ, յարդէ զլխարկին տակէն մաղերու փնջեր դէմքին թափած. և, ա՛յ, այն սեւ ձեւնոցներով մատիկները, որոնք իրեն մազերը կը շտկէին, լռութիւն կը հրամայէին, օղին մէջ կ'նկէջէին ու իր շրթունքներուն կը թառէին:

Բագրատ իր կրծքին տակ փափուկ հեշտանք մը կ'ըզգար:

ԺԹ.

Բագրատ երեք օր անկողին ֆնաց՝ շրջապատուած իր ընկերներէն ու աղջիկներէն: Ընկերները իրիկունը, աղջիկները՝ ցորեկը:

Այդ օտար ընտանիքին իրեն ցոյց տւած խնամքն ու հոգածութիւնը այն աստիճան ազգած էր անոր թուլցած ջիւերուն, որ մէկ երկու անգամ գաղտուկ լաց էր եղած:

Բազրատի մահճակալին քովի աթոռը երբէք պարապ չէր մնար, երբ տղան արթուն էր: Կամ Օգիւստան էր հոն, որ կը շաղակրատէր, կը խնդար, կը խաղար. կամ Ելէնին, որ մէկ կողմէն իր ձեռագործով կ'աշխատէր և միւս կողմէն կը խօսէր տղուն հետ:

Ելէնիի վարմունքը հիմա չափազանց զսպւած էր զէպի երիտասարդը: Յայտնի իրիկունէն վերջը խեղճ աղջիկը կրկին մէկ-երկու անգամ փորձած էր Բազրատին մօտենալու, անցածի մասին խօսելու. բայց Բազրատ իր ծիծաղկոտ արտաքինին հակառակ այնպիսի չոր դիրք մը բռնած էր անոր դէմ, որ աղջիկը բնաւ չէր համարձակիր աւելի ընտանի քայլ մը ընելու: Սկիզբները կարծես թէ տխրած էր. սակայն ոչ երկար. սկսած էր նորէն Գէորգի հետ շատ իյնալ. և իբրեւ պաշտօնական նոր անդամ աւելցած էր Վասակը, որ ամէն երթալ-գալուն խօսքի կամ ձեռքի կատակ մը անոր չէր զլանար: Հիմա աղջիկը Բազրատէն տեսակ մը ամօթ, հակակրանք, վախ կ'ըզգար: Հիւանդի անկողնին քով սիրտը կը սեղմըւէր, ու ներքին մեծ հաճոյքով էր, որ տեղը միւս աղջիկներուն կը յանձնէր:

Բոլորովին այլ էր տեսարանը, երբ այդ աթոռին վրայ Լուիզն էր: Իր դասի զբաղումներէն զատ ցորեկները ամէն ժամանակ անոր մօտն էր՝ ձեռագործը կամ գիրք մը ձեռքը:

Եւ Լուիզ զժգոհ չէր իր այս նոր պաշտօնէն:

Այն առաջի կիրակի իրիկունը, երբ Բազրատ կէր ու իրենց սենեակը վարձեր էր՝ Լուիզ դոհ էր մնացած: «Ննորհքով տղայ է» մտածեր էր. շնորհքով բառին մէջ հաճելիի զաղափարէն բաւական մեծ մաս մը դնելով: Տղայքը եկած էին, սկսած էր խենթ, աղմկոտ կեանքը. և Բազրատի արտասովոր տիպարը սկսած էր օր օրի աղջկան աւելի «շնորհքով» երեւիլ: Երիտասարդի արտաքին կազմը, անոր զըւարթ լրջութիւնը, միամիտ ու մաքուր կատակները, ոգևորութիւնը, մտաւոր բարձրութիւնը, եռանդը—այս բոլորը սկսած էր աղջկանը ազդել: Երբ երբեմն միասին կը կարդային առանձին՝ այդ առանձնութենէն աղջիկը հաճոյք կ'ըզգար,

անոր Փրանսերէն ընթերցումը շատ կը սիրէր: Երբ զաշնակի վրայ անոր ներկայութեան բան մը նազէր՝ ինքն ալ կ'ըզդար, որ իր զարնածքը կարծես տարբեր շեշտ մը կ'առնէր: Միասին քսնի մը պտոյտներ ունէին ըրած միւսներին հետ. ճանապարհին պզտիկ դէպքեր էին պատահած Բագրատի կողմէն, մեծմասով պատահական կատակներ. այդ բոլորը աղջիկը յաճախ կը յիշէր ու իր մէջը մեկնութիւններ կուտար. կը յիշէր ուրիշ շատ մը չնչին խօսքեր ու շարժումներ, որոնք իրեն համար նշանակութիւն մը առած էին. կը յիշէր երբեմն-երբեմն ազու նետած խորունկ, դիտող աչքերը, որոնք իր մարմնի այս ու այն մասերուն կը գամէին յամառութեամբ. այդ վայրկեաններուն աղջկան կրծքին անուշ ու ամօթխած սարսուռ մը կ'անցնէր: «Շնորհքով տղայ»-ին, շատ շուտով «ազնիւ տղայ է» յաջորդած էր. և այդ «ազնիւ» բառը Լուիզի համար թուխս նստած հաւին կը նմանէր, որու փետուրներուն տակ ջերմութեան մէջ պահւած են ամէն տեսակ ընտիր ջատկութիւն. ներու ձուերը:

Հիմա, որ մօտ վեց ամիս անցած էր, արդէն ալ զայրած էին համակրական ածականները, որու փոխարէն համակրանքը ինքը չափազանց աճած էր, տերեւներ ու ծիլեր աւած. կը մնար ծաղիկը. և իրիկուն մը այդ ծաղկին կոկոնն ալ բացւեցաւ: Բագրատ տարօրինակ ուրախ էր այն իրիկունը. ամբողջ օրը տանն էր եղած. մինչև իրիկուն ծիծաղ, խօսք ու կատակ. իսկ իրիկունը իւր զարթութեան ուղղակի յիմար շեշտ մը աւելցած էր. կը վաղէր, կը ցատկէր, աղջիկներուն հետ կը պարէր. հոգեկան տարբեր վիճակներ, կը ներկայացնէր. օրինակ՝ ապուշ, հեշտանք, կատաղութիւն, զայրոյթ, վախ. ատոնց թւին և սէր. իր սիրուհիի դերին համար ընտրեց Լուիզը. աղջկան կից քանապէջին վրայ կէս մը նստած, կէս մը գետինը չօքած՝ կրքի ուժգին թափերով կը փաթթուէր անոր ծունկերուն, կը դալարէր մէջքին, կը քաշէր թւերէն, կը սեղմէր լանջին, կը սեղմէր անոր ձեռքերը ճարճատելու չափ պինդ՝ ու իր բոցոտ աչքերը կը շանթէր աղջկան աչքերուն. մէկ ալ կը թուլնար, կը փափկէր, պաղատանքի նազ ակնարկներ կը գամէր աղջկայ հայեացքին, քծնանքով կը փարէր անոր մարմնին, կը շօէր ձեռքերը, դէմքը կը յենէր անոր կախած գլխուն: Եւ

Բագրատ ներկայացումը աւելի կատարեալ ընելու համար սխաի համբուրէր ալ վերջապէս, եթէ Լուիզ յանկարծ ոտքի չելնէր ու տեսարանը չընդհատէր: Ամենքը կը խնդային իհարկէ. և շուտով անցան ուրիշ խաղերու. միայն Լուիզ այլևս ցրւած էր: Երբ իր սենեակը առանձնացաւ պռռկելու՝ սկսաւ արագ-արագ մեքենաբար հանել. վայրկեան մը ակնապիշ դիտեց իր մերկ ծոցը, մերկ թևերը, որոնց վրայ իր մազերը եկեր թափւեր էին. մտքերը ցրվւ, զգայարանները հրահրած, շնչառութիւնը անկանոն. դիտեց վայրկեան մը. ու յանկարծ «Բագրատ» փսփսաց, իր մերկ թևերովը իր բաց լանջը գրկեց, ինկաւ անկողնին վրայ ու դէմքը բարձին մէջը թաղեց:

Եւ այդ գիշերէն ալ Բագրատն էր իր ամբողջ մտածումը. թէև ոչինչ չէր ցոյց տար արտաքուստ՝ իր զգայնութեան չափ ալ հաւասարապէս հպարտ: Այդ հպարտութիւնը միայն անգամ մը թուլցաւ հիւանդին անկողնին քով. երբ տղան ջերմին ու ձերմակ բարձերուն մէջ աւելի հրապուրիչ, անոր անկողնին քով մինակ, անոր նայւածքին ջերմութեան տակ ընկճւած, գոլթի, սիրոյ, պաշտպանի խռոն զգացումով մը բըռնկած, առանց մտածելու, առանց իր կամքին համբոյր մը գողցած էր տղու շրթունքէն:

Եւ հիմա, երբ Բագրատի անկողնին քովը նստած՝ կը կարգար բարձրաձայն, կամ աշխատութիւն մը ձեռքը անոր հետը կը խօսէր, միշտ խոցս կուտար աչքերը այն շրթունքներուն նետելու, թէև անհուն հետաքրքրութիւն մը իր ակնարկը այն կողմ կը բաշէր:

Անկողնի բարձերու վրայէն աղջկան ու տղու մէջ եղած խօսակցութիւններն ալ աւելի ու աւելի հետաքրքիր կը դառնային, աւելի մասնաւոր, աւելի մտերիմ: Աղջիկը ամբողջ քնքշանք էր ու գոլթ. և երիտասարդը եմթարկւած անոր բաց վարմունքին. անձնըւէր մտերմութիւնը հետզհետէ սկսաւ իր սիրտը անոր բանալ. կը խօսակցէին այն տեսակ բաներու մասին, որ Բագրատ ոչ ոքի խօսած չէր. կը պատմէր աղջկան իր մանկութենէն, իր դպրոցի կեանքէն, իր այն ժամանակեայ զգացումներէն. կը նկարագրէր իր մայրը, որ հաղիւ պատանի մը՝ կորսնցուցած էր. կը խօսէր իր արդի ձգտումներուն, նպատակներուն վրայ. իր երազները, իր յոյ-

սերը անոր կ'ըստուերագծէր: Իսկ աղջիկը կը լսէր ականջ կտրած, ինքն ալ կը հարցնէր, ինքն ալ կը պատմէր: Ամեն մէկ նոր քայլ ուրիշ մը իր ետեւէն կը քաշէր. մտերմութիւնը կ'աճէր:

Հիւանդութեան երրորդ իրիկունն էր: Գէորգ Սարգսի հետ դուրս էր ելած. տնեցիք դուրսը ամենքը իրենց գործին էին: Լուիզ ու Բագրատ առանձին էին նորէն: Դուրսը թէև մթնած էր արդէն բաւականին, բայց Բագրատի կամքով լոյս չէին վառած սենեակին մէջ:

Ու այդ մութին մէջ երկուքը իրարու քով կը խօսէին նորէն՝ կը փսփսային. և երկուքն ալ զոհ էին այդ մութէն, այս փլուզման սանքէն:

Բագրատ իր ներկայի մասին կը խօսէր, իր ընտանեկան պայմաններու մասին, որ այսպէս վերջացուց.

— Բայց ամեն բանէ աւելի քրոջ մը պակասն է, որ ինծի միշտ զգալի է եղած. սիրող, քնքուշ, խելացի աղջիկ մը. բնութիւնը զլացած է ինծի այդ. և ադով շատ մ'է բան է զլացած: Բագրատ այս բառերը յուզումով էր արտասանած:

Աղջիկը կարծես կ'ըմբռնէր այդ բառերուն ետեւի իմաստը և մութին մէջ իր աչքերը տղու աղոտ երեցող դէմքին յառած պահ մը լռեց. ու յանկարծ ինքն իր ձայնէն վախնալով՝ ըսաւ.

— Սակայն, պարոն Բագրատ, աշխարհի մէջ քիչ մը ուրիշ կերպ քոյրեր ալ կան, որոնք քրոջ մը չափ, գուցէ և աւելի կրնան սիրեր. եթէ բնութիւնը հարազատ քոյր մը ձեզի զլացած է, այդ երկրորդ տեսակը չկարծեմ որ զլանայ. երեւի այդչափ խիստ չլինիր:

— Այո, իրաւունք ունիք, այդ կողմէն գանդատելու տեղ չունիմ. մանաւանդ այս վայրկեանիս:

Կամայ մը աղջկան դրկէն վերցուց անոր ձեռքը ու սեղմեց:

Եւ այլ ևս ոչ ան թողուց և ոչ աղջիկը ետ քաշեց:

Եւ երկուքն ալ մութի մէջ մնացին լուռ ու անշարժ, իրարու ձեռք սեղմած:

— Օրիորդ, ընդհատեց վերջապէս Բագրատ լուութիւնը: Օրիորդ, չդիտեմ ճշմարիտ՝ ինչպէս յայտնեմ ձեզի իմ զգացումներս. դուք այնչափ բարի եղաք դէպի ինծի, այնչափ աղնիւ, այնչափ...

—Բայց, պարոն Բագրատ, նորէն, նորէն, ընդհատեց աղջիկը երիտասարդին խօսքերը՝ միշտ անոր ձեռքը սեղմելով։

Բագրատ ոչինչ չըսաւ. շարժում մը ըրաւ, քաշեց աղջկան բռնած ձեռքը, քիչ մըն ալ վեր ու պինդ մը իր շրթունքներուն փակցուց։

—Ի՞նչ կ'ընէք. ի՞նչ կ'ընէք. կը կրկնէր խեղճ աղջիկը յուզւած ու ալալալած փափառքով մը։

Ու քաշեց ձեռքը ազատեց. ելաւ ոտքի։

—Ալ երթամ։

—Նեղացածք, օրիորդ։

—Նեղանամ. ես. ինչո՞ւ. ալ երթամ. ո՞չ, ամենեւին. բայց ալ երթամ. կամեաց աղջիկը կցկտուր, մտացիր, ձայնը դողդոջուն։

Ու դուրս ելաւ։

Բագրատ պառկած էր անշարժ, թեւը պարզած անկողինէն դուրս ճիշտ այն դիրքով որ աղջիկը իր ձեռքը աղատած էր։

Ի.

Բագրատ երկու շաբաթեան չափ ստիպւեցաւ տունը մնալու, թէեւ արդէն անկողնէն ելած էր։ Վերջերը մէկ-երկու անգամ կ'ուզէր դուրսը երթալ՝ չի թողուցին. ինքն ալ համոզւեցաւ, որ կարող չէր. թոյլ էր դեռ։

Այդ միջոցէն օգտուելու համար կարդաց բնախօսական նոր Ֆրանսերէն դիրք մը, ու քանի մը ամսէ իվեր դիզւած մանկավարժական թերթերը, որոնց ամենաէական յօդածները միայն աչքէ անցնելու ժամանակ ունեցած էր մինչեւ այն ատեն։

Այլ և քանի մը օտար հեղինակներու հետեւելով՝ սխալ կազմել բնական զիտութիւններու դասաւանդման մեթոդիկը։

Յոգնած ատենները աղջիկներուն հետ կը զարճանար։ Կ'երթար Լուիզի սենեակը ու դաշնակ նըւագել կուտար. կը խօսակցէր տիկնոջ ու էլէնիին հետ. կամ կը խաղար Օգիւստայի հետ։ Եւ երբեմն այնպէս ինքըզինքը մոռցած խաղին կը նըւիրէր, որ բոլոր անեցիներու զարմանքն ու ծիծաղը կը շարժէր միանգամայն։

—Տարօրինակ տղայ է. կը մըմնջէր Տիկինը։

—Ա՛, ի՞նչպէս կը սիրեմ քեզի. կը կրկնէր Օգիւստան տղու հասակն իվեր ցատկելով։

Որուն իբրև պատասխան տղուն համբոյլը կը յաջորդէր միշտ:
— Քրոջս շատ երես կուտաք, կը նկատէր Լուիզ ինքն ալ իր նկատողութենէն հարմրելով:

Բագրատ կը ժպտէր աչքերը Լուիզի աչքերուն շեշտելով. ժպտո մը, ուրկէ ազջիկը կը սարսուար հաճոյքի դողով մը:

Վերջապէս երկու շաբթի մըն էր, որ Բագրատ սրտի անհամբեր սեղմումով ոտքը դպրոցէն ներս դրաւ:

— Տեսուէր... շշուկ մը անցաւ դասարանէ դասարան:

Շուտով զարկին հանգստի զարկը, և Բագրատ պաշարւած էր իր աշակերտներէն. մեծ ու պտտիկ—ամենքը ուրախութիւն մը ունէին իրենց դէմքերուն. ամենուն բան մը ունէր ըսելու Բագրատ: Աւելի մեծերը շուրջը բոլորած կը խօսակցէին պատանեկան վստահ ու ջերմ շեշտերով, որոնց Բագրատ երբեմն կը հակառակէր, երբեմն կը համաձայնէր. ու վէճը նոր ոգևորութիւն կ'ստանար:

Երբ իր սենեակը քաշւեցաւ ու գրիչը ձեռք առաւ նկատողութիւն մը յուշատետրին մէջ անցընելու, գրել չկրցաւ. ձախ ձեռքով գոցեց դէմքը ու պահ մը անշարժ մնաց:

Խնչ հաճոյք այսչափ մաքուր, թարմ, քնքուշ, առողջ ուժերէ սիրւիլը, աղոնց ներշնչելը, անոնցմէ ներշնչիլը: Մարդկութեան ամենափափուկ մէկ մասի հոգին փունջի մը պէս մաքիւթ թելովը կապած սրտիւք մէջը ունենաս. ինչ ուժ, ինչ վստահութիւն կ'ըզգայ մարդ. սիրւիլ, ա, ինչ ուժա:

Մէկէն ոտքի ցատկեց. դասի զանգը տըւած էին:

— Ահագին ժամանակ կորաւ. արագ, մըմնջեց ինքն իրեն, քանի մը նկար, քարտէզ մը ու գիրք մը թեկին տակը զարկած՝ դասարան վաղեց, ուր տեսչի դասերուն կարօտցած սիրուն գլուխներ անհամբեր կ'ըստպասէին:

Երբ զանգը դասի վերջը ազգարարեց՝ Բագրատ յիշեց որ դասարանն է. խօսքը կտրեց, բարեկեց ու դուրս ելաւ: Ամբողջ դասարանը պահ մը լուռ էր դեռ. բոլորովին. ոմանք նոյն իսկ բարեկի համար ոտքի ելնելու մոռցան: Բագրատ ինքն ալ ինչ եղածը չէր հասկընար. միայն կըզգար, որ երբէք այդ աստիճանի ոգևորւած չէր. անհուն հաճոյք մը կը ծաւալէր ջիղերուն մէջ:

«Այսօր դործ մը տեսայ» հծծեց ինքնալստահ ու ուսուցիչ:

ներու սենեակը մտաւ: Հոն տաք խօսք էր բացւած վարչական խնդրի մը վրայ. ոտքով-գլխով վէճին մէջը նետուեցաւ. և երբ քիչ մը վերջը ուսուցիչները ցրեցան իրենց շատարանները՝ Բագրատ ու ժառաղաւ ակրնթարթ մը շունչ առնելու համար նստեցաւ:

—Ե՛, զուռ անխելք ես. տէս, նորէն բոլոր արիւնդ գլուխդ է զարկեր. ըսաւ. Գէորգ չանդիմանելով: Քիչ մըն ալ ինքըզինքդ խնայելու ես:

—Հիմա ինքըզինք խնայելու ժամանակ չի կայ. պառասխանեց Բագրատ ու սանդուղներէն վար վաղեց:

Գէորգ պահ մը շեշտակի նայեցաւ անոր ետեւէն. ու ինքն ալ իր գործին շտապեց՝ մուրլտալով:

—Ձէ. չափազանց ազնւութիւնն ալ անազնւութիւն է:

Եթէ ամբողջ օրը Բագրատ ոգևորութիւն էր, ամբողջ իրիկունն ալ զայրոյթի մարմնացումը եղաւ:

Տղոց արձակման ատենն էր, որ Բագրատ նամակ մը ստացաւ Թաղին եպիսկոպոսէն, ուր քանի մը չնչին պատճառ մէջ բերելով կիրակնօրեայ վարժարանը այլ ևս դադարեցընել կը պատուիրէր:

—Նշալէս, ինչու պոռաց Բագրատ. ու շունչը շիտակ եպիսկոպոսի բնակարանը առաւ:

Եպիսկոպոսը մեծ քաղաքավարութեամբ ընդունեց հիւրը. սկսաւ հետը խօսակցիլ դպրոցի, օղի, ազգային խնդիրներու ու եկեղեցիին մէջ կանանց հանած աղմուկի մասին: Բագրատ այդ բոլորէն ոչ մի համ չառնելով՝ խօսքը անմիջապէս իր խնդրին դարձուց:

Հոգևորականը երկար չառաջաբանով մը կիրակնօրեայ վարժարանին պէս հաստատութեան մը կարևորութիւնը ապացուցանելէն, իր դէպի այդ գործը ունեցած ամենամեծ համակրանքը յայտնելէն, իր տրամութեան չափը բացատրելէն վերջը՝ աւելցուց Թէ այդ գործի շարունակութիւնը Թոյլատրելու անկարող է:

Բագրատ զուր մէջ բերած չնչին պատճառները կը ջրէր, զուր եպիսկոպոսը համոզել կը ջանար, զուր գործին անմեղ ու օգտակար կողմերը կը շեշտէր:

Սրբազանը աղու բոլոր ըսածները գրեթէ ամբողջովին կ'ընդունէր, մէջևմէջ շողքորդիչ խօսք մը կը Թոյլատրէր Բագրատի հաս-

ցէին, բայց և այնպէս միշտ կը պնդէր, թէ խնդիրը իրմէ անկախ է և թէ թոյլատրելու անկարող է:

Բազրատ ոչինչ չէր հասկընար: Զուր կը հարցընէր, թէ ուրկէ է ուրեմն այդ արգելքին պատճառը. հոգևորականը միայն ցաւակցական խորհրդաւոր շարժում մը կ'ընէր ու այդ հարցին վրայէն միշտ լռութեամբ կ'անցնէր. միշտ աւելցընելով, թէ զործը հիանալի էր, թէ բոլոր թաղեցիք զոհ էին, թէ ինքը չափազանց կը ցաւի այսպէս լինելուն:

Բազրատ ծուռ-մոռ ճանապարհներու անվարժ՝ սկսաւ տաքնալ, և իր բոլոր փաստերը, ջրումները անգամ մըն ալ կրկնելէն վերջը՝ աւելցուց.

—Սրբազան հայր, ինծի կը մնայ միայն ենթադրել, որ այս գործին մէջ քմահաճոյք մը կայ. իսկ այս տեսակ գործերու մէջ անհատներու քմահաճոյքը ամենամահաբաւ և ամենազգուշի բանն է, հասարակական գործը քմահաճոյք չի տանիր:

Սրբազանը երկար սիրուն մորուքը շոյեց. շրթունքը կամաց մը խաճաւ ու երկար, ներող ժպիտով մը պատասխանեց.

—Շատ միամիտ ես, զաւակս, ի՞նչ քմահաճոյք կրնայ լինել այս գործին մէջ. և ո՞վ կը համարձակէր իր քմահաճոյքով այդ սուրբ գործը վտանգելու. միթէ ես կը թոյլատրէի. չէ, զաւակս, անհոգ եղիր:

Բազրատ ինքզինքը ուտելէն ոտքի ելաւ.

—Բնականաբար աշխատանքը այլ ևս դադրած է. մեղքը պատճառ եղողներու վզին. միայն ես այս հանելուկը լուծեմ պիտի, սրբազան հայր:

—Ի՞նչ հանելուկ, որդեակս. երթաք բարով. Աստուած օրհնէ:

Պատասխանեց սրբազանը, բայց հազիւ Բազրատ ոտքը սեմէն դուրս էր հանած, որ եպիսկոպոսի շրթունքներէն ժպիտը անցայտացաւ, ու բարկութեամբ շարունակեց.

—Սա լակոտի լեզունն ալ է. նոր հաւեր են ելեր երկաթէ ձուեր կ'ածեն: Աներես, ես գիտեմ ինչպէս քու ոտքդ հոսկէ կը կտրեմ: Ապերախտներ. եկեղեցիին ստանները կ'ուտեն, եկեղեցականներու երեսէն քանի մը ոսկի կ'առնեն ամսական և դեռ...

ապերախտներ. «Էջ ծանեաւ չմտւր իւր և Խորայէլ զտէր իւր ոչ ծանեաւ»։ «Եւ ապերախտութիւն տանն Խորայէլի կերաւ...»

Հոս իր հատուածը ընդհատեց, երկու անգամ ամուր զարկաւ իր առջևը սեղանի վրայ դրած զանգակը, և բարկութեամբ ներս մտնող ծառայի երեսին պռռաց.

— Ինձի սուրճ մըն ալ:

ԻԱ.

Շաբաթները իրար ետեւէ կը գլորէին:

Եւ զպրոցին մէջ ամէն բան ըստ սովորականին առաջ կ'երթար կարծես. միայն ի ներքուստ բաւական բան փոխւած էր:

Բագրատի ծախքերէն ու անոր ինքնիրգլխութենէն արդէն իսկ դժգոհ թաղականները՝ Եպիսկոպոսի ակնարկութիւններու ազդեցութեան տակ՝ բոլորովին հակառակ խօսել էին սկսած երիտասարդին դէմ:

Եպիսկոպոսին սենեակը, թաղային խորհրդարանը հիմա շատ կը խօսէր զպրոցի անկարգութեան, տղոց երես ելնելու, եկեղեցի շատ չի յաճախելու, ուսուցիչներու ամսականներու շատութեան, զպրոցի մէջ կրօնական առարկաներու թուլնալու, ջերմեռանդութեան, հնազանդութեան ու խոնարհամտութեան պակասմանը վրայ:

Թաղականներէն մէկը, որ անցածները ով զիտէ ինչ պատահմամբ զպրոց էր մտեր ու անկիւնը դրած մարդկային կմախք մը, քանի մը մարդակազմական քարտէզներ ու նկարներ էր աեսեր, զայրացած կ'եզրակացնէր.

— Ձէ, չէ. մեր զպրոցը աւրըւեցաւ. մեր տղայքը կ'անբարոյականանան, կ'անասուածանան այս շէնքին մէջ. ազգը մեզմէ հաշիւ պիտի պահանջէ վերջը. չէ, այս այսպէս չլինիր:

Գալով հոգաբարձուներուն, որոնք մեծ մասով երիտասարդ մարդիկ էին, և որ սկիզբները մեծ ջանքով աշխատած էին Բագրատին օգնելու՝ տեսակ մը բնական կամուրջ դառնալով անոր ու թաղականներուն մէջ, հիմա արդէն թուլցած էին: Մէկ մասը աւելի թաղականներու մտածման եղանակին էր հակաւ. միւսները աւելի Բագրատին մօտ ու աւելի գործէն հասկացող՝ թափ

էին տւեր ձեռքերնին ու գացեր իրենց առւարական մթերանոցը —
—Այս ժողովրդի համար աշխատելը չարժեք. պարսպ բան է,
գործ առաջ չերթար՝ տրամաբանելով:

Այս դպրոցի սեմին վրայ խաղացւած կատակերգակ ողբերգու-
թիւնը չուշացաւ իր ազդեցութիւնը դպրոցին մէջն ալ ցոյց տա-
լու:

Ուսուցիչներէն ոմանք, որոնք ծուլութեան ու իրենց քեֆին
լինելու վարժւած էին, հիմա շատ կը նեղէին դպրոցի արդի խիստ
կարգապահութենէն ու այդ լարւած տեսչի կողմէն միշտ հսկող
աշխատութիւնէն, բայց հացի խաթեր կը լռէին. լաւ գիտէին, որ
Բագրատի կողմէն խօսք մը հերիք է իրենք դպրոցէն զուրս նետ-
ւելու համար. մանաւանդ որ արդէն ինքնին մեծ համակրանք մը
չունէին հոգաբարձուներու առջև:

Եւ հիմա ատոնց քիթին շատ շուտով հասաւ բարերար ան-
համերաշխութեան հովերուն շունչը: Թէև ձանր, բայց այնտեսակ
դէպքեր պատահեցան դպրոցին մէջ, որ Բագրատ անսովոր անհան-
գստութիւն մը զգաց:

Մինչև որ օր մը եկաւ Սարգիս ու այդ ձեռքի տակէ խաղաց-
ւած բոլոր աղտոտութիւնները Բագրատի առջև մերկացուց:

Երիտասարդը իր դէմ լարւած այդ գծով ու պղտիկ դարանները
երբ լսեց՝ իր առաջին զգացումը զգանք եղաւ, ու իր առաջին
մտածումը՝ թքնել այդ բոլորին վրայ ու հեռանալ: Բայց,—

—Ի՞նչ. աւելցուց խփոյն: Առաջին հանդիպած դժւարութեան
դէմ վառութեամբ խոյս տամ. ամենեւին, կուիմ պիտի. ու ան-
պատճառ մաքրեմ պիտի դպրոցը այդ խեղկատակներէն: Ես գիտեմ
ընելիքս. ամօթ ինձի, եթէ այդ անպիտաններու խերը չանիծեմ:

Ու սկսաւ խորհիլ ձեռք առնելիք միջոցներուն վրայ, անոնց
ոտքը դպրոցէն կտրելու վրայ, իր վարմունքին մէջ մտցընելիք փո-
փոխութիւններուն վրայ:

—Այո, սիրելիս, այո. կը կրկնէր Սարգիս Խորամանկութիւն,
քաղաքագիտութիւն, կեղծաւորութիւն պէտք է քիչ մըն ալ. ու-
րիշ կերպ գործը չի քայլեր. ես քեզի քանի անգամ ըսի:

—Թող խրատներդ. ինձի այն ըսէ՝ կրցար հասկընար, թէ ին-
չու արգիլեցին կիրակնօրեայ դասերը:

—Միամիտ. աղէկ պարզ լինչ կայ. նախանձ. կը ճանչնաս այդ բառի արտայայտած ազդոտ իմաստը: Թաղին մէջ վրադ սկսեր էին շատ խօսել, մանաւանդ համակրանքով խօսել. իսկ թաղին մէջ «ազդեցիկներէն» ոմանց այնքան ալ հաճելի չէր այդ. այսօր կիրակի-նորեայ դասերը ձեռքէդ առին, վաղը բոլորովին պոչդ հոսկէ կը կտրեն, ու լըմնցաւ գնաց. իսկ դուն դեռ կը կարծես, թէ միայն քու պարզասիրտ ազնուութեամբդ գործ պիտի շարունակես. Աստուած քեզի խելք տայ:

Բագրատ այս բոլորէն բաւական կոտրւած էր. միայն ոչոքի ոչ-ինչ ցոյց չէր տար. նոյնիսկ ինքնիրեն խոստովանիլ չէր ուզեր:

Դպրոցը զգուշ ու աշալուրջ դիրք մը բռնած էր:

Եւ այս հանգամանքներուն մէջ իր հոգիին միակ ուրախու-թիւնը Լուիզն էր:

Լուիզ ու Բագրատ հիմա իրարու համար ամէն բան էին, թէև արտաքուստ ոչինչ փոփոխութիւն մտած չէր իրենց յարաբերութեան մէջ: Տղու հիւանդութենէն վերջը այդ ընտանիքի ու երիտասարդներու մէջ եղած կապը այն աստիճան սերտացած էր, որ Բագրատի ու Լուիզի չափազանց մտերմութիւնը այնքան ալ աչքի չէր զարնէր:

Մայիսի ու յունիսի սիրուն օրերն էին:

Գէորգ ու Բագրատ, երբեմն մենակ, երբեմն աղջիկներուն հետ իրիկունները պտոյտներու կ'ենէին շարունակ: Կ'երթային բաւական հեռուները, Շիշլիի կողմերը, դաշտերուն մէջ: Կը խնդային, կը կատակէին իրարու հետ. ու օր ան յոգնութիւններէն հանգիստ կ'առնէին:

Յաճախ կ'իջնէին ծովեզր. երբեմն նաւակ կը նստէին լուսին գիշերները: Բագրատ ու Գէորգ կը թիավարէին. ծիծաղ, երգ ու խօսւածք կը խառնուէր թիւրու ճողբիւնին. ու ծեր նաւավարը նաւակին քիթը քաշւած կը խնդար «ճահիլներուն» վրայ:

Գանի մը անգամ աւելի հեռաւոր պտոյտներու ալ դացին. իսկ Պերայի մօտակայ պարտէզները արդէն սովորական էի դարձած:

Այս շրջագայութիւններու ատեն Գէորգի զոյգը միշտ ելնէին էր, Բագրատինը Լուիզ. Սգիւստան հասնողի թեէն կը կախւէր:

Ու այդ թեւ թեւի մշտական երթևեկը, ամառուան զըւարթ, ծիծղուն վերջալոյսին մէջ, կամ լուսնի կէս-մութին, երբեմն ալ

սև խաւարին մէջէն. այդ անվերջ ցած խօսակցութիւնները իրարու սեղմըւած՝ Բագրատին և Լուիզին ախորժելիէն աւելի բան մըն էին:

Իրարու ամեն բան պատմել պարտքի պէս բան մը դարձած էր արդէն: Լուիզ իր դասերէն, իր յաջողութիւններէն, իր ձգտումներէն կը խօսէր. Բագրատ իր օրւան դպրոցի կեանքը կը նկարագրէր, իր դիտաւորութիւնները, իր փափաղները, իր նպատակները կը նկատէր:

Մերթ, թէև սակաւ, բոլորովին առանձին ալ պտոյտի կ'ենէին երկուքով: Ու այդ իրիկունները սովորաբար աւելի սրտի խնդիրներուն շուրջը կը դառնար խօսակցութիւնը:

Աղջիկը կը նկարագրէր իր սրտի յուզումը, իր հոգիին սպառումի վիճակը, իր զգացումներուն մենութիւնը: Տղան կ'ականակէր իր ապրելու անհուն պապակը, իր սիրոյ ծարաւ հոգին, իր կեանքի տենչանքը:

Ու այս բոլորը տարօրինապէս յուզած, պարզ ու անկեղծ շեշտով մը, որ թեւակ մը խոստովանանքի գոյնը կ'առնէր կարծես:

Իրիկուն մը տուն կը դառնային. առանձին էին բոլորովին: Բագրատ կը խօսէր դպրոցի մասին ոգևորւած ու տաք-տաք:

Աղջիկը երկար խօսելէն, հարցնելէն, լսելէն վերջը՝ յանկարծ նկատեց.

— Գիտէ՞ք, պարոն Բագրատ, դուք ձեզի չափազանց կը չարչարէք. այդ չափը լաւ չէ իմ կարծիքովս:

— Սակայն այդ իմ գործն է, օրինորդ:

— Է՛, ամեն մարդ ալ գործ ունի: Բայց դուք կարծես բնաւ ձեզի համար չէք ապրիր:

— Անտարակոյս, որ ինծի համար չեմ ապրիր:

— Որո՞ւ համար ուրեմն:

— Իմիսներուս, գործիս ու իղէալներուս համար. սակայն այդ բոլորի համար ապրիլը արդէն ինծի համար ապրիլ ըսել է:

Այդ փիլիսոփայութենէն ես բան չհասկըցայ. բայց պէտք է որ դուք ձեզի քիչ մը խնայէք, պէտք է որ քիչ մըն ալ ձեզի մոռձէք ու... ու ձեզի շրջապատողները. աւելցուց որչափ կարելի է արագ:

Բագրատ ժպտեցաւ:

Ինչէն կը կարծէք որ չեմ մտածեր:

— Ես թիւն գիտնամ. ըսաւ աղջիկը գլուխը կախելով:

Սակայն իսկոյն գլուխը բարձրացուց ու աչքերը տղուն յառեց:
Երկուքն ալ կանգ առին պահ մը. ու իրարու նայեցան: Բագրատ սղմեց աղջկան թիւն իր թիւին տակ ու երկուքն ալ ժպտեցան:
Ըստ երևոյթին այսչափով ալ վերջացաւ:

Բայց Բագրատ գիշերը անկողնին մէջ հանգիստ մնալ չէր կրնար. մէկ աջ կը դառնար, մէկ ձախ:

«Կը սիրէ. տարակոյս չի կաց կը սիրէ ինծի. կը կրկնէր մտքի մէջ: Իր խօսքերը, շարժումները, ձայնը, ակնարկը բոլորը կը մատնեն այդ. վստահ եմ. և անշուշտ ան ալ վստահ է, որ ես ալ ինքը կը սիրեմ, կը սիրեմ. այդ ո՞վ ըսաւ. երբ սկսաւ այդ. մէկէնիմէկ. հիւանդութեանս ատեն քանի մը խնամք, վերջն ալ քանի մը մտերիմ խօսակցութիւն ու ազոնց գումարը արդէն սէր. ես այդ աղջիկը սիրեմ: Զէ որ մինչև վերջին ատենները մեր մէջ ոչինչ լուրջ կապ չէ եղած. իրան, այդ աղջիկը ես միշտ համակրած եմ. երբեմն մօտը վաչրիկանի յուզումներ ալ ունեցած եմ. միշտ գրաւիչ գտած եմ. բայց ուրիշ աւելի լուրջ զգացում մը. լուրջ. բայց թիւն է այդ լուրջը. իր տեղէն յուզելի, իր մտերմութենէն հաճոյք զգալ, մօտը լինել ցանկալ, սրտանց համակրել. թիւն աւելի լուրջ:

«Ե՛, խեղճ բան չի կտրեր. մտածեց միւս կողմէն վրայ դառնալով: Այսքանը ինծի պարզ է, որ այդ աղջկան հետ խօսիլը ինծի անհուն հաճոյք կը պատճառէ, սիրտս կը թեթեւցընէ, իր մարմնի ինծի հպումէն անուշ դող մը կ'ըզգամ, ժպիտէն կ'ոգեւորւիմ, ու ուրախ եմ այն դադափարով, որ միշտ իմ մասին կը մտածէ, որ ինձմով չափազանց հեռաբերքըւած է. ո՛չ, կ'ուզեմ որ միշտ այդպէս լինի դէպի ինծի, կ'ուզեմ որ ինծի սիրէ, սաստիկ սիրէ. որ գրկեմ, սեղմեմ կրծքիս, սեղմեմ շրթունքներուս. Լուիզ...»

Ու բոլոր ուժովը բարձր գրկած դէմքին կը սեղմէր:

(Վերջը չաջորդ համարում)

ԻՄ ՕՐԱԳՐԻՑ

(Նւէր ***-ին)

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ

I

Չունեմ ոսկի, չունեմ արծաթ
Քեզ պարգևեմ, նազելիս.
Մի սիրտ ունեմ—սիրով առատ,
Եւ այդ սիրտն եմ քեզ տալիս...

Ոսկին, հոգեակ, երբէք կեանքում
Երջանկութիւն չի տալ քեզ.
Բայց դու սիրող սրտիս խորքում
Բախտի աղբիւր կը գտնես...

5 փետրւարի, 1895 թ.

II

Երկուսըս էլ ճնշւած կեանքի խաչի տակ,
Երկուսըս էլ ճակատագրից հալածւած—
Մենք կեանքի մէջ ժառանգել ենք մի՛ վիճակ.
Եւ մի՛ վիշտ է մեր սրտերին ծանաղացած...

Օ՛, տուր ձեռքը... Թող մեր անյուշ արցունքներ
Բուռն սիրով իրար խառնուին, միանան.
Գուցէ, ընկեր, մէկտեղ տանջւող մեր սրտեր
Մի նոր ուրախ կեանքի աղբիւր մեզ բանան...

11 փետրւարի, 1895 թ.

III

Մատաղ կրճքում սիրտ զգայուն,
 Ոսկի յոյսեր կրճքի տակ.
 Պայծառ զէմքին աչեր փայլուն,
 Աչերի մէջ—սիրոյ կրակ.
 Թէ ժպտում է—գարնան քնքոյշ
 Վարդ է բացւում շրթունքին.
 Թէ խօսում է—ձայնիկն անոյշ
 Կախարդում է իմ հոգին...
 Եւ ամեն ժամ, երբ տեսնում եմ
 Այդ նազելի էակիս,
 Եւ վառ սիրով փայփայտում եմ
 Նորան ես իմ ջերմ կրճքիս,—
 Ինձ թւում է, թէ մահ չբկանց,
 Մահու ժամն է—լոկ երազ.
 Եւ չեմ ուզում ես հաւատալ,
 Թէ կեանքն ունի և՛ օրհաս...

16 փետրւարի, 1895 թ.

Մոսկւա.

ԼԻՔԵՐԱԼԸ ¹⁾

ՇՁԵԴՐԻՆ Դ

Թարգմ. ՅՈՎ.Ն. ՄԷԴՆԻԿԵԱՆ

Մի ինչ որ երկրում ապրում էր մի լիբերալ մարդ. նա այն-
քան սրտաբաց էր, որ դեռ ոչ ոք ոչինչ չասած՝ սկսում էր ձայ-
նովը մէկ գոռալ. «Ախ, պարոններ, պարոններ, այդ ինչ էք անում
դուք, չէ որ ինքներդ ձեզ փչացնում էք»: Եւ ոչ ոք այդ վար-
մունքի համար չէր բարկանում նրա վրա. ընդհակառակը, ամենքը
ասում էին. «Թող նախազգուշացնի էլի, մեզ համար խոմ լաւ է»:

—Երեք ֆակտորներ պէտք է ծառայեն իբրեւ հիմք ամեն մի
հասարակական կեանքի—ասում էր նա—ազատութիւն, ապահո-
վութիւն և ինքնօգնութիւն: Եթէ հասարակութիւնը զրկւած է
ազատութիւնից—նա ապրում է առանց իդէալների, առանց մըտ-
քի տենդային գործունէութեան. նա ոչ ստեղծագործութեան հիմք
ունի և ոչ հաւատ դէպի իւր ապագայ բաղդը: Եթէ հասարակու-
թիւնը իրեն անապահով է զգում, դա նրա վրա մի տեսակ ճընշ-
ման կնիք է դնում և անտարբեր դարձնում դէպի իւր սեփական
վիճակը՝ եթէ հասարակութիւնը զրկւած է ինքնօգնութիւնից, նա
անընդունակ է դառնում կատարելու իւր գործերը և մինչև ան-
գամ հետզհետէ կորցնում իւր հայրենիքի լասին ունեցած դադա-
փարը:

¹⁾ Ազատամիտ:

Ահա թէ ինչպէս էր մտածում Լիբերալը, և, ճիշտը խոստովանած—նա ուղիղ էր մտածում: Նա տեսնում էր իր շուրջը մարդիկ, որոնք խարխափում են թունաւորւած ճանճերի նման, և սառում էր ինքն իրեն. այդ նրանից է, որ նրանք ոյժ չեն զգում (իրենց մէջ) ապահովելու իրենց բաղդը. այդ մարդիկ մի տեսակ կալանաւորներ են. երջանկութիւնն էլ, թշւառութիւնն էլ նրանք ուրանում են, առանց որևէ նախաւեւութեան իրենց կողմից: Դրանք լիովին անձնատուր չեն լինում իրենց զգացողութիւններին, որովհետև անկարող են որոշել, իսկապէս դրանք զգացողութիւններ են, թէ մի որևէ Ֆանտասմագորիա: Մի խօսքով Լիբերալը հաստատ համոզւած էր, որ միայն յիշեալ երեք փակտորները կարող են տալ հասարակութեանը հաստատուն հիմքեր և իրենց հետ բերել մնացած բոլոր բարիքը, որոնք անհրաժեշտ էին հասարակական կեանքի զարգացման համար:

Այդ բաւական չէ. Լիբերալը ոչ միայն ազնիւ բաների վրա էր մտածում, այլ և ճգնում էր բարի գործ կատարել: Նրա ամենանախական ցանկութիւնը այն էր, որ իր միտքը լուսաւորող լուսոյ շողքը փարատէր շրջակայ խաւարը ու հովանաւորէր նրան... Բոլոր մարդկանց նա իբրև եղբայր էր ճանաչում և բոլորին հաւասարապէս հրաւիրում վայելք ստանալու իւր փայփայած իդէալների հովանու տակ:

Նա ձգտում էր իւր իդէալները երևակայութեան աշխարհից դուրս բերել իրականութեան հողի վրա: Եւ այդ ձգտումը թէպէտ մի քիչ կասկածելի էր երևում, բայց Լիբերալը այնպէս անկեղծօրէն էր ոգևորւում և, բացի այդ, այնքան սիրալիր էր և փաղաքշալից ամենքի հետ, որ նրա ձգտումների կասկածաւորութիւնն էլ սիրով ներում էին նրան: Նա գիտէր ճշմարտութիւնը ժպիտը դէմքին արտասանել, որտեղ պէտք է, և՛ պարզասիրտ երեւալ և՛ անշահախնդրութեամբ փայլել: Եւ որ գլխաւորն է, նա խստիւ, մարդու բուկին չօքած՝ երբէք ոչինչ չէր պահանջում, այլ միշտ զրոյ հնարաւորութեան: Իհարկ է զրոյ հնարաւորութեան խօսքը չէր կարող համարւել իբրև մի առանձին նպաստաւոր յատկութիւն, նրա եռանդի համար, բայց Լիբերալը հաշտւում էր նրա հետ նախ՝ յանուն ընդհանուրի օգտի, որ միշտ առաջնակարգ տեղ ունէր

նրա աչքում, և երկրորդ՝ յանուն իր իղէալների պահպանութեան
 ունայն և վաղաժամ կորստից: Բացի դրանից, նա զիտէր, որ իրեն
 ոգևորող իղէալները չափից դուրս վերացական բնաւորութիւն ու-
 նեն, այնպէս որ չեն կարող անմիջական կերպով ազդել կեանքի
 վրա: Ի՞նչ է նշանակում: օրինակ, ազատութիւն, ապահովութիւն,
 ինքնօգնութիւն. դրանք բոլորն էլ վերացական տերմիններ են,
 դրանց անկասկած պէտք է լցնել շոշափելի բովանդակութեամբ,
 որպէս զի հետեւանքը ստացւի հասարակական կեանքի բարեօրոճմն:
 Այդ տերմինները կարող են ընդհանրապէս կրթել հասարակութիւնը,
 կարող են բարձրացնել նրա իղձերի և յոյսերի մակերևոյթը, բայց
 չեն կարող տալ նրան մի շոշափելի բարիք, որը անմիջապէս բաւա-
 կանութեան զգացմունք յառաջացնէր նրանց մէջ: Որպէս զի հաս-
 նենք այդ բարիքին, որպէս զի հանրամատչելի դարձնենք իղէալը,
 անհրաժեշտ է նրան մանրել և այնպէս գործադրել բժշկելու այն
 ցաւերը, որոնցով տառապում է ամբողջ մարդկութիւնը:

Եւ ահա, հէնց այստեղ, իղէալը մանրելու ժամանակ է մըշակ-
 ւում «ըստ հնարաւորութեան» դարձեաժը. դա երկու իրար
 շփւող կողմերից մէկին ստիպում է որ ոչ չափով հրաժարուել
 փակ դրութիւնից, իսկ միւսին մեծ չափով կրճատել իւր պա-
 հանջները:

Այդ բոլորը շատ լաւ հասկանում էր մեր Լիբերալը, և ահա
 այդպիսի մտածմունքներով օժտւած նա գոտևորեց կուելու իրա-
 կանութեան հետ: Եւ իհարկէ, ամենից առաջ դիմեց գիտցող
 մարդկանց:

—Ազատութիւն—այստեղ ես կարծեմ դատաւարտելի չիինչ
 չկայ.—հարցրեց նրանց: Ոչ միայն դատաւարտելի չէ, այլ և շատ գո-
 վելի է.—պատասխանեցին գիտցող մարդիկ.—չէ որ այդ լոկ միայն
 զրպարտութիւն է մեզ վրա, իբր թէ մենք չենք ցանկանում ազա-
 տութիւնը. եթէ ուզում ես իմանալ, մեր բոլոր հոգսը նա է ...բայց
 ՚ի հարկէ... որոշ չափով...

—Հը՛մ, «որոշ չափով» հասկանում եմ, իսկ ի՞նչ կ'ասէք դուք
 ապահովութեան մասին:

—Այդ էլ շատ լաւ կը լինի... բայց ՚ի հարկէ, նոյնպէս որոշ
 չափով:

—Իսկ ի՞նչպէս էք գտնում դուք իմ հասարակական ինքնօգ-
նութեան իդէալը:

— Հէնց միայն դա էր պակաս — բայց 'ի հարկէ զարձեալ որոշ
չափով:

—Դէ՛հ ի՛նչ—որոշ չափ է, թող որոշ չափ լինի: Լիբերալը ինքն էլ լավ գիտէր, որ ուրիշ տեսակ չի կարելի: Հապա փորձիր սանձաթճակ բաց թողնել ձիուն—մի ըողպեում նա այնքան անկարգութիւններ կ'անի, որ յետոյ տարիներով չես կարողանալ ուղղել. իսկ սանձ դրած—օ սքանչելի բան—ձին գնում է ու դէս ու գէն չի նայում:

—Հը՞, օնց ես հասա, քեզ մի լաւ մտրակ կ'ուտեցնեմ... որ աշխատես...

ՆԱ Լիբերալը սկսեց փորձ չափով-ը դործադրել: Մի տեղ մի քիչ պատառում է, մի ուրիշ տեղ փոքր ինչ կտրում, մի երրորդ տեղում էլ ինքր բոլորովին թաղնւում:

Գիտացող մարդիկ նաչում են նրա վրա և ուրախուլթիւնից չդիտեն ինչ անեն: Մի ժամանակ մինչև անդամ աջնակէս էին զրաւել նրա աշխատանքով, որ կարելի էր մտածել, թէ ինքն էլ Նիբերալ է դարձել:

Գործիր, — քաջալերում էին նրան — մի տեղ բաց թող, մի ուրիշ տեղ չտեսնելու դիր, մի երրորդ տեղումն էլ բուրդովին ձեռք մի տար — և ամեն բան լաւ կը լինի։ Մենք ևս սպասուած կը լինէինք, սիրելի բարեկամ, քեզ՝ աջծիւ՛ մեր պարտէզը բաց թողնել, բայց հօ ինքզի էլ տեսնում ես, ինչպիսի ցանկապատ է քաջած մեր պարտէզի շուրջը։

— Տեսնելը տեսնում եմ—համաճայնում էր Լիբերալը, բայց միայն շատ-շատ եմ ամաչում իդէալներս մանրելու համար: Ա՛խ, ինչպէս եմ ամաչում, ինչպէս...

—Դէհ, մի քիչ էլ հիմա ամաչիր. երեսիդ կաշին հօ վեր չէ
գալու, բայց դրա փոխարէն «ըստ հնարաւորութեան» քո
դործդ առաջ կը տանես:

Սակայն, այնուամենայնիւ, որքան իրականանում էր «ըստ հնարաւորութեան» ազատամիտ զործը, գիտցող մարդիկ այնքան հասկանում էին, որ մինչև անգամ այդ ձևով էլ չի բերալի իդէալ-

ները չեն կարող յաջողութեամբ իրագործել: Մի կողմում կան չափից դուրս լայն, ազատամիտ մտքեր, մինչդեռ միւս կողմը դեռ բաւականաչափ հասունացած չէ, անպատրաստ է ընդունելու:

—Մեր ուժովը չեն քո իդէալներդ—ասում էին Լիբերալին գիտցող մարդիկ—մենք անպատրաստ ենք, չենք կարող տանել:

Եւ նրանք սկսեցին այնպէս մանրամասն ու պարզօրէն հաշուել իրենց պակասութիւնները և անարգութիւնները, որ Լիբերալը որքան էլ դառն չլինէր նրա համար, ստիպւած էր համաձայնել: Նա հասկացաւ, որ խկապէս իւր ձեռնարկած գործում կայ մի ճակատագրական յանցանք. չի յաջողում էլի, զօռի բան հօ չէ:

—Ա՛խ, որքան ցաւալի է—անիծում էր նա ճակատագիրը: Յիմար—միթարում էին նրան գիտցող մարդիկ—Ի՛նչ ես գտնելաց լինելու համար. քեզ ի՞նչ է պէտք—ապահովեցնել իդէալներդ ապագան. դէ, մենք հօ քեզ այդ բանում արգելք չենք լինում, միայն դու, թէ Աստուած սիրես՝ մի՛ շտապիր. ի՞նչ անենք. եթէ ըստ հնարաւորութեան՝ անկարելի է, բաւականացիր նրանով, որ զգոնէ քիչ ու միչ բան՝ կը տանես, չէ որ քիչ ու միչն էլ իւր զինն ունի: Կամաց-կամաց, քիչ-քիչ Աստուծոյ աղօթելով՝ առանց շտապելու յառաջ գնա—մէկ էլ կը տեսնես մեծ ոտքդ արդէն սաճարի մէջ է. հօ գիտես, տաճարի մէջը շինւած օրից ոչ ոք չէ մտել, բայց դու կը մտնես, դրա համար էլ գոհ եղիր Աստուծուց: Ուրիշ հնար չկայ, ստիպւած պէտք է համաձայնես: «Ըստ հնարաւորութեան» որ չի կարելի, աշխատիր զոնէ քիչ ու միչ բան դուրս կորզել:

Լիբերալը այդպէս էլ արեց: Շուտով նա այնպէս ընտելացաւ իւր նոր դրութեանը, որ ինքն էլ զարմանում էր յետոյ, թէ որքան յիմար է եղել, ենթադրելով, որ հնարաւոր են ուրիշ որ և է. սահմաններ: Զանազան տեսակ համեմատութիւններն էլ նրան օգնութեան հասան: Յորենի հատիկն ի՞նչ է, նա էլ միանգամից պտուղ չէ տալիս, նոյնպէս նաղ ու թաղ է անում: Առաջուց հարկաւոր է դեռ հողում ցանել, յետոյ սպասել, մինչև որ նրա մէջ տեղի կ'ունենայ լուծման պրոցէսը. այնուհետեւ ծիլ կը տայ, հասկ կը ստանայ և այլն և այլն:

Ահա թէ որքան հրաշքների է ենթարկւում հատիկը, մինչև

որ մէկին հարիւր պտուղ է տալիս: Այդպէս էլ այստեղ է. իդէալ-ներն իրագործման խնդրում—«քիչ ու միչ բան» ցանկեւ հողումը, —դէհ, նստիր ու սպասիր:

Այդպէս էլ արեց Լիբերալը. «քիչ ու միչ բան» ցանեց հողի մէջ և նստած սպասում է: Սակայն սպասելով բեղարեց, բայց ցանածը չի բուսնում: Քարի վրա հօ ընկած չի լինի, կամ գուցէ աղբի մէջ է փթել—դէհ, հիմա արի ու խմացիր:

—Ի՞նչը պէտք է լինի դրա պատճառը, միթմիթում էր Լիբերալը խիստ վրդոված:—

—Պատճառը հէնց այն է, որ չափից դուրս խորն ես ցանում—պատասխանեցին գիտցող մարդիկ—մինչդեռ մեր ժողովուրդը դեռ թոյլ է, ընդունակ անարգութեան: Դու ուզում ես նրան բարութիւն անել, իսկ նա յարմար դէպքի է սպասում՝ քեզ իւր նեղ շրջանի մէջ խեղդելու: Մեծ վարպետութիւն պէտք է ունենաս, որ այդ ժողովրդի մէջ մաքրութիւնդ պահպանես:

—Ե՛հ, թէ Աստուած սիրէք, էլ հիմա ի՞նչ ժամանակ է մաքրութեան մասին խօսելու: Ի՞նչ պաշարով էի ես ճանապարհ դուրս եկել, բայց վերջը այնպէս եղաւ, որ բոլորը ցրիւ տալով կորցրի: Առաջուց ըստ հնարաւորութեան էի զործում, յետոյ համաձայնեցի զոռնէ քիչ ու միչ բանի համար, միթէ կարելի է այժմ աւելի ցած իջնել:

—Ի հարկէ կարելի է—օրինակ, չէմ ցանկանայ զործել այս-մարւելով անարգութեան հետ:

—Այդ ինչպէս:

—Շատ հասարակ կերպով. դու ասում ես, որ մեզ համար իդէալներ ես բերել, մենք պատասխանում ենք,—Շատ գեղեցիկ, միայն եթէ ցանկանում ես, որ մենք քեզ համակրենք, զործադրիր յարմարելով:

—Այսինքն:

—Այսինքն. քո իդէալներովդ մի՛ պարծեցիր, այլ նրանց կըրճատիր մեր մասշտաբի համաձայն և այնպէս յարմարւելով զործիւ: Իսկ յետոյ մենք էլ գուցէ, եթէ օգուտը կը տեսնենք... մենք էլ պակաս հազար ծակովը դուրս եկածը չենք, փորձւած ենք, եղբայր, տեսել ենք քեզ նման ծրագիրներ տուողներին: Մի փոքր

առաջ զեններալ Կրոկոդիլովն էլ հէնց քո պէս լոյս ընկաւ մեր մէջ... Պարոններ, իմ իդէալս բանդն է,—ասում է—համեցէք: Մենք էլ յիմարացած հաւատացիներ, և այժմ փախած նստած ենք նրա ձեռքի տակ:

Լիբերալը խիստ մտածմունքի տակ ընկաւ այդ խօսքերի վրա: Առանց այն էլ արդէն նրա սկզբնական իդէալներին միայն անուններն էին մնացել. այդ բաւական չէ կարծես, հիմա էլ ասում են, յարմարեցրիւ նրանց անարգութեան հետ: Դէ, որ այդպէս զնալու լինես՝ ի՞նչ կը լինի, գուցէ դեռ աչքդ մի բացուխով չարած՝ անարգներից անարգը կը դառնաս: Տէր Աստուած, Դու օգնես:

Իսկ զիտցող մարդիկ նրա մտախոհութիւնը տեսնելով սկսեցին իրենց կողմից ևս նրան ստիպել—էյ, լիբերալ, մի բան որ սկսել ես, էլ դէս ու դէն մի՛ ընկիր, հասցրիւ մինչև վերջը. դու ես մեզ խառնըփնթորել, դու էլ ուրեմն բարեխալիր... գործիր... Եւ նա սկսեց գործել միշտ յարմարելով անարգութեան հետ: Երբեմն երբեմն եթէ փորձում էր յանցաւոր գործից զլուլը դուրս փախցընել՝ զիտցող մարդը իսկոյն կպչում էր թեից. էյ, լիբերալ, էդ ո՞ր ես շուռ տալիս աչքերդ, ուղիղ նայիր:

Այդպէս անցնում էր օր օրի վրա և անարգութեան յարմարելու՝ գործը յառաջապիմում էր: Արդէն իդէալների հետքն անգամ չէր մնացել, բայց Լիբերալը դեռ էլի չէր վհատուում. է, թէ՛նչ մի մեծ բան կայ զրանում, որ ես իդէալներս ոտից մինչև դուրս խրել եմ անարգութեան մէջ. բայց հօ ես ինքս անվնաս եմ մնացել, ինչպէս կանգուն սիւն: Այսօր թաւալուում եմ ցեխի մէջ, բայց վաղը արեւը դուրս կը գայ, ցեխը կը չորացնի, ես զարձեալ նոյնը կը լինեմ: Իսկ զիտցող մարդիկ լսում էին նրա այդ գովասանքները և քաջալերում՝ «Իսկ և իսկ այդպէս է»:

Եւ ահա նա միանգամ իւր բարեկամի հետ զնում էր փողոցով. ըստ սովորականին իւր իդէալների մասին էր ճառաբանում և իւր զիտութիւնը փառաբանում: Յանկարծ նա զգաց, որ իւր թշիւրա կարծես ջրի մի քանի ցայտածք ընկաւ—էդ ճրտեղից, ինչն... Լիբերալը նայեց վերև, «հօ անձրև չէ». սակայն տեսնում է երկնքում ամպի մի կտոր չկայ, արեգակը բոցակիզւած խաղում է զենիթի վրայ: Թէպէտև թեթև քամի կայ, բայց որովհետև կեղ-

տոտ ջրերը սլատուհաններից դուրս թափելը արգելաժ է, այդ կողմից էլ ուրեմն կասկածել չի կարելի:

—Այ քեզ հրաշք—ասում է Լիբերալը բարկութեամբ—ոչ անձրև կայ, ոչ կեղտոտ ջուր, բայց իմ երեսիս ջուր շիտ տեց:

—Բայց տեսնո՞ւմ ես. ա՛յ, այնտեղ անկիւնում մի ինչ որ մարդ է թաքնւել, այդ նրա գործն է—ասաց բարեկամը: Թեք է ցանկացել նա քեզ վրա, Լիբերալ գործերիդ համար, բայց այդ բանը երես առ երես անել համարձակութիւն չէ ունեցել: Եւ անհա՛նա, ճշմարտելով անարգութեան հետ», անկիւնից է թեքել քո վրա. քամին էլ շիթերը հասցրել է երեսիդ:

ՍԻՐՈՅ ԿԱՅԾԸ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲՅԱՆԻ

Խաղաղ էի, անյոյզ էի—
Բորբոքեցիր ինձ յանկարծ,
Հանգստանալ հէնց կ'ուզէի—
Դու վառեցիր սիրոյ կայծ...

Օ', թող օրհնւի այդ սուրբ կայծը
Նորան թաղեմ իմ կրճքում,
Եւ խնամեմ և փայփայեմ
Անմար սիրոյս մորմոքում.

Մինչ որ կ'գաս Վեստալեան կոյս,
Հոգոյս տաճարը կ'մտնես
Եւ յաւիտեան նրա մեհեանում
Սիրոյ խունկը կ'ծխես...

15-ին դեկտ. 1895 թ.

Թիֆլիս:

ՀԱՅՈՑ ԱՂԶԿԱՆ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Սրտիս խորքում մի թուփ ծաղիկ
Վաղուց ունիմ խնամած.
Ա՛րի, պոկի՛ր, սիրուն աղջիկ,
Քեզ համար եմ ես պահած:

Գիտե՞ս արդեօք քանի հողմեր
Անցան նորա վերայով
Եւ վշտերի փոթորիկներ
Սրառնացան սեւ մահով.

Բայց մանկական իմ խնամքով
Սրտիս մէջ էր ամրացած,
Աչքերիս ցող-արտասուքով
Նորա արմատն ուռջացած:

Ե՛կ, ուրեմն, նւիրեմ քեզ,
Հայ աղջիկ, այդ ծաղիկներ,
Որ քո սիրոյ ճառագայթով—
Բացւին նորա կոկոններ...

10-ին հոկտ. 1895 թ.

Թիֆլիս:

ԿՈՂԲԱՅ ԱՂԱՅԱՆՔՈՒՄ

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՂԱՅԱՆՔՈՒՄ

(Գիւղական ուսուցչի յիշատակարանից)

ՄԿՐՏԻՉ ԶԱՔԱՐԵԱՆՅԻ

ԻՄ ՄԻՏՔԸ

Գիւղացին աչն անհատն է, որը, բնութեան հետ կեանքի բոլոր պաշմաններում լինելով, հաշտ և համերաշխ, վաշելում է անսահման կերպով նրա ազատութիւնը: Գիւղացին աչն երջանիկ անձնաւորութիւնն է, որ իւր սրտի և հոգեւոյ զոհունակութիւնն ու մխիթարութիւնը՝ «կամք Աստուծոյ է» ասելով, վերջին կատարելութեան է հասցնում, առանց չուսահատութեան կեանքի ամենածանր և ձախող հանգամանքներումն անգամ: Գիւղացին է աչն անհատը, որի սրտի և բոլոր զգացմունքների մէջ վաշելում է նրա հոգեւոյ չատկանիչը՝ պարզութիւնը, որի մէջ նշմարում են գիւղացու անցեալը, ներկան, նոյն իսկ մօտ ապագան իրանց արկածներով: Ես աչք բոլորը մտածում էի: Եւ մտածում էի որ գիւղացի տարրը չնաչելով նրա չաջող հանգամանքներին, պարզ, խաղաղ և անվրդով կեանքին, աչնու ամենաչնիւ գերծ չէ թշնամի ոգիներէից, որոնք ուժգին և ուժգին կերպով են սպառնում նրա նիւթական և բարոյական կեանքին՝ կործանումն, մահ և չաւիտենական անդունդ: Տգիտութիւնը՝ իշխանաբար թագաւորում է գիւղացու մտաւոր հորիզոնի վրայ: Նրա արևառ պարանոցը անզգալաբար կրում է ճնշումն, կեղեքում, հարստահարութիւն խաբեբայ և շահամոլ անհատական ձեռքերից, որոնք նոյնպէս մտածում էի:

Իմ մտածմունքներս վերջ չունէին, նոքա անդադար խռովում էին իմ մտքի բոլոր աստիճանները, և մէկը միւսին չաջորդելով տարբերում էին, մղելով ինձ մտքերի անսահման ովկիանոսի աչս ու աչն կողմը: Բայց չուտով աչք բոլոր խառնափնթոր մտածմունքները անհետացան, ես կանգ

առաջ, ես գտալ իմ մտածողութեան հաստատուն լինարանը—և դարձեալ դիւզացին էր և նրա կեանքը: Ահա՛ ալդ բոլորից լետու, պարզեց իմ մտքի մթնշուղը, խոյս տուցին նրանից քաղաքացիական կեանքի փառաւորութիւնները իրանց շլացուցիչ երևութիւններով, կենցաղավարական ձևականութիւնները, իսկ ալդ ամենին փոխարինեցին չափաւորութիւն, ջերմ և անպալման սէր դէպի գիւղական հասարակութիւնը, ալդ ոյժը ինձ համար պաշտելի համարեց, ես չարգեցի նրան, չփեխով նրա կեանքի մանրամասն հանդամանքների հետ, ես սիրեցի նրա ալսպէս սուած անարատ պարապմունքը, նրա իղէալը,—հողը, որի հետ նա անվերջ կապւած է իւր գոյութեամբ:

Բնականաբար իմ սէրը և մտածմունքները գիւղական ժողովորդի նկատմամբ պէտք է ունենալին իրանց հետեանքները, դոքա իրագործեցին ալն ժամանակ միալն, երբ ես ինչպէս դաւառական ուսուցիչ, ըմբռնեցի ուսուցչի կոչումը, երբ ես նոյն ժողովրդին, որի սահմանափակ շրջանում ապրելով և միանգամալն նրա մատաղ սերնդի մտաւոր և բարոյական գործին ինչպէս պատասխանատու՝ չարգեցի նոյն հասարակութիւնը և նրա անհատական իրաւունքները, ընտելացալ նրա գործունէութեան, մտաւոր շարժման և ստեղծագործութեան հետ, վերջապէս, երբ աւելի հիմնաւորապէս ըմբռնեցի գիւղացի անհատը, և նրա կեանքի ներքինը և արտաքինը: Գործնական վործերը ապացուցին ինձ շատ անգամ և շատ հանգամանքներում, որ գաւառական ուսուցիչը պէտք է լինի և գործնական և իղէալիստ, որ գաւառական ուսուցիչը եթէ չէ ընդունում իւր գործունէութեան մէջ ժողովրդական կեանքի իմաստասիրութիւնը ինչպէս սկզբունք, և չէ ձանաչում նորա անհրաժեշտութիւնը իւր ձեռնարկութիւնների մէջ, ալն ժամանակ, անկասկած կարելի է նկատել, որ գաւառական ուսուցիչը տեսականապէս ըմբռնած լինելով իւր պարապմունքները, շատ է հեռանում իւր նպատակից, առանց սորան ծառայել կարողանալու: Ալդ մտքերն էին որոնք ինձ զբաղեցնում էին և ինձ չառաջ էին մղում՝ որոշել, վճռել և անել մի քալ,—ձանապարհորդել դէպի Սուրմալուալ գաւառի իւրաքանչիւր գիւղը, ի նկատի ունենալով որ ալս գաւառի հալ տարրը, լինելով բնիկներ և հին ժամանակներից զանազան կողմերից եկած զաղթականներ՝ հետեապէս աստեղծում էր իւրաքանչիւր գիւղ, մէկը միւսից թէ տոլորութեամբ և թէ կեանքի արտաքին և ներքին ձևերով: Մրադրիս համաձայն ևս վճռեցի ալցել Նախ Կողբ գիւղը, ուր երկու ամիս մնալով, ձանապարհորդեցի նրա շրջակայքը, ծանօթացալ ժողովրդի և նրա կեանքի բոլոր խաւերի հետ, չինալցեցի ոչ մի ջանք և աշխատութիւն իմ նախագծի իրագործման համար: Ինչ որ լսեցի ժողովրդի բերանից և ինչ որ տեսալ անձամբ, նոյնը գրեցի, և ալն փոքրիկ աշխատութիւնը, որը Կողբացու պատկերն է և մասնաւորապէս

գիւղացու կեանքի հալելին է կազմում, ահա ներկայացնում եմ «Մուրճ»-ի ընթերցողներին:

I

Ա Ռ Ա Ջ Ի Ն Օ Ր

Ամբողջ ինն ուսումնական ամիս երկար ու բարակ զբաղմունքներից լետու, անշուշտ պահանջում է մտաւոր և ֆիզիքական հանգստութիւն. բաւց ալդ հանգստութիւնը, գոյութեան ամենաանհրաժեշտ ալդ միջոցը, ես գտնում էի իմ պատրաստած ծրագրի և որոշումներիս իրագործութեան մէջ:

Չորս հարիւր տուն բնիկ և զուտ հայերից բաղկացած Կողբը, իմ ձեռնարկութիւնը իրագործելու համար, կազմում էր երկու զլխաւոր լարմարութիւններ. ա) Նա չըջապատւած է զանազան հնադարեան աւերակներով, որոնք շարժում են ճանապարհորդի լուրջ ուշադրութիւնը. բ) Կողբը զանազանում է Սուրմալուազ գաւառի բոլոր գիւղերից, մասնաւորապէս իւր կլիմայական չափով պայմաններով:

Չնայելով որ Կողբը՝ նոյնպէս զուրկ չէ ալրող ճառագայթներից, բայց աչնու ամենաչնիւ տաք եղանակում անդադար մեղմօրէն օդի միջից չնչող հովասուն զեփիւռը մեղմացնում է տաք ճառագայթների ազդեցութիւնը. ալդ հովից զուրկ են ամբողջ Սուրմալուազ գիւղերը ամառալին ամիսներում: Եւ ի՞նչեւն՝ իմ վաղածանօթ կողբացի Չանազի տունն էր. գիւղական ճաշակով պատրաստւած, թէպէտ նա չինւած էր բարձրաւանդակի վերայ, նորա գիրքը փառաւոր էր, աչնպէս որ կարելի էր ալդտեղից ամբողջ Կողբը առանց արդեւքի տեսնել ամեն կողմ, բայց նա իւր ալդ գիրքի մէջ վերին առտիճանի անշուք էր, և իսկապէս խուղի էր նմանում, քան թէ սենեակի իմ բնակարանի և տան մուտքը մէկէր. ալդ տանը ապրում էր իմ բարեկամ Չանազը իւր կնոջ և երկու որդիների հետ: Եւ սենեակի բոլոր չորս պատերի մէջ և անկիւններում փորւածքներ կային, որոնք կոչւում էին տկնատներ և ծառայում են զանազան մանր մուկի իրերի համար. աջակողմեան պատի մէջ մի հատ լուսամուտ առանց ապակու, աչն ես հիւսւած երկաթեալ բարակ թելերով: Սենեակի ձախ կողմում պատի մօտ դրւած էր բարդի ¹⁾ կոչւած փայտերից չինւած մի թախտ, ծածկւած քրդական կապերտով, իսկ գիմացի պատի վրայ խփւած երկու ցցերի վրայ դրւած էր մի տախտակ, և աչ տախտակի վերայ կարգով

¹⁾ Բարդի կոչւած ծառի հալրենիքը Սուրմալուն է, աչնպէս որ դաւառի բնակիչները իրանց չինութիւնների համար ամեն մի հանգամանքում գործ են ածում նրան: Սուրմալուում նա ածում է ամենամեծ ուժով և քանակութեամբ:

չարած էին կաւից շինւած մեծ ու փոքր խեցեղէն ամաններ: Դիւղացու տնային ալդ հարստութիւնները ծառայում են նրա համար կերակուրներ պատրաստելու: Ծափ կամ չորս կանթիկ, ալդ՝ կերակրամանների մէջ ամենամեծն է, որը բացառապէս ծառայում է հերիսալ կամ խաչ եփելու համար: Կճ ու ճ կամ՝ պտուղը, ալդ սովորական ամանն է գիւղացու ամենօրեալ կերակրի համար, միջակ չափով շինւած: Ճ լ ո Ր, ալդ ամենափոքրն է և աւելի նուրբ ու բարակ շինւած առձեռն բաներ պատրաստելու համար: Ահն՝ որ իմ բնակարանի ամենագլխաւոր դարդն էր կաղմում, ալդ՝ Զանազը հին ու նոր ղէնքերն էին, որոնք կարծես շարունակ գործածութեան մէջ լինելով փալում էին: Զէնքերի մէջ աչքի ընկնողը քրդական մի կեռ և հին սուր էր, որը թէև մաշւած, բայց չափազանց ոտր ու կտրող էր. սրի վերևի կողմում մի երեսի վրալ գրւած էին ոսկեղօծ տառերով Թաթուլ սպարապետի սլարսիլ: Առդրիլ թագաւորին տւած հետևեալ խօսքերը. «Նթէ իմ է հարւած, չէ կենաց»: Նս դարմացած և ապշած նալում էի ալդ սրին և նրա վերալ գրւածքին, որը կարող էր իւր արժանաւորութիւնը ունենալ հնութեան կարգում. ես նալում էի մեծ ուշադրութեամբ, երբ Զանազը ինձ մօտեցաւ և հարցրեց աւելի ինքնավստահ ու պարծանքով—

—չը, վարժապետ ինչ շատ ես մտիկ անում, հաւանում ես թէ չէ:

—Ինչպէս կարելի է չհաւանել ալդ կերպ հաղագիւտ բանին, բայց ինչ տեղից ես ձեռք բերել, հարցրի ես հետաքրքրութեամբ:

—Օ՛, ըստու պատմութիւնը շատ ա էրկէն, վարժապետ Զան, չալունակեց Զանազը ողևորութեամբ: Քսանըհինգ տարի ըստուց առաջ, իմ տղամարդ ոխտը Զալալցիք ու Զուլանցիք¹⁾, էս սարերի գիւղերը քըմմա (բուրը) թալանելին. մին օր էլ տուցին Կողբի վրէն, լաւ էր մեր խաբարը թէլ էլաւ, քըմմա գեղով դուրս էղանք, սաղ օրը կռւեցինք. քըրգերը տեսան որ չէ՝ իրանց կերը չենք, փախան: Նս մի կապիտ ձիի հեծել, որ իր Աստուծը չվախենար սարերի գլխից իրան կը գցէր. էլ ինչ օրան հմար ի պահել, մի երկու հետ որ օրգանգեցի զլի զալիլ թռաւ ու մի հրօղէին հասալ մի ֆաղիլ²⁾. հասնելս ու զլուխը թռցնելս մին արի, ինչ կար ու չկար վրից հանեցի էս թրի հետ ու մի քանի օրից չետ ուղըմի անըմս վրէն գրէի, ձենք մի հրերացու հարևան ունենք Սաքօ անըմուլ, չթողուց, էդ խօսքերը գրել տուց:

Զանազը ալս խօսքերը պատմելու ժամանակը, աչքբան ուրախ և եռանդով նկարագրում էր անցեալ դէպքը, որ կարծես թէ նույն վարկեա-

¹⁾ Քրդական առանձին առանձին ցեղեր են.

²⁾ Մահմետական քրդերի կրօնաւոր:

նին կատարած դէպքի մէջն էր գործողութեան մասնակից և վերջաւորութիւն տւողն ինքն էր:

Ջանազը քառասուն և հինգ տարեկան լաղթանդամ և բարձր հասակով անձնաւորութիւն էր. նրա մեծ և կարմիր դէմքի վերայ թաղաւորում էր առելակազմ մարդիկներին չատուկ մի գեղեցկութիւն, թանձր և աղեղնաձև լոնքերի տակից փալտում էին մեծ, բալց քաղցր աչքերը. լալն ճակատի վրայ ձգւած մեծ ու փոքր ակոսները, չալտնում էին նրա կեանքի տարիները իւր բազմաթիւ արկածներով: Ջանազի առնական բնաւորութեան մէջ համակրութիւնը իւր պանծալի տեղն ունէր. նա իւր մանկական հասակից սովորել, ընտելացել էր ամեն տեսակ չարքաշ կեանքի, տանից հեռու ապրել, հանդում, լեռներում ոչխարների հետ. ձեան և անձրևի տակ, իոր քարը գլխի տակ քնել, ալդ բոլորը նրա կեանքի քաղցր անցքերն էին: Գող, աւաղակ, քուրդ ու թուրք, հալ—բոլորն զիտէին նրան, ամէնքի ականջին ծանօթ էր նրա անունը, բաւական էր որ միայն լսէին Ջանազ բառը, ալդանւան համար պատրաստ էին ամէն կերպ իրանց ծառայութիւնը չալտնել նրան: Ջանազը լիջեցնում էր իւր կեանքով հին դարերի Գեօղ օղին, բարդող լեռների վրայ թաղա ուրդ հերոսը:

Մի պարզ առաւօտ էր. պալծառ արևը դեռ նոր էր բարձրացել ջինջ և կապուտակ երկնակամարի վերայ. երկնքի ալդ անաւան տարածութեան մէջ, ամալի ոչ մի նշույլ անդամ չէր նշմարւում, առաւօտեան ժամերին սահմանւած ղեփուռ փչում էր մեղմօրէն և կրկին սահում, անցնում եթերային ոլկիանոսի մէջ: Չնայելով արևի մի քանի կանգուն բարձրութեանը, տակաւին նրա սուր ճառագայթները չէին տարածւել Վոդբ գիւղի վրայ. թէպէտ իւրաքանչիւր անհատ ալդ թարմ եղանակին արդէն սկսել էր իւր առօրեայ աշխատութիւնը, բալց Վոդբը ամբողջապէս ծածկւած էր աղանաքի բարձր և սուր զագաթներից ձգւած գիշերալին սուերի տակ: Նրբ դւարթ է օրը, և երբ թարմ է եղանակը, ալդ հանգամանքներում անկասկած բնութեան քաղցր տրամադրութեան ենթարկւում է և մարդ իւր հոգեկան բոլոր ցանկութիւններով: Նա դուրս եկալ տանից, բալց ուր գնալս չկարողանալով որոշել, հեռացալ փոքր ինչ և նստեցի աղանաքին մօտ մի քարի վերայ: Նալում էի ամէն կողմ և դմալում էի բնութեան գործած հրաշալիքների վերայ. որ կողմը որ նալում էի, իմ ուշադրութիւնս աւելի և—աւելի գրաւում էր աղանաքը, որտեղ հարիւրաւոր կողքացի բանտրներ, իւրաքանչիւրը իւր գիրքը բռնած՝ աշխատում էին: Մէկը՝ աղանաքի դագաթնաւտից փոքր ինչ ցած, հազիւ երկու ոտքերի վերայ կանգնած, մուրճը ձեռքին թըխկ հա թըխկ, տալում է, մաքրում է աղը, որ նրանից աւելի նուրբ խաչքար անւանւած աղը դուրս բերի. մի քանիսը ճարպիկութեամբ պողպատեայ

սրածալը բերելով ծակում էին աղաքարը որոշեալ խորութեամբ և նրա մէջ լեցնելով չափաւոր քանակութեամբ վառօղը, մի քանի վալրկեանից չեւոյց պոճկելով անհամար աղասալերի կտորներ թռչում էին օդի մէջ, և զանազան պտուտներ անելով կրկին ցած գետնի վերայ էին թափւում, մի քանի տասնեակ մշակների, ալդ թափւած աղալին բեկորներն ու մանր խճերը աւանակներով ու չալակով տանում էին և միմեանց վերայ ժողովում աջնտեղ, ուր նշանակւած էր աղահանքի կապալառուի հրամանով: Մէկ ուրիշ կողմից հալերի և վրացիների խումբերը իրենց սալերով, սրանց հետ խառնւած և պարսկիներն ու քրդերը, ահագին զոռում, գոչում բարձրադրած, իւրաքանչիւրը նրանցից աշխատում էր առաջ իւր աղի բեռներն աւելի շուտ կշռի, շուտով ճանապարհ ընկնի: Գործակատարներից շատերը իրենց կողմից վարմունքով չէին տարբերում Չոսկանքեարի պարսիկ աւազակից և ոչ իսկ լեռների ծերագերում սնւած կիսավալրենի քրդից: Ինչ որ էլ լինէր, աղ գնողներից շատերը, շատ անգամ իրենց իրաւացի բողոքներին և հարցումներին կանոնաւոր պատասխան և բաւականութիւն ստանալու փոխարէն, ստանում էին գործակատարներից և ծառաներից անխնայ մահալի հարւածներ, ապտակներ, և զղւելի հաջողանքներ: Իսկ զիմացինը լռում էր և համբերութեամբ տանում էր ալդ բոլորը, որպէսզի աւելի չզուգուէին գործակատարի զալրութը, աչն ժառանակ գործը իսպառ կարող էր խափանել: Վերջապէս լռութիւնը իւր չափ ու սահմանն ունէր, որչափ համբերէր ազատ լեռների որդին, աչնուամենայնիւ դժուարանում էր զսպել իւր վրէժխնդրութիւնը: Նա արտաշաչտում էր իւր լճնամական զգացմունքները դէմքի և շանթող աչքերի զանազան ձևերով, քալց աւելի վարագուրելու համար իւր հողու ոխակաւ արտաշաչտութիւնները հակառակորդներից, կրկնում էր անվերջ իւր «բասի» (համբերիր) բառը: Քիւրդը մեծ նշանակութիւն է տալիս ալդ բասին և մեծ չարզանքով է վերաբերում դէպի նա, նրա մէջն է գտնում իւր կեանքի և մահու խնդրի որոշումը, հետեապէս նա արտասանում է խոր հառաչանքով ալդ բառը, որի մէջ ծածկւած են լինում ատելութիւն, քէն և վրէժխնդրութիւն: Քիւրդը չարունակում է իւր բասիլը, և եթէ բաղդը չէ չաջողում նրան վրէժխնդիր լինելու իւր թշնամուց, և եթէ վերջին հանգամանքում նրան չէ չաջողում իւր ոխը հանել հակառակորդից, աչն ժամանակ նա անհաշտ է մնում նրա գերեզմանի հետ: Արեւ բաւական բարձրացել էր, եւ վերկացալ և կամկար քալքերով անցալ մեծ ու փոքր առւակներից ու տուն հասալ, որտեղ սպասում էր ինձ Զանաղը, Սո նստեցի և չանցած հինգ րոպէ՝ Զանաղի կիներ ձեռքին բռնած մի սալալ¹⁾, նրա վրայ դրւած հողէ մեծ ամանով կերակուր բերեց:

¹⁾ Արարատեան զաչտի բնակչուհիները ամարալին և զանակում գոր-

—Դէ, վարժապետ ջան, սկսեց ջանաղը, համեցէք, հաց անուշ արէք, հէր օրհնած, քաղցած, ծարաւ, խելքամաղ էլար է՛. դու ինձ մտիկ մի արա, բարի լիսը հըլա չէր բացւել, խէրն ու շառը իրարուց չէր ջոկնւել, մութ է մութը ես մի փոքր կուշտ հաց կերել եմ, Աստուած կնկանս ծնունդըն սրհնի, ըսօր քու խաթեր համար քուֆթալ ²⁾ ա էփել. դէ կեր, վարժապետ ջան, անուշ արա՛ քանի չի սառել: Ջանաղը հացը բրթեց թշնամաբար և հարիւրաւոր կտորների բաժանեց, բրդուճները լցրեց քերդանի մէջ, թեները ծալեց մինչև արմունկները՝ մենք շարունակեցինք միասին մի ամանից ուտել. քերեղանը Ջանաղի հարւածների առաջ դողում էր, մինչև ես մի պատառ վերցնում էի, Ջանաղը երրորդում էր, և իւրաքանչիւր պատառը ահնչալի մեծ որ պատառի կէսը բերանից դուրս մնալով մատներով էր ներս տանում: Քերեղանի օրհասը մօտեցել էր. եթէ Ջանաղը փոքր ինչ բարեսիրտ չլինէր և չղաղարէր ուտելուց, անկասկած ես քաղցած կը մնայի: Մենք ճաշեցինք բաւական ախորժակով, իսկ ճաշից չետոջ ես հանգստացալ փոքր ինչ, ինձ արթնացրին միմեանց չետեցից լաջորդաբար սրտացօղ սղահանքի թնդանթանման ճաշները:

II

ԿՈՂԲԱՅ ԱՂԱՀԱՆՔԸ

Աղահանքը կալումում է հիւսիսային և արեւելեան կողմից Կողբի ամենամօտ տահմանը. դիւղի անհաւասար մակերևոյթից առտիճանաբար խոլանում են մթնոլորդի մէջ աղահանքի դարեւոր հողալին դազաթները, որոնք կարծես իբր արձանացած պահապաններ հսկում են գիւղի վերալ և որպէս ականատեսս վկաներ զիտում են ժողովրդի կեանքի մէջ կատարւած իրողութիւնները:

Աղահանքը՝ ինչպիսի դուգահեռական գիծ, հիւսիսային և արեւելեան ուղղութեամբ բարձր ու ցածր հողաբլրալին դուրչ և մոխրագոյն դազաթներով, ձգւում է մօտ ութ վերստ հեռւորութեամբ և կանգ է առնում ուղղակի ափտեղ, ուր պատմական Արաքսը իւր հեռւոր ճանապարհորդութիւնից հոսում է, փրփրալից չորձանքներով ողջունում է նախնի Սուր:

ծում են բոլորից սալա, որը շինում է երկու տեսակ. ա) ցորենի ծղտոներից, և բ) ուռնու դալար ոստերից: Բոլորից նոյնպէս հիւսում են դանաղան կարասիներ, իսկ եղէգից փոխաթներ:

²⁾ Քուֆթալի հալրենիքը հին Պալաղէտն է եղել: Բալց ս արածւած է ամէն տեղ, Սուրմալիցիների ամենաանդրանիկ և պատաւոր կերակուրն է. դոված է Վաղարշապատի քուֆտան: Քուֆտալի բաղադրական մասերն են՝ լաւ ծեծւած մտակաւոր միս, աղ, ձու, համեմ, սոխ, կաթ. և մասնաւորապէս մի քանի կաթիլ օղի, եթէ ուզում են որ քուֆթան աւելի ուռչի և մեծ լինի:

մառի բերդաքաղաքը, խիստ է նրա ժալոստ փէշերին օձաձև պտղտներով, կրկին իւր ձեն ընդունելով, շարունակում է ճանապարհը դէպի արեւելք: Հիւսիսային արեւմտեան կողմից աղահանքը ընդհատւած է մի գետակով, որի ջուրը կողքի հարաւային կողմից «Սինակ» կոչւած աղբիւրներից է հոսում: Գետակից անմիջապէս չետու, շարունակւում են աղային անթին գունաւոր հողաբլուրներ, որոնք ինչպէս լեռնաշղթա՝ ձգւում են դէպի արեւմուտք մինչև կաղզւան, բայց տակաւին անձեռնմխելի և անմշակ դրուժեան մէջ են: Ամբողջ արեւելեան սահմանի հաւասարութեամբ ձգւած է Աջի գետակի ընդարձակ և զուգահեռական հովիտը, որը և կաղմում է աղահանքի սահմանը:

Աջի չալը իւր սկիզբն առնում է նույնպէս Սինակի բաղմաթիւ աղբիւրներից, և խառնուելով զանազան լեռներից բխող ջրերի հետ, կաղմում է մի լորդառատ գետ: Աջի գետը իւր վտանգաւոր լորձանքների և կատաղի ալիքների պատճառով ստացել է աջի (դառն) անունը: Չմերսելին և դարնանային եղանակներում նա շատ անգամներ անմերձեանալի է դառնում, իսկ ամառային եղանակում ընդհակառակը ցամաքում է և շատ անգամ չորանում:

Սինակը գտնւում է բարդող լեռների հարաւային և գալլոտան լճի արեւմտեան կողմը. ալդ ջրաբաշխ հովտում ալժմ բնակւում են հօթն գիւղքեր: Սինակը կաղմում է Թիւրքիայի սահմանը, նրանում բացի հազարաւոր աղբիւրներից կան և հանքային ջրեր: Սինակի լորդառատ աղբիւրներից բղխելով աջի գետակը անցնում է հովիտներից և բարդող լեռներից, ահազին զոռում զոչումով, բարձր ու ցածր ելեւջներով հոսում է դէպի հիւսիս և մտնում է արաքսի ծոցը: Աղահանքի ալդ հնադարեան բարձրութիւններն իրենց լուստեանակսն լուռութեամբ, պատկերացնում են իւրաքանչիւր անհատի աչքի առաջ խոր տարտարոսներ, զարթեցնում են իւրաքանչիւր հոգումէջ սոսկումն, լինել արագապէս բաղմաղարեան աւերակների կոչեր, որոնք իրանց անսովոր տեսաբաններով զարհուրանք են պատճառում նախապաշարած մարդկային սրտերին: Հողաբլրային արտաքին անհաւասար մակերևութը՝ իւր ընդարձակ տարածութեամբ, ոչ մի ախորժեղի և քաղցր տպաւորութիւն չեն թողնում նախդի վերաջ. աչքի առաջ բացւում են լաչնաբերան անդունդներ, տեղ տեղ երևում են անդրտի անապատային բուսականութիւնը լինչեցող նիհար և կիսականաչ բուսեր, որոնց կիսնքի տեղականութիւնը ինչպէս առօրեալ վարկենական երևութ արագ և արագ անհետանում են: Այն որ աչքի է ընկնում աղահանքային արտաքին խորդ ու բորդ մակերևութի վերաջ, ալդ երգեցիկ կաքանների երամներն են, որոնք սարից ձոր, ձորից սար անցնելով, թռչում, սլանում են, անվերջ գեղեցիկանքներով, ինչպէս կանաչադարձ լեռների հիւրեր, թառում են ծաղիկների մէջ, իրենց գիշերային հանդիսան առնում:

Հողալին բլրակների աջ և ձախ կողմերից Կանկարծ բարձրանում են կիսաքանդ ժալուեր, որոնց դազաթներն ուղղակի իրենց դիմացը գտնւած անդունդներին են նալում, ուր արեւի ճառագալթներն անդամ չեն թափանցում, ալ թագաւորում է մշտնջենական ծմակը: Այդ ժալուերի միջին մասը փոքր ինչ հեռուից կարմրին է տալիս. դա աղալին կարմիր շերտն է: Աղահանքալին արտաքին մակերևութի վերալ երևացող բարձր դազաթները գլուղի ուղղակի դէմ ու դէմ են գտնւում: Կողբացի մանուկը առաւօտեան քնից աչքերը բացելու ժամանակ, ալ տեսարանի սպաւորութիւնն է պատկերացնում իւր թարմ հոգու մէջ: Աղալին ալ դազաթները օրալ իւրաքանչիւր վալրկեանում ամեն մի կողբացի անհատի տեսողութեան զլխաւոր առարկան են համարւում. ինչպէս էլ ուզում ես չնալել, հէնց որ զլուխդ բարձրացնում ես թէ չէ, աչքիդ առաջ կանգնած են լինում: Այդ դազաթներից մի քանի աստիճան ցած, լանջի վերալ, ուրտեղից սկսում է աղի արտադրութիւնը, երևում են բաղմաթիւ մեծ ու փոքր բացւածներ, և նալում են ուղղակի դէպի բարդող լեռները. դոքա առանձին-առանձին աղահանքի դռներն են, անհամեմատ մեծ ու փոքր լալեութեամբ բացւած: Այդ բացւածները ընդհանրապէս կողբացիք անւանում են հանքեր, բալց նրանցից իւրաքանչիւրը իւր սեփական անունն է ունեցել, նրանցում կատարւած իրական դէպքից կամ հանգամանքից վեր առած: Հանքերը երկու են, հին հանքեր և նոր: Հին հանքեր կոչւում են նրանք, որոնք պարսից տիրապետութեան ժամանակներում բացւած, մշակւած են եղել, իսկ նոր հանքերը ռուսաց տիրապետութեան միջոցին են խախտել: Աղահանքերից ամենամեծը և նշանաւորը թագաւորական հանքն է: Թագաւորական տիրոգոսը նրա համար է իւր վրալ կրում ալ հանքը, որովհետեւ հին ժամանակ պարսից տիրապետութեան միջոցին, կառավարութիւնը ալ հանքումն էր պահում քաղաքական խնցուտներին, ենթարկելով նրանց գիշերալին աղհատութեան աշխատանքին: Այդ հանքերը 1820 թականներից առաջ բոլոր կողբացիների աշխատութեամբ են բաղւել, նրանց մէջ աշխատել են և կողբացի կանալք, ամբողջ և առանձին առանձին ցեղեր, որոնց անուններով մինչև այսօր լիչւում է իւրաքանչիւր հանքը:

Ղոչաղենց հանք. ալ հանքում սպանւել է Ղոչաղենց եղբայրներից մէկը իւր ընկերից, աղհատութեան միջոցին, սիրահարական դէպքի առիթով:

Վեղիկենց հանք. ալ հանքում Վեղիկենցից մի 25 տարեկան երիտասարդ մեռել է աղալին շերտերի տակ մնալով:

Ջանաղէնց հանք	Սաքինենց հանք	Մարջուկենց հանք
Խալերենց »	Փաչինենց »	Քուքուլենց »
Ումրումենց »	Ուղուրենց »	Տուաուղենց »

Աբօյենց	»	Շմաւօնենց	»	Շաքարենց	»
Գաիօյենց	»	Վարդիկենց	»	Պուփուկենց	»
Մարջոյենց	»	Լալանենց	»	Քրդոյենց	»
Թանգիւնենց	»	Ակօյենց	»	Զուլոյենց	»
Բարիլուսենց	»	Ղազարենց	»	Սինոյենց	»
Գիւղաթենց	»	Ագալոյենց	»		

Այդ անունները չին ժամանակներից մինչև ցարդ լիշուժմ են անվտ-
փոխ կերպով։ Ռուսաց հպատակութեան միջոցին երբ աղահանքի վերաց
նշանակեցին տեսուչներ, աչն ժամանակից արգելեց աշխատութիւնը ալդ
հանքերում, ուր վտանգը սպասուում էր ամեն մի լոպէ և անխուսալիելի
էր։ Մտնենք մի քանի վայրկեան ալդ նեղ դռներից ներս, ալդ ստորերկ-
րեայ աշխարհները։ Օղի խոնաւութիւնն ու սառնութիւնը անմիջապէս
զդացուում է մարմնի բոլոր մասերում. որչափ հեռու, աչնչափ աւելի
մթնում է, ձախը իւր արագ վերադառնալու ոյժը կորցնում է. պատերը և
առաստաղը ծածկեալ են աղալին փրփրանման մամուռներով, ահալին
վիթխարի աղածալուերը, լոպէ առ լոպէ կործանման կէտին են սպասում,
իսկ խոնաւութեան և սառնութեան հետ, մի տեսակ օարսուռ է աղղում
մարդի ջգերի վերայ։ Այդ ստորերկրեայ տներում չատակի վերայ տեղ-տեղ
անձրեններից և աղի կաթեածներից գոլացած աղաջրերը աչն աստիճան
սառը, պարզ և թափանցիկ են որ դէմքի իւրաքանչիւր գծագրութիւնը
որոշուում է նրանցում։

Բարձր և կապտամոխրագոյն առաստաղը, բնութեան կարգադրու-
թեան տակ, կաղմում է աղալին հալւածներից զանազան շքեղ և աներե-
ւակալիլի դեղանկարներ, որոնց հասնելու համար նույն իսկ նրբամիտ
նկարչի վրձինն անգոր է։ Ալդ ստորերկրեայ մուտքերը՝ բնութեան չրա-
շալիքներն են. ոչ իսկ առօրեայ աշխատութեան գործ, ալ երկար ու ձիգ
դարերի մշակութեան արդիւնք։ Ալդ որջերը չատ անմեղների վերջին օր-
հասն են ողբացել և չատ արկածաւոր կեանքերի դերեզման են համար-
ւել։ Աղահանքը իւր մասնաւոր երևութներով թէպէտ ունեցել է իւր զըզ-
ւանք պատճառող շարժաւիթներն կողբացի ժողովրդի վրայ, բալց ունե-
ցել է և նույն ժողովրդի մտաւոր ստեղծագործութեան վրայ իւր օգտակար
ազդեցութիւնը, որի լուս աշխարհ ընծալելը ժամանակիս բուռն փա-
փաղն է։

III

ՍԱՔՕԻ ՊԱՏՄԱԾԸ

Վիւղական կեանքի մթնոլորտը չատ պարզ է և անարատ, ճոխու-
թիւնը, փառասիրութիւնը իրենց շլացուցիչ պատկերներով հեռու են նրա
կենցաղավարութեան շրջանադիւրից։ Աչն որ առաքինութիւնն է քարոզում,

ալն որ անկեղծ սիրու և բարեկեցութեան ճշմարիտ սկզբունքն է պահանջում, և ալն որ նախնի նահապետական համահաւասարութիւնն է ներկայացնում, ալդ բոլորը իրենց վսեմ և փալլուն գոյներով երևում են գիւղական պարզ և անմեղ կեանքի մէջ: Ահա մի ասպարէզ, որի մէջ գործունէութիւնը՝ ազատ՝ անմիջական ճնշող զօրութիւններէ, կատարում է մտքի բոլոր շրջաններում անարգել կերպով: Այդ ասպարէզը գիւղացի անհատի ամենակատարեալ ուրախութիւնն է. նա (գիւղացին) ընդունելով իւր բնատրութեան մէջ բնութեան հետ համերաշխ պարելու պայմանները, ընդունում է և մեծ բաւականութեամբ, առանց տրտունջի, առանց դժգոհութեան բնութիւնից ստացւած զանազան ձախող երևութները և սպառնալիքները ինչպէս ամեն երկնառաք պարգևներ:

Յերեկը անհետացել էր իւր բոլոր տպաւորութիւններով, նորածնելուսինը՝ ինչպէս երկշոտ մանուկ՝ աճապարում էր փախչել, հորիզոնից ցած խոնարհել և անհետանալ գիշերալին սպառնացող մթութիւնից: Շնչեց զովիւրը, համատարած գիւղը ծածկեց թազաւորող սուերի տակ. ցերեկաւ ազահանքի խլացուցիչ ձայները դադարեցին, դադարեցին և անհաւասար ու ոլոր մոլոր փողոցների անց ու դարձը, գութանաւորը դաշտից տուն վերադարձաւ, ջրւորը իւր ջրիցը պրծաւ, աչժմ մութ էր և ամեն մարդ իւր հանգիստը պէտք է առնէր:

— Իէ, երթանք վարժապետ ջան, ձայն տւեց Ջանազը:

— Ո՛ւր գնանք Ջանազ, հարցրի ես:

— Բաւ ըստի հօ քնել չես կարա, մանց պըտի քունըդ տանի էս օթաղին, կարիճի ու մոծակների ձեռից. էրթանք կտուրը ¹⁾:

Աս հետեցի Ջանազին, սենեակից դուրս գնալով, բարձրացանք փաշտից շինւած շարժական աստիճաններից դէպի կտուրը, ուր էին և Ջանազի ընտանիքը: Կտուրը սւաղած էր և բաւական մաքուր փոշիններից, աչնտիղ՝ ուր մեղանից իւրաքանչիւրը պէտք է հանգստանար, ծածկւած էր փսիաթներով և քէչաներով (թաղիք), որոնց իւրաքանչիւրի վերայ առանձնապէս պատրաստւած էր քնելու համար անկողիններ ու մահիճներ: Ինչպէս Կողբում, նոյնպէս և Սուրմալուալ գաւառի իւրաքանչիւր զիւղում, կտուրները տալիարակ են և միմեանց կից, աչնպէս որ մէկ կտուրից առանց ցած իջնելու կարելի է գնալ և անցնել հարիւրաւոր կտուրներ: Նոյն խոյ գիւղի մէկ ծալից մինչև միւսը կարելի է գնալ հեշտութեամբ կտուրների վերալից, եթէ չպատահեն փողոցներ կամ վիհեր:

¹⁾ Արարատեան շատ գաւառներում, ինչպէս և Սուրմալուալ գաւառի գիւղերի բնակիչները ամարալին եղանակում, օղի տաքութեան, սողունների և զանազան թիւնաւոր մղեսների պատճառով քնում են կամ կտուրների վերայ և կամ փաշտից շինւած բարձր ծածկերի վերայ:

Մենք նստեցինք ըրդից չինւած թաղիքի վերայ, իսկ մեզանից երկուքալ հեռու նստած էին Զանազի կլինը և որդիքը: Դիչերը խաղաղ կերպով սահում էր, մթուժեան մէջ. ոչ մի առարկայ չէր կարելի փոքր ինչ հեռւից մէկը միւսից բաժանել. մեզ համար լապտերի և մոմի փոխանակ ծառայում էին երկնակամարի վերայ փալլող անթիւ աստղերը: Համատարած լուսթիւնը խանգարող ոչ մի առարկայ չկար, միայն երբեմնապէս լսում էին աղահանքի գիշերալին պահապաններին ձայնը, որոնք հսկում են աղահանքի վրայ աղեր չգողացելու համար, և իրենց խուպոտ ձայներով լալանում են իրենց զգաստութիւնն ու արթնութիւնը: Նստում էին, ինձանում ծագում էին միմեանց չաջորդող զանազան մտքեր, որոնցից և ոչ մէկը իւր հանգստութեան կէտը չէր գտնում. մտքերի վարանմունքները մէջ էին, երբ երկաթն հասակով մէկը թաշկինակը գլուխը կապած ¹⁾, «բարի իրիկուն» ասաց ու նստեց Զանազի մօտ:

—Վարժապետին չես ճանաչում, դէ մի վարժապետի հետ բարովիր, մի էգքան էլ որ կարդաս ինչ պըտի դառնաս, ասաց Զանազը ինձ անծանօթ նորեկին: Նորեկը բարովեց ինձ հետ ինչպէս զուգական սովորութիւնն էր, աւելացնելով հետևեալ խօսքերը.— բարով ես եկել, մեր աչքի և մեր գլխի վերայ:

—Ա, հմի լաւ էլաւ վարժապետ, դու էլ գրից ես խօսում, ամի (հօրեղբայր) Սաքօն էլ, ալոպէս էր կոչւում անծանօթը. ամա ինձ կարդալն ո՞վ ա տւել, ինձ ասեն Զանազ, էս ինչ սարի գլխին, էս ինչ ձորի վիչին (մէջ) ինչ կալ ինչ չկալ. ինձ ասեն Զանազ, սու էս թուղթը էս մութ գիշերին տար դիր Մաստի գլխին, Ղորդնի ²⁾ մօշի վիչին ու էլ քտ ալի, էն սնաթին անեմ, ամա կարդուց ես խեղճ եմ, ես իմ մեղքը իմ շինքովն եմ առնում. իմ լուսահողի հէրը որ արքայութիւն չէթա, էնա իմացէք ընդու համար էր, որ ինձ կարդու չը տուց:

Ամի Սաքօն չատ անտարբեր էր, դէպի Զանազի խօսակցութիւնը, նա երևի քաջ ծանօթ էր Զանազի իւրաքանչիւր լատկութեան և կեանքի գծերի հետ: Սաքօն աւելի լուրջ գրութիւնն էր ընդունել, կարծես իւր հոգեկան հանգստութիւնը խանգարող մի առարկայի վերայ էր կետրոնացրել իւր ըրդը մտածողութիւնը. նա նստած էր լուռ ու մունջ, և իւր փալտից պատրաստած չիբուխը ձեռքին ծխում էր անընդհատ. վերջապէս նա երկար չմնաց ալը կրիտիկական դրութեան մէջ, նա իւր կոշտացած և լծառ առած մեծ ձեռքով ճակատը չփեց, և հարցրեց ցած ձայնով.

—Վարժապետ, մեր աղահանքը տեսիլ ես, ալդ նրա համար եմ

¹⁾ Ամարալին աշխատութիւնների ժամանակ կողբացիները գլխարկի փոխանակ գլուխները կապում են թաշկինակով:

²⁾ Մաստի վերալի (Ղորդան) կոչւած անտառն է:

հարցնում, որովհետև Կողբի հետաքրքիր տեսարանը աղահանքն է, մանաւանդ ճանապարհորդի համար:

—Այո, բոլորը մի առ մի տեսել եմ և շատ անգամ, պատասխանեցի ես, մի անգամ եւ Զանաղի հետ ենք ման եկել աղահանքի բոլոր ծակ ու ծովը:

—Տօ դէ Բնչ ման էկաւ է, մէջ մտաւ Զանաղը, զրուստ որ կարգըցւորի հետ տեղ էթալն էլ խաթալա, կասես թէ ծոխ սիրտ ա ունեցել էս մեր վարժապետը, ընէնց էր վախենում, հէնց խմանըմ էր թէ, երկինք, գետինք՝ ու աղահանքը քըմմա պըտի փուլ կալ ըստու վրէն ու տակովն անի:

—Զանաղ, վարժապետը իրաւունք ունէր վախենալու այդ մարդակուլ տարտարոսներից, ասաց Սաքօն խորը հառաչանքով:

—Օհօ, հըմի էնա ամի Սաքօն ժամի զրերից պըտի խօսա, աւելացրեց ծիծաղելով. դիլան, վարժապետ, մեր ամի Սաքօն Թիֆլիս քաան տարի կարդաց, կարդաց ու հէչ մի բանի էլա խէրն ու շառը չիմացաւ, ճարը կտրեց քըմմա թողուց, եկաւ էլի քըռնկն (մուրճ) առաւ ու մտաւ աղահանքը, ամա էլի լաւ ա մին մին մեր ժամին ձէնը հանումա:

—Ճշմարիտ, Տփլիսում եղել ես, ամի Սաքօ, հարցրի հետաքրքրութեամբ:

—Այո, սասը տարեկան հասակից սկսեալ մինչև քսանը Տփլիսում Աղաբէգեան վարժապետի մօտ թէ ծառայում էի և թէ տոլորում էի. իսկ երբ տաւր տարուց չետու վերադարձալ ալստեղ Կողբ, ալն ժամանակ բոլոր կողբացիները ինձ վերալ նաչում էին ինչպէս մի անտառալին իրէշի վերալ. տեղական քահանաները իրենց ամէն կերպ ամբաստանութիւններով աւելի զրգոեցին պարզամիտ ամբոխի նախանձը իմ դէմ, հրատարակելով ժողովրդի մէջ թէ ես հալ չեմ, պաս ուտող եմ, անաստած, ֆարմասիօն և զանաղան անտեղի ածականներից զերծ չմնացի: Ժողովրդի կարծիքներին աւելի հաստատութիւն էին տալիս և իմ հաղած զգեստները, որոնք Կողբի ժողովրդի համար անծանօթ էին: Աս տանից դուրս գալ չէի կարողանում, պմէն կողմից մեծ ու փոքր սկսում էին իմ ցետեից անճուռնի ձալներով սուլել, կանչել, զանաղան մականուններ տալ. մէկը գոռում էր՝ փիլիսոփա, միւսը՝ աղա, մի ալ երբորդը ասում էր, հեռու կանգնեցէք, թագաւորի որդին եկաւ, և ալցտեռակ հեգնական բառեր: Աս շատ նեղ դրութեան մէջ էի, տեսնելով որ ոչ մի կերպով չեմ կարող նպատակի հասնել, մանաւանդ որ ապրուստ հարկաւոր է. վեր առալ մուրճը և սկսեցի աշխատել աղահանքում: Աս կատարելապէս տիրապետել էի աղահանքալին:

¹⁾ Կողբացիները՝ ըստմեծի մասին, խօսելու ժամանակ, չեչտում են առաջի վանկի վերալ. կարդաց, խօսաց, աղահանք, եալն:

աշխատութեանը, աղաչին մաքուր բեկորներից պատրաստում էի զանազան ձևերով ականջօղեր, մոմակալներ, տէրողորմիւաներ, աղամաններ, զրքեր, աղից քանդակում էի վանքեր, և եկեղեցիների զմբէթներ, իմ աշխատութիւնը իւր նրբութիւնն ունէր, որի համար և շուտ շուտ ծախելով իմ պատրաստած առարկաները՝ բաւականաչափ օգտւում էի: Այսպէս շարունակեցի իմ ֆիզիքական աշխատութիւնները աղահանքում մինչև երեսուն տարի. ես թողեցի և հեռացալ ալդ աշխատութիւնից աչն ժամանակ միաջն, երբ արդէն իմ ջղերս անընդունակ էին տանելու աղահանքի խոնաւ և սառն օդը. ես հեռացալ աչն ժամանակ, երբ իմ անդրանիկ որդին իւր հասակն առել էր և օգնում էր ինձ իմ բոլոր աշխատութիւնների և գործերի մէջը:—Սաքօն վաթսուն տարեկան էր. չնայելով նրա կեանքի աչս երկար ու ձիգ տարիներին, նրա դէմքը աչնպէս կաշտաւ ու կարմիր էր, կարծես քառասուն տարեկան հասակն սուած երիտասարդ լինէր. աչտերի վերաչ դէպի իւրաքանչիւր կողմ ճիւղաւորւած նուրբ արեան կարմիր թելեր էին երևում. հասակը բարձր էր, բաւց երիտասարդական միջոցների առանձին վազելչութիւնը չունէր. աչքերը մեծ, թիկունքը լաչն, իսկ ձիւնի նման սպիտակ ատամներից և ոչ մէկը չէր փչացել: Սաքօչի աղահանքի վերաբերութեամբ արտասանած «մարդակու տարտարոսներ» բառերը ես չէի մոռացել, նոքա իմ փշոգութեան մէջ տատանւում էին և ես հարցրի—

—Ամի Սաքօ, ինչո՞ւ համար փոքր ինչ առաջ աղահանքի վերաբերութեամբ արտասանեցիր մարդակու բառը. ընդհակառակը ես տեսնելով աղահանքաչին աշխատութիւնները, հատաւտ համոզեցի որ կեանքի մէջ բոլոր անկարելիութիւններն ու դժւարութիւնները, հանճարի գիտութեան և աշխատութեան առաջ՝ կարոչ են խոնարհել, մանաւանդ աչդ կերպ աշխատութիւնների մէջ արտացոլում է մարդկաչին անհատի գեղարւեստական նուրբ ճաչակը, որը առարկաներին կենդանութիւն տալու ամեն կերպով զօրաւոր է:

—Ճշմարիտ ես նկատել, վարժապետ ջան, արտասանեց Սաքօն. երանի թէ աչդ ստորերկրեալ բներում աշխատող հարիւրաւոր մչակներից մէկը գոնէ լոկ իւր անունը ստորագրել իմանար. հչնց աչդ պատճառով շատերը իրենց տղիտութեամբ կամաւորապէս զոհւել են աչդ որջերում: Խնչպէս երևում է քեզ լաւ ծանօթ չէ աղահանքի անցեալը և նրանում կատարւող իրողութիւնները, ուստի ես կը պատմեմ քեզ մանրամասնաբար աղահանքի մասին և կը ներկաչացնեմ քեզ նրա անցեալը իւր իրական պատկերներով:

Իմ ուրախութիւնը կրկնասպաւեց Սաքօչի խոստման մասին, և նոսկսեց աղահանքի վերաբերութեամբ իւր պատմութիւնը, առանց ճնչելու, առանց սրտի և կօմ հոգեկան որ և է չուզմունքի:

—Գործը՝ իւր զղալի ծանրութիւնները և դժարութիւնները մէջ, փալտում է ինչպէս ամարալին առաւօտեան վարդագոյն արշալոյսը հորի-
զոնի վերայ, աչն ժամանակ միայն, երբ նա (գործը) խոստանում է չա-
ջող կատարումն և վերջաւորութիւն, և երբ դէպի նրան զիմող գործաւոր
մշակը իւր անձնւիրած սոյխատութեամբ, չաղթելով անսպասելի խոչնդոտ-
ներին, դուրս է գալիս կեանքի ասպարէզ, թէպէտ չոգնած և քրտնքի մէջ
լւացած, բայց աչնուամենայնիւ համարձակ ձեռքը ճակատին է չփում, աղատ
և հանգիստ խղճով: Ահա աչդ տեսահատից կողբացիների ձգտումները մաս-
նաւորապէս պատկառած են եղել: Կողբացին բաւական հաշտ է գտնել աչ-
խատութեան և գործելու դանազան եղանակների մէջ, նա քաջ ծանօթ է
մշակութեան սկզբունքների հետ, վերջապէս կողբացին իւր տոկոն
և անյողողդ բնաւորութեամբ ենթարկել է գործը իւր կամքի ազդեցու-
թեանը: Կողբացին աշխատանքի բուն տիպարն է կազմում, նա աշխա-
տութեան բովից դուրս եկած չանդուզն հերոսն է, աշխատել ֆիզիքական
դժար ձեռնարկութիւնների մէջ, մշակել ստորերկրեայ անցքերում դիւ-
րաթեք ճարպիկութեամբ, աչդ բոլորը իւրաքանչիւր կողբացու իղէալն է:
Քսան և վեց թւականից առաջ, պարսից կառավարութեան ժամանակնե-
րից սկսած մինչև ալսօր, աղահանքը կողբացիների թէ ֆիզիքական և
թէ մտաւոր կրթութեան մարզարանն է համարել. մտաւոր ասում եմ,
նրա համար, որովհետեւ աղահանքի աշխատութեան մէջ փալտում է իւրա-
քանչիւր կողբացու մտաւոր հանճարը և գեղարեւոտական ճաշակը, Կող-
բացին իւր աչդ չատկութիւնների՝ հետ ունի և սրամտութիւն, չանդուզն
կամք, անվեհեր սիրտ և ազդող ուժ հակառակորդի վերայ: Կողբը՝ աչդ
նախնի պատմական աւանը՝ Սուրմալու գաւառի բազմամարդ գիւղն է
եղել, ինչպէս անցեալում, նոյնպէս և ներկայումս. նա իւր փոթորկալից
անցեալով՝ դարեւոր ոխերիմ թշնամիների, Լէնկթէմուրների, թուրք, պար-
սիկ և քիւրդ աւազակալին հրոսակների անվերջ ուժերին դիմադրելով,
պաշտպանել է անվեհերութեամբ իւր դոլութիւնը մինչև ալսօր. դեռ
մինչև ութսուն և չորս թիւը լեռնական քիւրդը իւր հարեան կողբացու
հետ թշնամական խիստ չարաբերութիւնների մէջ էր: Քրդական աւաղա-
կալին խումբերի չարձակումները, աւերումները զանազան ժամանակնե-
րում Կողբի և ուրիշ գիւղերի վերայ անպակաս էին, բայց աչդ բոլորը
դադարեցին վերջնականապէս աչն ժամանակ միայն, երբ վաղեմի լեռ-
նականը երկար փորձերից լեռու հաստատապէս համոզեց, որ իւր հակա-
ռակորդ կողբացին ինքն իրեն ճանաչում է և իւր իրաւունքը կարող է
պաշտպանել դոլութեան կռիւ մէջ: Քսան և վեց, քսան և ութ, լիսուն
երեք և եօթանասուն եօթը թւականների ռուս-պարսկական և ռուս-
թրքական արիւնհանգ պատերազմների միջոցներին, ամբողջ Սուրմալուայ
հաչ և պարսիկ տարրը գաղթեց, փախաւ աչս և աչն կողմը վերահաս աւա-

գակալին խմբերի չարձակումներինց ազատ մնալու համար. իսկ կողբացին իւր տեղինց չչարժւեց, նա պաշտպանեց իրեն և սոսկալի վտանգների միջոցին, նա աներկիւղ կերպով դիմադրեց քիւրդ, թուրք և պարսիկ աւազակաց խմբերին. աչդ հանգամանքներում պակաս չօգնեցին կողբացուն աղահանքի խորխորատները, ուրտեղ նոքա ապաստանում էին վտանգի միջոցին. վերջապէս կողբացին ամեն դէպքում ցոյց տւեց թշնամուն իւր անվնէր սիրտը և կորովի ուժը. բաւական է որ կողբացու կինը նախապատիւ է համարում մահը քան թէ թշնամու կրքերին խաղալիք դառնալը, ուստի իրեն ձգում է աղահանքի ամենաբարձր գագաթից ցած, դէպի անդունդ, դէպի ձորի խորութիւնը. բարեբաղդաբար չաջող դիպածում ազատւում է անվտանգ, քամին ուռցնելով նրա զգեստները պահպանում է լանկարծ ցած ընկնելուց, և կամաց կամաց գիւրին իջնում բոլորորին անշխաս կերպով:

— Տօ դէ հէրիքա Է, ընդհատեց Զանաղը, որը աչդ միջոցին մեղանից փոքր ինչ հեռու նստած իւր կնոջ և որդիների հետ խօսում էր, անտէր մնալ քու աղահանքն էլ, փու կալ տիրոջ գլխին, կէս գիշերն անցաւ, մենք ըստէ սոված, ծարաւ մեռանք. էդ նստելա վաժա իմանըմ լանկթամուրից ա խօսում, աղհանքի ֆահլէքանցից ա խաբար տալի, էսքան ոխտ ես ուղենի՝ հըմի քրդերից երեք, չորս ոչխարի բերել: Մարօ (աչպէս էր կոչւում Զանաղի կինը) հացը բեր:

Մի քանի րոպէից չէտոջ Մարօն բերեց մեզ համար գիւղական շերջանում ընդունւած համեստ ընթրիքը, պանիր, մածուն, և իւղի մէջ կիսաեփ պատրաստւած հաւկիթներ, մածնով ու սխտորով խառն ¹⁾:

Մենք ընթրեցինք, գիշերալին առաջին պահն անցել էր, ամի Սաթօն բարի գիշեր մաղթելով հեռացաւ մեղանից. համատարած լռութիւնը թաղաւորում էր, քունը իւր քաղցր հրապուրներով մեզ ևս ծածկեց իւր թևերի տակ. մենք քնեցինք:

(Շարունակելի)

¹⁾ Սուրմալուալ գաւառում աչդ տեսակին անւանում են Մխլու:

ՀՈՒՄ ՆԻԻԹԵՐ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՍԻԹԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՅԵԱՆԻ

Անտարակոյս հայոց մէջ չափազանց զարդացած է անհատականութիւնը. նոյն իսկ աւելի, քան պէտք էր: Հայի պատմական անմիաբանութիւնը նորա խիստ զարգացած անհատականութեան հետեւանք պէտք է համարել: Որքան դա կորստաբեր և վնասակար է եղել մեր անցեալի վերաբերութեամբ, սակայն չի կարելի չխոստովանել, որ դա ապացոյց է հայ անհատական ինքնուրոյնութեանը, խելքին և ընդունակութեանը: Դա ցոյց է տալիս, որ հայը իբրև անհատ ոչխար չէ եղել, ոչ էլ մըջիւն, այլ նա ապրել ու գործել է իբրև բանական արարած, այնպէս, ինչպէս իւր խելքն ու բանականութիւնն են թելադրել: Նա, անհատականութիւնը կորցրած, չէ հետեւել հասարակութեան երամական ընթացքին... Այդ նորա բոլոր առաւելութիւնն է իբրև անհատ և նորա ամենամեծ պակասութիւնը իբրև հասարակութեան անդամ: Նորա անհատական զարգացումն է, որ հալին դասում է աշխարհիս ամենաընդունակ ազգերի շարքը:

Սակայն, մի ազգ, որ դարերով զուրկ է եղել ինքնուրոյնութիւնից, ճնշւել, հալածւել ու կոտորւել է, չէր կարող իւր գոյութիւնը պահպանել, եթէ նորա մէջ իսպառ մեռած լինէր հասարակական-համայնական ոգին:

Եւ իրօք, մի քիչ խորը դիտելով հայ կեանքը, խնդրին մի քիչ բազմակողմանի նայելով՝ այն եզրակացութեանն ենք գալիս, որ հայը մարդկութեան մի բացառիկ անդամը չէ, որ ամեն մի հայ, ինչքան էլ նա ինքնուրոյն լինի, կասկած է իւր համայնքի հետ

պարտականութիւնների և իրաւունքի մի ամբողջ ցանցով, որից աղաւտել նա չի կարող, որին նա պարտական է հնազանդելու հէնց իւր գոյութեան համար: Այդ ամենից լաւ պահպանել է և անմիջապէս աչքի է ընկնում հայ ազգի սուլար մեծամասնութեան և նորա ամենաընտիր ներկայացուցիչի,—հայ գիւղացու մէջ:

Նրա տնտեսական կեանքը և բարեկեցութիւնը արդիւնք են մի շարք բուն համայնական և ասոցիացիական ընտիր սովորութիւնների, որոնք հայ գիւղացու գոյութեան և տոկունութեան խնդրում ամենաառաջնակարգ դեր են խաղացել և դեռ խաղում են: Հայ համայնքը և նորա գոյութեան էական պայմանները դժբաղդաբար շատ քիչ են ուսումնասիրւած, այն էլ միմիայն ուսաց Հայաստանում.—հողի տիրապետութիւնը, օրինակ, որ կէս համայնական բնաւորութիւն ունի, ջրի, ակաւների, այգու և բանջարանոցի իրաւունքը, անհատի իրաւունքը դէպի իւր համայնքը և ընդհակառակը, համայնքների վտխադարձ իրաւունքները և պարտականութիւնները մնում են իրանց ամբողջութեամբ դեռ ևս առանց ուսումնասիրութեան. եղածն էլ պարտական ենք ռուս կառավարութեան պաշտօնապէս կատարած ուսումնասիրութիւններին: Մինչդեռ հայ բանահիւսութիւնը այսօր ահագին գրականութիւն ունի, ուսումնասիրւած և բաւական նիւթեր են հաւաքւած զանազան դաւառներից,—հայ համայնքի մասին ինձ յայտնի չէ և ոչ մի առանձին տպած հայերէն աշխատութիւն, որ ի հարկէ բաւական ցաւալի երևոյթ է: Հայի բազմանդամ ընտանիքը, օրինակ, որ այնքան դժվասանքի նիւթ է դարձել, մինչև օրս դեռ չի ուսումնասիրւած գիտականօրէն ¹⁾:

Այս յօդւածի նպատակն է մեր ձեռքում եղած հում նիւթերը հայ գիւղացու համայնական սովորութիւնների մասին լոյս հանել, յուսալով, նախ՝ մասամբ նիւթ մատակարարել մասնագէտ բանասէրներին, մասամբ մատնանիշ լինել և ճանապարհ բանալ այսպիսի նոր նիւթեր հաւաքելու համար: Մեր ունեցածը իւր տե-

¹⁾ Մասամբ, սակայն, այդ կատարւած է պ. Յակոբ Մեղաւորեանի գեղեցիկ աշխատութեամբ. *Etude ethnographique et juridique sur la famille et le mariage arméniens. Lausanne. 1894.* ԾԱՆ. ԽՄԲ.

սակով աշնքան քիչ և կցկտուր է, որ կարող է լոյս տեսնել միմիայն իբրև հում նիւթ և ոչ իբրև որոշ ուսումնասիրութիւն: Մի որոշ սխտեմի բերելով նոցա՝ կարելի է բաժանել երկու մասի. ա) բուն համայնական սովորութիւններ. երբ համայնքը միանում է Ֆիզիքական ուժով-աշխատանքով և կամ փողով՝ նիւթապէս օգնելու իւր մի անհատին և բ) երբ համայնքի անհատները միանում են մի ընդհանուր գործ զլուխ բերելու (կապակցութիւն, աստղիադիա):

Միացած աշխատանքը առաջ է գալիս այն ժամանակ, երբ համայնքի մի անդամը միայնակ անկարող է մի որ և է գործ զլուխ բերել. ուստի և հասարակութիւնը—հարեանութիւնը—անմիջապէս օգնութեան է հասնում իւր անդամին նորա կարիքը հոգալու, սկսածը զլուխ բերելու և ձեռնարկածը վերջացնելու. օրինակ. Բարձր-Հայոց ժողովուրդը ապրում է ահագին հողէծածկ տներում. որպէս զի դա դիմանայ անձրևներին և ահագին քանակութեամբ եկող ձիւնին, հարկաւոր է կտուրը մի երկու արշին բարձրութեամբ հողով ծածկել, որ մի ընտանիքի անդամների ուժերից վեր է, եթէ աչքի առաջ ունենանք, որ դա հարկաւոր է քթոցներով-ուսերով կրել տանիք և այն՝ մի կամ երկու օրւայ մէջ, որպէս զի քամին և անձրևը չցրեն քիչ հաւաքած հողը. ուստի և երբոր տունը կազմ ու պատրաստ է և միայն մնում է հողը վրա տալ, տան տէրը հաւաքում է հարեան երիտասարդներին, որոնք միացած ընդհանուր ոյժերով մի օրւայ ընթացքում ամբողջ տունը ծածկում են հողով և կոխոտելով պնդացնում¹⁾: Նոյնը բայց առաւել հանդիսաւոր և մեծ չափերով կատարւում է ջրաղաց շինելիս, որի քարերը (ջաղացաքար, և ոչ պատերի) բերելուն մասնակցում են հարեանները իրանց սայլերով, եզներով և մարդկանցով: Իզդիրում, որ ջուրը Արաքսից է ստանում, ջաղացների հունը շատ շուտ տիղմ է բռնում, որի մաքրողը նոյնպէս համայնքն է (թէև ջաղացները հայոց մէջ մասնաւոր սեփականութիւն են լինում). տեղի բաւառով դա կոչւում է «իռլշտա» և կատարւում է Ռեծ հանդիսով, զուռնայի

¹⁾ Ասում են, որ Չանգեզուր տան ամբողջ շինութիւնը հիմն ի վեր համայնքն է կատարում:

նւագածութեամբ: Զիթահանքի քարը բերելու ժամանակն էլ, որ իւր մեծութեամբ ու ծանրութեամբ ահագին ոյժ է պահանջում, տեղի է ունենում համայնքի անհրաժեշտ աջակցութիւնը մարդով, սայլով և լծկանով: Մեղրիում, ուր ճանապարհները վատ են և սայլ չի բանում, տան գերանները, ջաղացի և գերեզմանի քարերը գիւղացիք իրանց ուսերով են կրում 30-40 մարդ միա- ժամանակ, որոնց նոյնպէս նւագածութիւն է առաջնորդում:

Արտը պարարեկիս, երբ հաւաքւած աղբը պէտք է արտը կրել, Ղարաբաղում և Ուղինների մէջ (Վարդաշէն) նոյնպէս օգնութեան է գալիս համայնքը սայլ-եզնով: Պռոշեանի նկարագրութեամբ Աշտարակում այգու մասը կտրելը կատարում է համայնքի օժանդակութեամբ, որի վերջին՝ աշխատողները ճաշից զատ ընտիր մըր-գեղեններից պատրաստած խոնչա են ստանում, որ «խէչ-փունջ» է կոչւում: Շատ գիւղերում գերեզման փորելն ևս համայնական է, մանաւանդ ձմեռւոյ ցրտերին, երբ մի ժամկտը դժարութեամբ կարող է գլուխ բերել գործը: Այդպիսի համայնական աշխատանքի պայմաններն այն են, որ ըստ մեծի մասին նոքա կատարում են զուռնայի նւագածութեամբ, եթէ իհարկէ, յարմարութիւն կայ. դա նպաստում է աշխատողների զւարթութեանը և գործի յաջող ու եռանդուն առաջ գնալուն. շատ անգամ լծած եղների կամ դոմէշների պոզերից ու ճակատներից և կամ ձիթահանքի ու ջաղացի քարի վրայից կարմիր թաշկինակներ են կախում իբրեւ դրոշակներ, և եթէ աշխատանքին մասնակցողների մէջ լաւ խաղ ասող կամ սրախօս մէկը կայ, որ գիւղերում հազւադիւր չեն, աշխատանքը ընդունում է մի կատարեալ խնջոյքի բնաւորութիւն: Ինչ կարծիք, որ այդպիսի օրերում գործատիրոջ պարտքն է աշխատողներին սովորականից մի քիչ աւելի փարթամ ճաշ տալ. տեղ-տեղ, ուր գինի կայ, խմիչքն ևս ճաշի վերայ աւելի նպաստում է աշխատողների զւարթութեանը:

Կան աշխատութիւններ, որ բուն ընտանեկան բնաւորութիւն են կրում և իրանց թեթեւութեամբ յատկացրած են կանանց. բայց երբ դա այնքան մեծ է, որ մի ընտանիքի կանայք անկարող են միանգամից այդ բոլորը կատարել, իսկոյն առաջ է գալիս մէճի կամ միջի կանչելու սովորութիւնը: Բարձր-Հայոց բարբառով այդ-

պէս է կոչուում համայնական աշխատանքի այն ձևը, ուր մասնակցում են միմիայն կանայք և աղջիկներ: Համայնութիւնը հայ գիւղացու մէջ արտայայտուում է այդպիսով ոչ միայն տղամարդկանց մէջ, դրսում, այլ և կանանց մէջ, ընտանիքում: Յրինակ երբ ոչ խարի բուրդը խուզած պատրաստ է մանելու և գզելու, ապա տանտիրուհին աղջկանցից մէծի է անում, որ գզում, մանում են: Գզելը սովորաբար կանանց է պատկանում իբրև առաւել փորձառութիւն պահանջող, իսկ մանելը աղջկանց: Այդպիսի դէպքերում աշխատում են առհասարակ այնքան հոգի կանչել, որ հնար լինի բոլոր գործը մի օրում վերջացնել. ինչ կարծիք, որ նախաճաշն ու ճաշը այն տանն են անում, ուր հաւաքւած են աշխատելու: Աղջկանց «մէծիները» բացի գործատիրոջ օգուտից այն առաւելութիւնն ունեն, որ նախ մրցութիւն, ապա փորձառութիւն ու վարժութիւն են տալիս անփորձ աղջկանց. նոցանից շատերը իրանց տանը մնալով շատ անգամ զուրկ պիտի մնային այն վարժութիւններից, որոնք անհրաժեշտ են ամեն մի գիւղացու կեանքում, որպիսին է գզելն ու մանելը: Եւ որովհետեւ դոքա այնպիսի աշխատանք են, որ չեն կաշկանդում լեզուն ու միտքը, ուստի մէծիները այն պայմաններն են, որոնցով ծաղկում է գիւղացի աղջկայ սրախօսութիւնը, հանաքը, հանելուկը և պիտոցութիւնը, երբեմն նաեւ նորա անպաճոցձ, պարզ երգը:

Հաւաքական աշխատանքը այնտեղ չի ճնշում, չի բթացնում, այլ զւարթացնում է հոգին, զարգացնում միտքը, սրում դիտողութիւնը, մրցութեան շնորհիւ զարգացնում ընկունակութիւնները, ուստի և զարմանալի չէ, որ մէծին աղջկանց համար կատարեալ հարսանիք է:

Ախաւքալաքի գիւղերում (Երզրումից գաղթած) աշնանը կամ գարնանը սովորութիւն կայ մեծ քանակութեամբ էրիշտա պատրաստելու, որ նոյնպէս առանց մէծի չի կարող գլուխ գալ: Երեկոյեան տան տիրուհին հաւաքում է մի խումբ աղջիկներ, որոնք խմորն են հունցելու: Առաջ ալիւրը «քաղաղ» են անում, ապա երբ քիչ ջուրը առած է լինում, հանում են տաշտից և դնում յաւկապէս դորա համար պատրաստած տաւարձուղների մէջ, որ այժի մօրթուց է լինում պատրաստած: Ապա աղջիկները երկ-երկու բարձ-

քանում են այդ կաշեայ տուրքակների վերայ, սկսում են ունենով հարւածել մինչև խմորի կանոնաւոր հունցելը: Ոտերի հարւածները առանձին տակա ու վարժութիւն ունին և շատ կենդանի բնաւորութիւն են կրում: Կա և՛ սլար է և մարմնամարզական վարժութիւն, որ գործին անձանթ մարդը չի կարող կատարել: Այդ մէծին լինում է զիշերը, որ խմորը առաւօտ վաղ պատրաստ լինի. աղջկերքը գործը և ընթրիքը վերջացնելուց յետոյ զիշերում են գործատիրոջ տանը: Առաւօտ վաղ նոքա ցրում և նոցա փոխանակ հաւաքում են կանայք, որոնք էրիշտա կտրել զիտեն: Կանանցից ոմանք պատրաստի խմորը զնդում, ոմանք բաց են անում, ոմանք էլ բաց արած խմորը մի քանի ծալ անելով սկսում են էրիշտա կտրել (ծիշտ ինչպէս ծխախոտն են կտրում): Մի քանիսը կտրածը տանում են արւել տակ չորացնելու և ապա բովելու: Էրիշտան հաջկական մակարոնն է, որ գործ են ածում միմիայն փլաւեփելու, բրնձի կամ բլղուրի հետ խառն կամ առանձին:

Վերելը մենք տեսանք համայնական աշխատանքի այնպիսի ձևը, ուր միմիայն տղամարդիկ են մասնակցում, որը Ղարաբաղի բարբառով հարւաքաշ է կոչւում: Դորա միայն ձևը որ արտայայտւում է միմիայն կանանց և աղջկանց մասնակցութեամբ, Բարձրհայոց բարբառով «մէճի» է կոչւում: Այժմ կը տեսնենք նորա երրորդ ձևը, ուր մասնակցում են ամեն սեռի և հասակի անձինք և որը, որքան մեզ է յայտնի, դոյութիւն չունի Բարձր-Հայքում, այլ Երևանեան նահանգում և, եթէ չենք սխալւում, կոչւում է միջի: Մեղրիում օրինակ, գարնանը երբ բամբակի արող վարում են, կանանց և երեխանց են հաւաքում, որոնք հետեւելով արօրի ընթացքին, հողը մաքրում են «խողանից»: Դա տեղի բարբառով կոչւում է «խզնահան»: Բամբակը քաղհան անելիս էլ հարեալ կանանցից մէճի են անում, գործին օգնելու: Ինչպէս նաև «հատաղունի» և «շաղաքաղի» ժամանակ, որ կատարում են կանայք ու երեխայք: Վերջերս երբեմն դա վարձով էլ է լինում: Բամբակը «կուկուճ»-ից հանելիս՝ որ տանն է կատարւում.— աշնանը, մրգերի ժամանակ՝ մէճի հարաքւած մեծ ու փոքրին հասուն միրգ են բաժանում, և մինչև ուշ զիշերը նստած աշխատում են, ոմանք հէքիաթ և այլ հետաքրքրաշարժ բաներ են պատմում,

որ քուէնները չտանի և զւարթ աշխատեն: Նոյնպիսի խառն և ուրախ մէծի է լինում այգեկութին, մանաւանդ «քոժոժալաղին», որ տօնախմբութեան նման մի բան է: Մեղրեցին այդ օրը անպատճառ մի ուլ պիտի մորթէ մէծին հիւրասիրելու, որ առաջուց յատուկ այդ օրուայ համար ջոկուում և պահուում է անդրանիկներից. դա կոչուում է «քոժոժի մատաղ»¹⁾:

Այսպէս մի շարք օրինակներից մենք տեսնում ենք, որ բուն անհատական-մասնաւոր գործերը, որոնք կարճ ժամանակի բաց բազմութիւն ձեռքերի են կարօտ, գլուխ են գալիս բուն կոմմունական-ձեռով, համայնքի ազատ աջակցութեամբ: Այդ համայնքի անդամը զիտէ, որ իւր տունը անծածկ պիտի չմնայ, երբ սկսում է նորա շինութիւնը. կամ ջաղացի քարերը պիտի բերին և տեղը գրւին երբ ձեռնարկում է ջաղաց հիմնել. անհատը որոշ պայմաններում, որոշ հանգամանքներում իւր չետեղ զգում է մի խոշոր ոյժ, մի հիմնաւոր նեցուկ, որ նորան չի թողնում ցած գլորելու, որ ձեռք է մեկնում նորան օգնելու, երբ անհրաժեշտ է ճանաչում այդ: Ինչ կարծիք, որ համայնքի աջակցութիւնը հնումը աւելի շատ, աւելի ներգործական և ընդարձակ էր քան թէ այժմ. ինչ կարծիք, որ առաջ ոչ միայն համայնքը պարտական էր անհատի տունը հողով ծածկել այլ և տուն շինել նորան, ոչ միայն ջաղացի քարը բերելուն օգնել, այլ և ջաղաց կառուցանել ընդհանուր համայնքի համար, ինչպիսին գոյութիւն ունի ռուսաց մէջ և որպէս այժմ կատարւում է Իդլիբում, ուր, երբ Արաքսը չորղանալով կտրում է այգիները հոսող առուն, համայնքը ամբողջովին, տանուտիրոջ առաջ-նորդութեամբ գնում է այգիների ջուրը նորից բերելու. «Արազ է գնում», ինչպէս ասում են տեղացիք, ընդհանուրի գործը ընդհանուրն է հոգում միացած ուժերով: Համայնքը իւր լրութեամբ այժմ պահպանել է իւր նախկին կոմմունական կազմակերպութեան հետքերը միայն եկեղեցիների, ճանապարհների, ջուր բերելու և ուսումնարան շինելու վերաբերութեամբ, որոնք գլուխ են գալիս

¹⁾ Այս չղաածի մէջ Մեղրի մասին լիաձնեւր բոլորը ինձ հաղորդել է պ. Ա. Վաչեանը:

ընդհանուր միացած ուժերով և ծառայում են ընդհանրութեանը: Մնացեալ մասերում, ինչպէս վերևը տեսանք, նորա դերը բաւական տամանաւոր է, սակայն օգնում է իւր անդամին նաև նիւթակա նապէս, երբ նա մեծ ծախսի մէջ է, աշխատելով գէթ մասամբ թեթեւացնել իւր հարեանի ծախսերը, լինի դա հարսանիք, ծնունդ և կամ մահ:

Հարսանիքը գիւղացու վերայ ահագին ծախսեր է բարդում շնորհիւ շատ անպէտք սովորութիւնների և հարսանիքի երկար տեւելուն, երբ նա պարտաւոր է ահագին քանակութեամբ զինի և արաղ գնել կամ իւր ունեցածից դործածել, մի քանի կով ու եղ մորթել և մեծ քանակութեամբ իւղ, պանիր ու հաց բանացնել: Ասալքալաքի գաւառի գիւղացիների ամենամեծ մասը եթէ պարտքի և վաշխառուների ծանկն է ընկնում՝ դորա պատճառը հէնց այդ հարսանիքի, նշանդրեքի և խնամութեան կորստաբեր սովորութիւններն են. այդ գաւառում ընդհանրապէս ամեն մի ամուսնութիւն՝ ինչպէս մեզ անձամբ բազմաթիւ օրինակներ են յայտնի, իւր յետևից բերում է մի քանի հարիւր ուղբի պարտք: Դեռ լաւ է, որ կան մի շարք ընտիր համայնական սովորութիւններ, որոնք մեղմացնում և նպաստում են այդ ծախսերը հոգալուն, այլապէս հարսանիքը անփող գիւղացու համար տնտեսական անկումն կը նշանակի: Այսպէս օրինակ, հարսանիքի սկզբի օրը հարեան կանայք հրաւիրւում են զաթաւոր, և ամեն մի կին այդ օրը իւր հետը բաւական կարագ է բերում, որով հարսանիքի դաթան է պատրաստւում:

Այդպէս նաև մնալար իջնցնելու սովորութիւնը ահագին օգնութիւն է աղջկայ հօր համար: Մաղարը (մակմր) մի խումբ ձիաւոր երիտասարդներ են, կամաւոր կերպով զիւղից հաւաքւած, որոնք ուղևորւում են հարսը պսակի բերելու, եթէ նա մի ուրիշ գիւղումն է: Ինչ կարծիք որ աղջկայ տիրոջ համար շատ դժւար է այդքան հիւր միաժամանակ իջնցնել և կերակրել թէ նոցա և թէ մանաւանդ՝ նոցա ձիերին: Աւանդական սովորութեամբ աղջկայ տէրը առհասարակ ազատ է ծախսերից և հարսանիքի բոլոր ծախսը ընկնում է տղայի վերայ: Այդտեղ ահա համայնքի անդամներից շատերը վաղօրօք պատրաստութիւն են տեսնում «մաղար իջնցնելու» և նոցա զալուն պէս ամեն մինը մի չորս հինգ ձիաւոր հիւր

հրաւիրում է իւր տունը, ուր ընթրում և օւրախութիւն են անում. այդպէս մաղարը բաժանւում է հինգ-տասը տուն խումբ-խումբ, մինչ առաւօտ զուռնայի հրաւերը, երբ նոքա կրկին միացած հարսին առաջնորդում են զէպի իրանց զիւղը: Բայց հարսանիքի մէջ ամենից արժանին ուշադրութեան՝ սաչու-ի կամ կանչ-ի սովորութիւնն է: Դա մի տուրք է, որ սովորաբար պսակից յետոյ ճաշի սեղանի վերայ հարսանիք հրաւիրւածները տալիս են հարսանքատիրոջ. պատահում է, որ այդ կանչը հարկւրներին է հասնում և բաւական թեթեւացնում է հարսանքատիրոջ ծախսերը: Առաջին ընծայաբերը լինում է միշտ կնքահայրը կամ խաչեղբայրը, որ սովորաբար 3—10 բուբլի է տալիս. ապա հերթով, ըստ աւագութեան և պատիւի՝ նաև միւսները: Կանչի հետ միասին հարսնեւորները պարտաւոր են նաև քահանային ու զուռնաչուն ևս նպաստներ տալ, որ կրկին թեթեւացնում են տանտիրոջ ծախսը. այլապէս թէ նւագախումբը և թէ քահանան եթէ այդ կողմնակի եկամուտը աչքի առաջ չունենալին, ահագին վարձատրութիւն պիտի պահանջէին տան տիրոջից: Այդ սովորութեան մնացորդները պահպանել են նաև քաղաքներում. Սխալքալաքում, օրինակ, հարսի հագուստը օրհնելուց յետոյ, որպէս նաև եկեղեցում, պսակից յետոյ քահանան խաչ-համբոյր է ստանում անխտիր բոլոր հրաւիրեալներից: Նւագածուներին ու խոհարարին վարձատրելը հօ պարտաւորութիւն է: Հարսանիքը առհասարակ ամենից լաւ է պահպանել հայ ժողովրդի նախկին կոմմունական կեանքի հետքերը. տեղ-տեղ նա պատկանում է ամբողջ համայնքին. այդտեղ մասնակցում են ամենքը և իւրաքանչիւրը. Սխալքալաքի զիւղերում, երբ պսակող զոյգը եկեղեցի է գնում, ճանապարհին շատ անգամ կանգնեցնում են պսակի ամբողջ ընթացքը, որպէս զի հարսանիքի հետ ոչ մի կապ չունեցող այս կամ այն օտար փեսացուին, որոնք շատ անգամ այդտեղ ներկայ էլ չեն լինում, իրանց (փեսացուի) բարեկամների կողմից ընծաներ տրւին:

Տեսնում ես մի հարս կամ կին, որ հարսանիքումն էլ չէ, տան գործը կիսատ թողած, լուր օրւայ հագուստով շտապում է ի լուր հասարակութեան մի նաշխուռն շապիկ, փուշի, գուլպա կամ գօտի ընծայել իւր այս ինչ ազգականի փեսային և վերադառնալ

իւր գործին, Դադարում է զուռնան, կանգ է առնում ընթացքը, լռում են հանդիսականները, և տղամարդկանցից մինը, ընծայւած առարկան ձեռին բռնած ի ցոյց հասարակութեան, հազար ու մի զովասանքով ցիշում է, որ այս ինչ հարսը կամ կինը իւր այս ինչ փեսային ահա այս պատուական ընծան է տալիս, «ապառն, ապառն», շէն է ու շէն մնաց:

Գիւղում գտնւած բոլոր նշանաւոր զոյգերը այդպիսի հարսասանիքներին առհասարակ ընծաներ են ստանում իրանց հեռու կամ մօտիկ աղջականներից և այն՝ ի գիտութիւն համայնքի:

Ուշադրութեան արժանին այն է, որ ծննդկանին կերակրելն ևս համայնական պարտք է համարւում: Ուժասպառ ծննդկանին ինչ կարծիք որ հարկաւոր է սննդարար կերակուր: Ամեն ընտանիք ի հարկէ միջոց չունի այգւղիսին պատրաստելու, ուստի և քառասունքի ընթացքում ամեն մի «աղոցկան», հարուստ լինի թէ աղքատ, հարեաններից թարմ պատրաստած կերակուրներ է ստանում: Ցատմայրը, որ «գալեկ» է կոչւում, իւր վարձը ստանում է նոյնպէս ծննդականի այցելուներից: Համայնքը կարծես դորանով ողջունում է իւր նոր անդամի աշխարհ դալը և նորա մօր խնամելը իւր վզին է առնում մինչև կազդուրելիլ. նա դորանով կարծես ուզում է հասկացնել, որ նորածինը միայն իւր ծնողներին չի պատկանում, այլ ամբողջ համայնքին:

Այդ մի կարգ բուն կամ կէս կոմմունական բնաւորութիւն կրող սովորութիւնները արդէն նոր տնտեսական պայմանների շնորհիւ բաւական թուլացել և նսեմացել են, թէև նոցա պահպանել է ժողովուրդը հազարաւոր տարիներ, իբրև իւր նախկին համայնական կեանքի փայլուն փշրանքներ, որոնք, դժբաղդաբար, իբրև նախասպառնական ժամանակի և ստոր կուլտուրայի արդիւնք, տեղի են տալու նորագոյն քաղաքակրթութեան առաջ: Մնշուշտ, եթէ հնարաւոր լինէր, եթէ ոչ այդ սովորութիւնները ամբողջովին, գէթ նոցա ոգին, համայնականութեան գաղափարը կենդանի պահպանել մեր ժողովրդի մէջ, որ նորան դիւրին լինէր ըմբռնել ընկերավարական ուսման նորագոյն վարդապետութիւնը, որը իւր հիմունք-

ներով կրթնում է հէնց մարդկութեան նախկին համայնական կեն-
ցաղի վերայ, չափազանց ուրախալի կը լինէր. սակայն յուսալ դո-
ցա յարատեւութեանը բաւական դժւար է, որովհետեւ մեր աչքի
առաջ, մի 15-20 տարի առաջ գոյութիւն ունեցող համայնական
սերտ կապերը այսօր զգալի կերպով թուլացել են: Այն, որ երէկ
ամբողջ համայնքն էր անում, այսօր սահմանափակում է շատ ան-
գամ միայն ազգականների և մօտիկ հարեալների մէջ. իսկ վաղը
միւս օրը կասկածելի է նորա գոյութիւնը:

Աւելի յուսալի է այն սովորութիւնների պահպանութիւնը,
որոնք աւելի բարձր քաղաքակրթութեան արդիւնք են և կրում են
ընկերական-աստղիացիայի բնաւորութիւն. դրա մասամբ յիշե-
ցնում են ռուսական артель-ը (արտէլ), մասամբ Լրոպական բան-
ւորների միութիւնները, իհարկէ, սաղմային դրութեան մէջ:

Այդպէս է կատարւում խոտ հարելը. ամբողջ մարգագետինը
կամ պաշտիւրը բաժանւում է ըստ համբալցութեան (համբա-չարեք)
մի քանի բաժնի, և համբալցութեան անդամները խոտը հարում,
հաւաքում և դիզում են միասին, ապա վիճակով բաժին անում,
համապատասխան համբալցութեան աստիճանին. ինչ կարծիք, որ
ամեն մի ընտանիք իւր ստանալիք խոտի համաձայն մարդիկ է
ներկայացնում. շատ ստացողը շատ, քիչ ստացողը համապատաս-
խան սակաւութեամբ: Խոտհարի ընթացքում նախաճաշ, ճաշ և
«էտինք-հաց» աշխատողները բոլորը միասին են անում, ամեն մինը
ներկայացնում է իւր ունեցածը. խոիր չկայ, թէ մէկը դարի և
ցամաք հաց ունի, միւսը պատուական կերակուր:

Գիւղի սահմաններից դուրս ևս, երբ գիւղացիք տեղ են վեր-
ցնում խոտ հարելու, սակաւ է պատահում, որ ջոկ-ջոկ հարեն.
սովորաբար միանում են մի քանի ընտանիք, միաժամանակ փողը
վճարում և ամեն մինը իւր տւած գնի համեմատ աշխատաւորներ
է ներկայացնում մինչև խոտի հարել դիզելը, երբ վիճակով բաժա-
նում՝ ապա ջոկ-ջոկ տուն են կրում: Այդ աշխատանքի ընթաց-
քում ևս նոքա գործում են ինչպէս մի տան անդամներ, նոցա ճա-
շը միասին է, հարստի և աղքատի խոիր չկայ:

Մարաղա գիւղում՝ (Խոյի գաղթականներ Ղարաբաղում) միա-
նում են մինչև անգամ ըոստան (բանջարանոց) ցանելիս: Մի քանի

ընտանիք միացած գութան են լծում և վարում համայնական հողի մի մասը և բանջարեղէն ցանում: Այդտեղ ընդհանուր է և՛ հողը և՛ սերմը և՛ աշխատանքը. ջրում են մի երկու անգամ հերթով կամ միասին և քաղ-հան են անում նոյնպէս միասին: Հասած բանջարեղէնը հաւաքում են դարձեալ միասին և բաժանում, եթէ չենք սխալուում, համաձայն գութանում լծած եզների թւին: Այստեղ, ինչպէս տեսնում է ընթերցողը, միութեան հիմքն ու բաժանարարը եզն է:

Նոյնը աւելի բարդ և աւելի կառարկազործւած ձևերով արտայայտուում է գութանի միութեան մէջ Բարձր-Հայքում:

Այդտեղ գութանին լծում են 10—12 զոյգ եզ կամ գոմէշ, այնպէս որ շատ քիչ ընտանիք կարող է միայնակ գութան լծել. ուստի սովորաբար գութան լծելու համար միանում են 5—10 ընտանիք: Պատահում է, որ գութանը մի ընտանիքի է պատկանում, իսկ բոլոր լծկանը հարեաններին: Իւրաքանչիւր երկու զոյգ եզին հարկաւոր է և մի հոտաղ, մի մաճկալ, և 8—12 լուծ: Միութեան բաժանարարը (единица) զոյգ եզն է. այսինքն մէկ զոյգ եզ ունեցողը մէկ օր իրաւունք ունի արտը վարելու, երկուսը՝ երկու և այլն. բայց այդտեղ բաժին ունի նաև գութանը, որ հաւասար է երեք բաժանարարի՝ (այս դէպքում երեք օր) և մաճկալը՝ գութան վարողը—երկու բաժանարար: Հոտաղը ոչինչ չի ստանում: Թէև գութանի միութեան մանրամասնութիւնը ես լաւ չեմ յիշում և այս էլ հաղորդում եմ ստուշութիւնը վերապահելով, սակայն ինձ թւում է, որ գութանի տիրոջ օգուտը այդտեղ համեմատաբար մեծ պիտի լինի: Գութանւորը իւր օրւայ հացը ստանում է նրանից, ում արար վարում է, այսինքն հերթով կերակրում են միութեան անդամները: Վերջին տարիներս պատահում է, որ այդպէս միացած գութանը վարձով-փողով ուրիշի արտերն ևս վարում է, որոնք գութանի մէջ մաս չունին, և փողը բաժանում է իւր անդամներին. այդտեղ ևս ի հարկէ, բաժանարարը լուծ եզն է, բայց դորա մանրամասնութիւնները ես չգիտեմ և ստուգելու էլ առ այժմ միջոց չունիմ:

Գիւղական այդպիսի միութիւնների մէջ, եթէ չեմ սխալուում, գութանը առաջին երեւոյթն է, որ իբրև դործիք (մեքենայ) վարձ

է ստանում.—այդ տեսակէտից նա արժանի է խորին ուշադրութեան: Գիւղացոց մէջ գործիքը վարձով տալու զաղափար անգամ չկայ: Ուրագ, կացին, գերանդի, եղան, սայլ մինչև անգամ եզներ միմեանց փոխ են տալիս առանց որ և է վարձի ակնկալութեան: Շատ բացառիկ դէպքերում կարող է հարեանը դրացուն մերժել մի գործիք փոխ տալու. և չի էլ կարող մերժել, որովհետև մի ժամ յետոյ ինքն է շտապում հարեանից մի բան ուզելու և նոյն մերժումն կ'ստանար: Տան կարասիքը ես, պղինձ, ամանեղէն, անկողին, հասեր և խալիչա, անխտիր փոխ են տալիս կանայք:

«Եւաք ու խազ»: Բայց ամենից նշանաւորը, ամենից հեղաքըրքրականն ու կարեւորը համայնական միութեան մէջ «խաք»-ի սովորութիւնն է, որ իւր տեսակով զուցէ եզակի է ամբողջ աշխարհում: Նորա էութիւնն այն է, որ մի խումբ հարեաններ միացնում են իրանց ունեցած կաթը հերթով նորանից իւղ ու պանիր պատրաստելու: «Խաքը» հարցասիրական է և այն տեսակէտից, որ նա, այսպէս ասենք՝ գիւղական միութիւնների ամենագարգացած ձևն է ներկայացնում: Նորա հիմքը աշխատանքը, անհատը կամ լծու եզներն ու հողը չեն, ինչպէս վերևի միութիւններինը, այլ եթէ կարելի է այսպէս անւանել՝ գիւղական կապիտալը, գործադրութեան համար պատրաստի արդիւնքը.—կաթը: Այդ միութիւնը Բարձր-Հայքում կոչւում է «խաքուխազ», կամ հասարակօրէն «խաք»: Իզդիրում դորան ասում են «կաթ-չալի», որ ըստ իս աւելի լաւ է արտայայտում նորա էութիւնը:

Գարունքը բացւելուն պէս գիւղացի կանայք ժողովում են խաքը սկսելու. եթէ գիւղը մեծ է, նոքա բաժանւում են մի քանի խմբի, սովորաբար 20—30 սուռն, իսկ եթէ փոքր է հէնց ամբողջ գիւղը կազմում է մի խաք:

Առաջին և ամենադժուար խնդիրն այն է, թէ ո՞վ պէտք է «մայր» կամ «խաք-գլուխ» լինի, այսինքն առաջին անգամ ո՞վ պիտի հարեանների կաթը պարօք վերցնի, և ապա հերթով նոցա վճարի: Թէ սովորութեամբ և թէ յայտնի տնտեսական պատճառներով մայր է դառնում նա, ով շատ կաթ ունի. բայց ի հարկէ շատ յաճախ

պատահում են հաւասարաչափ կով ու ոչխար ունեցողներ, որոնցից ամեն մինը խուսափում է մայր դառնալուց, որովհետեւ կաթը զարնանը ջրալի է լինում, ուրեմն և մայր դարձողի համար վնասակար, քանի որ նա ստացած վատ կաթի քանակութեամբ վերադարձնելու է հարեաններին ապագայում աւելի լաւ և իւզալի կաթ: Այդտեղ, ի հարկէ, քէարկութիւն չի լինում, բայց երբ մեծամասնութիւնը մէկին ստիպեց մայր դառնալու, նա սովորաբար համաձայնում է, յետագայում մի քանի տուակելութիւններ ունենալու պայմանով: Պէտք է նկատել, որ ոչխարի կաթը առանձին խոբ է ունենում, կովինը առանձին և շատ հազիւ է պատահում, որ միևնոյն ընտանիքը «երկու կաթին» էլ մայր դառնայ միաժամանակ:

Երբ մայրը ընտրեց, հարեանները ամեն առաւօտ և երեկոյ կաթը «խաբ են բերում». այսինքն փոխ են տալիս մօրը, որոշ ամանով և չափով: Եթէ, օրինակ, բոլոր մասնակցողները միասին 20 ընտանիք են, մայրը (պարտք վերցնողը) զուրս գալով, կը քնայ 19 պարտատու, որոնցից ամեն մինը ջոկ-ջոկ ճիւղոռններ—«խազեր» ունին, որոնց վերայ նշանակում են տաճ կաթի քանակը հետեւեալ կերպով. հարեան A-ն օրինակ մի որոշ աման լւնի, որով ամէն օր կաթ է բերում և մի, որոշ ձիւղոռն—«խազ»—որը կոխում է մի հարթ տեղում դրած իւր ամանի մէջ մինչև չափակը. մի երկու անգամ ստուգելուց յետոյ դանակով մի փոքրիկ փոս է փորում խազի աջն կէտում, որը ցոյց է տալիս այդ օրեայ կաթի քանակը: Նոյնն են անում B, C, և այլն իրանց ամաններով և խազերով: Պէտք է չմոռանալ, որ խազն էլ ունի, (եւ այսպէս եւ՛ր անւանում) որ և գլուխ, չի կարելի մի օր նորան գլուխն ի վայր կոխել կաթի մէջ, մի այլ անգամ ոտն ի վայր, այլ մի՛շտ միևնոյն ոտի կողմից, որ շփոթութիւն չառաջանայ: Այդ խազը համապատասխանում է պարտատիրոջ մուրհակին. նոյն այդ խազով և նոյն ամանով նա իւր հերթին յետ է ստանում իւր պարտքը:

Կաթնամօր դժւարութիւնն այն է, որ նա բոլոր հարեաններից պարտք է առնում, նա բոլորին զուտ պարտաւան է. այժմ, երբ հերթը գալիս է միւս հարեաններին, նա՛ առաջին՝ պիտի աշխատի իւր պարտքը տալ, երկրորդ՝ պարտքի տակ գցել հարեանին, որ մի այլ անգամ ևս կարողանայ կաթ առնել:

Երկրորդ կաթ առնողի դրութեան դժւարութիւնը պակաս է առաջինից այն պահանջի չափով, որ նա ունի առաջինից շնորհիւ իւր տւած կաթի քանակութեան. այսինքն երկրորդ հերթակալը պարտք է առնում ոչ թէ 19 տանից ինչպէս առաջինը, այլ միայն 18 տանից, իսկ մի տանից (առաջին կաթնամօրից) նա յետ է ստանում իւր տւածը: Երրորդ հերթակալը արդէն պարտք է ստանում միայն 17 տանից, իսկ մնացեալ երկուսից միայն իւր տւածի վճարը և այլն... Այսպէս ամենավերջին հերթակալը՝ որ և ամենից քիչ կաթ ունեցողն է լինում, ստանում է միմիայն իւր տւածը, որովհետեւ բոլորին շարունակ նա միայն կաթ է տւել և պարտաւորեցրել. այժմ իբրեւ վերջինը ստանում է վճարը: Երբ նա իւր բոլոր տւածը յետ ստացաւ, ապա վերջանում է մնծ-խաքը և սկսւում է «փոքր-խաքը». — միևնոյն կարգով միայն այն տարբերութեամբ, որ այժմ ժամանակամիջոցը աւելի կարճ և կաթը աւելի քիչ է լինում: Փոքր խաքի էական պայմանն այն է, որ հերթակալները յետ են ստանում միմիայն իրանց պարտքը և նոր պարտքի տակ չեն մտնում, որովհետեւ այլ ևս ժամանակ չկայ վճարելու, քանի որ աշունը հասած է լինում:

Թողնելով խաքի կազմակերպութեան մանրամասնութիւնները առանձին հիմնաւոր ուսումնասիրութեան, այստեղ անցողակի պարտք եմ համարում ուշադրութիւն դարձնել այդ վերին աստիճանի կարեւոր և օգտակար սովորութեան էական հիմունքների վերայ, որ ամենալայն եղբայրական-ընկերական բնաւորութիւն ունի. թէև բոլոր անդամները հաւասար ընկերական իրաւունքներ ունին, բայց համայնքի աջակցութիւնը միշտ լինում է չքաւորի կողմը, իսկ չնչին զրկանքներն ու պարտականութիւնները միշտ ընկնում են ունեւորների վերայ: Խաքի հիմքը ոչ թէ անհատի շահախնդրութիւնը, այլ ընդհանուրի օգուտն է. նա չի ծառայում տապալելու, այլ օգնելու և պահպանելու:

Խաքւորները մէջ առհասարակ մի ընդհանուր ձգտում կայ՝ ըստ կարիւրցն շատ պարտք տալ ուրիշին, իսկ առանձնակի ամեն մի հերթակալի ցանկութիւնն է, ըստ կարիւրցն, քիչ պարտքի տակ ընկնել. այդ երկու հակառակ ձգտումներն են խաքի մէջ խոչնդոտ յարուցանողները, և որովհետեւ համայնքի բոլոր անդամները հաւա-

սար կաթի տէր չեն, բնականաբար այն բարդութիւնն է առաջ գալիս, որ շատ կաթ ունեցողները կարող են մի քանիսին այնպիսի պարտքի տակ գցել, որի վճարելը հերթակալի ուժերից վեր է։ Նա պահանջում է, որ կաթի հերթը իրանից վերացնեն, բայց մեծամասնութեան կարծիքով նա դեռևս պարտական է և կարող է կաթ վերցնել, եթէ չլինին մի երկու շատ կաթ ունեցողները, ուստի և «խաբը» պարտաւորեցնում է ունեւորին մի երկու օր կաթը տունը պահել, պարտք չտալ, մինչև հերթը մի ուրիշին կը գաջ։ Կաթը տանը պահելը զրկանք է տան տիրոջ համար, դա այնքան շատ չի կարող լինել, որից իսկոյն իւզ կամ պանիր պատրաստել կարողանայ, ուստի և տանը մնացածը առձեռն գործածութեան մէջ կորչում է անհետ։ Այդ զրկանքը խաբի շնորհիւ պարտաւոր է կրել ունեւորը իւր աւելի չքաւոր հարեանի և ընդհանրութեան դիւրութեան համար։

Խաբի հիմնական էութիւնն և օգուտն այն է, որ մասնաւոր տների կաթը քիչ-քիչ գործածւելով չփչանայ, չկորչի, որ այդ փոքրիկ քանակութիւնը բազմաթիւ ձեռքեր, ժամանակ և ծախս իզուր չգործածէ։ Բարձր-Հայքի ժողովուրդը թէև մեծ մասամբ ունի ոչխար ու կով, բայց առանձինն դոքա այնքան քիչ են լինում, որ նոցա կաթից ջոկ-ջոկ առած դժւար է միաժամանակ իւզ և պանիր պատրաստել. եթէ կաթը տանը մնայ՝ ամեն զնացող եկող կ'ուտի և անհնար կը լինի ի մի հաւաքել ձմեռաց պաշար պատրաստելու, որ այնքան կարևոր է այդ ժողովրդի համար, որի երկիրը ամբողջ վեց եօթը ամիս ձիւնով է լինում ծածկւած. այդ միջոցին նա առանց այն էլ՝ զուրկ մնեղէնից՝ մեծ կարիք ունի իւղեղէն կերակրի, որը և նորա սննդեան առաջին միջոցն է։

Փրկարար իսպառ վերացնում է բոլոր այդ արգելքները. մէկ կով և մի քանի ոչխար ունեցողն անդամ այդ պատական սովորութեան շնորհիւ կարողանում է բաւականաչափ «մասխուլը» (պաշարի իւղ-պանիր) պատրաստել ձմեռաց համար։ Ամեն մի ընտանիք իւր ամենօրեայ կաթը քիչ-քիչ հարեաններին տալով՝ իւր հերթին միաժամանակ այնքան կաթ է ստանում, որ մի քանի օրւայ մէջ պատրաստում և պաշարում է և՛ իւր տարեկան իւղը և՛ պանիրն ու վաղնաւորը (լսա)։

Այս էլ պէտք է ասենք, որ խաբը մազաչափ չի անցնում անհատի ազատութեան սահմանը և չի բռնանում նորա ազատ կամքի վերայ. նա չի պահանջում որ անհատը ամեն օր և ամեն անգամ իւր բոլոր կաթը խաբ բերի. ամեն ոք ազատ է տանել այնքան, որքան կամենում է և երբ կամենում է, որովհետև խաբը այդտեղ ոչ մի փնաս չունի, այլ նա, ով քիչ է մասնակցում, Պա մի ինտելեկտուալ ընկերութիւն է, որի անդամները օգուտ ունեն չարունակ, բայց զրկանք և գործողութեան սահմանափակումն երբէք կամ խիստ հազիւ. այն էլ զրկանքը միշտ ունենորի վրին է ընկնում, ուրեմն այնքան զգալի չի կարող լինել, մանաւանդ դա չափազանց կարճատև է լինում:

Խաբի տւած օգուտը աւելի շոշափելի անելու համար վերցնենք մի զիւղական թաղ կամ մի ամբողջ գիւղ, որ, օրինակ, բաղկացած է 25 տանից և միացել է խաբ անելու. այսինքն ամեն մի ընտանիք ապահով է, որ ձմեռւայ համար մի քանակ պաշար է ունենալու, որը առանց խաբի երեւակայել անգամ չէր կարող: Այդ բաւական չէ, եթէ խաբը գոյութիւն չունենար, 25 տուն ամեն օր թոնիւր պիտի վառէր նորան տաքացնելու, 25 հոգի պիտի զբաղէր կաթնից իւղ, մածուն կամ պանիր պատրաստելու. 25 խնոցի պիտի ծառայէր կաթը հարելու, պիտի բազմաթիւ մանր-մունր ամանների մէջ լցնէր. դատարկելուց՝ քամելու, տաքացնելու կամ սեր քաշելու համար՝ նա կաթիլ-կաթիլ թափելով պիտի պակասէր, շատ անգամ և փճանար, ամեն օր գործ ածւող ամանները պիտի մաշէին, փճանային և պէտք ունենային շուտ շուտ կլայէկի, և այլն և այլն... այսինքն այդտեղ երևան են գալիս բոլոր այն փնասներն ու պակասութիւնները, որ յատուկ են մանր արդիւնաբերութեան, մինչդեռ խաբը զուրկ լինելով բոլոր այդ փնասներից՝ ներկայացնում է ահագին առաւելութիւններ, այն բոլորը, ինչ որ խաւաթ չատուկ է մեծ արդիւնաբերութեան. 25 հոգու փոխանակ, խաբի շնորհիւ՝ կաթնով զբաղւում է միայն մէկը. 25-ի թոնրի փոխանակ վառւում է միայն մէկը. և այդպէս բոլոր փնասած ծախսերն ու պակասութիւնները կրճատւում են 25 անգամ: Եթէ զիւղացի կնոջ դործ ածած վառելիքը, (եթէ նա խաբին չմասնակցէր) օրական հաշւենք միայն 5 կուպէկ առաւում և երեկոյ կաթը տա-

քացներու, նորա աշխատանքը պանիր իւղ պատրաստելու, և անդաւորելու, ամանի կէկը և մաշիլը, սագոնը, ջուրը և այլն հաշւենք նոյնպէս 5 կոպ., երկուսը միասին ուրեմն 10 կոպ., կ'ստանանք, որ 25 տունը օրական խնայուած է 2 ր. 50 կոպէկ. բայց խաբը տւում է չորս ամսից աւելի, այսինքն 120 օր. ուրեմն ամբողջ կաթնային սեղոնում խաբը շահում է 300 րուբլի: Բայց գոյութիւն ունի սովորաբար երկու խաբ՝ կովի և ոչխարի կաթի համար ջոկ-ջոկ. գցենք որ մի 150 ռուբլի էլ ոչխարի խաբից է խնայւում. $300 + 150 = 450$ ռուբլի. եթէ դա բաժանենք մեր վերցրած 23 տան վերայ, կ'ստանանք, որ ամեն մի տուն միջին հաշուով խաբի շնորհիւ շահում է 18 ռուբլի. զիւղացու համար դա մի ահագին գումար է, որը նա վաստակում է առանց արեան քրտինքի, լոկ ընկերավարական միութեան շնորհիւ: Այդ հաշիւները՝ իհարկէ, զիւղացին չի անում և չի էլ նկատում այդ օգուտը, քանի որ դա շոշափելի չէ նորա համար. շոշափելին այն է, որ նա վերջ ի վերջոյ ձմեռաց համար կարգին պաշար է ունենում:

Խաբը մի առանձին ուշադրութեան է արժանի և այն տեսակէտից, որ նա հայ-կնոջ ստեղծագործութիւնն է. տղամարդը այդտեղ մազաչափ անգամ մասնակցութիւն չունի. դա իւր ծաղմամբ, զարգացմամբ և սեականութեամբ հետեանք է միմիայն հայ-կնոջ տնտեսագիտական հմտութեան: Վերին աստիճանի հետաքրքրական է տեսնել խաբւոր կանանց վէճը, ժողովները և գործողութիւնը, որի նմանը ինձ թւում է, որ ամբողջ աշխարհում գոյութիւն պիտի չունենայ: Ով հաւատ չունի կնոջ ինքնուրոյն գործունէութեան, նորա հասարական և ընկերական բնազդի վերայ, թող գնայ Բարձր-Հայքի զիւղերը և ուսումնասիրէ այնտեղ հայ կնոջը:

Հայ համայնքը ուսումնասիրելիս առհասարակ ոչ միայն մոռացութեան չպէտք է տալ հայ կնոջը, այլ աշխատելու է ըստ կարելոյն լիւր որոշել նորա տեղն ու դերը, որ անշուշտ, ինչպէս իմացի պատմութիւնն է ցոյց տալիս, մեր կարծածից շատ աւելի նշանակութիւն է, մանաւանդ որ նոյն կիներ Հայաստանի մեծ մասում տղամարդու հաւասար մասնակցում է դաշտային աշխատանքներին: Եւ

ըստիս, դա ոչ միայն բարձրացնում է հայ կնոջը մեր աչքում իբրև մի Ֆակտորի, որը հայ ազգի տնտեսական կեանքում առաջնակարգ դեր է խաղացել և դեռ խաղում է, այլ և հիմնաւոր գրական է տալիս, որ նա ընդունակ է՝ ընտանեկան նեղ շրջանից դուրս ևս՝ բուն հասարակական գործունէութեան:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ս Ո Ւ Ս Ե Ր Դ

Վերջին երկու տարեալ ընթացքում քահանայական խնդիրն սպասածից աւելի արծարծւեց պարբերական մամուլի մէջ՝ թեր և դէմ նկատումներով։ Ամենի համար էլ պարզ է ու անվիճելի, որ մեզ հարկաւոր են կրթւած ու լուսամիտ հովիւներ՝ ի սէր աչն հասարակական հիմնարկութիւնների և խնդիրների, որոնք կապւած են եկեղեցու՝ հետևաբար և հոգևոր խիստնութեան հետ։ Զգուել հեղեղել գիւղերն և քաղաքները տգէտ քահանաներով, կը նշանակէ գնալ հակառակ թէ հասարակական շահերին և թէ մեր եկեղեցու ժողովրդական ոգուն։ Ոգի՝ որով աչն քան պարծենում ենք մենք։ Իսկ գնալ հակառակ ալդ շահերին՝ կը նշանակէ խզել աչն կապը, որ կալ ժողովրդի և եկեղեցու՝ ապա ուրեմն և հոգևորականութեան մէջ։ Ո՞վ է խզողը, — ժողովուրդը, թէ աչն հիմնարկութիւնը, որ տալիս է տգէտ հովիւներ։ Ժողովուրդը փալփալում է ալդ կապը. կապ՝ որ գնւած է նրա դարերով թափւած արիւն-արցունքով։ Կապ՝ որ կուռլ է անցիալի լիշատակներով, հալի պատմութիւնով։ Դժբախտաբար կապը խզողը ներկայանում է աչն հիմնարկութիւնը, որի համար աւելի քան հարկաւոր է ալդ կապի պահպանութիւնը և որի անմիջական շահն է պահանջում ալդ ժողովրդի կոպէկներով սնւող ալդ հիմնարկութիւնը միթէ մոռանում է գոնէ ալդ հանգամանքը։

1

Ասացինք, որ քահանայական խնդիրը շատ պարզ է ու անվիճելի։ Մեզ հետ ալսպէս ասած պահպանողականներն էլ ընդունում են, որ ժողովրդին ուսեալ քահանան է որ «կը կալի» և զոռով ժողովրդի բերանում դրած «ուսեալ քահանան ժողովրդին չի կալեր»։ մի ֆիկցիա է (fiction)։ Թէօրէալէս մեզ հետ նոքա համաձայնում են, սակաչն գործնականը։ Օ՛, գործնականն ուրիշ բան է։ Բնակութիւնից հեռու մի հին վանքում, մի

լետ ընկած գիւղում, ով կը տեսնի թէ հայոց եպիսկոպոսը ձեռք է դնում անբան տիրացուների գլխին, որ գնան աշխուհետ քարոզեն իրանց չճանաչած Աստուծոյ խօսքը, Աւետարանը: Սա նման է որսորդի առաջից փախչող աշն կաքաւին, որ գլուխը կոխում է ձիւնի մէջ տեսնող աչքին չերևալու, ծածկելու համար: Սակայն տեսնող աչքը չի վրիպի:

2

Թող ներքի մեզ, որ մի քիչ շեղուած ենք բուն խնդրից: Թող չզարմանան, որ մենք խաւարամիտներին պահպանողական անուշը չենք տալիս, ալ կնքում ենք «աչպէս ասած պահպանողականներ, կամ պահպանողական կուլաճներ» անւամբ: Ահա թէ ինչու:

Եկեղեցու բեմից քարոզել սէր, խաղաղութիւն, հաւատարմութիւն, ժողովրդի ձայն և իրաւունք և ալիւ և ալլն, սակայն դործնականի մէջ քմահաճոյքի ենթարկել դոցանից ամեն մէկը. հոգնատեղ սոսկ ամեն կանոնադրութիւն ու հակառակ եկեղեցու ժողովրդական շողուն և ժողովրդի դարերով սրբազործւած ձայնին և իրաւունքին՝ քարոզել կենդրոնացումն, ներեցէք, աւելի վատն անել՝ դործադրել, որովհետեւ եթէ խօսքը քարոզելու վաղ, կեղծաւոր, չորսմող չթոշնքները պատրաստ են դարձնել երգել չանաւ ժողովրդի ձայնի, պատրաստ են քարոզել ժողովրդի իրաւունքները սրբութեան մասին և ալլն: Գործնականի մէջ հակառակ եկեղեցու ժողովրդական ոգու՝ մտցնել նեղ կասկածական կղերական ոգին ալլ եկեղեցու սպասաւորների մէջ, սակայն գրել դրա հակառակը: Վանանց էմանցիպալիս քարոզել մամուլի մէջ և երկմակեաներ կարդալ, երբ մի կին հողաբարձու է ընտրուում: Այսօր հայհոյել վաճառականներին, վաղը խուճկ ծիւղ նրանց առաջ, որովհետեւ ալլ ձեռնառն է: Այսօր անւանարկել մէկին, երբ նրա ձեռին իշխանութիւն, իրաւունք չկալ, վաղը սողունի նման փարել նրա ոտներին, ստորանալ մինչև լետին որիկան, որովհետեւ ալլ մէկը այսօր իշխանութիւն ունի. իշխանութիւն, որի առաջ ստորանալով կարող են չահել: Մամուլի մէջ պաշտպանել օրէնքը, կանոնը, բայց դործնականի մէջ հաւանել ապօրինի և կանոնին հակառակ ընթացքը, նույն իսկ նույն մամուլի արդէն ստորացած բերանից քարոզել հակառակը կանոնին և օրէնքին: Դէմ լինել, իբր թէ, ազնւորի ձեռնադրութեանը. բայց երկինք բարձրացնել ալլ եպիսկոպոսներին, որոնք կատարում են ալլ ձեռնադրութիւններն — ահա մեր պարբերական մամուլի ընկած մասի «սրբութիւն սրբոցը»: Կողմնակից լինել քաղաքակրթութեան, մտքի ազատութեան, մանկավարժութեան նորագոյն եղանակներին, — սակայն թեմական դպրոցները հեղեղել խաւարամիտ, անընդունակ ուսուցիչներով ու տարիների ընթացքում հարստահարել ալլ հիմնարկութիւնները նւթապէս և բարդապէս: Ալլ դեռ քիչ է. երբ ալլ հիմնարկութիւններն ընկնում են

քարերար ձեռքեր, որոնք սկսում են մաքրել դպրոցները պարագլխաներից՝ գործելով իրանց իրաւունքների սպագանի մէջ, համաձայն կանոնների. ահա աղ կանոնի և իրաւունքի սրբութիւն քարոզող ազնիւ մամուն ու հոգեւորականը բարձր իշխանութեան պրեստիժին են ապաւինում ու, լանուն չգիտենք որ սրբութիւնների, ոտնատակ տալիս իրաւունքն էլ, կանոնն էլ, ու դարձեալ դպրոցները շինում ասպարէզ իրանց արքանեակների վնասակար գործունէութեան: Բաւց վաղն, եթէ հարկատր լինի, դարձեալ առանց ամօթի վերջին նշույն ունենալու, իրենց ոպնատակ տւած կանոնն ու իրաւունքը կը քարոզեն— թէ եկեղեցում և թէ ընկած մամուլի բերանով— իբր սրբութիւններ: Այսօր պաշտպանել հաշիւ չըտուող երեցփոխին, խրախուսել նրա աղ ապօրինի վատ քաղը, վազը բողբոջել, որ մի ուրիշ երեցփոխ հաշիւ չի տալիս հակառակ տիրապետող կանոններին: Քարոզել ապականողոնացում, դրպտել կենդոնացումն:

Վերջապէս անվերջանալի օլինբազութիւններ: Եւ բոլորն էլ լանուն եկեղեցու և աղբի շահերի. լանուն ազնութեան, մոքի աղատութեան, իրաւունքի և ալլն, և ալլն և ալլն:

Ահա մեր պահպանողականների պատկերը: Հակասութիւն, հակասութիւն և դարձեալ հակասութիւն ամեն աչքի ընկնող խնդրում: Սկզբունքի փոխանակ քմահաճոյնն ու շահն են նոցա ղեկավարում: Ուստի և խիլի զարմանալի էլ չէր, երբ նոքա քահանայական խնդրում էլ նոն հակասական ուղղութեամբ գնացին, նոն օլինբազութիւններն արին: Անցնենք:

3

Անկասկած, երբ Արարատի 1894 թ. լօղւածը աղքատ վիճաբանութիւնների տեղիք տւեց, պէտք էր սպասել, որ աղ նոն Արարատը քահանայական խնդրի ուսումնասիրութեան մի շարք լաւ մշակւած լօղւածներ կը նւիրէր, առնւազն հետեւալ բովանդակութեամբ: 1. Իւրաքանչիւր վիճակում որքան զիւղ կա. որքան ծուխ ունին, զիւղերի հեռաւորութիւնը միմեանցից որքան վերտ է: 2. քահանաների թիւը. իւրաքանչիւր քահանայ որքան ծուխ ունի. 3. եղած քահանաները բաւական են վիճակներին թէ ոչ և եթէ նոր ձեռնադրելի քահանայի կարիք կա՝ աղ որտեղ, ինչ պատճառով և ինչ քանակութեամբ ծխի վրա. 4. եղած քահանաների նիւթական զրութեան ուսումնասիրութիւնը, որի մէջ կը լինէր նաեւ նոցա եկամուտի աղբիւրները ¹⁾. 5. Քահանաների մտաւոր-բարոյական վիճակը. 6. Քահանայացուներից պահանջելի կրթութեան չափը և ալլն:

Ծանօթ. ¹⁾ Իմ մի բարեկամ վարդապետը ալժմս կաղմում է իր վիճակի քահանաների նիւթական զրութիւնը և եկամուտները—1890—1895 թ. մի ընդարձակ տեղեկագիր, որ մտաղիւր է հոգեւոր իշխանութեանը ներկայացնել:

Արարատը չարաւ աչդ. բաց պիտի անէր: Մամուլն ստում էր, որ եղած քահանաները բաւականից աւել են. իսկ Էջմիածինը նոր ձեռնադրութիւններ էր կատարում ու քահանաների թւի բաղմացնելու մեծ ջանքեր դործ դնում: Հարկաւոր չէր արդեօք անհերքելի փաստերով փշրել աչդ մամուլի բոլոր առարկութիւնները: Երևի Արարատի խմբագրողների համար աչդ ձեռնտու չէր, որովհետեւ եթէ խօսքը գար Փակտալին կողմին, աչն ժամանակ աչդ մամուլը կարող էր նրանց խեղդել ֆակտների հեղեղով:

4

Այո, Էջմիածինը մինչև այսօր էլ չի դադարում ձեռնադրութիւններ անել: Խաւարամիտների բերանում ձեռնադրութիւնների բոլոր ֆիկտիւ պատճառների հետ կաշ ճաւ մի ըստերկոյթին չարգելի պատճառ, որ Էջմիածնում էլ գին ունի: Դա աչն է որ շատ տեղեր իբր թէ մեռածներն անթաղ են մնում, երեսաներն անկնունք մեռնում, պսակ կատարող չկաւ:.. Սո, որ համարեա ամբողջ հարաւային Կովկասը շրջել եմ, ոչ մի տեղ և աչդպիսի ոչ մի դէպքի մասին վիշառակութիւն չեմ լսել: Միայն Տիխիստմն էր, որ քահանայ չգտնեց հանգուցեալ մեր սիրելի Լեոն վարդապետ Խոջապետի վրա քահանայապատշաճ լացման կարգը կատարելու իր ժամանակին: Եւ տեղական իշխանութիւնը մատնեի արանքով նախեց աչդ տղեղ վարմունքի վրա:

Եթէ ուղիղ է, որ կան տեղեր ուր քահանայ չլինելու պատճառով լինում են աչդպիսի դէպքեր, անկասկած հարկաւոր, նոյն իսկ անհրաժեշտ է նրանց քահանայ տալը. սակաչն հետաքրքրական էր իմանալ թէ ո՞ր տնկիւնումն են գտնում աչդ գիւղերը, որովհետեւ մինչև աշխատ ձեռնադրւածների մեծ մասը աչդպիսի տեղերի վրա է, ուր քահանայի կարիք չկաւ: Մնացած մասի տեղն էլ թերեւ կարելի լինէր շրջակա տեղերի քահանաներին չանձնել ի հովուութիւն: Նորից կրկնում ենք. մինչև աշխատ եղած բոլոր ձեռնադրութիւններն իսկի աչդ վերոգծած հանգամանքը չեն արդարացնում: Մեր ասածին հակառակ փաստեր եթէ կարգալինք Արարատի մէջ, ուրախութեամբ կը խոստովանէինք մեր սխալն ու ներողութիւն կը խնդրէինք: Սակաչն Արարատը լուռ է: Էջմիածնի բերանը փակ է հերքելու մեր բոլոր պատճառաբանութիւնները. հետեւաբար և մեր ասածը թէ աչս վերջին պատճառաբանութիւններն էլ ֆիկտիւ են ու միայն միամիտներին խաբելու ընդունակ ֆրաղներ՝ ուղիղ է և արդար:

5

Կան մի շարք միամիտներ էլ, որոնք առարկում են, որ ամեն գիւղ իր սեպհական քահանան պիտի ունենաւ: Եթէ ասենք թէ դա իսկի էլ հարկաւոր չէ, մեղ հակաիրօնական, հակաղղալին ուղղութեան մէջ կը մե-

ղաղրեն, փախչելով ալդ անուններէց, որ ըստ ամենայնի իրենց կը սաղի մենք մէջ տեղ կը դնենք նիւթական ապահովութեան խնդիրը ու կ'ասենք. քահանայի դրութիւնը նիւթապէս ապահովացրէք, ուզում էք հինգ ծուխ տէք, ուզում էք 100 ծուխ, ուզում էք մի դիւզ, ուզում էք 3—¹⁾ գիւզ¹⁾։ Բալց չէ, նրանք ալդ խնդիրը ժխտելով՝ իրենցն են առաջ տանում՝ ձեզ տեղով ամեն դիւզին մի քահանայ տալ, թէկուզ դիւզը 10—15 տուն բնակիչ ունենայ ու քահանայն չեսին չքաւորութեան մատնելի։

Կան մի շարք մարդիկ էլ, որ ըստ երեւոյթին վախենալով տգէտների ձեռնադրութիւնից, մէջ են բերում կրթութեան խնդիրը։ Ալդ շարք մարդիկ էլ միայն միամիտների աչքին թոզ փչելու համար, որովհետեւ կրթութեան կարեւորութիւնը ընդունել են արդէն, իրենց արարքը քողարկելու համար առաջ են բերում տիրացուարաններ կոչւած անկեղանոցները, ուր իբր թէ քահանայացու տղէտ, անքան տիրացուները պիտի կրթութիւն ստանան։ Այստեղ արդէն լուսից էլ պարզ է, թէ թնչ սրտով են նոքա ընդունում քահանայի կրթութեան կարեւորութիւնը, և թէ ինչպէս նոքա խեղաթիւրեցին ալդ խնդիրը։ Բալց անցնենք։

6

Ներկայ լօղւածիս նպատակն էր գլխաւորապէս զբաղւել երկու խնդրով, աչն է 1. Քահանայացուից պահանջելի կրթութիւնը և 2. Նիւթական ապահովութեան խնդիրը։ Պարծենալով կարող ենք ասել, որ կրթութեան խնդիրը դրել են աչն մարդիկ, որոնք դէմեն ալսօրինակ ձեռնադրութիւններին։ Կրթութեան խնդիրը տրւելով լիտոյ առաջ է գալիս նիւթական ապահովութեան խնդիրը, ուստի և նրանից անմիջապէս լիտոյ կամ նրան զուգընթացաբար դնելու է ապահովութեան խնդիրը։ Նախքան թէ կ'անցնէի սեփական դիտողութիւններին, անհրաժեշտ համարեցի խնդիրը աւելի լաւ լուսարանելու համար, շօշափել հարեանցօրէն աչն նկատումները, թէ արդեօք էջմիածինն թնչ կերպով լուծեց ալդ երկու գլխաւոր խնդիրներն, աչն է քահանայի կրթութեան և նիւթական ապահովութեան խնդիրները։ Անկասկած չառ հետաքրքրական կը լինէր կարդալ դրա մասին «Արարատ» մէջ՝ խնդրի լուծման բոլոր մանրամասնութիւններով հանդերձ։ Բալց հնուց չալսնի է, որ «Արարատ»-ը դատարկ (!?) բաներով զբաղւել չի սիրում։ Նրա թնչ պէտքն է թէ ժողովրդին տգէտ թէ ուսեալ քահանայ կը տան։ Խնդիրը չառ պարզ է, մենք չառ բան ասելու չենք, որովհետեւ աչն

¹⁾ Մենք չենք կարող ընդունել լօղւածագրի ալդ հաւեացքը, և նոցն իսկ կարծում ենք որ ինքը հեղինակն էլ այստեղ լոկ ոճ է բանեցրել՝ միայլ միտք չեշտելու համար։ Քահանայների թիւը չպէտք է կախումն ունենայ միմիայն ապահովելու միջոցներից, այսինքն՝ ապահովող միջոցների առատութիւնը չպիտի իրաւունք տալ քահանայներին թիւը անհրաժեշտ պահանջից աւելի բաղմամբնել։

ինչ որ արելու ենք բաւական է պարզելու խնդրի ըստ երևութին բարդութիւնը: Անցնենք:

7

Սկսենք կրթութեան խնդրից ու վերլուծենք զորան: Արդէն դիտենք, որ կրթութեան խնդիրը հրապարակ զրեց տիրացուարանների դիմակի տակ: Դա մի դպրոց-անկենիալոց է մեծ երեսանների համար, բայց բոլոր միւս դպրոցների վրա ալն առաւելութիւնն ունի, որ ամենակարճ ժամանակամիջոցում ընդունած աշակերտներին հմտացնում է ամեն տե. սակ գիտութիւնների մէջ: Թող մեզ չզրպարտեն: 1894 թ. դարձանը Նրեւանի տիրացուարանում երկուշաբաթեալ կրթութիւնից քիտոյ 17 տիրացուներ: Սեանալ լծի անապատում մի եպիսկոպոսից ստացան քահանայութիւն: Գեռ չենք ասում դրանից առաջ և դրանից քիտոյ եղած բազմութիւն ձեռնադրութիւնները, որոնց ընծայացուները միայն տիրացուարանի չէմքը ոտ դնելով արժանացան կոչումն ստանալու: Այս Նրեանում:

Շուշիում ալք թեթև զժաւրութիւնն էլ խկի տեղի չունեցաւ: Տգէտ տիրացուներն առանց տիրացուարանի չէմքը ոտ դնելու զժաւրութեանը հանդիպելու՝ քահանայութիւն ստացան: Որքան աղպէս անելը Ղարաբաղում հեշտ էր, ալքքան Տիխիսում զժաւր: Տիխիսում աւելի փալ տւին: Կազմեցին ուսման ծրագիրներ, բացեց տիրացուարանն ու սկսեց դասաւանդութիւնը տիրացուների հետ: Ալպէս ուրեմն, Տիխիսում կրթութեանը աւելի նշանակութիւն տւին, բայց զործնականն, ինչպէս ամեն տեղ էլ, իրն արաւ: Նւ զարմանալի էլ չէ:

Սրանով լուծեց կրթութեան խնդիրը: Նւ առաջին տեղն են բռնում խնդրի լուծման ժամանակ ոչ թէ մեր կրթութեան վալերը-տարրական, միջնակարգ և բարձր դպրոցների տւած կրթութիւնը—ցէնդը, ալ տիրացուների տւած ուսումը: Կոմիտարիաներ հարկաւոր չեն, շատ պարզ է...

8

Կրթութեան խնդիրն ալպէս աջողակ լուծելուց քիտոյ՝ ապա հովութեան խնդիրն ինքնիրան կը լուծւի: Բահանալութիւն փափազող տիրացուները քահանայ դասնալու համար չեն համարձակւի էլ ասել՝ «թէ մեր նիւթականն ապահովէք, նոր ձեռնադրւենք»: Ասում ենք չեն համարձակւի, որովհետեւ ալպիսի զէպքում մրցակից միւս տիրացուն պատրաստ է, իսկոյն տեղը կ'անցնի: Նրբ 150—250 տուն ունեցող զիւղի համար ձեռնադրում են 3—5 քահանայ, վերջապէս զորանից էլ աւելի զօրեղ փաստ կարող է լինել: Ալպէս ուրեմն, երկու խնդիրներն էլ աւելի քան աջող կերպով են լուծւել: Դրանից աւելին սպասելի էր արդեօք...

9

Ալժմ անցնենք մեր գիտողութիւններին:

Կրթութեան խնդրի մասին շատ բան չունինք ասելու: Դրա համար

Էջմիածնի Սինոդը 1892 թ. Յունիսի 26 № 1887 օրագրական հրամանը քառական է, ուր քաղաքների և գիւղերի համար որոնց տների քանակութիւնը 100-ից աւել է, որոշուած է ձեռնադրել քահանայ միջնակարգ և աւելի բարձր դպրոց աւարտողներէ. 100—60 ծուխ ունեցողները համար չիջնել նոյն դպրոցների դ. դասարանից ցած. Այստեղ ցաւելով պիտի ասենք որ աչդ վճիռը գործադրութիւն չի գտնուած:

Աչդ ծրագրի վրա մենք կ'աւելացնենք երկու ամուսն զատընթաց աչն անհրաժեշտ գիտելիքների համար, որ վերաբերում են գլխաւորապէս պաշտօնի գործնականին և որոնց կարևորութիւնը կզգայ անշուշտ ամեն ոք, որ չէ կարողացել քառասունքի մէջ ձեռք բերել աչդ ամենը: Աչդ դասընթացը պիտի աւանդէ մի հմուտ արարողապետի ձեռքով՝ մեր վանքերից մէկում, ուր կը հաւաքեն ընծաւացուները: Կա կը լինի իսկ որ ընծաւարան, բայց ոչ ատուշարան—տիրացուարան: Ուրեմն՝ թեմական դպրոցները կը տան պատրաստութիւն գիտութիւններից աչն չափով, ինչ չափով, որ աւանգուած է. իսկ քահանայական պաշտօնի համար առանձին հարկաւոր գիտելիքները ձեռք կը բերել չատուկ ընծաւարանում, ուր նախքան ձեռնադրելը՝ ընծաւացուն պարտաւոր է երկու ամիս ուսանել: Երկու ամիսը գուցէ շատերին քիչ թւայ, սակայն պէտք է ի նկատ ունենալ, որ ձեռնադրութիւնից չետոյ քառասունք էլ կայ, ուրեմն նախկինի հետ մօտ $\frac{3}{4}$ ամուսն չըջան:

10

Անցնենք աչմի նիւթական ապահովութեան խնդրին:

Այս խնդիրը շատ բարդ է և արժանի լուրջ ուսումնասիրութեան, որովհետեւ եթէ աչս խնդիրը լուծելի բաւարար չափով, աչն ժամանակ կըթուլթեան խնդիրը լուծւած է: Քահանաների ապահովութեան խնդիրը կարող է լուծուել շատ հեշտութեամբ՝ եթէ իշխանութիւնը տրամադրել լինի ձեռնարկելու գրան, իշխանութիւնից չետոյ երկրորդ տեղն է բռնում ժողովուրդը, որից կախւած է գլխաւորապէս քահանայի ապահովութիւնը: Պարզենք մեր միտքը:

Քանի ներկայ տգէտ տիրացուների մրցումը կայ, ժողովուրդը ամենեւին չի էլ մտածի քահանայի նիւթական ապահովութեան երաշխաւորութիւն տալու մասին: Ահա թէ ինչու.—ինձ շատ է պատահել միևնոյն գիւղում տեսնել տիրացուներ, որ նոյն իսկ պարտաւորական ստորագրութիւններով, իրենց ձեռնադրութեան գործն առաջ տանելու համար, խոստանում են պակաս վարձատրութեամբ կատարել պաշտօնը. օրինակ եթէ 40 կոպէկ է ստանում մէկը, միւսը 30 կոպ. պաշտան է կատարում հասարակութեան հետ: Կան դէպքեր, երբ տիրացուի մէկը, գիւղում եղած քահանայի ջգրու, իր մի քանի խնամինքնով և աչն աւ վերոգծած սակարկու-

թեանց միջոցով աշխատում է քահանայ դառնալ: Կան տեղեր էլ, ուր տիրացուները խոստանում են այս կամ այն կարգը ձրի կատարել, եթէ քահանայ դառնան. և այլն: Նորից կրկնում ենք, երբ տգէտ ռուսացուների համար ասպարէզ է բացւած ու կալ այդ օրինակ մրցումն, ալն ժամանակ ինչպէս սպասել, որ գիւղացին ինքը ձեռնարկի այդ խնդրի աշխտեսակ լուծմանը, որպէս մենք ենք ցանկանում ու որպէս ցանկալի էր որ լինի:

Մենք է որ նախաձեռնողն իշխանութիւնը լինի. դրա համար առաջ ու առաջ պիտի կրթութեան խնդիրը դնել, որով նախ տգէտ տիրացուների ոտը կը կտրւի Էջմիածնից և միւս ատեաններից և երկրորդ կը վերջանալ ալն խալտառակ մրցումը, որ գոյութիւն ունի այժմս ամեն գիւղում և որը անվերջ երկպառակութիւնների պատճառ է գիւղական ժողովրդի համար: Մի անգամ որ չես մղւեցին անբան տիրացուները, ահուհեալ պիտի ձեռնարկել հովութեան խնդրի ուսումնասիրութեանը և ապա լուծմանը:

Թողնելով, որ Էջմիածինն իր ձեռնհաս հոգևորականների միջոցով աւելի լուրջ ուսումնասիրի այս կարևոր խնդիրը, այստեղ կ'անենք միայն մեր գիտողութիւնները խնդրի աջող լուծելու միջոցների մասին: Այստեղ ամենին միտք հունինք ցոյց տալու քահանաների դրութեան ներկայ թշուառ վիճակը, որի մէջ գտնւում են նոքա և որը գլխաւոր պատճառն է նիւթական ապահովութեան խնդրի ծագելուն: Ոչ մի խօսք այնքան պերճախօս չի լինի, որքան մի տեղեկագիր քահանաների նիւթական վիճակի մասին, ուր թւերը—այդ՝ փաստերից ամենագործողները—կ'անեն ալն՝ ինչ որ տասնեակ քարոզներ և ճառեր անգոր են անելու: Սպասում ենք աղտեսակ վիճակագրական տեղեկութիւնների կազմութեանը և հրատարակութեանը Էջմիածնի կողմից:

Քահանաների դրութիւնը ապահովելու խնդիրը լուծելու համար, մեր կարծիքով, պէտք են ահա թէ ինչ.—1. Կանոնաւորել մինչև այժմս եղած տուրքերը—կալապողի, պսակի, մկրտութեան, թաղման և այլն: 2. Շըրջակայ 2—3 գիւղեր միացնել և կազմել մի քահանայի ծուխ: 3. Գուրդերի քանակութիւնը 200-ից չպիտի անցնի երբէք մի քահանայի համար, եթէ ալք ծուխը կազմած է 1—3 գիւղերից: 4. Միացնելիս ի նկատ ունենալ գիւղերի միմեանց հեռաւորութիւնը, որ չպիտի 1—5 վերստից աւելի լինի՝ եթէ 2—3 գիւղ մի ծուխ են կազմում: 5. Ալք հեռաւորութիւնը հասցնել առ առաւելն 8 վերստի եթէ երկու գիւղ մի ծուխ են կազմում: 6. Բանալ կենդրոնական դպրոցներ ալք գիւղերի մէջ:

Տուրքերը կանոնաւորելու համար միանգամ ընդմիշտ պէտք է սահմանել մի ընդհանուր որոշ չափ, որ պարտաւորական լինի բոլորի համար և ապա, ժողովրդի համաձայնութեամբ, ի հարկէ, ալք չափը որոշելուց չե-

տու, հասարակական վճիռ կապացնել, ստորագրել առաւ և ալդ ստորագրութիւնը պահել քահանայացուի ձեռնադրութեան գործերի հետ էջմիածնի ղիւանում՝ հարկաւոր դէպքում գործադրելու համար: Տուրքերի կանոնաւորելն առանձին հոգանքի տեղիք չի տալ նաև այն պատճառով, որ ժողովուրդն այս դէպքում ի նկատի է առնում իր նախկին, իր համար օրէնքի ուժ ստացած, պապենական սովորութիւնը: Այդ համոզմանն եկած ենք լաճախ ալդ նիւթի մասին խօսակցութիւնների ժամանակ գիւղերում: Գիւղերի միացնելն այն միտքն ունի, որ եկամուտը կը շատանաւ: 150—200 ժուրը կը տալ առեւակն 300 ր. իսկ եթէ քահանան լաւ եղաւ, ժողովրդի սէրը գրաւեց, կարող է հառնել եկամուտը 350—450-ի էլ: Գիւղերի միացնելը ոչ մի դժուարութիւն չի առաջ բերի, ոչ ժողովրդի և ոչ քահանայի համար: Ժողովուրդն ուրախ կը լինի իր լաւ հովիւով, իսկ քահանան լաւ ժողովրդի հետ լաւ վարձատրուելով կը մոռանալ այն թեթեւ դժուարութիւնը, որ կարող է պատճառել գիւղէ գիւղ գնալ-գալը: Իբր եկամուտի աղբիւր պէտք է ի նկատ ունենալ նաև կենդրոնական դպրոցի բացումը, ուր քահանան կ'ունենալ կրօնի և երբէմն հալոց լեզու դասեր: Այս բոլորը ի մի խմբելով տեսնում ենք, որ կրթած քահանան, պապանների լաւացնելու դէպքում կարող է ստանալ 300—500 ր.:

Սա երազ չէ. թող գործադրեն հարկաւոր միջոցներն և կը ստացւի ալդ հետևանքն, եթէ ոչ աւելին:

Այստեղ մենք միայն թուուցիկ կերպով շոյափեցինք խնդիրը, սկզբից էլ ասելով, որ աւելի լուրջ ուսումնասիրութիւնը թողնում ենք էջմիածնի աւելի ձեռնհաս հոգևորականներին:

Վերջացնելով մեր ներկալ լողածը, նորից կրկնում ենք այն, ինչոր սկզբից ասեցինք. աւելք կրթած հոգևորականներ ժողովրդին ի սէր այն հասարական հիմնարկութիւնների և խնդիրների, որոնք կապւած են եկեղեցու հետ: Չպէտք է խաղալ ժողովրդի տարիներով սրբագործած իրաւունքների և ձայնի հետ: Մի մեռցնէք մեր եկեղեցու ժողովրդական ոգին: Եկեղեցու և ժողովրդի շահերին նախաւոր սպասաւորներից մի ստեղծէք կատալիական շահերով տողորած կղեր, կղերականութիւն, որ ամեն դարերի և ժողովրդների մէջ հանդիսացել է վնասակար և բարոյապէս ընկած տարր:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

CARRIÈRE, A.—La légende d'Abgar dans l'histoire d'Arménie de Moïse de Khoren. Paris, impr. nationale.

ԿՍՈՒՒՌ, Ա.—Աբգարի աւանդութիւնը Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան մէջ:

Յայտնի է որ Մովսէս Խորենացին իւր Հայոց Պատմութիւնը գրելու համար, իւր ասելով՝ հիմնել է երկու գլխաւոր աղբիւրների վրայ. զոցանից մէկն է Մար Աբաս Կատինա, որը իբր թէ ապրում էր Վաղարշակի ժամանակ (մօտ 150 թ. առաջ): Ըստ Խորենացու՝ Մար Աբասը իւր գրքի մի մասը քաղել է մի հին քաղղէական գրքից, որ նա (Մար Աբասը) գտել էր Նինէի արխիւների մէջ. չետօք իւր շարադրութիւնը բերել է Հալատտան, լրացրել է աւելացնելով Արշակունեաց առաջին երկու թագաւորների (Վաղարշակի և Արշակի I-ի) պատմութիւնը: Իսկ ինչ վերաբերում է այն ժամանակամիջոցին, որ սկսում է Արշակ I-ի մահից չետօք մինչև Աբգար և Աբգարից մինչև Սանատրուկի չաջորդ Նրիանդը՝ զորա պատմութեան համար Խորենացին, իւր ասելով՝ հիմնում է Ալիւրիկանոսի Ժամանակա-

գրութեան 5-րդ գրքի վրայ, որը, Խորենացու ասելով, իւր ճիւթերը քաղել է Նդեոխի (ասորերէն Ուռ-հա) արխիւներից, որոնք բերած են եղել Նդեոխա Մծբին քաղաքից: Խորենացին պնդում է որ այդ արխիւները ինքը իւր աչքով տեսել է, և որ նոցա ստուգութեան համար կարող է վկայել Նւսեբիոս Կեսարացու և Կլէսիոսի աստէ գիրքը, որ Մաշտոց վարդապետը լուսարէնից թարգմանել է տեղ հայերէն, ուր պէտք է ասուած լինի թէ Նդեոխի արխիւներում կան բոլոր զոկումէնտները «Հայոց առաջին թագաւորներից սկսած մինչև Աբգարը և Աբգարից մինչև Նրեանդը»:

Պարիզի «Արեւելեան կենդանի լեզուների դպրոցի» պրոֆեսոր և «Բարձրագոյն ուսումնասիրութիւնների դպրոցի» ղերեկատու Օգիւստ Կառլէն 1891 թվականին մի ուսումնասիրութիւն հրատարակեց «Մովսէս

Խորենացի և Նահապետների ծննդաբանութիւնը» խորագրով: Աչդտեղ նա փորձեց ցոյց տալ թէ Մար Աբաս կատինա՛ն ոչ ալ ինչ է եթէ ոչ Մովսէս Խորենացու հնարած անձնաւորութիւն (հնարած միայն աչն նպատակով, որ իւր Հայոց պատմութեանը ճշգրիտ վիպութեան հիմք ստեղծի): Յետոյ կառիէսը նկատեց որ Խորենացու պատմութեան համար աղբիւր են ծառայել ի միջի ալոց աչնպիսի գրւածքներ, որոնց մասին չալտնի է որ նոքա VIII-րդ դարի սկզբում միայն շարադրւած էին: Իւր դիտողութիւնները ալ մասին պ. կառիէս հրատարակեց 1893 թ. «Մովսէս Խորենացու նոր աղբիւրներ» գրքովում, որ նա պնդում էր թէ՛ «Խորենացու Հայոց Պատմութիւնը չէր կարող գրւած լինել VIII-րդ դարու առաջին տարիներից առաջ»: Այդ գրքովին չաջորդեց մի «Յաւելւած» 1894 թ. ակադեմիան, որ պատասխանելով իւր քննադատներին՝ նա նոյնն էր պնդում:

Այժմ, լոգւածիս ճակատին չիշւած մի նոր աշխատութեան մէջ, պ. կառիէս, չապարարելով որ մինչ ալժմ նա մնում է հաստատ իւր վերոյիշեալ եղբակացութիւնների վրայ, անցնում է քննելու Մովսէս Խորենացու երկրորդ մեծ աղբիւրը, որ է Յովհոս Ափրիկանոս և ուրեմն Նդե սիպի արխիւները, որոնց մասին իբր թէ Նստերիսը պիտի վիպւած լինի թէ պարունակում են մեր (հայոց) առաջին թագաւորների գործքերը մինչև Աբգար և Աբգարից մինչև Նրւանդ: Եւ Խորենացին հէնց Նստերիսիցն է քաղում

իւր նիւթերը: Արդ, կառիէսը կարողում է Նստերիսի էկլեսիաստէի մէջ Խորենացու մատնանիշ արած տեղը և գտնում է տարբերութիւն Խորենացու և Նստերիսի մէջ: Աչնտեղ ուր Խորենացին գրում է՝ «մեր առաջին թագաւորն երբ», Նստերիսը ասում է՝ «Նախնիքն երբ», իսկ «Աբգարից մինչ Նրւանդ» խօսքերը Նստերիսի մօտ չեն գտնւում: Եւ կառիէսը ցոյց է տալիս որ Նստերիսի աչս խօսքերը թէ ալդ թղթերը «գտնւում են մինչ ալսօր Նդեսայում», խօսքեր, որ Խորենացին կրկնում է ասելով՝ «կարծում եմ նա (մատնանը) ալժմ պահւում է նոյն քաղաքում» ուրիշ բանի համար են ասած: կառիէսը ապա պնդում է որ Խորենացին, չնայած որ երեք տեղ չիշատակում է Ափրիկանոսին, վերջինից ամենինն օգտւած չէ ուղղակի կերպով, ալ օգտւած է միայն Նստերիսի էկլեսիաստէի միջոցով: Գորա ապացոյցները պրոֆ. կառիէսը խոստանում է տալ մի ալ անգամ, երբ կ'ուսումնասիրի Յովսէփ պատմաբանից Խորենացու արած քաղաածները: Յովսէփ պատմաբանը գլխաւոր աղբիւրն է եղել Խորենացու Հայոց Պատմութեան մի քանի գլուխների համար. իսկ ինչ վերաբերում է Հիպպոլիտին, որ նոյնպէս իբր աղբիւր է չիշում Խորենացին—ալդ մասին կառիէսը չալտնում է որ ոչինչ որոշ չալտնի չէ:

Աչս աշխատութեան երկրորդ գլուխը նւիրւած է Լաբուրնաչին (կամ Ղաբուրնա, Ղերուրնա), որը, ըստ Խորենացու, Ավշադարալ դպրի

որդին է և «գրեաց զամենայն գործս, որ ինչ չառուրս Արքարու և Սանատրկոյ, և եղ ի դիւանին լեղեսիայ»:

Այսպիսով ուրեմն խորենացին ցոյց է տալիս մի նոր աղբււր իւր պատմութեան համար: Աղբւրը, ճիշտ է, նոյն Եղեսիայի դիւանն է, բայց ալլա Ափրիկանուի անունը չկայ, ալ լարուբնայի, որից և պէտք է խորենացին ուղղակի օգտւած լինէր Արքարի և Սանատրուկի մասին տեղեկութիւնների համար: Այդ լարուբնա՞ն անչափ էր մնացած շատ երկար ժամանակ և միայն վերջին մի քանի տասնեակ տարիներում գտնուեցին ասորական և հայոց ձեռագիրներ նորա գրած քից:

1860-ական թւականներին վեհետիկ Միլիթարիան միաբան հայր Պարոնեան, որին չանձնւած էր Պարիզի գրադարանի հալերէն ձեռագիրների ցուցակը կազմելու, դառաւ մի ձեռագիր, որ կարծեց թէ պէտք է անչափ մնացած լարուբնայինը լինի: Էմինը թարգմանեց աչն, որ և հրատարակեց Վիկտոր Լանգլուայի «Հայաստանի պատմագիրների ժողովածու» կոչւած Փրանսերէն հրատարակութեան առաջին հատորում 1867 թ-ին, փոքրիկ չառաջաբանով հրատարակչի (Լանգլուա), ուր նա, թէև չփոթ կերպով, կասկած էր չափնում ձեռագրի իսկականութեան մասին, որը չամենայն դէպս պէտք է անհարազատ չաւելածներով փոփոխութիւններ կրած լինէր: Եւ սակաւն լեռոյ երևաց որ ալդ գրած քը հէնց աչն է որ խորենացին իւր աչքի առաջ էր ունեցել: Այդ նոյն դուռմէնտի մի մեծ մասը ասորերէն

ընագրով գտած էր 1848 թ-ին Գըրտոն (Cureton) Լոնդոնի Բրիտանական թանգարանում և վերաբերութիւն ունէր Արքարի դարձին, ճոյնը ինչ Եւսերիոսը վկայում է թէ պահւած էր Եղեսիայի արխիւներում: Ապա հ. Ելիշան 1852 թ-ին գտել էր Պարիզի մատենադարանում մի հայոց ձեռագիր որի մէջ ճանաչեց խորենացու վիշած Ղերուբնային: Գըրտոնի գտնւածը (ասորերէն) հրատարակեց միայն 1864-ին, իսկ Ալիշանը հրատարակեց իւր գտած հալերէնը 1868-ին, և միաժամանակ Փրանսերէն նոր թարգմանութիւնը: Ասորականը կոչւում է «Վարդապետութիւն Աղղալի», իսկ հալերէն ձեռագիրը՝ «Թուղթ Արքարու»: Միևնույն 1868-ին Երուսաղէմի հայոց պատրիարքարանի տպարանից դուրս եկաւ լարուբնայի մի երկրորդ հրատարակութիւնը՝ Պատրիարքարանի ձեռագիրներից: Հրատարակիչ վարդապետը, որ իւր անունը չէր տալիս, նկատել էր որ իւր հրատարակած ձեռագրի և Մովսէս Խորենացու քաղած քների մէջ տարբերութիւններ կան, որից և եզրակացրեց թէ հալերէն ձեռագիրը անլիակատար է: Սակայն Պետերբուրգի կալսերական գրադարանում գտնուեց մի լիակատար ձեռագիր «Աղղալի վարդապետութեան», որ և հրատարակեց Զորջ Ֆիլիպս, անգլիերէն թարգմանութեամբ և ծանօթութիւններով: Այսպիսով ուրեմն կային ասորական և հայկական ձեռագիրներ, իրար ստուգող և լրացնող, հալերէն ձեռագիրներում մի քանի տեղեկութիւններ տարբերութիւններ կան միայն:

Չնայած որ գտնւած ձեռագիր-
ների նիւթը մի աչնքան նշանաւոր
քանի մասին է ինչպէս գրագրու-
թիւնը մի թագաւորի (Արգարի) Յի-
սուս Քրիստոսի հետ, աշխուհիւնա-
նիւ աչք գիւտը անցաւ գրեթէ ան-
նկատ: Բայց երբ Ֆիլիպսի հրատա-
րակութիւնից լստոյ Հարնակ և Յահն
լաւտեցին որ աչք դոկումէնտը աչն
է ինչ Եւսեբիոսը քաղել էր Նդեսիաւի
գրադարանից — հետաքրքրականու-
թիւնը աճեց, և ահա սկսեցին խու-
ղարկութիւններ՝ որոշելու համար
հրատարակած դոկումէնտի իսկակա-
նութիւնը, ծագումը, թւականը և
աչն: Հարնակի, Յահնի, Լիպսիոսի,
Մատթէսի, Տիքսերոսի, Տաչեանի և
ուրիշների քննութիւններից երևում
էր մօտաւորապէս այս, որ—

1. Արգարի աւանդութիւնը և
նորա գրագրութիւնը Յիսուսի հետ
պատմական հիմք չունին:

2. Աչք աւանդութիւնը սկսել է
կազմել III-րդ դարի միջում, և նա
տեղիք է տւել մի գրածքի, որից և
օգտւել է Եւսեբիոսը:

3. Աւելի ուշ՝ IV-րդ դարից մինչ
V-րդ դարի առաջին երրորդը, աչք
աւանդութիւնը փոփոխութեան են-
թարկեց, նորան աւելի ծաղկեցրին, և
դորանից ծագեց ալժմ գտնւած գիրքը՝
«Աղղալի վարդապետութիւնը»: Աչք
ձեռով նա թարգմանւել է հայերէն
«Թուղթ Արգարու» անունով, իբր թէ
գրւած Ղերուբնալից առաջին դա-
րում, որից և օգտւել է Խորենացին:

Բայց, ինչպէս ասացինք, հայե-
րէն ձեռագրում, որից և օգտւել է
Խորենացին, ասորականից մի քանի
տեղեկ. ցիական չեղումներ կան:

Ասորականում աււած է՝ «(Բաղաքի)
բոլոր աշխականների առաջ նա
(Թաղէոս առաքեալ) թողեց աշ-
խարհը. և աչք եղաւ շարաթւալ հին-
գերորդ օրը, Խոր ամսի տասնեւոր-
սին»։ Հայերէնում աչք տեղը փոխ-
ւած է այսպէս՝ «Աշխականների և
թագաւորազների առաջ նա (Թա-
ղէոս առաքեալ) բարձրացրեց ձեռ-
քերը դէպի երկինք, աղօթեց և օրհ-
նեց նոցա. լստոյ նա բռնեց ուղին
դէպի Արևելք (որով պիտի հասկա-
նալ դէպի Հալաստան), ուղեկցու-
թեամբ ժողովրդի մի ահագին բաղ-
մութեան, և աչք եղաւ հինգշաբթի,
Մարէրի ամսի տասնուչորսին»:

Ինչո՞ւ հայերէնում աչքպէս է: Կա-
ռիեռը պնդում է որ հայ թարգմա-
նիչը աչք բանում հետեւել է իրենից
սուաջ ևղած մի աւանդութեան. և
նա ուղեցել է ասորական բնագիրը
սաղացնել հայկական աւանդութեան
հետ, որի համաձայն Թաղէոսը Աւե-
տարան է քարոզել և նահատակու-
թիւն ընդունել Հալաստանում: Եւ
Կառիէռը կարծում է թէ հիմք կա
պնդելու որ սուրբ Թաղէոսի մասին
աւանդութիւնը Մովսէս Խորենացուց
ոչ շատ առաջ է գրւած եղել. և քա-
նի որ ըստ Կառիեռի Խորենացին
գրել է իւր հալոց պատմութիւնը 8-րդ
դարից ոչ առաջ, սւստի և հալոց
«Թուղթ Արգարու» պիտի գրւած լի-
նէր ոչ թէ 4-րդ կամ 5-րդ դարում,
ինչպէս ալ զիտնականներ պնդել են,
ալ աւելի ուշ. իսկ Կառիեռի հիմքը
աչքպէս կարծելու աչն է, որ հալոց
ամենահին գրողները՝ Կորիւն (Վարք
սրբոյն Մեսրոբալ), Եղիշէ, Նշնիկ,
Ագաթանգեղոս, Ղազար Փարպեցի,

Սերէոս (որը 7-րդ դարի վերջն էր գրում) ոչ մի լիշատակութիւն չեն անում Թաղէոս առաքեալի մասին և ոչ էլ ակնարկում նորա պատմութիւնը: Թաղէոսի մասին խօսք կալ (բացի խորհնացուց) միայն Փաւստոս Բիւզանդի մօտ, որի գրածքը խորհնացուց գուցէ առաջ չէ (ըստ Կառլինի): ասպա ալդ մասին խօսում է Զենոբ Գլակ, որը խորհնացուց լետոյ է գրել (տես Խալաթեանց՝ Զենոբի մասին, Վիեննա, 1893):

Ապա Կառլինուր անցնում է խորհնացու պատմութեանը Արտաշէս առաջնի, Տիգրան երկրորդի և Արդաւադդի մասին: Այս ամբողջ շրջանի և չաջորդ շրջանի մի մասի համար խորհնացին, ասում է Կառլինու, օգտւել է միմիայն հրէայ Յովսէփ պատմագիրից, և այն՝ նորա Հրէական երի պատերազմն եր գրածքից և ոչ նաև նորա Հրէական հնութիւնները, ինչպէս Գուտշմիրն էր ենթադրում: Եւ Կառլինուր խոստանում է մի ալ գրածքում ապացուցել նոյն իսկ, որ խորհնացին օգտւել է ոչ թէ Յովսէփի բնագրից, ալ նորա ասորական թարգմանութիւնից: Եւ շնորհիւ Յովսէփից միայն օգտւած լինելու հանգամանքին՝ խորհնացին տեղեկութիւն չունի մի շարք եղելութիւններից, որոնց մասին սակայն, չունական և լատինական աղբիւրները առատ էին: Եւ խորհնացին չգիտէ նաև Արտաւադդի երկու չաջորդների մասին (Արտաշէս՝ Արտաւադդի աւագ որդին, որին ժողովուրդը սպանեց, և Տիգրան, Արտաւադդի կրտսեր որդին, որ կրթւած էր Հռոմում), չնայած

որ Յովսէփ պատմագիրը լիշատակում է նոցա իւր Հրէական Հնութիւնները մէջ, որից խորհնացին, ինչպէս ասացինք, չէր օգտւել:

Այժմ, քնն կապ ալս հանգամանքի և Արդարի աւանդութեան մէջ: Այն որ Յովսէփ պատմագիրը իւր Հրէական պատերազմն եր մէջ Արտաւադդի չաջորդներից միայն իւր գրքի վերջում լիշատակում է մի Տրդատ Թագաւոր, որը Արտաւադդէ պատերազմներում գերի է ընկնում, բաւց որի մասին չապտնի է թէ Պարթևաց թագաւոր Վուրգէզ I Հաւատանի թագաւոր կարգեց 61 թ. Քր. լետոյ: Իսկ սրբախօսական գրութիւնները անւանում էին մի Սանատրուկ թագաւորի, որը Քրիստոսի մահից քիչ առաջ Հաւատանում Աւետարան քարոզող Թաղէոս առաքեալի հալածողն էր եղել: Այսպիսով ուրեմն խորհնացին գիտէր Արտաւադդի մասին, որը գերի ընկաւ Քրիստոսից 34 տարի առաջ, իսկ աւանդութիւնն էլ ճանաչում էր Սանատրուկ թագաւորին, որը եկաւ Հաւատան Քրիստոսի մահից լետոյ: Այդ երկու դէպքերի մէջ տեղում շուրջ 60 տարւալ սլատմութիւնը պակասում էր: խորհնացին ալ պակասը լրացրեց Արդարի պատմութիւնով՝ քաղելով ալդ Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւնից և Ղերուբնայի (Լաբուրնա) գրքից, չնայած որ ոչ Եւսեբիոս և ոչ Թուղթ Արդարու ոչ մի տեղ չեն ասում թէ Երեմիայի թագաւորութիւնը հալական եղած լինի: խորհնացին ծաւրալեղ հայրենասէր էր. Արդարի պատմութիւնը

բացի ալն ծառայութիւնից, որ անում էր Խորենացուն անկալտ մնացած վաթսու տարւալ շրջանը լրացնելով՝ կը դար Լապստանի պատմութեան մի գլուխը հարստացնելու, որով հալերը կը դառնալին առաջին քրիստոնէացած ազգը:

Թերևս ալք բանը Խորենացին արել է հետեւելով հակակաճ աւանդութեան, բալց կառնուել հակաճ է կարծիւր թէ աւելի հաւանական է որ Խորենացին ինքը ալք կեղծումը արած լինի: Գորա ապացուցը նա գտնում է նորանում, որ Խորենացին օգտւած պիտի լինի ի միջի ալոց նաև մի գրութիւնից «Ն ա հ ա տ ա կ ու թ իւ Ն ս ու ը Թ ա դ է ո ս ի և Ս ա ն դ ու խ տ կ ո չ ս ի», ուր Արգարը իբր թագաւոր Նեոսիալի և Սանատրուկ իբր հալոց թագաւոր չիւած են իբր ժամանակակիցներ: Մի ալ ապացուց կառնուել գտնում է նրանում, որ Խորենացին ինքը մի քանի գլուխներ է աւելցնում Արգարի մասին մինչ իւր ժամանակը եղած աւանդութեան վրալ և նոյն իսկ Արգարին նախորդ է տալիս հակակաճ գահի վրալ (Արչամ, չալորդ Արտաւազդի, ըստ Խորենացու, մինչդեռ սորա նախորդները եղած են իւր որդիքը՝ Արտաշէս և Տիգրան III):

Վերին աստիճանի հետաքրքրական է և սրամիտ ալն բացատրութիւնը որ տալիս է կառնուել, թէ որտեղից է Խորենացին վերցրել Արչամ թագաւորը, որը իբր թէ պիտի Արգարի նախորդը եղած լինէր: Ահա ալք, Ասորական բնագրում Ադգալի վարդապետութիւն

(որից և թարգմանւած էր հալերէնը՝ Թ ու ղ թ Ա ը գ ա ը ու խորագրով), սկսում է ալալէս՝ Արգար ու քամա բարի բժիշկ Յիսուսին: Բալց ու քամա ասորերէն նշանակում է սև: Թարգմանիչները քաշելով Արգարին սև մականունը տալ, չէին թարգմանում ալք խօսքը. նաև չէին Նեոսիոսը չէր թարգմանել. նա ասում է՝ Արգար, տալարք (իշխան) Նեոսիալի: Նեոսիոսը օրինակ կը լինէր ծառայած հալ թարգմանչին, որը մի տեղ (վերնադրի մէջ) թարգմանել է արքալ, իսկ բնագրի մէջ դրել է ու քամա խօսքի աղճատումը՝ արչամալ, որը կարող էր առաջացած լինել նաև ստորական գրերի չիթթութիւնից: Խորենացին ուրեմն իւր առջև ունեցել է Արգար արչամալ անունը: Արչամալ խօսքի վերջաւորութիւնը կարծել է տւել թէ դա Արչամ անունի սեռականն է, և որ դա կը նշանակի Արգար, որդի Արչամալ: Բալց որովհետև նոյն թղթի մէջ Արգարը կոչւած է որդի Մանուկալ, ուստի Խորենացին բացատրում է թէ իբր Արչամ և Մանուկ կրկնակի անուններ են միևնոյն անձի:

Կառնուել ապացուց է տալիս թէ որտեղից է հնարած Խորենացին ալն գլուխները ուր նա պատմում է Արչամի և Արգարի մասին: Ալք նա ասում է ընդօրինակելով Յովսէփ պատմագրին, Նեոսիոսին, միշտ ի հարկ է վերադրելով Լապստանին ալն, ինչ իւր աղբիւրները ալ երկիրներից են պատմում, և Լաբուրնալի «Թուղթ Արգարու» գրւածքից: Խորենացու գրչի տակ, ի միջի

ազդոց, Մար Իհաբ-ը դառնում է «Աղձնեաց իշխան», Շամշագրամը՝ Ապահունեաց գերդաստանի գլուխ: Աբգարի նամակը Յիսուսին՝ Խորենացին վերցրել է Նւսեբրիոսից, որպէս նաև Յիսուսի պատասխանը:

Աբգարի նամակը Յիսուսին քրն-նադատելուց չետոյ կառիեռը անց-նում է «հինգ նամակներին»¹։ Աբգարը Տիբերիոսին, վերջինիս պատասխանը, դարձեալ Աբգարը Տիբերիոսին, Աբգարը Ներսէզին, Աբգարը Արտաշէսին: Ի բաց առած այն որ Աբգարը հալոց թագաւոր է անւանւած Խորենացու մօտ՝ և մի երկու լաւելումներ Յիսուսի աստուածութեան մասին՝ կառիեռը գտնում է որ Տիբերիոսին գրած առաջին նամակի վերաբերմամբ Խորենացին բաւականին հաւատարիմ է մնացել իւր աղբիւրին: Երկրորդի նկատմամբ (Տիբերիոսի պատասխանը) Խորենացին աղաւաղել է Նւսեբրիոսին: Երրորդը՝ Աբգարի երկրորդ նամակը Տիբերիոսին՝ Խորենացին շարագրել է ինքը, քանի որ Թուղթ Աբգարու դոկումէնտի մէջ թէև, չիշած է բալց առաջ չի բերւած այդ նամակը: Իսկ վերջին երկու նամակները (Աբգարը Ներսէզին և Արտաշէսին), ըստ կառիեռի, նոյնպէս հնարած է ինքը Խորենացին, և դոցա մասին Թուղթ Աբգարու բնագրի մէջ ոչ մի չիշա-

տակութիւն չկայ:

Ըստ Խորենացու Հեղինէն «Աբգարի առաջին կինն էր», որին, նորա ամբողջ գերդաստանը կոտորելուց չետոյ, թողնւում է իշխանութիւնը ամբողջ Միջագետքի վրայ: Կառիեռը ապացուցանում է որ Հեղինէն Աբգարի կինը չէր և որ աղսխալը առաջացել է Նւսեբրիոսի հալերէն սխալ թարգմանութիւնից: Թուղթ Աբգարու դոկումէնտում երեք անգամ չիշատակութիւն կայ Աբգարի կնոջ մասին, որ կոչւում էր Շլամատ:

Խորենացու Պատմութեան ամենավերջին գլուխը, որը կարող է որ և է կապ ունենալ Աբգարի Թղթի հետ, այդ՝ 36-րդ գլուխն է, Խորենանունի պատճառով, որ կալ մէկում և միւսում: Իսկ առաջին գլուխը, որ վերաբերութիւն ունի այդ Թղթին՝ 10-երորդն է:

Դորանով և վերջանում է կառիեռի քննութիւնը, որի բովանդակութիւնը կարճառօտ կերպով հաղորդելու միտքը միմիայն այն էր՝ որ հրաւիրենք բանասէրների ուշադրութիւնը Ֆրանսիական գիտնականի այս շատ կարեւոր աշխատութեան վրայ: Վերջինս կազմում է 58 մեծածաւալ երեսներ:

Ա. Ա.

ԼԵՖԲՈԿ, Զոն.—Հարիւր ամենալաւ գրքերն թարգմ. ռուսերէն թարգմանութիւնից Արշակ Եղիզարեանի. Թիֆլիս. տպ. Մ. Վարդանեանի. 1895 թ. 15 էջ. գինն է 8 կոպ.

Դա մի փոքրիկ գրքուկ է, որի միակ արժանատրութիւնը նորա համակրելի միտքն է՝ տալ ընթերցանութեան գրքերի ցուցակ ահն ընթերցասէր անձանց ձեռքը, որոնք ցանկութիւն ունին կարդալու ընտիր գրքեր. ինչ վերաբերում է նորա մէջ բերած գրքերի ցուցակին, նա գոհացուցիչ չէ ոչ միայն հայերի համար, այլ առհասարակ ընթերցասէրներին համար, բայց հաշ ընթերցողներին համար՝ մանաւանդ եւ Նախ և առաջ գրքերի թիւը բերած ցուցակի մէջ հարկւր չէ, այլ հարկւրից շատ աւելին։ Գորա պատճառը ահն է, որ ցուցակի մէջ խառը դասաւորած են հեղինակների անունները գրքերի վերնագիրների հետ։ Անհատականալի պատճառով մի հեղինակի երկասիրութիւններից չիւլած է մէկը կամ միւսը, իսկ մի այլ հեղինակի միայն անունն է չիւլած։ Օրինակ, Գեօթէից չիւլած է միայն «Պատուոտ» և «Խնքնակենսագրութիւն», իսկ Մոլիերի, Շէքսպիրի, միայն անունները։ Մոլիերը և Շէքսպիրը ունին շատ երկասիրութիւններ, բայց որոնք են ամենաընտիրները? Ընթերցողը պիտի մնալ անչափութեան մէջ, և կարող է պատահել, որ նա կը կարդալ, զիցուք Մոլիերի «L'Étourdi» և Շէքսպիրի

«Պերիկլէսը» և կ'երեւակալի, որ ընտիր գրքեր է կարդացել! Յետոյ, ներկալ ցուցակին նախելով, կարելի է կարդալ, օրինակ, Հեղիոդոսի «Գիցարանութիւնը» (Հեղիոդոսի միայն անունն է ցուցակի մէջ) կամ «Արաբական հէքեաթները» կամ Շիկինգի չինական գովաբանական երգերը, և զոքա կը լինին ընտիր գրքեր, իսկ Շիկերի երկասիրութիւններից և ոչ մէկը, որովհետեւ ցուցակի մէջ չկալ ոչ Շիկերի անունը, ոչ նորա երկասիրութիւններից գոնէ մէկն ու մէկը! Դարձեալ անհասկանալի, ալդ ինչ ճակատագրական թիւ է «հարկւրը»? Հեղինակը ասում է թէ կան ուրիշ շատ ընտիր գրքեր, բայց նա չէ չիւլում, որովհետեւ ինքը խոստացել է միայն հարկւրը ցուցակագրել։ Ինչ հարկւր? Միայն Շէքսպիրի, Մոլիերի, Վալտեր-Սկոտտի և Բալրնի երկասիրութիւնները հարկւր ընտիր գրքեր կը կազմեն։

Ասելիքս ասեմ մի խօսքով—«Հարիւր ամենալաւ գրքերի» ցուցակը ընթերցանութեան ուղեցուց չէ կարող լինել մանաւանդ մեր ընթերցողների համար։ Իսկ ընթերցանութեան ընտիր գրքերի ցուցակ կազմելու միտքը օգտաւէտ է, և արժէ, որ մենք օգտուենք ալդ մտքից։

Լ. Մ.

ՄԱՐԱՍԵԱՆ, Աղէքսանդր. — «Երկու թումր կամ խեղճ սիրահարներ», Երկրորդ տպագրութիւն: Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի, 1895 թ. 65 էջ, գինն է 25 կոպ.

«Երկու թումրը» մի գեղեցիկ սիրալին պատմութիւն է, գրած ժողովրդական լեզուով և ժողովրդական ոգով: Վէպիկի նիւթը բնական և կրակոտ սէրն է, որ եռում է երկու գեղեցիկ կոյսերի և երկու քաջ կըտրիճների սրտերում: Այդ տաք սէրը վառում է նոցա սրտերը և հասցնում է նոցա հերոսութեան: Երկու հայ կոյսերը երկու Զուլետտաներ են, երկու հայ երիտասարդները — երկու Ռոմէօներ: Տարբերութիւնը աչն է, որ Ռոմէօնի և Զուլէտտայի սէրը աճում և զարգանում է Եւրոպայի հարաւում, իսկ հայ սիրահարների սէրը — Ասիական հողի վերաջ. աչն տեղ դրաման կատարում է շքեղ և հարուստ կահաւորութեան մէջ, իսկ աչտեղ բնութեան գրկում, Անտակ ձորի մէջ: Ահա պատմութեան համառօտ բովանդակութիւնը:

Երկու երիտասարդներ, Վաղօ և Վարդան, սիրում են երկու գեղջկուհիների, Շուշանին և Անուշին: Մէրը սկսած էր դեռ ևս մանկու-

թիւնից, համարեա օրօրոցից: Հայրերը չեն կամենում տալ իրանց աղջկանց աղքատացած ծնողների որդոց: Սոքա վճռում են փախցնել իրանց սիրածներին: Բայց նոքա ապանում են նենգ և վավաչոտ թուրք աւաղակների ձեռքով: Կոյսերը բերւում են աւաղակների որջը և խուսափելով նոցա անպատուութիւնից, իրանց զոհում են սիրելիների համար: Երիտասարդները գտնում են նոցա դիակները, իրանց ձեռքով փորում են նոցա գերեզմանը, լաց արտասուքով ամփոփում են նոցա մարմինները երկու թումրերի մէջ: Անտակ ձորում, և աչտեղ, վրէժ առնելով ռիսակալ թուրքերից, իրանք ևս զոհում են արիւնաշաղախ հողակոտների վերաջ: Վաղօյի և Վարդանի ընկեր հովիւները «հողը ետ արին ու սիրելիաններին իրանց նշանածների հետ գերեզմանների մէջ դրին»:

Լ. Մ.

ՄԵՐԵԹԷԼԻ, Գ. — «Մարդ-Առիւծ», առասպելական պօէմա, պատկերազարդ. փոխադրեց Դաւիթ Տէր-Դաւթեանց. 61 էջ. Թիֆլիս. տպ. Մ. Շարաձէի և ընկ. 1895. գինն է 20 կոպ.

«Մարդ-առիւծը» մի գեղարեստական հեքիաթ է, առանց աւելոր-

դարանութիւնների և կարգացում է հետաքրքրութեամբ: Նորա մէջ ար-

ծարժած է աղատութեան չաւերժական գաղափարը՝ չանձին Մարդաւուծի, որ չաղթանակ է տանում բռնաւորի վերայ (սպիտակ դե) և աղատում է ժողովուրդը նորա իշխանութիւնից: Եթէ չաջող է փոխադրութիւնը, կարելի է կարծել, որ իսկականը, բնագիրը, աւելի ևս չաջողութեամբ կը լինի, մանաւանդ, որ պ. Տէր-Դաւթեանը ասում է չառաջաբանի մէջ, թէ նա շատ սիրելի է ժողովրդին և զպրօցական մանուկներին: Մենք չկարողացանք հասկանալ, թէ ինչու պ. Տէր-Դաւթեանը կարեւոր է համարել փոխադրել աչք երկասիրութիւնը և ոչ տալ հաշ ընթերցողներին նորա թարգմանութիւնը: Նա աչք պէտք է պարզ և որոշ չախնէր. ապա թէ ոչ, մենք մնում ենք տարակուսանքի մէջ, թէ արդեօք բնագրի թարգմանութիւնը աւելի օգտաւէտ չէր լինիլ մեզ հա-

մար, քան թէ նորա փոխադրութիւնը կամ արդեօք մի քան վաստակել է գրածքը հաւերէն փոխադրութեամբ:

Նորա մէջ նկարագրւած կեանքը, անունները, տեղերը և առհասարակ բովանդակութիւնը հաւացրած չէ և, եթէ հիմնական գաղափարն էլ նույնն է, ինչ բնագրի մէջ, աչք ժամանակ մինք արագում ենք, որ «Մարդաւուծի» փոխադրութեան տեղ նա մեզ չէ տւել նորա հարազատ թարգմանութիւնը: Այդպիսով թարգմանիչը երկու քան կը վաստակէր. առաջինը, որ բանասէրները կը ծանօթանալին վրաց գրականութեան մէջ չախնի մի երկասիրութեան հետ և, երկրորդը, որ մանկական գրականութիւնը կ'աւելանար ընթերցանութեան մի ընտիր գրքով:

Լ. Մ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թիւրք-ոսմական ըարեկամութիւնը: Անգլիական արտայայտութիւնները հայկական խնդրի մասին: Սասունի կոտորածի մասին միջազգային մասնաժողովի զեկուցումը: Զէյթունի ապստամբութիւնը եւ հաշտութեան պայմանները:

Մի շատ կարեւոր փոփոխութիւն է մտել Տաճկաստանի ներքին քաղաքական գործերի միջամտութեան խնդրում օտար պետութիւնների կողմից: Անգլիայի դերիշխող ազդեցութիւնը Կ. Պոլսում փոխարինւել է Ռուսիայի ազդեցութիւնով: Ռուսիայի ազդեցութեան աճումը ի վնաս Անգլիայի՝ մի անգամ արդէն նկատւեց, երբ Կ. Պոլսի առաջ մեծ պետութիւնների երկրորդ պատերազմական նաւեր կանգնեցնելու պահանջին բաւարարութիւն տրեց սուլթանի կողմից միւսիայն ան ժամանակ, երբ վերջը նոյն պահանջն արաւ նաեւ Ռուսիայի դեսպան Նելիդով: Իսկ այդ կատարւեց հին տոմարով նոյեմբերի 28 (նոր տոմար 10 դեկտեմբերի):

Ամիս չանցած այդ իրողութիւնից յետոյ՝ Կ. Պոլսից ճանապարհ ընկաւ դէպի Պետերբուրգ սուլթանի արտակարգ դեսպան Սարիֆի փաշան՝ ընծաներով նորին Մեծութիւն Ռուսաց կայսր Նիկոլայ II-ի համար՝ նոր տարւայ աւթիւ:

Այդ ամենը արտաքին նշաններն էին Տաճկաստանի մերձեցման Ռուսիային: Եւ խնդիրը միայն նորանումն էր թէ մինչև ո՞ւր է հասել այդ քաղաքական մերձեցումը: Այդ միջոցին, յունւարի միջերբը, Լոնդոնի Pall-Mall Gazette (Պէլ-Մէլ Գազէթ) լրագիրը հաղորդեց վերին աստիճանի յուզիչ մի լուր Թիւրքիայի և Ռուսաստանի միջև իբր թէ կապւած պաշտպանողական և յարձակողական դաշնադրութեան մասին՝ 1833 թւականի Հունքիար-Աքելեսիի դաշնադրութեան հիմունքներով:

Այդ լուրը, չնայած որ առաջնակարգ աղբիւրից չէր բղխում, այնուամենայնիւ շրջեց ամբողջ Եւրոպայի քաղաքական մամուլի մէջ, գտնելով մի տեղ հաւատ, այլ տեղ՝ թերհաւատութիւն, երրորդ տեղ՝ ժպիտ, չորրորդ տեղ՝ կտրական հերքումն (վերջինս՝ Ժուրնալ դը Սէն-Պիտրսբուրգ Ֆրանսիական ռուսաց կիսապաշտօնական թերթում)։

Մի բան միայն մնում է իսկապէս հաստատ, որ—կայ թէ չկայ գրաւոր համաձայնութիւն—բայց կատարւած է մերձեցումն Տաճկաստանի Ռուսիայի հետ, որի հետ և կապւած է մեծ պետութիւնների միջամտութեան գլխաւոր ղեկավարութիւնը Կ. Պոլսում յօգուտ Ռուսիայի և ի վնաս Անգլիայի։

Դորա հետեւանքը պիտի համարել Կ. Պոլսի դեսպանների յունւարին կայացրած վճիռը, այսուհետև հայկական խնդիրների մասին ընդհանուր քայլերը Բ. Դռան կամ սուլթանի առաջ անել ռուսաց դեսպանի միջոցով։

Անգլիան բացարձակ կերպով այժմ ստիպւած է խոստովանել իւր պարտութիւնը հայկական խնդրում։ Եւ այդ խոստովանութիւնը եղաւ նաև անգլիական կառավարութեան ամենանշանաւոր մինիստրների՝ Սալիսբրիի և Չեմբերլէնի, որպէս նաև Բալֆուրի ճառերով, ճառեր, սակայն, որոնց մէջ պարունակւում էին սպառնալիքներ սուլթանի հասցէին։

Սալիսբրիին իւր ճառը խօսեց յունւարի 21 (հին տոմար), նոնկոնֆորմիստների բանքէտում։ Այդ ճառը վերաբերմունք ունէր բոլոր այլուղ քաղաքական խնդիրներին։ Հայկական խնդրի մասին նորա խօսքերը, ռուսաց հեռագրական գործակալութեան համաձայն, հետեւեալն էին.

«Պնդում են, որ իբր թէ կառավարութիւնը պարտաւոր է « օգնել Հայերին, այսինքն պատերազմ յայտնել սուլթանին։ Ինքը « Սալիսբրիին կարող է միայն նկատել, որ ռեֆորմների գործա- « դրութեան վրայ Թիւրքիայում հսկելու են վեց մեծ պետութիւն- « ները։ Ոչ մի հիմք չկայ ենթադրելու, թէ Անգլիան միջամտելու « է, որպէս զի ստիպի սուլթանին Հայերին ուրիշ կերպ կառավա- « րել, քան ինչպէս նա ցանկանում է կառավարել։ Ռեֆորմների « իրագործումը ժամանակ է պահանջում։ Սուլթանի կառավարու-

« Թիւնը թոյլ է, ողորմելի և անընդունակ. բայց ցնորք կը լինէր
 « ենթադրելը թէ սուլթանն է կարգադրել այն զազանութիւնները,
 « որոնք կատարուում են Ֆանատիկոս-մահմեդականների ձեռքով:
 « Անգլիան չկարողացաւ պաշտպանել Հայերին, որովհետեւ լիազո-
 « րութիւն չունէր զօրքերով գրաւելու Փոքր-Ասիան: Սալիսբըրին
 « չի էլ կարծում թէ եւրոպական պետութիւններից որ և է մէկը
 « ցանկանար գրաւել այդ երկիրը: Սուլթանին հարկաւոր է ժամա-
 « նակ տալ. ուրիշ եւք չկայ: Ձեռք ձեռքի տւած չգործել պե-
 « տութիւնների հետ կը նշանակէր նոցա դէմ գործել և թշուառու-
 « թիւններ առաջացնել, որոնք աւելի վտանգաւոր կը լինէին, քան
 « այն, ինչից կամենում են խուսափել:»

Սալիսբըրիի այդ խօսքերը վատ ընդունելութիւն գտան ոչ
 միայն լիբերալ կուսակցութեան կողմից, այլ նոյն իսկ պահպանո-
 ջական մամուլի և դեռ աւելի ևս Ամերիկացիների կողմից: Ընդ-
 հանուր կարծիք է որ անգլիական առաջին մինիստրը դորանով
 կարծես ետ է կանգնում նախկին ամիսներում իւր յայտնած սպառ-
 նալիքներից Թիւրքիայի հասցէին:

Չեմքերլէնը իւր մի նշանաւոր ճառում յայտնեց, թէ «կա-
 ուավարութիւնը առաջւայ պէս ցանկանում է թեթեւացնել քրիս-
 տոնեաների դրութիւնը Թիւրքիայում և որ եթէ կայ մի մի-
 ջոց, հաւատացած եղէք, որ յանձին Սալիսբըրիի մենք ունենք
 հէնց այն մարդը, որը ամենամեծ խնամքով որոնում է այն և որը
 ամենից շատ ընդունակն է այն գտնելու:»

Չեմքերլէնը իւր վերը ակնարկած մեծ ճառը արտասանեց
 Բիրմինգհամում: Չեմքերլէնը Սալիսբըրիի հետ միասին գլխա-
 ւոր ղեկավարն է անգլիական քաղաքականութեան: Իւր ընդարձակ
 ճառի մէջ, ուր նա շոշափեց Վենեցուէլի, Տրանսւապի և այլ
 խնդիրները, կարեւոր տեղ էր տրւած նաև հայկական խնդրին: Պըն-
 գելով որ Անգլիան և Հիւսիսային Ամերիկան կարող են միասալ
 ընդհանուր գործի համար, որ նւիրագործւած է մարդասիրութեան
 և արդարութեան զգացումներով, Չեմքերլէնը շարունակեց.

«Եթէ դուք կամենում էք դորա համար ապացոյց, յիշեցէք
 « այն ամենը, ինչ որ կատարւեց Հայաստանում: Եւրոպական ցա-
 « մաքային ազգերը մի յայտնի անտարբերութեամբ վերաբերւեցին

« դէպի Փոքր-Ասիայի քրիստոնեաների տանջանքները (ըսցաւսն-
 « չուծին» նախնւոյնք!)։ Այստեղ, այն երկրում (Անգլիա) իշ-
 « խում էին համակրութեան և զայրոյթի զգացումներ։ Որ ամերի-
 « կացիք վերաբերում էին դէպի խնդիրը նոյն կերպ, այդ հասկա-
 « նալի է, քանի որ նոքա վաղուց այնտեղ ունին քարոզչութիւն-
 « ներ։ Այդ քարոզչութիւնների անդամները երկար ժամանակ, այլ
 « նաև այժմ ներկայանում են որպէս թանկագին ազէնտներ քա-
 « ղաքակրթութեան, որովհետև նոքա հետաքրքրւում են մարդկու-
 « թեան չարարանքներով՝ մարդկութեան համար և ոչ թէ երկիր-
 « ներ յափշտակելու մոլով։ Իմ կարծիքով մեզ կարելի պիտի լի-
 « նէր, փոխանակ ապարդիւն կերպով ոյժեր սպառելու Հարաւային
 « Ամերիկայում եղած տահմանների սութիւ վիճելու համար՝ յոյս
 « դնել Ամերիկայի զօրաւոր պաշտպանութեան և աջակցութեան
 « վրայ՝ մեր անպատու պահանջները իրագործելու համար յօգուտ
 « նոցա, որոնք տանջւում են թիւրքական բռնակալութիւնից և
 « թիւրքաց ֆանատիկոսութիւնից (ծաւախարութիւններ)։ Այո,
 « պարոններ, սա Ֆակտ է, որ մեր պահանջները անպտուղ ան-
 « ցան և որ Հայաստանում եղած դրութիւնը մնում է առաջւայ
 « պէս իբր վտանդ և դժբաղդութիւն Եւրոպայի համար»։

Խօսեց նաև Բալթիւրը, Սալիսբուրիի քրոջ որդին, զանձա-
 րանի լորդը և համայնքների ժողովի պահպանողականների պարա-
 զլուսը։ Նա խօսեց Բրիտոլոմի։ Հայկական խնդրի մասին նա յայտ-
 նեց, թէ «Անգլիան ոչ մի դէպքում չի կարող պատասխանատու
 « լինել Հայաստանում եղած տարաբախտ դէպքերի համար, որ և
 « կարելի է ապացուցանել այդ առաջիկայի համար եղած դիպրո-
 « մատիական զրազրութիւնով։ Թիւրքիան, անկասկած, մերձե-
 « նում է վերջնական անկմանը, քանի որ նա հրաժարւեց բարե-
 « կամութիւնից Անգլիայի հետ»։

Յայտնելով ապա թէ Անգլիայի կոլոնիական քաղաքականու-
 թիւնը օտար է եսասիրական ձգտումներին և որ Անգլիան դէ-
 եթէ Ռուսիան կարողանայ մի չսառչող նաւահանգիստ ձեռք բերել
 Խաղաղ ովկիանոսում, Բալթիւրը կրկնեց նոյն ցանկութիւնը ամե-
 րիկացիների նկատմամբ, ինչ որ Չամբերլէնը յայտնել էր հայկական
 խնդրի առիթով, այն է թէ «անհրաժեշտ է, ամբողջ աշխարհի

օգտի համար, որ ստեղծւի անդլօ-ամերիկական դաշնակցութիւն»:

Որ Հիւսիսային Ամերիկան իրօք այդ խնդրում Անգլիայի պէս է զգում, [Թող ի միջի ալոց փաստ ծառայի Վաշինգտոնից 14 յունւ. (հին տոմար) տրւած Ռուսաց գործակալութեան հեռագիրը, որի համաձայն Վենետիկը միաձայն ընդունեց հետեւեալ որոշումը. Միացեալ Նահանգները պարտք են համարում յոյս յայտնել որ եւրոպական պետութիւնները ի կատար կ'ածեն Բերլինի դաշնադրութեան Հայաստանին վերաբերեալ վճիռները»:

Այդ ճառերից առաջ էր դեռ, նոր տարւայ սկզբին, որ անգլիական [Թագուհի Վիկտորիա] ինքնագիր նամակ էր գրել սուլթանին, որի բովանդակութեան մասին [Թայմս] ին հեռագրեց 4. Պոլսից, [Թէ՛

«Սուլթանին ուղղած նամակում անգլիական [Թագուհին բարեկամական ձևով յայտնեց ջերմ փափագ, որ [Թիւրքաց հողի
«վրայ հեռացրած լինին այն տարաբախտ հանգամանքները, որոնք
«անգլիական ազգին խորը վիշտ են պատճառում, և որ զորա փո-
«խարէն լինի ներքին համաձայնութիւն և բարօրութիւն, որոնցով
«կարողանային վայելել բոլոր ազգերը»:

Առ այդ սուլթանը, նոյնպէս ինքնագիր նամակով, պատասխանել էր անգլիական [Թագուհուն, [Թէ անգլիական [Թերթերը
«չափանցնում են իրերի դրութիւնը և որ [Թիւրքերը հայոց նա-
«հանգներում աւելի են վնասուել, քան [Թէ հայերը]...»

Անգլիական պարլամէնտի նոր շրջանը բացելու առիթով, նոր տոմարով փետրւարի սկիզբները, [Թագուհու զանազան ծառում հայկական գործերի մասին յիշատակութիւն է արւած բաց ոչ խիստ ոճերով: «Սուլթանը, ասւած էր այդ ճառում, հաստատեց Հայաստանում մոցներէք գլխաւոր ռեֆորմները, որոնց մոցներէլ համար բրիտանական կառավարութիւնը, միասին ռուսաց կայսեր և ֆրանսիական հանրապետութեան նախագահի հետ՝ իւր պարտքը համարեց պնդելու: Այդ առթիւ ճառի մէջ ցաւ էր յայտնւած, որ ֆանատիկոսութեան բռնկումը տաճիկ ազգաբնակչութեան մի մասի (1) կողմից հետեւանք ունեցաւ մի ամբողջ շարք կոտորածներ այդ նահանգներում, որը դրդեց խորին զայրոյթ ամբողջ Անգլիայում»:

Դորա մէջ պարունակուած է նաև անուղղակի պատասխան սուլթանի գրած պատասխանին:

Այս նոյն ժամանակամիջոցում (յունւարին) հրատարակեց անգլիական Կապոյտ գիրքը հայկական խնդրի մասին, որը պարունակում է զիսլոմատիական հաղորդագրութիւնները սկսած 24-ն յուլիսի 1894 թ. ց 16-ն հոկտեմբերի 1895 թ. և միջազգային մասնաժողովի զեկուցումը Սասունի կոտորածի մասին: Մասնաժողովը հաստատեց այն տեղեկութիւնը, որի համաձայն յիսուն հայ կոտորեցին Գեղի-Գուգանի մօտ տաճկական քանակում և որ այլ դէպքերում տաճիկ զինւորները և քուրդերը կոտորում էին հայերին առանց հասակի եւ սեռի խտրութեան: Անկասկած են չափնւած նաև կանանց վրայ գործած ըննաքարութիւնները. զեկուցումը մի փոքր կասկածելի է չափնում միայն այն, թէ արդեօք կանոնաւոր զօրքերը այդ կարգի խաչտառակութեանց մէջ մասնակից էին թէ ոչ: Հաստատւած է նաև լուրը քսան եւ չորս գիւղեր անընդունաին 5.000 հոգի բնակիչներով, որոնք անտուն մնացին: Վերջապէս հաստատուել են հայերին տանջանքների ենթարկելու լուրերը: Նոտ օրինակներ են բերւած տաճկական գազանութեան բրիտանականների վերաբերմամբ, ի միջի այլոց, անգլիական հիւպատոս Շիպլէյի հաղորդագրութիւնների մէջ: Տալւորիկում սպանւած հայերի թիւը նա որոշում է 1.000 հոգի, և վկայում է թէ տաճիկ իշխանութիւնները ոչ այնքան ջանք էին գործ դնում կարճեցեալ ապստամբութիւնը խնդրելու համար, որքան ջնջելու Գեղի-Գուգան եւ Տալտրիկ գաւառները, ուր ոչ մի տուն ողջ չմնաց, փնացրին ընդոր արտերը և ազգաբնակութիւնը կատարեալ աղքատութեան է հասցրած: 12-ից օդոստոսի ց 4-ն սեպտեմբերի 1894 թ. այդտեղ որսում էին հայերի վրայ որպէս անում են վաչրի զազանների նկատմամբ, կոտորում էին նոցա առանց խնդրութեան հասակի և սեռի, և եթէ ամենքը չկոտորեցին, այդ միայն նրանից է որ տեղի լեւնային զիրքը կարելիութիւն էր տալիս հալածանքից թաքնւելու:

Զէյթունի Հայերի դործերը շարունակեցին յունւար ամսին սպասածից աւելի մեծ յաջողութեամբ: Մենք արդէն հաղորդեցինք անցեալ դեկտեմբերին որ Զէյթունցոց դէմ սուլթանը ուղարկել էր տասը հազար զօրք հրամանով որ աւռնեն Զէյթունը և ամենքին սրի անցկացնեն: Սկզբում այդ նոր աղէտի դէմն առնելու համար էր որ Կ. Պոլսի եւրոպական ղեսպանները առաջարկել էին իրենց միջամտութիւնը: Բայց շուտով այդ միջամտութիւնը պիտի փոխւէր միջնորդութեան երկու պատերազմող կողմերի մէջ, երբ Զէյթունցիք ոչ միայն ամուր մնացին իրենց տեղերում, այլ յաղթութիւններ տարան, և երբ տաճիկ զօրքերը՝ մեծ ցրտերի պատճառով և մեծ նեղութիւնների մէջ՝ ստիպւեցին յետ նահանջել Զէյթունից դէպի Մարաշ: Դեռ ևս անցեալ ամիս լուր կար թէ տաճիկ զօրքերի հրամանատար Բահրի փաշան (Վանի նախկին կուսակալը) գերի էր ընկել Զէյթունցոց ձեռքը. աւելի նոր տեղեկութիւններով այդ հաստատուում է (թղթակցութիւն Պետերբուրգի Վիրթելերեա Վէդումստիի առ 28-ն յունւ.): Նոյն աղբիւրի համաձայն իբր թէ գերի է ընկել նաև Սասունի կոտորածի հերոս Զէքի փաշան, որ յաջորդել էր Բահրի փաշային՝ զօրքի հրամանատարութեան պաշտօնում: Զէյթունցոց ապստամբութիւնը գնալով զօրացաւ և աճեց՝ թէ նոր ձեռք բերած մարտինի հրացանների պատճառով և թէ մարդկանցով՝ որոնք օգնութեան էին գնացել Կ. Պոլսից և այլ տեղերից:

Կ. Պոլսի ղեսպանների առաջարկը՝ իրենց հիւպատոսների միջոցով միջնորդ հանդիսանալ պատերազմող կողմերի միջև՝ ընդունեց սուլթանից, որպէս նաև ապա Զէյթունցոց կողմից: Միջնորդներն էին՝ անգլիական, ֆրանսիական և իտալական հիւպատոսները: Թիւրքիայի կողմից զոցա միջոցով արւած առաջարկները հետեւեալն էին. Զէյթունցիք պէտք է տան իրենց մօտ ունեցած բոլոր զէնքերը, նորից շինեն քանդած կազարմը և դատարանական իշխանութիւններին չանձնեն ապստամբութեան պարագլուխներին:

Դեռ ևս դեկտեմբերին Զէյթունցիք հիւպատոսների միջնորդութիւնը ընդունելու համար պայման էին դնում որ Զէյթունի նահանգապետը նշանակւի իրենց՝ Զէյթունցոց՝ միջից: Բայց յետոյ նոքա իրենց պահանջը բարձրացրին՝ պայման դնելով որ

իրենց զաւառը միացւի ուրիշ երկու հարեան հայաբնակ զաւառ-
ների հետ և այդ ամբողջութիւնը ճանաչւի որպէս գրեթէ անկախ
նահանգ նման Լիբանանին: (Հիւպատոսները իրենց ուղեկցող 80
զինւորներով, պիտի որ Զէյթուն հասած լինէին յունւարի վեր-
ջերքը՝ ճանապարհների վատութեան պատճառով Մարաշի և
Ալէքսանդրի միջև): Զէյթունցոց այդ առաջարկը սուլթանը հա-
ղորդեց դեսպաններին (ըստ հեռագրի 28-ից յունւարի, 4. Պոլսից՝,
խնդրելով նոցա կարծիքը այդ մասին: Յունւարի 30-ից հեռագրի
համաձայն՝ սուլթանը պատրաստականութիւն է յայտնել կազարմի
շինութեան և Զէյթունցոց ապաւիկ մնացած հարկերի խնդրի վրայ
չպնդել և նշանակել զայմագամ՝ քրիստոնեաներից և երաշխաւոր
լինել Զէյթունում ապաստանած 6.000 փախստականներին ազատ
կերպով հաչրենիք վերադառնալու համար: Դեսպանները այդ պայ-
մանները՝ հիւպատոսների միջոցով՝ հաղորդեցին Զէյթունցոց:

Աւելի լիակատար մանրամասնութիւնները առայժմ պակա-
սում են, բայց փետրւարի սկզբին հեռագիրը հաղորդեց կայացած
համաձայնութեան մասին Զէյթունցոց հետ: Համաձայնութեան կէ-
տերը, եթէ միայն իրօք համաձայնութիւն կայացած է, երևի կա-
րող պիտի լինին հաղորդել յոջորդ ամսում:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ:

Մեզ հաղորդում է Կ. Պոլսից հետևեալը՝

Պր. Արփիար Արփիարեանի վրա կատարած (25 դեկտ.) սպանութեան փորձի մասին Հայրենիք լռած մը հրատարակեց, ուր պալանի կերպով կ'ամբաստանէին ահա անձերը որոնք առանց երեսնին ցուցնելու Հայրենիք-ի խմբագրութեան սպառնական նամակներ գրած են՝ պաշտօնական զեկուցումներ հրատարակելու մասին: Այդ լռածը, «Ապանութեան փորձ մը» վերնագրով, գրաքննիչէն գաղտնի տպւելուն Հայրենիք ղեկամբեր 29-էն ի վեր չադրած է հրատարակել: Պր. Արփիարեանի վրա լարձակողը չէ ճանաչուած. երբ երկու ոստիկան վրա կը հասնին և կ'ուզեն մարդը բռնել, ահա իր բռնուկէն կը հանէ և երկու անգամ կը պարպէ ոստիկաններու վրա՝ որ, ահաբեկ, ետ կը քաշին:

Պր. Արփիարեանի վէրքերը ծանր չեն սակայն և արդէն աղէկցած կը սեպւին: Հաջ թերթերը ալ ևս պաշտօնական զեկուցում չեն գրեր, առարկելով թէ միշտ սպառնական նամակներ կը ստանան՝ թիւրք թերթերու գրածները արտատպելուն համար:

Պր. Արփիարեանէն ետքը Տիգրան Գարակեօզեանն է որ զանակի շատ մը հարաւորներու տակ կ'իջնալ՝ Քանի մը անգամ իրեն զմումներ կըլլան՝ կ'արօտներուն ի նպաստ դրամ ուղկելու՝ միշտ մերժողական և խուսափողական պատասխաններ կուտան: Ոստիկանութիւնը աչս առիթով քանի մը անձեր կը ձերբակալէ. բայց չուն. 9-ին նրան կը վերաւորեն: Վերաւորը երեք օր ետքը կը մեռնի:

Տեղին է ըսելու որ Պոլսի հաջ վաճառականներուն մէջ Գարակեօզեան եղբայրները ամենէն հարուստն են, կամ գէթ աչնպէս կը սեպւին. բայց առածի կարգ անցեր է անոնց չափազանց կծծիութիւնը: Նրեք եղբայրներէն ամենէն հարուստը մեռնողն է կ'ըսեն. և մէկ եղբայրնին միայն ամուսնացած է, Յովսէփ Գարակեօզեանը, որուն զաւակները սակայն, իրենց դաստիարակութեամբը լաւ համբաւ կը վայելեն:

Գաւառացի պանդուխտներէն շատերը, որոնք կառավարութեան աչքին քիչ մը կասկածելի կ'երևնալին, աչս ձմեռան խիստ օրերուն, իբր թէ իրենց հալընիքը զրկեցան:

Այսպէս գաւառացիներէն շատերը իրենց հալոյնիքը ղյ կել ուղեւով, շատերը բանտարկելով՝ թիւրք կառավարութիւնը կը սիրէ հաւտալու օր մըն ալ բոլորովին մաքրած պիտի ըլլալ երկիրը հալոնաւէր հալերէն: Կենդրոնական վարժարանի աշակերտներուն ցանկը ուղած են ևղեր, գաւառացիները իրենց հալոյնիքը ղրկելու համար:

Ամենուն ալ ձոխէն եկան, միայն կը մնալ Պատրիարքը: Առջի օրէն չսիրեցին աս մարդը, որ իրենց խօսքերէն բնաւ չխաբեցաւ:

Թիւրք կառավարութիւնը ամեն ջանք ըրաւ և կընէ Պատրիարքը հրաժարեցնելու համար. և մինչև հիմալ նպատակին չհասաւ: Ծնունդի շաբթուն Սուլթանի կողմէն Աբրահամ փաշան, Նուրեհանը և Գաբրէլ Նորատունկեանը Ս. Պատրիարքին կուգան ըսելու որ հրաժարի իր պաշտօնէն: Ս. Պատրիարքը կը պատասխանէ թէ անգըր զինքը պաշտօնի կանչեց և անգըր միայն իրաւունք ունի հրաժարեցնելու: Այս փորձն ալ չհաջողեցաւ: հիմալ ալ կը խորհին որ հալ երեւելի անձերէն ստորագրութիւն հաւաքեն՝ իբր թէ անգըր դժգոհ է Պատրիարքէն և Բ. Գուռին ներկայացնեն այդ հանրագիրը: Այս մեքենալութիւններուն ղիմաց, մեր սիրելի Պատրիարքին վիճակը երեւակայելու է. իր անգըր ուրիշ մը շատոնց վհատած պիտի ըլլար. ամբողջ անգըրն համակրանքն ու լստահութիւնը կը վալելէ սակալն, աս բաւական է զինքը մխիթարելու և քաջալերելու:

ԴՐԱՄԱ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ ԳԵՂԱՐԻԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

«Պարիզի շրջմոլիկ տղան», դրամա երկու արարւածով: «Աւագակներ», տրագեդիա
հինգ արարւածով, Շիլլերի, թարգմանութիւն Փ. Վարդանեանի:

Հինգշաբթի, Պարիզի շրջմոլիկ տղան, ի նպաստ տ. Մելի-
քեանի և պ. Յարութիւնեանի: Վերնագրին նաչելով, կարելի է կարծել,
որ դա մի աննշան և թեթև պիես պէտք է լինի: Բայց իրօք այդ այդ-
պէս չէ:

Երկու արարւածի մէջ, և միայն երկու, սկսում է մի ամբողջ դրամա,
զարգանում և իւր վախճանն ստանում: Անշնորհք գրչակը կարող էր մի
ալիպիսի հարուստ բովանդակութիւն ձգձգել և դարձնել մի «դրամա հինգ
գործողութեամբ», բայց դրամա, որ ոչ մի արժէք չի ունենալ: Բայց որ-
քան սղմած է բովանդակութիւնը, այնքան աւելի նա հետաքրքրական
է, այնքան աւելի բնատրութիւնները չաջող են, ռելիեֆ և թանձր գոյ-
ներով նկարագրւած: Արիստոկրատական հասկացողութիւնները, նախա-
պաշարմունքը, արիստոկրատական արհամարանքը զէպի ստոր դասա-
կարգը, կուշտ, եսական և զարճասէր ստահակութիւնը—այլ ամենը այս-
տեղ ընդհարում է զիտակցութեան հասած դեմոկրատիայի պատահանա-
չութեան և այլ բարոյական հասկացողութիւնների հետ: Նւ ալսպիսով դրա-
մայի մի կողմը ներկայացնում է բարոյական ապականութիւն և էգոիզմ,
միւս կողմը կատարեալ շիտակութիւն և անձնագոհութեան պատրաստա-
կանութիւն: Նւ իրաւ, Պարիզի շրջմոլիկ պատանին, իւր կեանքը վտանգի
ենթարկելով, շորերով իրան ձգում է ջուրը՝ խեղաւող երեխային ազատե-
լու: Իսկ նորա հակառակ, դիրք ունեցող և հարուստ աստիճանաւորի
որդին, Դոն-Փուանի պէս, մտնում է շրջմոլիկ ընտանիքը և, իւր անաս-
նային տրիանքին գոհացում տալու համար, արհամարում է նորա պատիւը
և անբախտացնում պատանու քրոջը: Հէնց այս հակադրութեան մէջ, մեր
կարծիքով, կաշնուում է պիեսի գլխաւոր արժանաւորութիւնը: Գալով դե-
րակատարութեան, մեզ շատ չաջող երևաց պ. Աբելեանը՝ ստահակի հօր
դերում: Սորա ազնիւ մտածողութիւնը, սորա չամառութիւնը, սորա բար-

կացկոտ բնաւորութիւնը—այս բոլորը նկատելի կերպով դուրս էր պրծնում պ. Աբելեանի խաղի մէջ, Բաւականին չաջող էր նաև տ. Մելիքեանը, որ կատարում էր շրջմուխիլի դերը: Վերջինիս պարզութիւնը, արժանապատուութեան զգացմունքը, չարածճի, ուրախ և աշխույժ բնաւորութիւնը ճշտութեամբ արտայայտուում էր տիկնոջ խաղի մէջ: «Խելապարի» երգից լետոյ, որ կատարեց պ. Աբելեանը, ներկայացւեց «Փառտաբանի մօտ» մի ծիծաղաշարժ վողըւիլ, որի մէջ կալ շատ մեծ աղմուկ, իրարանցում և կենդանութիւն, բայց քիչ կալ կենսական ճամարտութիւն: Չնայած դորան, պիւսի մէջ կար մի շնորհապարտ դեր, որ մեծ փալով և աշխուժութեամբ կատարեց տ. Փառանծէմը: Մենք զուր էինք սպասում տեսնել բեմի վերայ երկրորդ բենեֆիցիանտին, պ. Յարութիւնեանին. նա մինչև վերջ չ'երևաց բեմի վերայ. դեր չ'ունէր: Միայն վողըւիլի մէջ զ'մուղէմ կիսաբաց ճեղքից լաճախ նա հանում էր իւր գլուխը և հարցնելով թէ «կի՞նս աչտեղ չէ?», անհետանում էր: Առհասարակ ցանկալի է, որ դերասանը իւր բենեֆիսի ժամանակ ունենար իւր ուժերին չարմար մի դեր:

Հինգշաբթի, չունւ. 18. «Աւագակնեք», տրագեդիա հինգ արարւածով, Շիլլերի, թարգմանութիւն ֆ. Վարդանեանի:

Ֆրանցի դերը կատարում էր պ. Սաֆրազեանը, կարլ Մօօրի դերը—պ. Աբելեանը: Մեզ դուր չ'եկաւ ոչ մէկը, ոչ միւսը:

Նախ Ֆրանցի մասին: Երբ վարագուրը բարձրացաւ, մենք սպասում էինք, որ կր տեսնենք թէ ինչպէս Ֆրանցը խորամանկ զգուշութեամբ պատրաստում է հօրը՝ առաջին հարւածն հասցնելու. նա հարցնում է հօրը առողջութեան մասին, ակնարկում է մի ինչ որ բօթաբեր նամակի մասին. լետոյ հասկացնում է նորան, որ նամակը վերաբերում է կարլոսի խաչառակութեանը և բարոյական անկմանը, ապա շինծու արտասուքով խնդրում է հօրից թող տալ նորան լետաձգել նամակի ընթերցումը մի աւելի չարմար ժամանակի. աչսպիսով աւելի ևս չարժւում է հօր հետաքրքրութիւնը և աւելի մեծանում է այն տխուր լուրի նշանակութիւնը, որ նա իրր թէ աչքան դժւարանում է չալտնել ծերունուն: Մինչև նամակի ընթերցումը Ֆրանցին չաջողում է թոյնի առաջին կաթիլը կաթեցնել հօր սրտի մէջ. Յետոյ արդէն նա սկսում է կարգալ նամակը: Հանդուցի այս նախապատրաստական մասը, մեզ համար անհասկանալի պատճառով, դուրս էր ձգել պ. Սաֆրազեանը: Վարագուրը բարձրանալուց լետ՝ բեմում նստած էր միայն ծերունի Մօօրը: Յետոյ եկաւ Ֆրանցը և, հարցնելով հօրը առողջութեան մասին, անմիջապէս սկսեց կարգալ նամակը: Մենք չարգելի պատճառ չտեսանք աչպէս վարելու բնագրի հետ: Գուցէ, աւելի էֆֆէկտ է գործում, երբ վարագուրը բարձրացնելուց լետոյ՝ գլխաւոր դերակատարը բեմի վերայ չէ, ալ ներս է մտնում. բայց, կարծում ենք, աչպիսի էֆֆէկտի համար ոչ մի կերպ չպէտք է զոհել այն, ինչ աւելի

կարևոր է: Այն կտորը, որ դուրս էր ձգել պ. Սաֆրազեանը, թէ բնորոշ էր Ֆրանցի համար, թէ հետաքրքրական հանդիսականների համար:—Յետո՛ւ՝ նամակի ընթերցումը նույնպէս մեզ դուր չեկաւ: Պ. Սաֆրազեանը կարդում էր և միայն երբէմն հաջեացք էր ձգում հօր երեսին, իմանալու համար, թէ ինչ տպաւորութիւն է գործում նամակը, բայց ոչ իւր ձայնի եղանակով, ոչ իւր անհանգիստ շարժումներով բոլորովին ցոյց չէր տալիս, թէ իբր ինքը ևս վշտանում է, բարկանում է, թէ եղբօր անպատուութիւնը իւր սեփական անպատուութիւնն է համարում: Սկզբից մինչև վերջ նա կարդաց նամակը միևնույն ձայնով և միանման նաշածքով: Մինչդեռ նամակի կիսում, երբ Ֆրանցը համոզւում է, որ նամակը ցանկացած տպաւորութիւնը գործում է և արտասանած ամեն մի բառը մի կաթիլ թոյն է ծերունու համար, սկսում է կարգաւ աւելի արագ, աւելի մեծ բարկութեամբ կամ վշտով, որպէս զի իբր հրէշաւոր ներկայացնելով իւր եղբօր արարքները՝ կարողանալ վերջապէս զուրս կորզել հօր սրտից Կարլոսի պատկերը: Այնուհետև հօր հեռանալուց չետ Ֆրանցը դառը քրքիջով ծաղրում է նորա միամտութիւնը և դիւրահաւատութիւնը: Պր. Սաֆրազեանը, Կրիի, աւելորդ էր համարել աչդ, և մենք չլսեցինք նորա բերնից աչդպիսի մի ծիծաղ: Ապա հետևում է Ֆրանցի մենախօսութիւնը, որտեղ, ի միջի ալլոց, նա խօսում է իւր սոցիոլոթեան մասին: Պ. Սաֆրազեանը կախ էր արել սրտին մի վատ հաշիւի, որ բոլորովին սաղ չէր դալիս կոմսի բնականաբանին, և տեսնելով նորա մէջ իւր սոցիոլոթեանը, բարկացած կոտորում է նորան: Աւելորդ բան: Նախ՝ Ֆրանցը նոր չէ ճանաչում իւր դէմքը և շատ լաւ գիտէ, որ սոցիոլոթ. հարկ չկալ հաշիւու մէջ աչդ նորից ստուգելու: Ենթադրենք նոյն խնդիր, որ աչդ հաշիւին աւելորդ չէ, աչդուամենաչիւ մեզ աւելորդ թւաց նորան կոտորելը: Գա նշանակում է չափազանցնել նորա սոցիոլոթեան նշանակութիւնը: Ֆրանցը չարագործ է ոչ աչքան աչն պատճառով, որ սոցիոլոթ. որքան աչն պատճառով, որ չէ հաւատում առաքինութեան և խղճին և համոզւած է, որ պէտք է չաղթահարել «ոլոթ ուժով և կիրքը կրքով»: Նա կազմել է իւր համար մի անասնական հաջեացք մարդու մասին և աչդ անասնական հաջեացքով է առաջնորդւում նա իւր չարագործութիւնների մէջ: Վերցնենք աչքով մի ուրիշ տեսարան: Ֆրանցը ներկայացնում է ծերունի Մօօրին և Ամալիային մի համբաւաբերի՝ ծպտի շերմանին: Տխրութեան դիմակը երեսին նա չափում է իւր հօրը թէ նորեկը տխուր լուրեր ունի հաղորդելու, կարող է արդեօք լսել? պ. Սաֆրազեանը աչդ բոպէին չերեցրեց կեղծ տխրութեան ոչ մի նշան և աչդպիսի անտարբերութեամբ չափեց լրաբերի մասին, որ կարծես մի սովորական հիւրի մասին էր խօսքը: Այնուհետև բնմի առաջնակողմից նա անցաւ ծերունի Մօօրի և Ամալիայի ետև, որպէս զի աչդտեղից շերմանի պատմութեանը ականջ դնելով, երբեմն հաւանութեան նշաններ ցոյց տալ

կեղծ համբաւաբերին: Նախ՝ եթէ ալդ էր նորա մի կողմ քաշելու նպատակը, նա կարող էր ալդ նպատակին հասնել նաև բեմի առաջնակողմից, որտեղ նա կարող էր չարմար առիթներ որսալ իւր հաւանութիւնը չափող համար. բաւց, եթէ կ'ուզէք, նա հէնց բեմի առաջնակողմումն էլ պիտի մնար, նորան պիտի հետաքրքրէր թէ ինչպիսի տպաւորութիւն է գործում Հերմանի արտասանած ամեն մի խօսքը ծերունի Մօօրի և Ամալիայի վերաջ: Դա մի շատ հարուստ մեջախաղի տեղ էր Ֆրանցի դերասանարարի համար. ալդ ըստէին նա ուշադրութեամբ պիտի հետեւէր լսողներին դէմքի արտայայտութեան փոփոխութեանը և չարմար դէպքերում կամ հաւանութեան նշաններ անէր Հերմանին, կամ շինծու վիշտ և խաղկան հրճանք արտայայտէր: Մենք ցանկութիւն չունինք, սակայն, քաջ առ քաջ քննադատելու պ. Սափրազեանի խաղը: Դիտող աչքը կարող էր գտնել նորա խաղի մէջ լաւ չմտածած և խորոյ ու բորոյ շատ տեղեր:

Առաջին անգամը չէր, որ մենք ներկայ էինք պ. Սափրազեանի դերակատարութեանը: Մենք երբէք չենք ժխտել նորա մի մեծ արժանաւորութիւնը, որ անքան կարևոր է դերասանի համար, դա առատ զգացմունքն է: Պաթետիկական վաշտիկաններում նա միշտ տպաւորութիւն էր գործում. «Կողոպտած փոստի» մէջ, «Լիւիէ և Դիդիէի» մէջ, «Սանդուխտի» մէջ նորան չաջողել է նոյն իսկ արտասուք խլել մեր աչքից: Բայց, չգիտեմ ինչու, պ. Սափրազեանը չկարողացաւ տպաւորութիւն գործել ինքնասպանութեան տեսարանում: Ալդ տեսարանը բոլոր զգացմունքների տեսարան է, ուր կուտակւում է սարսափ սարսափի վերաջ և որ աւարտւում է չուսահատութեամբ և տրագիկական վերջաբանով: Սակայն ոչ սարսափ, երբ Ֆրանցը գոռալով ներս է մտնում, ոչ սարսուռ, երբ նա պատմում է իւր երազը, ոչ չուսահատութիւն, երբ զղեակը պաշարւած է, ոչ խորին վիշտ, երբ նա կամենում է աղօթել և չէ կարողանում, ոչինչ չերևաց. եթէ կար մի բան, դա սարսափի և չուսահատութեան տուերն էր միայն: Իսկ վերջումը մեղ դարմացրեց ան, որ պ. Սափրազեանը անքան նեղութիւն քաշեց իրան կախ տալու համար: Չգիտեմ, դուր է դալիս արդեօք ուրիշներին, երբ դերասանը պարանը իւր վրէժն է դրում և կախւում օդի մէջ: Ինձ ալդ դուր չէ գալիս: Մահը բեմի վերաջ պիտի լինի շատ պարզ և հասարակ:

Դարով պ. Սափրազեանի խաղի ընդհանուր գնահատութեանը, նա գոհացուցիչ չէր: Ֆրանցի պատկերը, իբր մի դեղարհեստական ամբողջութիւն, չէր տպաւորւում մեր մտքում: Դա հետևանք էր անհամաձայնութիւն, որ նախ Ֆրանցի անձնավորութիւնը խնամքով ուսումնասիրւած չէր: Երկրորդ, պ. Սափրազեանին խանգարում էր դիկցիան: Նա, ինչպէս ասում են բեմական լեզուի, երգում էր: Դորա հետևանքը լինում էր ան, որ արտասանութեան մէջ տրամաբանական չեղտը կանոնաւոր չէր դուրս

գալիս. օր. մի տեղ նա ասում է Ամալիային. «միթէ ես նորան չաւտեան պիտի ողբամ?» և չեչտում է նորան: Մինչդեռ ալգայիսի չեչտադրութեամբ միտքը փոխում է: Ֆրանցը չեչտում է չաւտեան բառը և ոչ թէ «նորան», «միթէ ես նորան չաւտեան պիտի ողբամ?» Բացի ալդ պ. Սաֆրազեանի ձայնի մէջ չկալ երաժշտականութիւն, որ միջոց է տալիս դերասանին մտքի և զգացմունքի համապատասխան փոխել ձայնի եղանակները: Դա ալնքան անհրաժեշտ է, որ ալլապէս արտասանած բառերը դառնում են անհասկանալի կամ հասկացւում են սխալ: Օրինակ, Ֆրանցի ալն խօսքերը թէ «կոչտ ու կոպիտ Ֆրանցն եմ ետ» ևսլն պ. Սաֆրազեանը արտասանեց իւր սովորական ձայնով և ալնպիսի տպաւորութիւն գործեց, որ կարծես ինքը իւր սեփական կարծիքն էր չալսնում իւր մասին. մինչդեռ ալդ խօսքերով նա դառը հեղնութեամբ վերադարձնում է հօրը ալն ածականները, որ նորան տալիս էր ծերունին շատ առաջ, երբ համեմատում էր Ֆրանցին Կարլոսի հետ: Մի տեղ մի ալն պ. Սաֆրազեանը մի ալգայիսի փորձ արեց և ալն չալող փորձ: Դա թոյնի տեսարանի ժամանակ էր: Երբ առաջին անգամ ծագում է նորա գլխում ահեղ դատաստանի միտքը և կամաց կամաց արթնանում է նորա մէջ խիղճը և երկիւղը, իւր մենախօսութեան մէջ նա ասում է. «անիծեալ լինին մեր դաւեակները, որոնք պղտորում են մեր միտքը ահեղ դատաստանի պատկերով» և ալն: Պ. Սաֆրազեանը լաւ արտասանեց ալդ խօսքերը. նա շատ իջեցրեց իւր ձայնը և խզւած և հազիւ լսելի ձայնով կարողացաւ արտապատել իւր ներքին աշխարհը՝ արթնացած խիղճը և ահը:

Գոհացուցիչ չէր նմանտպէս, մեր սպասածին հակառակ, պ. Աբելեանը Կարլոսի դերում: Ալն, ինչ կամեցել է ասել Շիլլերը Կարլի անձնաւորութեամբ, նա անկարող եղաւ կատարեալ կերպով արտապատել Շիլլերի Կարլոսը մի մարմնացած և կրակոտ բողոք է ճանապարհից չեղւած մարդկութեան դէմ, մի կարող անձնաւորութիւն, որ, չանուն գաղափարի, մաքառում է չարիքի հետ սրով և հրով, որի կուրծքը ալեկոծւում է զգացումների առատութիւնից, որի խիստ քննադատութիւնից չէ խուսափում ոչ բարձր պաշտօնեան, ոչ գիտնականը, ոչ քարոզիչը, ոչ հոգեւորականը: Ի՞նչ էր պ. Աբելեանի Կարլոսը—մի աղնիւ, մտածող, քաջ և խելօք երիտասարդ, և ոչ աւելի մի մազի չալի: Յանկալի տալաւորութիւն գործելու համար պ. Աբելեանին պակասում էր ազատ և անկախ մտքի հպարտութիւն, հոգու վեհութիւն և, որ գլխաւորն է, բարձր, խորը զգացմունք:

Լաւ չէին կատարում նաև երկրորդական դերերը:

Ամալիային (տ. Սաֆրազեան) չէր չալողում արտապատել ոչ միայն խորին արհամարանք դէպի Ֆրանցը, ալ նոյն իսկ համարակ ատեւութիւն: Հերմանը կարծես ակամաջ էր կատարում իւր դերը և ինքն էլ չէր

հաւատում իւր ասածներին: Աւազակալին խումբը սակաւամարդ էր և զուրկ կենդանութիւնից: Նա պիտի լինէր առելի աշխուժ, առելի զւարթ: Ան ընկերներ, երբ աւազակները մի բան էին ասում ամենքը միաբերան, օրինակ, «կեցցէ մեր պետը», բեմի վերաջ լուում էին միայն կցկտուր ձայներ, որոնք գեղեցիկ ամբողջութեան տպաւորութիւն չէին գործում: Կապիտի ղէպքում ձայները պէտք է չարմարեցրած լինին աշխուժ, որ կարողանան թէ կենդանութիւն տալ բեմին և թէ ակտորի լինել հանդիսականների համար: Յանկալի է, որ մեր չարգելի գերասանները նեղութիւն քաշէին ուշադրութիւն դարձնել աչք հանգամանքի վերաջ և աշխատէին կատարելագործել միաբերան բացականչութիւնները:

ԼՆԻՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ:

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ս Ե Ի Ե Ա Ն Ի

VI.

Նկաւ բարիկենդանը, բոլորեցաւ 1895—96 թատերաշրջանը: Հաջորդաբարձեան խումբը հաշար մի արգելքների հանդիպելով պատուով հասցրուց գործը իւր վախճանին: Հոկտեմբերից սկսած մինչև նոյեմբեր ամսի համարեա վերջը ընկերութեան նկատմանը սոյնպիսի նեղ դրութեան հասաւ, որ թէ խմբի անդամներից և թէ մասնաւոր անհատներ կարծում էին թէ ընկերութիւնը մօտ է իւր քաղքալման: Հեռւից ու մօտիկից շատ աչքեր կալին աչդ գոյութեան պաշարին հանդիսատես: Բաւց կռիւր—թէն զուահատական—աչնու ամենաչնիւ մղում էր ամենաչն եռանդով՝ մի կարգ մարդոց դէմ, որոնք ընկերութեան գործունէութեան օրից գուշակել էին նրա մօտալուտ քաղքալումը, թէ լրագրական հրատարակութիւնների դէմ՝ որոնք մասամբ կոտորում էին ընկերութեան վարկը. հասարակութեան դէմ՝ որը շատ սառն արեամբ էր վերաբերում դէպի աչդպիսի համակրելի քալը. հաւոց բարեգործական ընկերութիւնների դէմ՝ որոնցից մէկը հաջ ներկաւցումները թողած իւրաքանչիւր ներկաւցուման համար մօտ 500 ռուբլու պատկառելի գումարով օպէրայի ներկաւցումներ վարձեց, և վերջապէս թատրոնի աչնպիսի ներկաւցուցիչների դէմ՝ որոնցից մէկը ոմն Թ., պատահաբար 93—94 թ. թատր. Մասնաժողի անդամ դառնալով սպառնացել էր դերասաններին—

—Նթէ գործերը վատ գնան՝ ձեզ լագոգաղ պիտի զրկեմ իմ ազգիների խաղողը քաղելու.

Այս բոլորի դէմ էր խմբի կռիւր. մի փոքր համակրութիւն հասարակութեան կողմից—և կաղթութիւնը տարւած էր:

Խումբը, մասամբ թատրոնի ելեքտրական լուսի խանգարելուն և մասամբ էլ իւր նիւթականը բարւոքելու համար հոկտեմբերի կէսին ուղեւորեց Բագու 4 օրւալ ընթացքում երկու ներկայացումն տալով՝ «Աւարադի աստղագէտը» և «Բարեգործութեան ղիմակի տակ»։ Չնայելով որ թէ խումբը և թէ երկու նոր պիեսները ինքն ըստ ինքեան հետաքրքիր էին, բայց նաւթալին քաղաքի բնակիչները նոյն ցուրտ ընդունելութիւնը ցուց տւեցին գծադղ դերասաններին։ Ծախսերը հանած, ալդ երկու ներկայացումներից մնաց 10 բուբլի արդիւնք։ Խումբը գլխիկոր և չուսահատ Թիֆլիս վերադարձաւ իւր գործը շարունակելու։

Հոկտեմբեր ամսում կատարեց վրաց գրող Երիստովի 50-ամեալ գրական գործունէութեան լոբելիանը, իսկ լոնւարի սկզբներին տօնեց ուսաց խմբերի անտըրպոլընեօր Ֆորկատիի 25-ամեալ բնական գործունէութիւնը։ Հալ դերասանական ընկերութիւնը երկու հանդէսներին էլ մասնակցեց օրւալ հերոսներին ընծաւելով դափնեալ պսակ և ուղերձ՝ հալ լեզուով Բացի սրանցից դարձեալ լոնւար ամսին վրացի դերասան և գրող Գունիայի նպաստին ընկերութիւնը գրելու շքեղ առարկաներ մատուցեց նպաստաւորեալին՝ շատ գործերում խմբին օժանդակած լինելու սլատճառով։

Նոյեմբերի 28-ին Թիֆլիսում, մոռացած վիճակում վախճանեցաւ թատրոնական նախկին գործիչներից մէկը՝ Միքաէլ Պատկանեան։ Հանգուցեալը Թիֆլիսի հալական թատրոնի հիմնադիրներից մէկն է եղել, և աշխատել թէ իւր գործունէութեամբ և թէ իւր գրչով նպաստելու գործի բարգաւաճմանը։ Միջոցը ներելիս հանգուցեալի կենսագրութեան մասին կ'աշխատենք ընթերցողներին տալ մի քանի մանրամասնութիւններ։

Յունւարի սկզբներին Պետերբուրգից Թիֆլիս վերադարձաւ պ. Յակոբ Օհանեան, որ իրան ներկելու է հալ բեմին։ Նրիտասարդ սլարոնը իւր ուսման ընթացքը Թիֆլիսի գիմնազիալում աւարտելուց լետոյ ուղևորւել է Պետերբուրգ և պրոֆէսոր Ֆէդոտովի դրամատիկական մասնաւոր կուրսերը անցիլ, իբր ամպլուա իրան որոշելով դրամատիք «սիրահար»-ի գերբեր։ Պ. Օհանեանի արտաքինը շատ համակրելի է, առողջանութիւնը պարզ և մաքուր, միևնույն ժամանակ հմուտ հալ լեզւին։ Աներկբալ ենք որ հալ դերասանները գրկաբաց պիտի ընդունեն նորան և ամեն կերպ խրախուսեն նրա առաջին քալերը մայրենի բեմի վերալ։ Պր. Օհանեանը հալ բեմի վերալ բռնելու է կոչւած մի տեղ, որ տարիների ընթացքում բաց է մնացած։

կարծեմ աւելորդ չի լինի լինել պիէսների ահն շարքը, որ 95—96 թատերաշրջանում սեպտ. 10-ից սկսելով խումբը անընդհատ ներկայացրեց մինչև լունւարի վերջը:

1. «Ղարաբաղի աստղագէտը», պատմական իրողութիւն 5 արարւածով և վեց պատկերով. Ջուբովի դրածքից բեմի լարմարեցրին Ա. Սարգարեան և Վրուր:

2. «Դոկտոր Շտոկման», դրամա 5 արար. հեղ. Հ. Իբսէնի. թարգմանութիւն Ս. Հախումեանի:

3. «Բաղդասար աղբար», կատակերգ. 3 արարւածով հեղ. Յ. Պարոնեանի. բեմի լարմարեցրին Ա. Սարգարեան և Վրուր «Ճարահատեալ դերասան» կատակ. 1 արարւածով թարգմ. Դաւիթ Տէր-Գաւթեանց:

4. «Ժան Բողրի» դրամա 4 արար. հեղ. Վաբրիի. թարգմ. Ֆէլիքս. «Վարձու կին» հեղ. Ալէքսանդրովի. թարգմ. Վրուրի:

5. «Բարեգործական դիմակի տակ» դրամա 5 արար. հեղ. Էմին Տէր-Գրիգորեանի:

6. «Սամէլ» պատմական ողբերգութիւն 4 արար. հեղ. Հէքլմեանի «Էս էլ քի մոցիքլութիւն» կատակ. 1 արար. հեղ. Մ. Տէր-Գրիգորեանցի:

7. «Ակամալ բժիշկ» կատակ. 3 արար. հեղ. Մոլիէրի. թարգմ. Մ. Ա.—«Օսկան Պետրովիչը դժողքում». հեղ. Գ. Սունդուկեանցի. (Ի նպաստ Դ. Տէր-Գաւթեանցի):

8. «Հրէուհի» դրամա 5 արար. հեղ. Հալէպի. թարգմ. Ն. Արէշեանի:

9. «Աղահը» կատակերգ. 5 արար. հեղ. Մոլիէրի. թարգմ. Վրուրի «Առաջարկութիւն» կատակ. 1 արար. հեղ. Չէխովի. թարգմ. Աւետեանի. (Ի նպաստ Ա. Վրուրի և Յ. Ստեփանեանի):

10. «Բաղդասար աղբար». (Բ. անգամ. լոգոստ Թիֆլիսի հալ հրատարակչական ընկերութեան):

11. «Ասլան բալասի» դրամա 4 արար. և 5 պատկերով. Խ. Աբովեանի «Վէրք Հալաստանի» գրածքից փոխադրեց Ա. Սարգարեան (Ի նպաստ Սարգարեանի և Մատինեանի):

12. «Միալ հաշիւ» կատակ. 4 արարւածով. հեղ. Ա. Երիցեանի. «Օր թաճալու քէփը» կատակ. 1 արար. հեղ. Սարգարեանի (Ի նպաստ տ. Փառանձէմի և Աւետեանի):

13. «Պէպո» կատակ. 3 արար. հեղ. Գ. Սունդուկեանցի. (մասնակցութեամբ Չմէկեան ամուսինների և օր. Վարդուհու. Ի նպաստ Հալուհեաց Բարեգործ. ընկերութեան):

14. «Արշակ Բ» ողբերգ. 5 արար. հեղ. Մ. Պէշիկթաշեանի:

15. «Ժան Բողրի» (Բ. անգամ):

16. «Պարիզի շրջմուլի տղա», հեղինակ. Բալարի և Վարդէնքուրդի. թարգմ. Գ. Փրիգոնեանի.—«Փաստաբանի մօտ» կատակ. 1 արար. հեղին. Գունիալի. թարգմ. Դ. Տէր-Գաւթեանցի:

17. «Ասլան բալասի» (բ. անգամ):

18. «Աւաղակներ» հեղ. Շիլլէրի. թարգմ. փ. վարդանեանցի. (աչո ներկայացման համար չատկապէս հրաւիրած Սաֆրազեան ամուսինների մասնակցութեամբ):

19. «Օթէլլօ» հեղ. Շէքսպիրի. (ի նպաստ Յ. Աբէլեանի):

20. «Ղարաբաղի ասողագէտը» (բ. անգամ):

21. «Երևանդ Բ.» ողբերգութիւն 5 արարածով հեղ. Ալիսանեանի. «Պէտիօի տկճուրը» կատակ. 1 արար. հեղ. Մ. Տէր-Գրիգորեանցի. (ի չլատակ Ս. վարդանանց, վերջին ներկայացումն):

Ահա այն բաւականի հետաքրքիր ղեկերտուարը, որը այս թատերաշրջանին ներկայացրեց հալ ղերասանական առաջին ընկերութիւնը. Զուրկ չէ հետաքրքրութիւնից և իւրաքանչիւր ներկայացման նիւթական արդիւնքը և ընկերութեան տոացած զուտ շահը որ առաջ ենք բերելու «Մուրճ»-ի չաջորդ համարում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգլիան արտաքին դժարութիւնների մէջ: — Բոլզարիա:

Հետաքրքրական դրութեան մէջ դառնեց Անգլիան՝ երբ նա յանկարծ իրեն բռնաւ տեսաւ երեք արտաքին քաղաքական խնդիրներով, որոնցից ամեն մինում նա իւր դէմ տեսաւ առաջնակարգ պետութիւններ. և այդ նամանաւանդ պիտի զգալի լինէր Անգլիայի համար՝ որ Վենեցուէրեան սահմանադժիւ Տրանսուալի ¹⁾ խնդիրները առաջ եկան, երբ Անգլիան արդէն պարտութիւն էր կրել Քիւրքիայում՝ հայկական խնդրի մէջ: Վենեցուէլի աննշան խնդրում նա անսպասելի կերպով իւր դէմը տեսաւ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, ուր հանրապետութեան նախագահ Կլիւքլէնդ, յանուն Մոնրօի սկզբունքի, պատերազմով սպառնաց Անգլիային, եթէ սա չկամենայ սահմանադժի խնդիրը միջնորդ-

¹⁾ Տրանսուալի հանրապետութեան հիմնադրութեան պատմութիւնը հետեւեալն է: Հարաւային Աֆրիկայում կալ անգլիական մի մեծ դաղթաւալը՝ Կապլանդիա, ուր կալին կալաւածատէրեր նաև հոլանդական ծագումից (բօէրներ), որոնք նահապետական կեանքով էին ապրում: Տփգո՛հ լինելով անգլիական վարչութիւնից՝ 1835 թ-ին նոքա դուրս եկան ալդ տեղից և հարևան երկրում հիմնեցին Օրանժեան անկախ պետութիւն, որը սակայն նոյնպէս չուտով ենթարկեց անգլիական իշխանութեան: Այն ժամանակ նոքա նաև ալդտեղից հեռացան և զորա հարևանութեամբ հիմնեցին Տրանսուալիան հանրապետութիւնը 1852 թ-ին, որը անգլիացոց դէմ վարած չամառ կռիւներից չետոյ և անգլիացիներից 1877 թ. նւաճելուց չետոյ՝ իւր անկախութիւնը ձեռք բերեց դաշնադրութեամբ 22 մարտի 1881 թ., և 3 օգոստ. 1881 թ. ընդունելով անգլիական գերիշխանութիւնը (արտաքին գործերի համար): Այդ դաշինքը ապա փոխարինեց Լոնդոնեան դաշինքով 27 փետր. 1884 թ., ուր Անգլիան ճանաչեց պաշտօնապէս «Հարաւային-աֆրիկեան հան-

դատարանով լուծել, այլ ուղենար վենեցուէլայի դէմ պատերազմով լուծել, չենւելով իւր ոյժի վրայ: Թէ պատերազմ կը լինէր Միացեալ-Նահանգների և Անգլիայի միջև այդ խնդրի առիթով—դորան լուրջ կերպով չէր կարելի հաւատալ, ինչքան էլ որ պատերազմական էին ամերիկացոց արտայայտութիւնները: Եւ իրօք որ վրդովմունքը շուտով հանգստացաւ. Անգլիան շտապեց խոստովանել որ նա ընդունում է Մոնրօի սկզբունքը, (որով արգելւում է եւրոպական պետութիւններին միջամտել ամերիկական անկախ պետութիւնների գործերի մէջ), և որ Անգլիան միայն իւր իրաւունքն է ուզում հաստատել վիճելի սահմանադրի վրայ: Բայց իսկապէս եթէ թոյլ տրւի որ սահմանադրի խնդիրների համար եւրոպական մի պետութիւն պատերազմ մղի որ և է ամերիկական անկախ պետութեան հետ, ինչով կարելի է երաշխաւորել որ ուժեղ եւրոպական պետութիւնը շարունակ կամ յաճախ վէճէր չի չարուցանիլ աւելի թոյլ ամերիկական պետութիւնների հետ. և դորանով չէ որ ուժեղ եւրոպական պետութիւնները՝ վիճելի խնդիրների պատճառով՝ կարող են ազդեցութիւն ձեռք բերել նոյն հանրապետութիւնների ներքին և արտաքին գործերի վրայ, և ուրեմն շարունակ միջամտել ուրիշների գործերում ¹⁾: (Ման. չաջորդ երեսում):

Զնայած որ Անգլիայում մարկիզ Սալսբուրիի և Չեմբերլէն մինիստրների մէջ մի փոքր տարբերութիւն կայ Մոնրօի սկզբունքի վերաբերմամբ, քանի որ առաջինը կարծես անպայման չի ընդունում այդ սկզբունքը, և այլ ժամանակներ թերեւ վէճը աւելի երկար տւէր, բայց Անգլիան ներկայ թուէր շատ արագ զնաց զիջողութիւնների շաւղով, որովհետեւ միաժամանակ նա դէմ պիտի տունէր նաեւ այլ արտաքին քաղաքական դժարութիւններին թէ Թիւրքիայում և թէ Աֆրիկայում: Տրանսապլի խնդրում, որ մի փոքրիկ հանրապետութիւն է (Նոլլանդական գաղթականների) և

րապետութիւն» անունը, վերապահելով իրեն Անգլիային 7000 ի իրաւունքը միջազգային դաշնադրութիւնների համար: Տրանսապլի տարածութիւնն է 291,890 քառակուսի կիլոմէտր (համեմատութեան համար ասենք որ Անդրկովկասն ունի աւելի պակաս՝ այն է 222,625 քառ. կիլոմէտր, կամ մօտ 200,000 քառակ. վերստ): Բնակիչների թիւն է 375,000, որից 75,000 սպիտակներ (եւրոպական ծագումով), մնացածը սևեր:

որի սահմանը չանկարծակի ներս մտաւ Զեմսոն մի գունդ զօրքով՝ ջեղախոխութիւն կատարելու մտքով, չնայած որ պաշտօնական Անգլիան խառը չէր դործում, այդ նոյն Անգլիան իւր գէմ տեսաւ Վերմանիային, ուր կայսր Վիլհելմ II անկյացոյնի սպառնական գիրք բռնեց Անգլիայի գէմ իւր հեռագրով Տրանսուալի հանրապետութեան նախագահ Կրիզգերին, որով նա Վերմանիայի պաշտպանութիւնն էր խոստանում՝ ճանաչելով Տրանսուալը Անգլիայից բոլորովին անկախ պետութիւն ¹⁾, Անգլիայի համար վիրաւորական խօսքերով: Փոթորիկեց Անգլիան Վերմանիայի գէմ, չարաքերութիւնները լարեցին՝ ոչ ի հարկէ պատերազմական մտքով, որ

1) ԱՆԴԼԻԱՅԻ և ԱՄԵՐԻԿԱՅԻ ԾՈՎԱՅԻՆ ՈՅԺԵՐԸ, ՎԵՆԵՂՈՒՆԷԼԱՅԻ և ԱՆԳԼԻԱՅԻ ՎԷՃԻ առիթով հիւսիսային Ամերիկայի բռնած խիստ դիրքը Անգլիայի գէմ, որից կարելի էր պատերազմ սպառնել, տեղիք տեց համեմատել Անգլիայի և Հիւսիսային Ամերիկայի նաւերի համեմատական ուժերը: Ամերիկական Scientific American լսւթ թերթը հետեւեալ տեղեկութիւնը հրատարակեց:

Անգլիան ունի Միաց. Նահանգն. ունին

Զրահաւոր նաւեր		
I, II և III կարգերի	65 հատ	12 հատ
Պարունակութիւն	621.280 տակառ	81.404 տակառ
Յաժառօրակներ	143 հատ	51 հատ
(Երրորդ նաւեր, պաշտպանւած չարձակումից)		
Պարունակութիւն	536.725 »	99.421 »
Նաւահարներ	166 »	10 »
(տորպիլ)		
Հակամուսիւթներ	62 »	—
(կոնտր-տորթիլ)		
Առեւտրական նոսեր,		
որոնք կարող են պա-		
տերազմական դառնալ	26 »	4 »

Զրահաւոր նաւերի մէջ հաշւած են նաեւ աջակիւթ, որոնք մի ժամում $7\frac{1}{2}$ հանգուցից աւելի պակաս արագութիւն ունեն (համեմատարադները անում են մի ժամում 17—20 հանգուց), բայց անգլիական զրահաւորների տառջին և երրորդ կարգին պատկանողները սրարշաւ են քան ամերիկացոյցը, որոնց միայն երկրորդ կարգին պատկանողները աւելի սրարշաւ են:

գրեթէ անհնարին կը լինէր Գերմանիայի և Անգլիայի միջև, բայց այն մտքով, որ այդ հակառակութիւնը այսուհետև իրեն զգացնել պիտի տայ ամեն այլ խնդիրներում, ուր այդ երկու ազգերի շահերը միասին կը հանդիպեն: Ինչ վերաբերում է Տրանսաալին, խնդիրը այն պատճառով վճռած է զեռ ևս, որ Անգլիայի կառավարութիւնը, պախարակելով հանգերձ Զեմսոնի արարքը, աշխատում է Տրանսաալում բարեփոխութիւններ մտցնել՝ հանրապետութեան սահմանադրութեան փոփոխմամբ, որով երկրի օրէնսդրութեան մէջ ձայն պիտի ունենան ոչ միայն բնիկ քօւրները (հոլլանդական նախկին զաղթականները և հանրապետութիւնը հիմնողները) այլ և օտարները այն հիման վրայ, որ դոքա շատ բազմաթիւ են և պետական տուրքերի ամենամեծ մասը վճարողները այդ ձայն չունեցող օտարներն են (զլխաւորապէս անգլիացիք, բայց կան նաև գերմանացիք և այլք):

Տրանսաալի կառավարութիւնը դերի բանեց Զեմսոնին և յանձնեց Անգլիայի կառավարութեան, որը Լոնդոն է բերել տւած նորան, որպէս Լոնդոն էր կոչել Զեմսոնին մեղսակից Վապլանդիայի նահանգապետ Ռոդսին, որը Աֆրիկայում նոյնպիսի հռչակաւոր հիմնարկող է պետութիւնների, ինչպէս անցեալ դարում անգլիացի Հատինդոն էր Հնդկաստանում: Ռոդսը կարճ միջոցից յետոյ Լոնդոնից ճանապարհ զցւեց իւր պաշտօնատեղին, իսկ Զեմսոնը պիտի ենթարկւի դատաստանի, որին մեծ լարւածութեամբ սպասում է թէ Եւրոպան և թէ մանաւանդ Անգլիան, ուր կարծիքների մի մեծ մասը հակւած է նորա մէջ ոչ թէ մի աւաղակ (Ֆլիբուստէր) այլ հերոս տեսնելու, ինչպէս որ այդ հռչակեց Անգլիայի դափնեաշ պսակի արժանացած բանաստեղծ պալատական Ասկւիտը:

Միևնոյն ժամանակ զաղթաւայրերի ազդեցիկ մինիստր Զեմբերլէն հրաւիրել է Տրանսաալի հանրապետութեան նախագահ Կրիւզէրին գալ Լոնդոն. բայց պատասխանի չապաղումը ենթադրել է ցալիս որ իսկոյն չպատասխանելովը և կամ չգալովը՝ նա կամեում է Անգլիային կատարելապէս անկախ լինելը ցոյց տալ՝ ի մեծ ուրախութիւն Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ի, և հակառակ անգլիացոց սպասելիքի, որոնք դաշինքներով Անգլիայի գերիշխանութիւնը հաստատւած են համարում:

Այսպիսով ուրեմն Անգլիան՝ իւր և ամենքի համար անսուս-
տելի կերպով միաժամանակ երեք կողմից նեղն ընկաւ աջնուկս, որ
ստիպւած էր արդէն լրջօրէն մտածելու իւր զիրքի մասին եւրո-
պական պետութիւնների մէջ: Անգլիան միշտ խոցս է տւել որ և է
եւրոպական պետութեան հետ նիզակակցութեան կապերով կապուելու,
մտածելով որ աւելի ձեռնտու է որ իւր ձեռքերը ազատ պահի:
Բայց ահա միաժամանակ նա կանգնած է ընդդէմ Միջին Եւրո-
պայի երբեակ նիզակակցութեան անդամ Գերմանիայի և ընդդէմ
ռուս-Ֆրանսիական նիզակակցութեան, որը յաջողութիւններ ձեռք
բերեց անցեալ տարի չին-եապոնական զործերում և այժմ՝ նաև
Թիւրքիայում, ուր անգլիական զերիշխող ազդեցութիւնը տեղ տւեց
ռուսական ազդեցութեան:

Այդ հանգամանքները հլօր կերպով ազդեցին Անգլիայի վրայ՝
որ ստիպւած է մի կողմից դաշնակիցներ գտնելու և միւս կողմից
գէթ Ֆրանսիայի հետ աւելի բարեկամական յարաբերութիւններ
ունենալու, աստարէզից հեռացնելով այդ երկուսի մէջ եղած վի-
ճելի խնդիրները: Անգլիան շտապեց, յունւարին, մեծ զիջողու-
թիւններ անելու Ֆրանսիայի օգտին Սիամի խնդրում, որպէս նաև
առարկութիւններ չարաւ Մադագասկար կղզին Ֆրանսիական կալ-
ւածք՝ դարձնելու դէմ, յուսալով որ այդ ամենով Ֆրանսիան կը մեղ-
մացնի իւր պահանջները Եգիպտոսի նկատմամբ, որը ամենամեծ
վիճելի խնդիրն է Անգլիայի և Ֆրանսիայի միջև, քանի որ վեր-
ջինս միշտ պահանջել է որ անգլիացիք դուրս գան Եգիպտոսից,
իրենց տւած խոստման համաձայն: Ֆրանսիան, անգոր լինելով զի-
նու ոյժով Անգլիացիներին դուրս վաճելու Եգիպտոսից, այժմ,
Անգլիայի նեղն ընկած ժամանակ, փորձում է իւր փափաղին հաս-
նել կողմնակի կերպով—զրդելով Թիւրքիային Եգիպտոսի խնդիրը
մէջ տեղ դնել: Փետրւարի սկիզբները հեռագիրը հաղորդեց թէ
Սուլթանը, որը Եգիպտոսի անւանական զերիշխանն է համարւում,
դիմել է Անգլիային Եգիպտոսի խնդիրը լուծելու առաջարկութիւ-
նով, ապահովացնելով Անգլիայի և Հնդկաստանի հաղորդակցու-
թիւնը Սուէզի ջրանցքի միջով: Հաստատ կարելի է ասել, սակայն
որ Անգլիան, ներկայ պարագաներում, իւր ամբողջ ոյժը գործ պի-
տի դնի Եգիպտոսը ձեռքից բաց չթողնելու, և հաւանական է կար-

ծել որ, չնայած Անգլիայի համար միջազգային աննպաստ հանգամանքներին, նա կը մնայ եզրիպոստում:

Իբր դաշնակիցներ՝ իւր տիեզերական դիրքը պահպանելու համար, Անգլիան հաւանական է որ Եւրոպայում կ'աշխատի բարեկամութիւն հաստատել Իտալիայի հետ, հեռաւոր Ստիպում՝ Եպպոնիայի հետ. և որ նա մտածում է նոյն իսկ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների հետ քաղաքական բարեկամութիւն հաստատել, այդ երեւաց Զեմբերլէնի և Բալթիքի ճառերից, որոնցից քաղածքներ կը գտնեն ընթերցողները ներկայ համարի ժամանակակից տեսութեան մէջ՝ հայկական խնդրի առիթով:

Իսկ այն որ ամենից յուսալին է, սեփական ոյժը՝ Անգլիան արդէն վճռել է իւր պատերազմական նաւերի թիւը զգալապէս աւելցնել՝ չլինալելով դորա համար հարկւրաւոր միլիոններ: Եւ այդ պատրաստութիւններին նա արդէն իսկ այժմեանից ձեռնամուխ է եղել տենդային եռանդով:

Բոլզարիա: Փետրւարի 2-ին կատարեց Բոլզարիայի կաթոլիկ իշխան Ֆերդինանդի զահաժառանգորդ՝ Բորիսի՝ մկրտութիւնը ուղղափառ կրօնի ծէսով, որ և բոլզարացոց ազգային կրօնն է: Շնորհիւ դորան հաշտութիւն կ'այացաւ Ռուսիայի և Բոլզարիայի միջև, որոնց դիպլոմատիական յարաբերութիւնները ութ տարի է որ խզւած էին նաև այն պատճառով, որ Ստամբուլով (այժմ հանգուցեալ) ամենակարող միջնորդը փոխել տւեց սահմանադրութեան այն յոդւածը, որով ուղղափառութիւնը պարտաւորիւ պիտի լինէր Բոլզարիայի զահաժառանգների համար: Այդ յօդւածը փոխելու նըպատակը միմիայն այն էր, որ կաթոլիկ Աթուրգեան պրինց Ֆերդինանդ կարող լինէր ամուսնանալ Պարմեան կաթոլիկ իշխանուհու հետ, որի համաձայնութիւնը այդ յօդւածի փոփոխութիւնից էր կախւած: Թէ իշխանի ընտրութիւնը և թէ յօդւածի փոփոխութիւնը կատարւած լինելով հակառակ Ռուսիայի կամքին՝ իշխան Ֆերդինանդը նաև սուլթանից և այլ մեծ պետութիւններից չէր ճանաչում որպէս Բոլզարիայի օրինական իշխան: Այժմ, երբ Ռուսիան հաշտեց՝ զահաժառանգ Բորիսի ուղղափառութեան ծէսով մկրտելու առիթով:

սուլթանը (Բոլգարիացի անւանական գերիշխանը) հեշտութեամբ ձեռք բերեց թէ Ռուսիացի և թէ միւս մեծ պետութիւնների համաձայնութիւնը Ֆերդինանդին Բոլգարիացի օրինական իշխան ճանաչելու, չնայած որ իշխանի ընտրութիւնը հակաօրինական էր ճանաչւած: Ստամբուլովի ձգտումն ուրեմն կատարելապէս իրագործւած է այժմ, մանաւանդ որ Ստամբուլովը ոչինչ դէմ չէր ունենալ և նոյն իսկ շատ ուրախ կը լինէր եթէ Ֆերդինանդը իւր սեփական կամքով իւր որդուն մկրտել տար ազգային կրօնի ծէսով:

Ն.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ: Զնայած որ «Մուրճ»-ի բաժանորդագրութիւնը ներկայ 1896 թ. դերազանցում է բոլոր նախկին եօթ տարիներէն, բայց մի հանգամանք ստիպում է մեզ փոխառութեան դիմել: Այդ հանգամանքը նախկին տարիների դեֆիցիտներով դոյացած պարտքերն են, որոնք ամենամեծ մասամբ արդէն ծածկւած են, բայց որոնց համեմատապէս փոքրիկ մասը, սակայն, դեռ ևս ծանրացած է խմբագրութեան վրայ: Կանոնաւորել այդ մնացած պարտքի հատուցումը—ահա այն հոգսը, որ մեզ հարկադրում է փոխառութեան դիմել: Այդ փոխառութիւնը միակ կարող է մեզ հնարաւորութիւն տալ՝ ժամանակը լրացող վճարումների համար շտանանալ ամսագրի ներկայ տարւոյ բիւջէի վրայ: Փոխառութեան գումարը խոշոր չլինելով (2500 ռուբլի) մենք յոյս ունինք որ «Մուրճ»-ին համակրող աւելի ունեւորանձինք չեն զլանալ փոխառութեանը մասնակցել, առնւազն հարիւրական (100) ռուբլիով իւրաքանչիւրը՝ փետրւարին 1898 թւականի կրկին յետ ստանալու պայմանով: Մասնակցել ցանկացողները թող բարեհաճեն դիմել խմբագրութեանը, որը կը տայ ամեն մի փոխառուին պարտամուրհակ երկու տարի ժամանակամիջոցով, խմբագիր-հրատարակչի ստորագրութեամբ: «ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ սորանով իւր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր հեռաւոր անձերին, որոնք «Մուրճ»-ի ութամեաց տարեշրջանը թեակոխելու առթիւ շնորհաւորել էին մեզ նամակով, հեռագրով և թէ ալցեստոսով:

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԻՆԵՐԻՆ: Ի նկատի ունենալով որ այս տարի անցեալներում սովորական եղածից շատ աւելի նոր բաժանորդներ են գրեց «Մուրճ»-ը խմբագրութիւնը ձեռնամուխ եղաւ Շանթի շարունակելի

մնացած «Պուրսեցիներ» վէպի սկիզբը նորից տպել տալու, որ և ձրի կ'ուղարկւի բոլոր նոր բաժանորդներին՝ ամսագրիս երկրորդ համարի հետ միասին: Այդ արտատպւածքը կը լինի սակաւն ոչ «Մուրճ»-ի, այլ աւելի փոքր ֆորմատով, ալնպէս, ինչպէս ալդ վեպը լոյս է տեսնելու առանձին գրքով:

«ԷԿՍՄՈՆՏ» ԴՐԱՄԱՆ: Ներկայ համարից սկսում է տպագրւել «Մուրճ»-ում Գեօթէի նշանաւոր գործքերից մէկը՝ Էգմոնտ դրաման, որի նիւթն է նիդերլանդացի ապստամբութիւնը Իսպանիայի բռնակալութեան դէմ: Թարգմանութիւնը կատարել է պ. Հմայեակ Մատիսեան և խմբագրութեան կողմից ենթարկւել մանրակրկիտ համեմատութեան գերմաներէն բնագրի հետ:

ՄՈՒՐՃ ՆԻՒՐՈՂՆԵՐ (Սկիզբը տես «Մուրճ»-ի 1895 թ. № 12): ¹¹⁾ Բալխանի արհեստաւորներ Մկ. Էհրամճեան, Մին. Մկրտչեան, Արշ. Դաւթեանց, Մարտ. Աղամալեան, Երեմ. Դանիէլեան, Կար. Բոզեան և Ալ. Սարուխանեան—Թիֆլիսի մի խումբ բանւորներին: ¹²⁾ Օր. Շուշանիկ Տէր-Նիկողոսեան—Երևանի մօտ փարաքար գիւղի դպրոցին (խմբ. ընտրութեամբ): ¹³⁾ Պ. Խաչատուր Շահազարեան արհեստաւոր—Դիլիջանի հայոց եկեղ. ծխ. դպրոցին: ¹⁴⁾ Պ. Մնացական խումբ—Հայոց Բարեգ. Ընկ. Շուշալ ճիւղի գրադարան-ընթերցարանին:—¹⁵⁾ Պ. Յովհ. Գրիգ. Զուրաբեանց—Ղըզլարի հայոց դպրոցներին:—¹⁶⁾ Պ. Ալեքանդր Սերբերկեան—Սղեմիի հայոց դպրոցները գրադարանին:—¹⁷⁾ Օր. Սեօգեան—Նուխալ գաւառի ճալէթ գիւղի հայոց եկ. ծխ. դպրոցին:—¹⁸⁾ Պ. Յովհան. Սարեան—Լադոզիսի հայոց եկ. ծխ. դպրոցին:

«ԵՐԱՋ ՍՐԵՐ» վէպը (մեր աշխատակից Շանթի) որը իրաւամբ իւր վրայ ընթերցող հասարակութեան ուշքը դարձրեց, արդէն որոշւած է արտատպութեամբ առանձին հատորով լոյս ընծայելու «Մուրճ»-ի հրատարակութեամբ: Որպէս լիշում կը լինին մեր ընթերցողները՝ Թիֆլիսի հայոց Հրատարակչական Ընկերութիւնը անցեալ ամարի որոշել էր ալդ վէպը «Մուրճ»-ից արտատպելու համաձայնութեամբ հեղինակի Ընկերութեան կողմից առաջարկւած պալմանները, սակաւն, ... քան զունելի եղան հեղինակի համար:

ՓԱԿԻԱԾ ՀԱՅՈՅ ԵԿ.-ԾԽ. ԴՊՐՈՑՆԵՐ. Կառավարութիւնը, հիմնւելով 6 նոյեմբ. 1884 թ. կանոնադրութեան վրայ, հաջորդական դպրոցների սեծադուն մասն չճանաչելով իբր եկեղեցական-ծխական, պահանջել էր ղեկավարներին 1895 թ. որ ալգալիսիները չանձնեն ժողովրդական կրթութեան միջնարդութեանը, իբր հասարակական և

ոչ եկեղեցական գումարներով պահող դպրոցներ: Այդ պահանջի հետևանքն եղաւ այդ դպրոցների փակումը:

Առթից օդուում հնք լիշեցնելու, որ «Մուրճ» 1894 թւականի № 7—8-ում տպւած էր երկրիս կառավարչապետի շրջաբերականը, որով հրամայուում էր նահանգապետներին տեղեկութիւններ հաւաքել հալոց եկեղ-ծիսակ. դպրոցների պահպանման աղբիւրների մասին՝ թէ արդեօք եկեղեցական, թէ հասարակական գումարներով են նոքա պահպանուում:

ՌՈՒՍԱՅ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ ենթարկեց հետեւալ փոփոխութեան. մինխտրութեան կառավարիչ Գորեմըիկին նշանակեց մինխտր: Մինխտրի օգնականներ (որ առաջ Սրպեազինը և զենեիալ Շեքեկճն էին, որոնցից վերջինը նաև ժանդարմների զօրաբաժնի ղեկավարն էր)՝ նշանակեցին գաղտնի խորհրդականներ Դոլգովօ-Սաբուրովը և Նեկլիւզովը: Այդ երկու օգնականները մէջ գործերը քաժանաժ են ալսպէս. Դոլգովօ-Սաբուրովին լանձնաժ են ընդհանուր գործերի դեպարտամէնտը և ղեմսուօլի մասը. Նեկլիւզովին լանձնաժ են պետական ոստիկանութեան դեպարտամէնտը, ժանդարմների առանձին զօրաբաժինը, բժշկական դեպարտամէնտը, ալսադաւան հողեր գործերի դեպարտամէնտը, կենտրոնական վիճակագրական լանձնաժողովը և ալն: Նեկլիւզովը քաջ լրաւարան է:

ՌՈՒՍԱՅ ԿԱՔՍԵՐ ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ հանգէսին հրաւրաժների մէջ զրոնըւում են Վեհ. Կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ և Աստրախանի հալոց թեմի առաջնորդ Արիստակէս արքեպ. Սեդրակեան:

Շահի ներկայացուցիչը լինելու է նորա եղբարը՝ պրինց Աբրաւ-Միրզա-Մուկարա:

Ֆրանսիալի ներկայացուցիչը լինելու է՝ ֆրանսիական գլխաւոր շտաբի պետ գեներալ Բուաղէօֆր:

ՌԷՕՆՏԳԷՆԻ ԳԻԻՏՐ: Նշանաւոր գիւտ է արւաժ նորերս լուսանկարչութեան մէջ, որը կոչւած է մեծամեն ծառարութիւններ մատուցանելու գիտութեան ալ և ալ ճիւղերին և մանաւանդ դորժադրական գիտութիւններին ինչպիսիք են բժշկականութիւնը, մեխանիկան և ալն: Գերմանիալի Վիւրցբուրգ քաղաքի համալսարանի պրոֆեսոր Բէժուպէնը գտել է նոր ճառագալթ ներ, որոնց գոյութեան շնորհիւ կարելի է լինում լուսանկարել թաքնւած առարկաներ. օրինակ, լուսանկարում է կենդանի մարդու ձեռքի ոսկորալքը, տալով ձեռքի ոսկրալին անատոմիալի բոլոր մանրամասնութիւնները, լուսանկարեց կողմնացուցը, չնալաժ որ մետաղեալ բարակ ծածկոցով անտեսանիլի էր դարձրած. լուսանկարեց մի առարկալ, որի առջեւ

դրւած էր մի հաստ գիրք. չաջողւում է լուսանկարել դռան մէջ զանաւոր փականքը. և ալլն և ալլն:

Անտեսանելի առարկաները լուսանկարելու տեխնիկան աչնքան պարզ է որ Ռէօնտդէնի հաղորդած ընդհանուր տեղեկութիւնների հիման վրայ նոյն տեսակ փորձեր արեցին Պարիզում, Վիեննայում և ալլ քաղաքներում—և ամեն տեղ ալլ փորձերը չաջողեցին: 'Իեր կատարողը մի առանձին տեսակի' միջից օղը հանած՝ խողովակ է, որով մինչ ալլ մանրատ ճառագալթներ կարելի է լինում ուղղել դէպի լուսանկարչական «պողիտիւ» կոչւած ապակին, որի վրայ նկարում է անտեսանելի առարկան: Բայց թէ ալլ ինչ նոր ճառագալթներ են և թէ ինչու ալլ խողովակի միջոցով անտեսանելի առարկան լուսանկարում է,—ալլ խնդիրը դեռ ևս պարզւած չէ և դեռ ևս մնում է դադարի ք նոյն իսկ պրոֆ. Ռէօնտդէնի համար, որը ալլ գիտը արել է միայն պատահմամբ, առանց գիտական որ և է թէօրիակի կամ փորձերի վրայ հիմնելու, առանց դիտաւորութեան ալլ գիւտն անելու:

Բժիշկները ամենից առաջ փորձեցին օգտուել նոր գիտելից. Վիեննայում պրոֆ. Մոգետիցը իւր երկու հիւանդների վրայ փորձ անելով՝ գտաւ մէկի ձեռքի մէջ մտած գնտակի տեղը, և միւսի ոտի կմախքի ալլանդակւած տեղը: Բերլինում մի քանի տարի առաջ մէկի ձեռքի մէջ ապակու կտոր էր մտել, որը չէր չաջողւում հանել և քանի գնում աչնքան խորն էր գնում: Ալլ մի նոր լուսանկարչութեամբ չաջողեց գտնել ապակու կտորի տեղը ձեռքի մասնքների մէջ:

Տեխնիկայի մէջ թէ ինչ նշանաւոր գործադրութիւն է սպասւում ալլ նոր գիտելից, երևում է նրանից որ նոր լուսանկարչութեամբ չաջողել է տեսնել մետաղների կազմութեան անմիատեսողութիւնը, նոցա մէջ գտնուող խորչերը և ալլն, որով ուրեմն կարելի կը լինի ճանաչել խողովակների, հրացանների բերանների, ռէլսերի, անիւների և ալլն որպիսութիւնը:

Նոր գիտը սակաւն դեռ չի տալիս չաջող հետեանքներ ամեն դէպքում, բայց արդէն փորձեր են անում կատարելագործել, և ըստ երևութին չաջողում է:

Այսպէս, օրինակ, արդէն չաջողել է կատարելագործելով նոր սիստէմը՝ ստանալ նկարներ ոչ միայն ոսկորների, ալլ և մասնքների Յդի կնոջ լուսանկարելով գերմանացի պրոֆեսոր Աիսլինգ կարողացել է ստանալ նկարը արդունդի միջ գտնող երեխայի, որի մարմնի մասերը արդէն կազմակերպւած էին:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ չարունակում են

կատարել թէ Կ. Պոլսում և թէ ալ տեղեր, զանազան մարմինների միջոցով: Անդլիալում կատարած հանգանակութիւնը մինչև զեկտեմբեր ամիսը տւել էր շուրջ 250.000 ֆրանկ: Իզմիրեան Պատրիարքի կազմած լանձնաժողովը իւր մի քանի օրուայ գոյութեամբ՝ չաջողեց ուղարկել Փոքր-Ասիայի հալ կարօտեալներին 50.000 զոյգ շորեր, շատ վերմակներ, մի քանի հարկւր քսակ ալիւր, ուտելիղէն և ածուխ: Նոր տարուայ առիթով Ս. Պատրիարքի խորհրդով հարուստ թէ աղքատ՝ մրգեր գնելու փոխարէն ալս անգամ նւէրներ տրին, որից գոյացաւ 25.000 լիրա (աւելի քան 200.000 հազար ռ.): Նւիրաբերութիւնները շարունակուում են: Պատրիարքը օղնութիւններ ստանում է նաև ալ տեղերից, Եղիպտոսի մասնախումբը (Ալեքսանդրիաում) լուծարի 10-ին ուղարկեց Ս. Պատրիարքին առաջին անգամ 500 ոսկի և հանգանակութիւնը շարունակուում է: Առկա-կան տնտեսներ կան, սրտեք խոշոր նւիրաբերութիւններ են ածում. օրինակ՝ Եղիպտոսի Նուբար-վաշան և իւր կինը անցեալ տարւանից սկսած նւիրել են մօտ 1000 ոսկի: Ստանում են նւէրներ նաև հալ-կաթովիների պատրիարք Աղարեան, որպէս նաև ամերիկական բողոքական միսիոնարները:

ՂԵԻՈՆԴ ԵՊ. ՇԻՇՄԱՆԵԱՆ, որ Երզնքումի հալոց թեմի առաջնորդն էր և որը քաջօրէն իւր տեղում մնաց 1895 թւականի սոսկալի տարին՝ թիւրքաց կառավարութեան պահանջմամբ Կ. Պոլիս բերւեց լուծարին, որտեղից նա ճանապարհ պիտի ընկնի Երուսաղէմ՝ իւր աքսորատեղին:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ, Տաճկա-Հալոց կորովի հրապարակախօսը, Հայրենիք լրագրի գլխաւոր ճեղսիկը, զեկա. 25-ին ենթարկեց սպանութեան անաջող փորձի: Այդ լուրը լուծարի սկիզբները Կ. Պոլսի մեր թղթակցից առնելով՝ ձենք փութացինք մեր թղթակցին խնդրել՝ բերանացի կերպով պ. Արքիարեանին մեր ցաւակցութիւնը և միաժամանակ մեր խորին սրտմտութիւնը արտաբայտել կատարած անիւրաւութեան համար:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆՉԱԿՈՒՄ: Յունարի 25-ից սկսած Կանձակ նահանգական քաղաքում առաջին անգամ կատարւեցին քաղաքային խնդրավարութեան համար ընտրութիւններ, 1892 թւականի քաղաքային կանոնադրութեան համաձայն: Ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցողների թիւն էր 862 հոգի, որոնցից 507 քրիստոնեայ (475-ը հալ), 356 մահմեդական. բաց մասնակցեցին առաջին օրը 233 քրիստոնեայ, 2-րդ օրը 192, 3-րդ օրը 205, 4-րդ օրը 105, մինչդեռ մահմեդականները մասնակցեցին զրեթէ ամենքը: Շնորհիւ զորան ընտրւեցին թուրքեր 46, քրիստո-

Նեաներ 27 (26-ը հալ և 1 ռուս), Կանոնադրութեան համաձայն մահմեդականները պիտի կազմէին ընտրածներէ ի մասը. բայց նոր հրահանգով թուլատրւած է նոցա ունենալ ձայնաւորներ ի ամբողջ թւի (72-ի) կէսը (36): Այդ պատճառով ընտրած թուրքերից մի քանիսը պիտի տեղի տան քրիստոնեաներին, որոնց համար լրացուցիչ ընտրութիւններ պիտի կատարուին: Ընտրութեան դէմ քաղաքացիներից բողոք է մատուցւած Ներքին գործերի մինիստրին:

ԴՐԻԱԳԱՒՈՐ ՄԱՐԿԱՅԻ ՆՈՐ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԻՒՆ: Ֆինանսների մինիստրի նոր կարգադրութեան համաձայն՝ աշուհատի պէտք է 5 կոպէկանոց դրագաւոր մարկաներ (գերբովալա մարկա) կպցնեն Նաև խմբագրութիւններից տրւած բաժանորդագրական անդորրադրերի վրայ:

ԲԺՇԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ: Կալսերական կովկասեան բժշկական ընկերութիւնը վճռել է ներկայ տարւանից հրատարակել միեւնոյն բովանդակութեամբ երեք թիւ՝ ռուսերէն, հայերէն և վրացերէն լեզուներով: Թերթերի խմբագրութիւնը կ'ընտրուի ընկերութիւնից: Հայերէնի համար ընտրւած են բժ. Վ. Արծրունի և բժ. Ա. Բաբալեան:

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՈՒՆԻ: Ներկայ տարւոյ սկզբից միաժամանակ մի քանի օրաթերթեր թիֆլիսում պահանջ դրացին փոփոխութիւնների կնթարկւելու՝ ընթերցողներին աւելի շատ նիւթ տալու զիտաւորութեամբ. ռուսերէն «Նովոե Աբադենիս» և «Տիֆլիսսկի լիստոյ», որոնք հրատարակւում են ամեն օր, մեծացրին ֆորմատը, հաւատարեցնելով ալ «Աւակազ» լրագրի մեծութեան: Հայերէն թերթերից «Մշակ» լրագիրը, որ իւր վերակսումից ի վեր 1886 թւականին հրատարակւում էր չաբաթը և բ. ք. անգամ, ներկայ 1896 թւականից, համաձայն նորա խմբագրութեան չափադրութեան՝ պիտի հրատարակէր չաբաթը չորս անգամ: Սակայն չորս անգամ հրատարակելու համար կառավարութեանը տւած խնդիրքը մերժւեց: Գորա փոխարէն նա լոյս է տեսնում չաբաթը թէև երեք անգամ, բայց երկու անգամը թերթ ու կէս մեծութեամբ:

Ռուսաց «Աւակազ» կիսապաշտօնական օրաթերթը չուն. 5-ին տօնեց իւր գոյութեան 50-ամեակը, հիմնւած լինելով 1845 թւականին, երկրիս նախկին փոքարեալ Սեմէօն Միխայլիւովիչ Վարոնցովի նախաձեռնութեամբ: Այդ օրը «Աւակազ»-ի խմբագրութեան սենեակում կատարեց զոհացողական մաղթանք Ներկայութեամբ երկրիս կառավարչապետի պաշտօնակատար կոմս Տատիշչևի և ալ բարձր աստիճանաւորների, դրաքննական ատեանի անդամների, ըողոր տեղական խմբագրութիւնների ներկայացուցիչների և թերթի նախկին ու ներկայ աշխատակիցների: Մաղթանքից Վատիշչևի նախաձեռնաւարկեց:

ՄԱՄՈՒԼԸ ԲԱՔԻՈՒՄ՝ Հազիւ թէ որ և է մեծ քաղաք երկրագնշիւ վրայ ալնքան վատ վիճակ ունենալ իւր տեղական մամուլի նկատմամբ, ինչպէս Բաքու քաղաքը: Ազդեղ իբր թէ հրատարակում են երեք ամենօրեայ, մի շաբաթական և մի ամսական թերթեր (բոլորն էլ ռուսերէն լեզուով), բաց իրօք միակ տարածւած տեղական լրագիրը «Ասսպիլ» օրաթերթն է, որը, հրատարակելով նաւթի և մեծ հարստութեան քաղաքում, կապեր ունենալը մամուլի բարձր կոչումների հետ իւր համար պարտաւոր չի համարում, և ամբողջ ձեռքը նորա կապաւառու խմբագիր-հրատարակիչը ուղղած է կարելի ինչ չափ շատ հարստանալու վրա՝ չափաւարութիւնների միջոցով: Բաց դու թեւեք այս թերթերը, օգտւելով դորա համար «Տիֆլիսսկի Լիստոկ» թիֆլիսի լրագրի թղթակցի տեղեկութիւններից, Բաքում հրատարակում են 1) «Ասսպիլ», որ տպւում է օրական 1.706—1.800 օրինակ. 2) «Բաքու առևտրա-արդիւնաբերական թերթ», որ տպւում է օրական 15—20 (քսան) օրինակ. 3) «Բաքու չափ տարարութիւններ», տպւում է օրական մինչ 100 օրինակ (և չափաւարութիւններ չունի). 4) «Նահանգական լրագիր (գուբերնսկիյա վեդոմոստի)», որը տպւում է շաբաթ մի անգամ և որի բաժանորդները միայն Նահանգի պաշտօնական տեղերն են. 5) «Աշխատութիւններ (Труды) կապերական ռուսաց տեխնիկական ընկերութեան Բաքու բաժանմունքի», տպւում է ամսական 350 օրինակ. (ամառաւ երեք ամիսները չի հրատարակում):

Աւերմն Ասսպիլ-ն միակ տարածւած թերթն է Բաքու թերթերից. քաղաքում նորա բաժանորդների թիւն է շուրջ 600, շրջակայքում (Սուքաղաք, Բալախանա և Բալուխ հրանդան) մինչ 150, ալ տեղերում մինչ 450 բաժանորդ. հատով էլ ծախւում է 400 օրինակ: Բաց ալ թերթը մեծ քանակութեամբ չափաւարութիւններ է տպում. և նորա նիւթական կացութիւնը շատ չափող պաշտանների մէջ է: Աւ ալ թերթը հէնց ալ բանին էլ ձգտում է միայն: «Ասսպիլ» լրագիրը մասնաւոր սեփականութիւն է, գոյութիւն ունի 15 տարի և ահա 7-րդ տարին է որ տրւած նորա ալժման խմբագիր Ն. Ա. Սոկոլինսկուն: Նոյն ալ Սոկոլինսկին սեփականատէրն է վերը չիւլած «Բաքու առևտրական-արդիւնաբերական թերթ»-ի (ռուսերէն), որը ներկայումս բաժանորդ չունի և հրատարակում է օրական 15—20 օրինակ՝ միմիայն հրատարակութեան իրաւունքը չկորցնելու համար. ալ թերթը բաղկացած է միմիայն ինչ չափաւարութիւններից:

ԱՍՏԳ.-ԱՐՆԻՆԵԱՆ Թերթը, որի մասին ծանուցումն տւիք Մուրճի անցեալ դեկտեմբերի համարում, սկսեց լուս տեսնել թեհրանում: Այն

Թերահաւատութիւնը, որ մենք չարտնայինք անցեալ անգամ, ալժմ արգարացում է մեր ստացած № 1-ով: Երևոյթը անշուշտ չափ ընտրոշ է: Առաջին երեսը բռնում է «Մեր շնորհակալութիւնքը» խորագրով մի լողւած կամ լինչպէս կ'ուզէք անւանեցէք: Տողերը ամփոփւած են կրկնակի շրջանակների մէջ, արեւելեան ճաշակով: Մենք կարծում էինք, ալդ սողերով խմբագրութիւնը իւր շնորհակալութիւնները պիտի չալտնէ իւր ստացած շնորհաւորանքներին: Եւ սխալւեցինք: Խմբագրութիւնը ալդ սողերով իրան ներկայացնում է իբր ընտրւած պատգամաւոր բոլոր Պարսկահայերից՝ Նորին Մեծութիւն Շահին ներկայացնելու համար Պարսկա-Հալերի երախտագիտական ջերմ զգացմունքները: Սա ուրիշ տեղ մի չլսւած-չտեսնւած ֆիկցիա է, որը միայն պարսկական ճաշակը կարող է բնական զըտնել: Կարդացէք ալս սողերը:

«Լինչպէս որ մինչև ալժմ (ալսպէս է սկսում խօսքը Աստղ-Արեւելեան) Պարսկահայն ոչ մի առիթ չէ փախցրել չալտնելու հրատարակաւ իւր երախտագիտութեան սրտաբուղի մաղթանքը առ իրան խնամող և սլահպանող բարեխնամ և լուսամիտ կառավարութիւնը, նոյնպէս և ալսօր Նոր տարու առիթով և Աստղ-Արեւելեանի հրատարակութեամբ յայտնում է մեր բերանով իւր անհուն շնորհակալութեան ալն բոլոր վառ զգացումներն, որք լցնում են իւր սիրտը և մեր ձեռքով Նորին Կալս, Վահագնութեան Արեւակնալիալ Շահի գահի առաջ է դնում իւր ի սրտէ հպատակութեան ամենաջերմ հաւատարմքն, ինչդրելով երկար և դերերջանիկ տարիներ» և ալն:

Սոքա խօսքեր են, որ կարծես խլւած են աղղալին պատգամաւորի, մի աղգապետի, կաթողիկոսի կամ պատրիարքի բերանից: Ո՞ւմ սուած իրաւունքով սակալն...

Իւր առաջնորդողում «Մեր ուղղութիւնը» խորագրով թերթը խոստանում է լուրջ լինել, միանգամայն մոռանալով որ մեծամեծ չիմարութիւններ և խաւարամտութիւն ևս կարելի է քարոզել կատարելապէս լուրջ ձեռով: Ոչ մի ուղղութիւն չեն պարզում նաև ալսպիսի խօսքեր թէ «անհատական հաշիւներից դուրս է ալս թերթն» և նման բառեր: Եւ միթէ ուղղութիւն է ցոյց տալիս ալն հանգամանքը, որ թերթը ունի խմբագրական ժողով, առանց որի հաւանութեան լօղւածներ չպիտի սպւեն? Եւ ալդ թիւ խմբագրական վճռող ժողով է, որի անդամները պէտք է դալտնի մնան ընթերցող հասարակութիւնից, քանի որ թերթի մէջ տալւած չեն նոյցա անունները, հետևապէս առանց որ որոշ մարդիկ իրենց վրալ վերցնեն դրւածների պատասխանատուութիւնը: Հրապարակի վրալ գործող թերթերը չպիտի ծածկւեն աներևութ մարմինների կտու:

Եթէ նոր լրագրի առաջնորդող-լաւարարութեան մէջ կազմէ թուլ ակնարկ ուղղութեան մասին, ալն էլ հետեւեալն է. «Խմբագրութիւնը ամեն մի խնդրում միջին մի ընթացք պիտի բռնէ»: Իբր ուղղութեան լաւարար—ալդ խօսքերը շատ ողորմելի են: Եւ համեմատեցէք այդ ողորմելի խօսքերը նոյն № 1-ում տպւած «Ո՞վ է ճշմարիտը» չօղւածի հետ, ուր աււած է. «Բարին, լաւը և դեղեցիկը պաշտպանել ու համար էթէ պէտք լինի կտրատել մացառներն և փշերի ամբողջ անտառներ, չենք վարանել. աղբակը կացինը, մկրատը և սղոցը կը գործեն մեր ձեռքում խիստ անողորմ, խիստ անգութ, և ալապէս էլ պիտի չառաջանան մեր քաղերը դէպի մեր կեանքի արմատական վերանորոգութիւնը»: Միջին ճանապարհ—և՛ կացին ու արմատական վերանորոգութիւն... Եւ ալդ չօղւածին կից, ուր շատ բնորոշ և ուշադրաւ դէպքեր են պատմւած պարսկահալոց գիւղական քահանաների մասին, դորա հետ կից, ասում ենք, տպւած է մի ալ գրւածք, որ ոչ ալ և ինչ է եթէ ոչ բառերի մի կոչաւ «Գժւարութիւններ» խորագրով: Եւ արդարեւ «գժւարութիւններ» պիտի չալթել ալդ անառակալ գրւածքը դեռ միայն կարողալ շարունակելու համար: Ներքին լուրերում կալ մի լուր, որը ալժմեանից արդէն զգացնել է տալիս թէ թերթը առադապտում ինչ բաներով է տրամադիր զբաղւելու: «Հաստատ աղբիւրներից իմացանք», չալտում է թերթը, «ազգային Հակազեան վարժարանի Նախկին «ազատամիտ» հոգաբարձուներից մինը իւր որդին ալդ զպրօցից հանելով տարել չանձնել է կաթոլիկ տէրտէրներին»: Եւ գորան կցւած է մի սպառնալիք ալս ձեռով. «մենք այս անգամ չենք յայտնում անունը, ասում է թերթը, միայն քաղաքավարի կերպով խնդրում ենք որ սոնձնական կրքերին չդոնէ իւր անմեղ որդու ապագան» և ալն և ալն. և վերջը մի խորհուրդ, թէ ալդ անձը իւր որդուն չանձնէ դէթ մի կոչկակարի...»

«ԳԵՅԼԻ ՆԻՒՍ» ԼՐԱԳՐԻ ԹԻՍՆԱՄԱՆԻՐ: «ԳԵՅԼԻ ՆԻՒՍԸ» (որ բառացի նշանակում է ամենօրեալ լրագիր) չունալի Գ-ին տօնեց իւր գոյութեան չիսնամակը: Ալդ լրագիրը ալապէս ասած անգլիական պաշտոնական լիբերալիզմի գլխաւոր օրգանն է: Նորա առաջին խմբագիր-հրատարակիչն էր ամենքին չալտնի վիպասան հանգուցեալ Չարլս Գիկկենս, և առաջին աշխատակիցներից մէկն էր իւր ժամանակալ չալտնի հեւտոր, պուբլիցիստ և համալնքների ժողովի անդամ Վիլիամ Զոնսոն Ֆոքս, որը արշաւանք էր վարում ընդդմ ալն ժամանակ ամենամեծ ներքին խնդիրը կազմող օրէնքի դէմ հացահատիկների վերաբերեալ: Գեյլի Նիւսը իւր ուղղութիւնը ալապէս որոշեց առաջին համարում: «ԳԵՅԼԻ ՆԻՒՍԻ» պաշտպա-

Նաժ սկզբունքները կը լինին սկզբունքները առաջդիմութեան և կատարելագործութեան, լուսաւորութեան, քաղաքացիական և կրօնական ազատութեան և արդարացի օրէնսդրութեան: Այդ ալն սկզբունքներն են, որոնք խմբագրութեան կարծիքով, պատասխանում են ժամանակի առաջդիմական ոգուն, որոնց պահանջում են երկրի շահերը և որոնք նւիրագործում են արդարութեամբ, խելքով և փորձով: Եւ Դէլլի Նիւսը անչեղ հաւատարիմ մնաց այդ ժողովին:—Արտաքին քաղաքականութեան մէջ Դէլլի Նիւսը ընդհանրապէս հետնում էր անգլիական հասարակական կարծիքի մէջ տիրապետող հոսանքներին, բայց ուրիշ լրագիրներէրց աւելի եռանդով էր պաշտպանում մարդասիրութեան և ազատութեան գաղափարները միջազգային չարաքերութիւնների չըջանում և ուրիշ ազգերի վերաբերութեամբ: Յալտի է նորա բռնած դիրքը Բուլղարիայի վերաբերմամբ և վերջերքս էլ դէպի տաճկա-հայերը: Թալմս (ժամանակ) և Ստանդարտ (Դրօշակ) լրագիրները ողջունեցին չօքեւեարին և նոքա, մատնացուց անելով հայեացքների տարբերութիւնը, դովաբանեցին աղատամիտ լրագրի ծառայութիւնները, զրուտեղով ալն որ նա տոկուն կերպով պաշտպանում էր իւր գաղափարները կէս դար շարունակ:

ՅԱՐՁԱԿՄՈՒՆՔՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՎՐԱՅ ՌՈՒՍԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՄԷՋ: Դեռ ևս անցեալ տարւալ վերջին ամիսներին Պետերբուրգի մի շատ չափունի և տարածւած, բայց և ոչ նոյն չափով անարատ և չարգւած մի թերթ «Նովոյե Արեմիտ»-տպեց մի շարք չարձակողական չողւածներ կովկասի հայերի մասին, մեղադրելով սոցա սեպարատիստական ձգտումների մէջ, ալսինքն իրր թէ ալստեղի հայերը ունին ջոկնւելու քաղաքական միտումներ: Եւ ինչեր չասէք որ ալդ թերթի գրողները առաջ չբերին որպէս ապացուցներ իրենց ասածի. նոքա չխնայեցին նոյն իսկ հալոց աղգանուները վերջաւորութիւնները: Եւ առհասարակ ալդ չարձակումների բնաւորութիւնը ալնպէս էր, ինչպէս երբ մէկը որ գիտէ թէ ինչ էլ որ ասելու լինի միշտ անպատիժ պիտի մնալ և նոյն իսկ դովի իրր հալրենասէր—խօսելու լինի միւսի մասին, հաստատ գիտենալով որ վերջինս զուրկ է որ և է ինքնա-պաշտպանութեան միջոցից: Եւ ալդ պատճառով զոցա աչքում ամենազօրեղ հերքումներն անգամ ոչ մի զին չունին. կ'սպասեն և մի ուրիշ անգամ նորից կը կրկնեն, նոր չինծու ապացուցներ կը գտնեն, նորից իրենց արշաւանքը կ'սկսեն:

Ալդ թերթերի թւին միշտ պատկանել է և «Մոսկովսկիյա Վեդոմոստի» օրաթերթը: Դորա անդուստ լեղուն շատ ալաղաւանները,

դոցա մէջ և հալերի մասին՝ ամենքին չալտնի է։ Երկու տարի առաջ (տես, Մուրճ 1894 № 9) մենք առիթ ունեցանք մի փոքր երկարօրէն ծանօթացնելու մեր ընթերցողներին այդ թերթի վերաբերմունքի հետ դէպի կովկասեան հալերը։ Թէ ինչեր գրեց նա անցեալ 1895 թականին հալական խնդրի առիթով—այդ մենք կարենոր չհամարեցինք առաջ բերել մեր ամսագրում, որովհետև աչնքան ու աչնքան ալլ, աւելի հետաքրքրական և կարենոր նիւթեր կալին մեր ընթերցողների առաջը դնելու։ Բայց ահա նորերումս «Մոսկովսկիյեա Վեդոմոստի» լրագիրը (1896 թ. № 6) տպեց իւր կովկասեան մի նոր թղթակցի գրութիւնը հալերի մասին, «Գրուղին» (վրացի) ստորագրութեամբ, որի աչկարա նպատակն էր միաժամանակ թէ ուռններին և թէ վրացիներին գրգռել Հալերի դէմ, պնդելով թէ իբր հալերը սխտեմական կերպով աշխատում են վրացոյ եկեղեցիները, գերեզմանատները և հնութիւնները իւրացնել՝ վրացական արձանագրութիւնները ջնջելով և տեղը հալերէն գրել տալով, որպէս զի ալլալիսով հալերը հաստատեն նոցա հալական լինելը։ Եւ թղթակիցը, հալերին անւանելով նորադոն վանդալներ, աւելի վատթար քան Ղենկ-թեմուրները, հրաւիրում է կառավարչական շրջանների ուշադրութիւնը այդ (թղթակցի հնարած) հանգամանքի վրայ, թէչէ ալլալիսով շուտով կովկասում ուղղափառ եկեղեցիներ ալլես գրեթէ չեն մնալ, որովհետև Հալերը գրեթէ բոլորը չափաւորած կը լինին...

Մեզ հալերիս հարկաւոր է անշուշտ գիտնալ թէ նոցն իսկ Ռուսաստանի մալրաքաղաքներում պարբերաբար և որոշ թերթերում ինչեր են գրում մեր մասին։ Սակայն հալական մամուլի առաջին պարաքն է ոչ աչնքան ամեն անհեթեթութեան լուրջ պատասխան տալ, որքան մեր հալրենակիցներին ամրացնել ալս համոզմունքի մէջ, որ ալլալիսի չարձակմունքնի դեռ չատ կը լինին ապագայում և որ ոգով պիտի պատրաստ լինել դեռ աւելի վատթարները կարդալու և լսելու։ Միակ խորհուրդը որ մենք կարող ենք տալ, ալլալն է, որ ալլալիսի «վանդալական» չարձակումները լսելով՝ Հալերը երբէք չվհատեն և միշտ իմանան որ չխտակ ու ազնիւ աշխատանքը և ուղղամիտ վերաբերմունքը դէպի պատմական կեանքի չառաջացրած խնդիրները միշտ չաղթանակ կը տանեն չարամիտների խարդաւանքների վրայ, ինչ կարգի և պատկանեն նոքա։

Նոցն Մոսկովսկիյա Վեդոմոստի լրագրում նորերս տպեց նաև մի խմբադրական երկար յօդած ևս վրացոյ քաղաքական ուղղամտութեան և հալերի անուղղամտութեան մասին, որպէս նաև մի թղթակցութիւն (թերթի № 34) «Բաթումցի» (Բатумецъ) ստորագրութեամբ՝ ուր արդէն վրացին՝ մէջքը դէմ տաւ ուղղափառութեան,

ալօթինքն ռուսների իշխող կրօնին՝ ինչ լրբութիւններ ասէք՝ խօսում է հալի ազգալնութեան, կրօնի, լեզուի և հոգևորականութեան մասին: Գալ անգամ մենք կը ծանօթացնենք ալդ գրութիւններին հետ, որոնք հեռու են անմեղ բնաւորութիւնից: Գորա՝ ժամանակի նշանակներ են, որոնց մենք նշանակութիւն ենք տալիս:

ԿԱՐՈՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ: Մենք ստացանք Կ. Պոլսի մեր թղթակից պ. Խաչ-Պապեանից հետեւալ լուրերը, որի վրայ ընթերցողների ուշքն են դարձնում: «Հայաստանի ամեն կողմէն հասնող տխուր լուրերուն կը միանան նաև Եւրոպա գտնուող Պոլսեցի քանիմը համալսարանական ուսանողներուն՝ նիւթական տեսակէտով՝ խեղճութեան լուրերն ալ: Ու երբ ամէն տեղ քիչ շատ կարեկցութիւն և փութկոտութիւն կը գոռոցեն թշուառացած ընտանիքներու օգնելու համար, ոչ մէկը մըտքէն կ'անցնէ քան մըն ալ խեղճ ուսանողներուն համար ընել:

Պոլսի թերթերուն ու Մուրճի մէջ գրեցաւ թէ ևս որ քանի մը եռանդոտ երիտասարդներու նախաձեռնութեամբ «կարօտ ուսանողներու նպաստամատուց ընկերութիւն» մը պիտի հաստատուի, բայց աւելորդ է ըսել, ալս պարագաներուն մէջ ընկերութիւնը չկրցաւ կազմել, և եթէ գործել ուզէր, կառավարութեան կողմէ ինչքան դժարութիւններ չպիտի երևան գային՝ անոր առաջին քալին իսկ:

Մասնագիտութեան մը հետեւեալ համար Եւրոպա դիմող հայ ուսանողները հազարամէկ դժարութեամբ հազիւ թէ կը չաջողին իրենց ծախքերուն բաւող ամսական մը ապահովել. բայց բնաւ չէին կրնար երեւակայել թէ օրէն մէկը, Պոլսին մէջ տիրող դրամական տաղճապին պատճառով, իրենց ընդունած նպաստները պիտի դադարէին: Իրենց պաշտպանն և բը՝ ալեւալ առարկութիւններով, չեն ուզեր շարունակել սկսածնին. և հոս, որու սը դիմես, ոս պատառ խանն է որ կը ծամծմի:

—Տալով, միշտ տալով մենք ալ աղքատացանք. արդէն չա՛ս ալ չի կալ. արդեօք վաղը մեզի ով պիտի ուզէ փոխ տալ:

Երաք չունինք քննադատելու մեր հարուստներուն սառն անտարբերութիւնը տեսալի մը աննիւթ բարեգործութիւններու մասին, ուր իրենց անունը փառքի ցուքերով չպիտի խողտեցնէ ամենուն աչքերը. իրենց համար քալ ու կիր և կեղեցիկէն ու զպրոցէն զատ քարեգործութեան ուրիշ աստարէզ չի կալ, «թէ Աստու հաճելին և թէ մարդկան»: Բայց երբէք չխորհեցան ալդ չորս պատելուն մէջ, որ վարժարանի անունը կը կրեն, կեանք և ոգևորութիւն դնող եռանդոտ և կարող ուսուցիչներ պատրաստել:

Երբեք տխուր թրքաճալ մէկ հատ մանկավարժ մը իսկ ունեցած չենք: Մանկավարժութեան, ինչպէս նաև ալեւալ մասնագի-

տուժիւններու հետեւելու համար Եւրոպա երթալու իղէալն ունին հալ բարձրագոյն վարժարանէ ելլող աշակերտներէն շատերը. բայց արդէն գնացողներուն խեղճուկ վիճակը գիրենք ետ կը կեցնէ և կը սարսափեցնէ իսկ: Խոհեմութիւն չէ անշուշտ որ ալս պարագաներուն մէջ ասկէ ետքը հալ ուսանողներ գիմն Եւրոպա, երբ գնացողները անճրկած մնացեր են:

Պէտք էր անոնք ասանկ երեսի վրայ ձգել: Այս ուսանողներէն քանինքը մասնաւորապէս իբրեւ իրենց ազգին ներկայացուցիչները, երբ մէկ կողմէն համակրողներու խումբեր բոլորել կուտան իրենց շուրջը, երբ իրենց չաջողութեամբը փալլուն անունով կը վաստկին օտար հոգի վրայ, երբ միւս կողմէն ալ արդէն իրենց տեղն ունին մեր նոր գրականութիւնը մէջ և ապագային՝ ամեն կերպ օգտակար ըլլալու լոյս կը ներշնչեն մեզի, իրաւունք ունին, կարծենք, որ իրենց հալրենակիցները օգնեն իրենց նիւթապէս. և վաղն ալ ազգը իրաւունք պիտի ունենալ անշուշտ անոնցմէ շատ բան սպասելու:

Երբ մեր հարուստները, որ արդէն թիւով քիչ ալ են, անտրամադիր և անկարող կը ցուցնեն ինքզինքնին ձեռք երկնցնելու կարօտ ուսանողներուն, գէթ Ռուսահայերը, որոնց մէջ կը գտնուին ճշմարտապէս բարեբաւներ, չենք կարծեր որ անտարբեր մնալ ու պեն հարկ եղած անմիջական նպատակ հասցնելու ալս ուսանողներէն մասնաւորապէս երկուքին, որոնց մասին պարոն Արասխանեանց բերանացի տեղեկութիւններ պիտի հաղորդէ: Կամ առանձին անհատ մը կամ քանիմը անձ ընկերակցութեամբ որոշ գումար մը եթէ խօստանան կանոնաւորապէս ղրկել, գերադանցապէս օգտակար բարեգործութիւն մը ըրած պիտի ըլլան:

Տրած դրամը սակալն փոխ տրած պիտի ըլլայ, քանի որ ուսանողները, իրենց դառնալուն, առաջին անգամ պիտի խորհին իրենց պարտքերը վճարել: Սակալն դրամ փոխ տալով իսկ նորէն ճշմարտապէս մեծ և օգտակար բարեգործութիւն մը եղած պիտի ըլլա՞յ՝ ազատելով ուսանողները ամեն օր տառապելէ և նախատելէ: Մէկ կողմէն, համալսարանի վճարումները չարակուն համար, համալսարանէն հանելու սպառնալիք և անարգանք կարելի չէ որ չլուցնին, չլատին ամէն ոգևորութիւն և եռանդ:

Որոնք պիտի ուզեն անմիջական և անհրաժեշտ կերպով պէտք եղած նպատակները հասցնել՝ երկու ազնիւ և հալրենասէր երիտասարդներ տառապելէ փրկելով և միանգամա՛ն ազգին ալ օգտակար ծառայութիւն մը ընելով:

Ահա օգտակար գործ մը, եթէ կան մեծ և ազնիւ սրտեր, կարեկցող կարօտին: Եւ ինչ որ պէտք է ընել օր առաջ ընելու է:

Տեսնենք, մեր լոյսերը որքան պիտի արդարանան:

ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԹԻՖԼԻՍ—ԿԱՐՍ: Գործերը ալիքան առաջ են գնում, որ լուծիս ամսին պիտի կարողանան բանտը գնացքները ազատ շարժել Թիֆլիսից մինչ Սանաֆինի վանքը՝ 62 վերստ տարածութեամբ, որ և կազմում է երկաթուղու առաջին մասը:—Ներկայումս պատրաստութիւններ են տեսնում միջանցք (տոննէլ) անցկացնելու Ջաջուրեան զառիվերի միջով, Ալեքսանդրապոլի մօտ:

ՆԻԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ և ԿՏԱԿՆԵՐ: Ներկայ լուծարին վախճանած ալրին իսահակ զեներալ-մալորի Նունէ Եւանգուլեան (Թիֆլիս) կտակով թողել է տասը հազար (10.000) ռուբլի Ներսիսեան դպրանոցին, հետեալ կարգադրութեամբ: 1) Ամեն տարի մսիսի 75 ռուբլի ծննդեան և Ջատիկի մեռելոց օրերին կտակողի և իւր հանգուցեալ ամուսնու զերեգմանների վրայ: 2) Երեք տարին մի անգամ հրատարակել դասագրքեր հալոց եկեղեցական-ծխական դպրոցների համար, բաժանելով հրատարակութեան կէսը թէ Ռուսաստանի և թէ Ռուսաստանի ճանապարհներից դուրս եղած հալոց ծխական դպրոցների չքաւոր աշակերտներին ճիւղաբար, իսկ միւս կէսի վաճառումից զուլայած գումարը խաղացնել նոյն տոկոսներին, սրտեղից և հեղինակները պիտի ստանան վարձատրութիւն: 3) Մնացեալ տոկոսները գործածել դպրանոցի չքաւոր աշակերտների ուսման նպատակով:

Նոյն Նունէ Եւանգուլեան կտակել է Թիֆլիսի Հայուհնաց բարեգործ. ընկերութեան իւր տան ամբողջ կահաւորութիւնը՝ պալմանով որ Ընկերութիւնը կտակած իրեղենները վաճառելուց գուլացած գումարը գործադրէ բարեգործական նպատակով, Ընկերութեան վարչութեան բարեհալեցողութեամբ:

Բաքուաբնակ շուշեցի Նիկողայոս Կրասնիկեան կտակով թողել է 12.000 ռուբլի բարեգործական նպատակով, թողնելով ժառանգներին գումարի բաշխումը ըստ իրենց բարեհալեցողութեան:

Գրիգոր Զիւմբրիւլեան (Ղարասու-Բաղար, Ղրիմում), որ վախճանեց ներկայ լուծարին (նա անգաւակ էր և մօտ հարիւր վախճանեց ներկայ լուծարին (նա անգաւակ էր և մօտ հարիւր հազար ռուբլու տէր) կտակով թողել է 1) 2000 ռուբլի Ղարասու-Բաղար եկեղեցուն, նորա տոկոսիքով աղքատ աշակերտներ պահելու համար տեղական հալոց երկսեռ դպրոցներում: 2) 1000 ռուբլի երկսեռ դպրոցին, տոկոսիքը գործադրելու համար: 3) Իւր սեփական տունը և պարտէզը կնոջ մահից չեռու պիտի մնալ եկեղեցուն: 4) ամեն տարի 100 ռուբլի պիտի աղքատներին բաշխել:

Յունւարի 27-ին վախճանած Թիֆլիսաբնակ ազուլեցի մահատեսի Ստեփան Բաղդասարեան Գէորգեսնցի ժառանգները նւիրաբեւրեցին 10.000 ռ., որից 5000 ռուբլի հետեալ կերպ. 1) Վեհ.

կաթողիկոսին 1000 ռ., ²⁾ Հալոց Բարեգ. Ընկ. կողմատու 1000 ռ., ³⁾ Երեանի ճիւղին Հալոց Բար. Ընկ 300 ռ., ⁴⁾ Նուխալ ճիւղին Հ. Բար. Ընկ. 200 ռ. ⁵⁾ Թիֆլիսի Հալուհեաց Բար. Ընկ. 200 ռ., ⁶⁾ Թիֆլիսի կուրերի խնամատար կոմիտէտին 200 ռ., ⁷⁾ Մսուր Ընկ. մանկական հիւանդանոցին 100 ռ., ⁸⁾ Թիֆլիսի քահանաների գանձարանին 200 ռ., ⁹⁾ Երուսաղէմի հալոց վանքի պարտքերի հատուցման 300 ռ. ¹⁰⁾ Թիֆլիսի գիշերօթիկների ապաստանարանին 100 ռ., ¹¹⁾ Թիֆլիսի Ս Սուրբ Գեորգիի ձորի ճաշարանին 200 ռ., ¹²⁾ Վաղարշի գիւղի չքաւորներին 300 ռ., ¹³⁾ Ագուլիսի հասարակութեան չքաւոր ընտանիքներին 300 ռ. ¹⁴⁾ Ներսիսեան դպրանոցի չքաւոր աշակերտներին 200 ռ., ¹⁵⁾ Երեանի թեմ. դպրանոցի չքաւոր աշակերտներին 200 ռ., ¹⁶⁾ Թիֆլիսի Գեորգ-աղալի քարանոսարալի մշակներին 100 ռ., ¹⁷⁾ Եւեանի Գեորգեան քարանոսարալի մշակներին 100 ռ.:

Հանգ. Ստ. Գեորգեանցի ժառանգները մնացած 5000 ռուբլին որոշել են դրամազուլի կազմել՝ ամեն տարւաչ տոկոսները իբր պարգև կամ մրցանակ տալու լաւագոյն գրական աշխատութիւնների համար, որոնց նւթը կը լինի կամ Հալոց ներկայ տնտեսական կեանքը, կամ բեւեռութեան կամ մանկական: Գործի մանրամասնութիւնները, սակայն, դեռ վերջնականապէս չեն որոշւած:

ԿԱԼԻԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՎԷՃԵՐ ԴԱԶԱՅՈՒՄ. Եթէ տարիներից ի վեր Ղազարի գաւառի (Գանձակի նահանգ) հաչ և թուրք կալաւածատէրերը պիտական կալաւածների վարչութեան հետ սեփականութեան իրաւունքի վէճեր ունէին: Անցեալ դեկտեմբերի 30-ին Գանձակի նահանգական դատարանը իւր վերջնական վճիռը տւեց ալք վէճերի մասին լոգոստ կալաւածատէրերի, չարգելով հնութեան իրաւունքը:

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐԸ ԻՌԻՍԵՐԷՆ: Մուրճի աշխատակից պր. Ալեքսանդր Ծատուրեանի ոտանաւորներից երեքը (որ տպւած էին Մուրճում) երկացին Թիֆլիսի «Նովոյե Աբաղրէնի» օրաթերթում՝ շատ չափող թարգմանութեամբ իւրի վե ս ե լ ս վ ս կ ս ե, որի անունը լաւ փախսի է հաչ ընթերցող հասարակութեանը իւր տաղանդաւոր և շարունակ աշխատութիւնով ծանօթացնել ռուս հասարակութիւնը հակական նորագոյն գրականութեան հետ: Յիշւած ոտանաւորներից մէկը տպւեց Նովոյե Աբաղրէնիէի համարում առ 24-ն դեկտեմբերի 1895 թ., երկու միւսները (Երգ և Մետաղ) առ 28-ն յունւարի ներկայ 1896 թ.:

ԳԵՈՐԳ ԲԱՇԵՆԶԱՂԵԱՆ ներկայ ձեռնալ սեզոնին մասնակցեց «Գեղար-ւեստաւէրների Մոսկովեան ընկերութեան» աշտպէս կոչւած «պար-

բերական զեղարևոտահանդէսին», ալի ընկերութեան հրաւերքով: Մեր նկարիչը հանդէս է դնում աշխատել «Հալկական գիւղ գիշեր ժամանակ» և «Արարատ սար» բաւական մեծ նկարները: Հանդէսը, սկսեց զեկտ. 19-ին և տեւելու է մինչ փետրուարի 5-ը: Բացի ալի, նա մասնակցում է «Ս. Պետերբուրգի զեղարևոտագէտների ընկերութեան» հրաւերքով նորա կազմելիք հանդէսին, որ պիտի բացւի փետր. 4-ին: Ալի հանդէսը մօտ մի ամիս Պետերբուրգում մնալուց ցետով՝ կը տեղափոխուի Մոսկա և Ռուսիայի ալ մեծ քաղաքներ: Ալի վերջին հանդէսին պ. Բաշինջաղեանը պատրաստել է չորս նկար, աջն է «Կազբէկ սարը արեւածաղին», «Լուսնի ծագումը Ախուրեան գետի վրայ», «Ալազանի հովիտը փոթորկից առաջ» և «Կովկասեան գիշեր»:

ԿԱՍՈՒՄՈՎԻ ԸՆԹԵՐՅԱՐԱՆԸ ՂՈՒԲԱՅՈՒՄ: Յունւարի 14-ին Ղուբալում բացուեց քաղաքային հպրոցի մահմեդական կրօնի դաստառու Միրզա Մահմէդ-Ալի Կասումովի ընթերցարանը, ներկայութեամբ ժողովրդի, գաւառական վարչութեան և ալ հաստատութիւնների պաշտօնեաների: Անդամներ գրեած են առ ալժամ 30 հոգի: Ստացում են ներկայումս 21 պարբերական հրատարակութիւն, որոնցից 13 պարսկերէն և տաճկերէն, 7—ռուսերէն, 1-ը—նալերէն: Տեղական ժողովարանը (կլուբ) խոստացել է իւր կողմից ևս օգնել ընթերցարանին գրքերով:

Յիշեցնենք, սակայն, որ Ղուբալում արդէն վաղուց գոյութիւն ունի հալոց հպրոցի ընթերցարանը:

ՄՈՒՂԱՆԻ ԳԱՇՏԸ ՆԻ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԸ: Մուղանի ընդարձակ դաշտը (Բաքուի նահանգ, Զաւադի գաւառ) շարունակում է գրաւել Ռուսաստանի խորքերից դաղթողների ուշադրութիւնը: Մի քանի ժամանակ առաջ հաստատուեցին Պետրոպոլսկի գիւղում (Նախկին Զեւադ) գաղթողների մի խանի խմբեր. և ալժամ 200 ուրիշ ընտանիքներ նահանգապետին խնդիրք են տւել 6.000 զեսենտին իրենց չատկացնելու համար՝ դաշտի հարաւարեւմտեան անկիւնում, Չախըրլի գիւղի հողերին կից: Նոր գաղթածները պարտաւորում են Չախըրլի գիւղի առուն լաւնացնել և շարունակել իրենց տրւելիք հողերը ջրելու համար: Նահանգապետը բարեհաճութեամբ է ընդունել գաղթականների խնդիրքը և առաջիկայ կարգադրել է որ ձեռնհաս պաշտօնեաները հետադոտեն խնդրած տեղը՝ տնտեսական և առողջապահական անսակէտներից: Բաց թէ ինչ չարչարանքներ են կրել ալի գաղթականները Ռուսաստանից մինչ մեր կողմերը հաստատուելը, ալի երևում է հետեւալից. Բաթումի ճանապարհը խանգարած լինելու պատճառով՝ նոքա բռնել են Պետրոպոլսկի ուղին ապա-

Բաքու և ղեկտեմբերի սկզբներին հասել Զեւատ (Պետրոպաւովսկոյէ գիւղը), ուր և մնացել են իրենց հալընակից մալորոսների մօտ մինչև որ Մուղանի զաշտի հիւանդութեան կողմից վատ ամիսները անցնեն: Տեղ հասնելուց 2—3 շաբաթ անց՝ սկսեցին տենդի (տիֆ) հիւանդութիւններ, և ալժմ տիֆով հիւանդների թիւը նոցա մէջ հասնում է 250-ի: Մահւան զէպքեր մինչ ալժմ միայն երեքն է եղել, բայց վախ կալ որ շատերը զոհ գնան:

ՌՈՒՍՆԵՐԷՆ ԳԻՐԲ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ, Ի Նկատի առնելով Ռուսաց մալաքաղաքների մի քանի կարևոր թերթերի չարձակողական և մի շարք ալ թերթերի շատ թէ քիչ անտարբեր կամ թույլ վերաբերմունքը զէպի տաճկահայկական խնդիրը նկատի առնելով ուրախութեամբ պիտի ողջունել մօտերքսմա լոյս տեսած մի ուղտերէն գիրք որ կրում է այս խորագիրը՝ Հալերի դրոթիւնը Թիւրքիայում մինչև պետութիւնների միջամտութիւնը 1895 թ-ին, ճառերը Գլադստոնի, լօղամաները Ռուէն փէմէնի, Մակ-Կոլի, Գրինի, Գիլլանի, Գիւելի և ուրիշների: Յառաջաբանով պրոֆեսոր Կոմարովսկու և պատկերով Վ. Գլադստոնի և Կաթողիկոս Մկրտիչ Ի-ի Պետերբուրգ, զինն է 1 ուղեքի:

Այդ գիրքը, մօտ լինելով սպառման, պատրաստուում է երկրորդ տպագրութեան համար:

ՁԻԷՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ: Քութայիսի Նահանգում և նորան ուսմանակից զաւառներում մեծ քանակութեամբ ձիւներ եկան, որպիսին հները չեն վիշում: Քամին այդ ձիւներից բլրակներ է դռացնում աչքքան մեծ ու տեղական, որ երկաթուղու երթևեկութիւնը Թիֆլիսի և Քաթումի միջև նորից խանգարուց: Կաշարաններ կան, որոնք աչքաէս շրջապատում են ձիւնի մեծ կոտորով, որ ծառալողները ոտիպած են լինում նույն իսկ քաղցի նեղութիւն կրել:

† ԱՄԲՐՈՒԱՋ ԹՈՍԱ, մէկը ներկայիս նշանաւոր ներկայացուցիչներից երաժշտական աշխարհում, վախճանեց: Նա թէ երաժշտական հեղինակ էր (կոմպոզիտոր) և թէ երաժշտական մանկավարժ: 1871 թւականից ի վեր նա էր վերադասուչ (չիրեկսոր) Պարիզի երաժշտական դպրոցի (կոնսերւատորիա): Նորա բաղմաթիւ օպերային գրածքներից ամենապատմին են Միւնիոն (1866 թ.) և Համլէտ (1868 թ.) օպերաները, որոնք նորա անունը համաշխարհային դարձրին՝ առանց սակաւն հասցնելու իւր հալընակից և ժամանակակից (ալժմ հանդուցեալ) Գուեօ'ի անւան բարձրութեանը: Վախճանեց 85 տարեկան հասակում:

† ՇԱՌԼ ՖԼՈՐԷ. — Յունւարի 8-ին վախճանեց Շառլ Ֆլորէ, որը ներ-

կալ Ֆրանսիական երրորդ հանրապետութեան կարեւորագոյն հիմնադիրներէն մէկն էր: Մինչև 1870 թւականը նա չափնի էր որպէս տաղանդաւոր փաստարան, որը ասպարէզ էր դուրս եկել զանազան քաղաքական պրոպեաններէ մէջ: 1870-ից չեռու ընտրուեց պատգամաւորներէ ժողովի անդամ, Նշանակեց Սէնի (Պարիզի) նահանգապետ, ապա պատգամաւորներէ ժողովի նախագահ, մինիստր-նախագահ, ապա նորից պատգամ. ժողովի նախագահ և սենատոր: Նա պատկանում էր արմատական կուսակցութեան: Բուլանժական շարժման միջոցին նա թոյլ զանեց ընտրութիւններէ ժամանակ Պարիզում 1889-ին, իսկ ապա ապացուցեց որ նա թուլութիւն էր ունեցել Պանաման փողերը բաժանել հանրապետական լրագիրներէ մէջ: Դորանից չեռու՝ 1893 թ.՝ նա կորցրեց իւր բարձր դիրքը հանրապետականներէ մէջ և վերջին երկու տարիները ստերի տակ մնաց: Նա մեռաւ 68 տարեկան:

† ՊՕԼ ՎԵՐԼԷՆ վախճանեց Պարիզում թոքախտից լուսւ. 9 (նոր տոմ.): Պօլ Վերլէն համարում էր և հիմնադիր և գլուխ դեկադէնտներէ բանաստեղծական ուղղութեան (դպրոցի), որը մի տեսակ ալլասեռութիւն, խեղաթիւրութիւն է առողջ բանաստեղծութեան: Վերլէնը կազմել էր մի ալսպիսի գաղափար բանաստեղծի մասին, թէ սա չպիտի նմանի ուրիշ մահկանացուներին. և ալլ հասկացողութիւնը ստիպում էր նորան աւելի ևս չափազանցեցել աւն հիւանդոտ ձգտումները, որ կալին նորանում: Նորա ամբողջ կեանքը անաշոյղ դերասանութիւն էր՝ ցանկանալով կատարել ինքնատիպ ներշնչած բանաստեղծի դեր: Եւ ալլ նոյնը երևում է նաև նորա բանաստեղծութեան մէջ: Մեռաւ 51 տարեկան, բազ քիչ ջան զրեց. զոքա բոլորը (Poèmes saturniens, Romances sans paroles, Fêtes galantes, Sagesse և ալլն) հրատարակած են մի հատորի մէջ Choix de poésie անունով: Այնու ամենայնիւ իւր տաղանդի ոյժով նա Նշանաւոր էր:

† ՎԵՐԱՅ ԳԱԲՐԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Ներկալ լուսւարին վախճանեց Քուլթախում իմերեթի վրաց թեմի Գաբրիէլ եպիսկոպոսը, որը համարում էր վրաց հոգևորականութեան ամենակարևոր անձը: Անցեալ 1895 թ-ին կատարել էր նորա 25-ամեալ լօրեկեանը: Հանգուցեալը, որ մեծ չարդ էր վալելում ժողովրդի կողմից, իւր ամբողջ կարողութիւնը (2—3 տասնեակ հազար) կտակով թողել է վրացական դպրոցներին, վրաց բարեգործական հաստատութիւններին և հոգևորականութեան:

ԻՏԱԼԻԱՅԻ ԱԶԳԱՅՆԱԿՈՒԹԻՒՆԸ, որ վերջին անգամ հաշուեց 1894 թ. դեկտեմբերի 31-ին, ալլ չափնի է կացուցած: Ալլ օրը խաալիան ունէր 30.913.633 բնակիչ: 1881 թւականի նոյն 31 դեկտ. բնակիչ-

Ներքի թվի վրայ ալիմանը ցույց տուց առաւելութիւն 2.454.035 հոգու:

Պատկերի թիւն էր 1894 թ.-ին 231.581, ուրեմն ամեն 1000 բնակչի վրայ 7.51 (ուրեմն ամեն 2000 հոգու վրայ համարեա 15 պոսակ):

Ծնունդ 1894-ին եղել է 1,102.935 (չհաշւած մեռած ծնւածները), ուրեմն 1000 հոգուն 36.79 (ալիսինքն $35 \frac{70}{100}$): Ծնւածների մէջ ամեն 100 աղջկալ զիմաց եղել է 106 տղալ ծնունդ: Ապօրինի ծնւածները կազմում էին 1872-ին 6.96 ‰ (ալիսինքն 100 ծնւածների մէջ ապօրինիները կազմում էին $6 \frac{95}{100}$, ուրեմն մօտ 7), 1883-ին 7.75 ‰, 1892-ին 7.92 ‰, 1893-ին 6.93 ‰ և 1894-ին 6.77 ‰:— 1894-ին զուգ ծնունդներ եղել են 13.417 անգամ, երբեակ ծնունդներ 154 անգամ, քառեակ ծնունդներ 2 անգամ:

Մեռածների թիւը 1894-ին եղել է 775.376, ուրեմն ամեն 1000 բնակչի վրայ 25.19: Մահացութիւնը ամենից մեծ տոկոս կազմում էր Սարդինիայում, և ամենից նւազ տոկոս Վենետիկում:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

- 1) ՔԱՄԱԼԵԱՆՅ, Ս.—Աստուծ աղքատի կերպում, զրույց: Թիֆլ., տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1896 թ. գինն է 20 կոպէկ:
- 2) ԱՇՈՒՂ ՊԱՅՄԱՌԷ՝ (Վարչամ Տրդատեանց),—Երգեր: Առաջին հատոր, Թիֆլիս, տպ. Վրաց Հր. Ընկ.: 1895 թ. գինն է 30 կոպէկ:
- 3) ՀԵՂԻՆԱԿ?, Փոքրիկ Հեղինէի երազը: Փոխապր. ռուսերէնից Յովհան. Արաբաջեանի: Ալէքսանդրապոլ, տպ. Գ. Սանդեանցի: 1896 թ., գինն է 5 կոպէկ:
- 4) ԳՈՎՐԻԿԵԱՆ, Հ. Գրիգոր վարդապետ, Մխիթարեան ուխտէ.—Տրանսիլանիոյ հաւոց Մետրապոլիսը կամ նկարագիր Կիրլա հաւաքաղաքի: (Աղգալին մատենադ. ժթ): Վիեննա, Մխիթարեան տպարան, 1896 թ. գինն է ֆրանկ 3.60 (մօտ 1 ռ. 25 կ.):
- 5) ՏԻՒՐԵԱՆ, Կ.—Սև ծովու ռուսական եղերքը: (Աղգալին մատենադարան, ժը): Վիեննա, Մխիթ. տպ., 1895 թ. գինն է ֆր. 2:
- 6) Մատենադարան «Արաքս»-ի.—Կիլիկիա.—Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ: Պետերբուրգ, տպ. Լիբերմանի, 1894. Գինն է 1 ռ. 25 կ., ոսկէկազմով 2 ռ.
- 7) ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՅ, Մակար եպ.—Արցախ:—Բաքու, տպ. Արօր, 1895. գինն է 1 ռ. 50 կոպ.
- 8) ՍԱՀԱԿԵԱՆՅ, Սահակ քահանայ.—Սրբազան պատմութիւն նոր ուխտի (շարունակութիւն և վերջ)—Գործք Առաքելոց, Հատոր Գ.—Թիֆ-

լիս, տպ. Մ. Մարտիրոսեանցի և ընկ., 1896. գինն է 40 կոպ.

9) ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅՈՒ.—Հայոց պատմութիւնը և վաճառ Մամիկոնեանին՝
գրած թուղթը, Գրաբարից թարգմանեց Մինաս քահանայ Տէր-Պետ-
րոսեանց: Ալեքսանդրապոլ, տպ. Ա. Մալխասեանցի, 1895. գինն է
80 կոպ.

10) ГЕРЦЕНШТЕЙНЪ, В. А. (Издатель).—Тифлисскій настольный
календарь на 1896 годъ.

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» 1895 թ. № 12-ի մէջ:

Հակակալան թատրոնն իջածոււմ. 1686.¹ ներքերից (ալ-
սինքն էջ 1686, առաջին տող ներքերից) «Հալը Գորիօ» ուղղել՝ «Էօ-
ժէնի Գրանդէ»: 1687.² ներքերից՝ պահապաններ (ոչ՝ պահարան-
ներ): 1690.¹² ուղղել՝ խիստ ձգւած լաւը ուժգին ձաջն է հանում:
Նոյն էջ, տող 17 ներքերից, «լուսահատում է» խօսքից լետու աւե-
լացնել ալս խօսքերը՝ «որովհետեւ նորա արկղը փոքր էր: Ծառան
հաւատացնում է», որ և ալլն: 1691.¹⁶ Փանահ (ոչ՝ Հասան): Նոյն
էջ, տող 20՝ կարգացած (ոչ՝ կարօտացած):

Նոր ստացւած գրքերի ցուցակում էջ 1704 ուղղել՝ Տաղաւա-
րեան, Մ. գրքտ.—Ծագումն հալ տառի:

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառահան էն հետեւեալ գներով

«ՄՈՒՐՃ» 1889 թ. անկազմ	4 ա. — կ.
«ՄՈՒՐՃ» 1890 թ. անկազմ	5 » — »
«ՄՈՒՐՃ» 1891 թ. անկազմ	10 » — »
«ՄՈՒՐՃ» 1892 թ. անկազմ	9 » — »
«ՄՈՒՐՃ» 1893 թ. անկազմ	10 » — »
«ՄՈՒՐՃ» 1894 թ. անկազմ	7 » — »
«ՄՈՒՐՃ» 1895 թ. անկազմ	8 » — »
ԲՈԼՈՐ 7 ՏԱՐԻՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ անկազմ	45 » — »
» » » » կազմով 14 հատոր	50 ա. — »

24-րդ ՏԱՐԻ

„ՄՇԱԿ“

24-րդ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակել թիֆլիսեան հոգն դիրքով, հոգն պրոգրամով և հոգն ուղղութեամբ: Մենք տանում ենք սեփական հեռագիրներ: «ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ Արաստանում 10 ռուբլի է, տաճն և մէկ և տաճն ամուանը՝ 9 ռ., ինն և ութ ամուանը՝ 8 ռ., հոթ ամուանը՝ 7 ռ., վեց ամուանը՝ 6 ռ., հինգ ամուանը՝ 5 ռ., չորս ամուանը՝ 4 ռ., երեք ամուանը՝ 3 ռ., երկու ամուանը՝ 2 ռ., մի ամուանը՝ 1 ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար: Եւրոպայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 30 ֆրանկ:

«ՄՇԱԿԻՆ» գրեւէ կարելի է ԽՄԲԱՂՐԱՏԱՆԸ (Բաղարնապա և Բաղարնապա փողոցների անկիւն): Կարտուիկան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրեւել համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция «МИШЕКЪ», իսկ արտասահմանից Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK».

Յաջատարութիւններ ընդունում են թէ հաշիւին, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարում է 2 կոպէկ:

Բացւած է առաջիկայ 1896 թ. քաժանորդագրութիւնը
պատկերազարդ **ԱՂԲԻԻՐ** ամսագրի եւ **ՏԱՐԱՋ** շաբաթաթերթի

Կը հրատարակի Նոյն ուղղութեամբ, ծրագրով, ղերքով և
աշխատակիցների մասնակցութեամբ

ԱՂԲԻԻՐ և ՏԱՐԱՋ հանդէսների ՌՅՌ-ը հրապարակի վրայ են. ըն-
թերցողն անշուշտ փաստերն աւելի կը գերադասէ պերճ խօսքերին: Հինգ-
ապր պատճառով ոչ մի խոստում չենք անում առաջիկայ տարւոյ համար-
կաշխատենք, որքան հնարաւոր է, որքան կարող ենք մեր ընթերցող-
ներին գոհ անելու:

ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱՋի բովանդակութիւնն աւելի ևս ճոխ ու բազմակող-
մանի լինելու համար կարևոր հոգացողութիւններ արւած են:

ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱՋի առաջիկայ 1896 թ. համար կլիշէներ, զանազան
տառեր ստացւած են Լոնդոնից, Պարիզից, Խտալիայից մեծ քանակու-
թեամբ:

տ. XIV՝ **ԱՂԲԻԻՐ** XIV տ.

միամսեայ պատկերազարդ հանդէս
մանուկների, ծնողների և դաստիա-
րակների համար: Տարեկան 12 ՌՅՌ,
իւրաքանչիւր Ռ-ը 2—3 թերթ.
ամառւոյ սկզբի և վերջին ՌՅՌ-ը
լուս են տեսում միատեղ:

ԱՂԲԻԻՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Զարթեցնել և զարդացնել հա-
կերխալի մէջ բարի նախանձ
դէպի վսեմն ու ազնիւը և ատե-
լութիւն դէպի չարն ու վեա-
սակարը:

Ազբււրը իր մատաղ ընթեր-
ցողների սրտերում ցանում է
գթութեան, ինքնաճանաչու-
թեան, անվհեմութեան սերմեր:

ԱՂԲԻԻՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Տանկան բաժին

Մանրավէպ, Զրոյց, Հէքիաթ: Բանաստեղ-
ծութիւն: Առակ: Ճանապարհորդութիւն:
Կենսագրութիւն: Գիտութիւն և Արւեստ:

ա. VII **ՏԱՐԱՋ** VII տ.

Գեղարեստական-գրական երգիծաբանա-
կան պատկերազարդ շաբաթաթերթ

ընտանեական ընթերցանութեան հա-
մար: Տարեկան 48—50 ՌՅՌ, իւրա-
քանչիւր Ռ 1—2 թերթ: Տարազում
տպագրւում են թէ արդի, և թէ ան-
ցած գնացած հաւ կեանքից աշխար-
հից, նույնպէս գեղարւեստի բոլոր
ճիւղերի վերաբերեալ ընտիր պատ-
կերներ և նկարներ:

ՏԱՐԱՋԻ ՆՊԱՏԱԿԸ

Տարագը Աղբիւրի հասունա-
ցած սաների խնդակցութեան և
վշտի արտաձայնողն է, Նրանց
մտքերի, զգացումների թարգ-
մանը:

Տարագը ձգտում է առաջա-
դիմութեան ուղիղ ճանապարհով
ընթացող, առաքինութեամբ օժ-
տւած, զիտութեան անշէջ լու-
սով զարգացած, եղբայրասիրու-
թեամբ բոլրօքւած հաւ անդամ-
ներ սնուցանել:

ՏԱՐԱՋԻ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարեստ և դիտութիւն: Պատմական
Ժամանակակից վէպեր, պատկերներ:

Հետաքրքրական տեղեկութիւններ Այլև
այլք: Թւաբանական խնդիրներ Առած:
Շուտատեսութիւն: Անեկդոտ Հանելուկ: Բա-
նախադ: Երգ նոտաներով: Բերուտ:

Զնոգնէրի և Գոտիարակներ Բաժնի
Կրթութեան և Գաղտնարակութեան վե-
րաբերել յօգւածներ: Մատենախօսու-
թիւն: Խորհուրդներ, առաջարկութիւններ
Մանկական և դպրոցական առողջապա-
հութիւն: Խառն լուրեր: Պատասխաններ
Յայտարարութիւններ:

Աղբիւրի տարեկան բաժանորդա-
դինը 3 ռ. է, արտասահման 4 ռ.
կամ 12 ֆռ.

Թատրոնական գրածներ Բանաստեղծու-
թիւն: Քննադատութիւն: Կենսագրու-
թիւն: Ճանապարհորդութիւն և արկածք:
Երաժշտութիւն: Թատրոն և Նկարչու-
թիւն: Յօգւածներ: Ֆելիետոն: Գրախօ-
սութիւն: Տնային արդիւնաբերութիւն և
տնտեսութիւն: Կար, ձե, ձեռագործ և
ամեն նորութիւն: Լուրեր: Տեղեկութիւն-
ներ: Այլ և այլք: Ծաղր, առած, կատակ:
Հարցեր: Խորհուրդներ: Սուրճանդակ:
Շախմատ և այլ խաղեր: Յայտարարութիւն:

Տարազի տարեկան բաժանորդա-
դինը 6 ռ. է, արտասահման 10 ռ.
կամ 25 ֆռ. ամիսը 50 կ. իրաքան-
չիւր № 25 կ.

Աղբիւր—Տարազի 1896 թ. պրեսիաները

ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶԻ միևնոյն հասցէով բաժանորդ գրւողը կը-
ստանայ ԱՂԲԻՒՐԻ № 1-ի հետ հետեւեալ պրէսիաները:

1

ԴԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԱՂԲՈՒՄ-ԱՂ-
ՄԱՆԱԽ

Պատկերներ եւ նկարներ, մի ստւար շքեղ
հրատարակութիւն:

I վեց տերութիւնների վեհապետ.
ներ: II Հալաստանի բարձրատիման
հողերականներ: III վեց պետու-
թիւնների նախարարներ, ղեսպան-
ներ: IV Հրապարակախօսներ: V Գա-
ղաքական գործիչներ: VI Հալաս-
տանցիներ: VII Հալաստանի տեսա-
րաններ: VIII վեց պետութիւնների
մարաքաղաքներ: IX Ջէյթուն, Կի-
լիկիա: X Հալաստանի քաղաքներ:

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ գեղարեստա-
կան ալբոմ-ալմանախը ստանալու
համար պէտք է ուղարկել 60 կոպ.
(կարելի է և պօստի մարկաներով):

(Այդ հրատարակութիւնը առանձին ար-
ժէ 3 ռ.

Հասցէն՝ Тифлисъ, редакция иллюстр. жур. «Агбиуръ-Таразъ», Tif-
lis, (Caucase) Red. des jour. «Agbiour et Taraz».

Խմբագիր հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ.

2

ԱՆՎԵՀԵՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԻԶՄԻՐԼԵԱՆԻ

Մեծադիր (28—41 ս.) շքեղ պատիեցճ
ցինաճախու վրնյ:

Գեղարեստական սքանչելի մի
գործ Լոնդոնում պատրաստւած, փա-
ռաւոր և անհրաժեշտ զարդ ամեն
հաջի տան:

Պատկերը պէտք չունի առան-
ձին շրջանակի, բոլորովին պատ-
րաստ է, ունի լինարան և ուղարկ-
ւում է բաժանորդներին (լուսնարի
1-ից հերթով) առանձին խնամքով
պատրաստած կրկնակի արկղների մէջ

Այդ պատկերն ստանալու ճանա-
պարհի, մաքսի և արկղների ծախս
պէտք է վճարել միայն 2 ռ.

(Հենարակու վրայ այս պատկերն առան-
ձին արժէ նանապարհածախսով 6 ռ.)

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹՒՒ

Գ. ՏԱՐԻ

„ԸՆԻՒՂ“

ՏԱՐԻ Դ.

Գրականակ. եւ քաղաքակ. շաքաքաքերքի

Կը հրատարակի թէհրանում նոյն ուղղութեամբ եւ նոյն ծրագրով «Շաւիղի» բաժանորդացինն է Պարսկաստանի համար մէկ թուման, կէս տարւանը վեց լղւան: Արտասահմանի համար 3 բուրլի կամ 8 ֆրանկ, կէս տարւանը 2 բուրլի կամ 5 ֆրանկ:

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկեն անպատճառ հետեւեալ հասցեով: Черезъ Баку въ Эязели Россійской ИМПЕРАТОР-СКОЙ Миссіа въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրում է ուշք դարձնել ճիշտ ալս հասցեով եւ առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, ալլապէս չեն ընդունւիլ: Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակադրով կամ թղթադրամով: Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Rédaction «CHAVIGH», ալդ հասցէին պիտի լինին նաեւ Ռուսաստանից խմբագրութեան ուղղած թղթակցութիւնները:

Ա. Արաւսխանեանցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարդարւած Հին եգիպտական, փիւնիկական եւ ասորական գրութիւններով եւ Արեւելքի Հին պետութիւնների քարտէզով):

281 երես, յառաջարան եւ նիւթերի ցանկ

Դրամ 800 օրէնէ, փայլուն Բըլէ վերայ

Գինն է ճանապարհածախսով միասին 1 բուրլի

Պէտք է զիմեւ կամ Հեղինակին՝ Тифлисъ, въ редакцію журналу «МУРЧЪ», եւ կամ՝ Въ центральный книжный магазинъ. Ուսումնարաններին անուամ է 20% զիջում:



ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ տարեկան 10 հոսիսի, համ 30 ֆռանկ: Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 հոսիսի, արհեստագործները 7 հոսիսի: Կարելի է վճարել մաս-մաս, 33 ռ. սկզբում, 3 ռ. մինչ մարտի 1-ը, մնացեալը մինչ յուլիսի 1-ը:

ԴԻՄԵՆ՝ Թիֆլիս, Վելիամինևան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Արատահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“. և համ հեռուեալ անձերին:

ԲԱՔՈՒ—պ.պ. Ֆրիդման Մարգանեանին և Սեդրակ Քառայեանին:

ԲԱԹՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան, Ծովխանեանի բանկ. գրասենեակ:

ԵՐԵՒԱՆ—պ. Գէորգ Ղարաջեանցին. Առևտր. բանկի ճիւղը:

ԿԱՐՍ—պ. Աբէլ Ապրեսեանին, զործակալ «Նորեմբեր» ընկ.

ԱԳՈՒՂԻՍ—պ. պ. Ստեփան Արատլանեանց և Աւետիս Դաթեանց:

ՆՈՒԻՒ—պ.պ. Աբրահամ Բուխիաթեանց և Խաչատուր Խոջամիրեանց:

ՂԶԼԱՐ—պ. Հմայեակ Մաժինեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՒՍ—պ. Արամ Շապուփեան:

ՄՈՍԿՒԱ—պ. Ալեքսանդր Ծատուրեան, Մ. Շորշորովի գրասենեակ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—պ. Գր. Բաշինջաղեանին (Гостин. дворъ № 7):

ԹԱՐՍԻՉ—պ. Յակոբ Սառիկեանին (ուսուցիչ):